

737

S-21



ԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

2.

ԱՐՇԱԿՈՒՆԻ ԴՐԱՄՆԵՐ

ՄԱՍՆ-ԱՌԱՋԻՆ

ԺՈՂՈՎԱԺՈՅՋ ԱՍՊԵՏԻՆ

ԱՂԵՔՍԱՆԴԻՐ ՊԵՏՐՈՎԻՉ

ՀԱՄԱԹՕՏ ՊԵՐԹԵԻԱՀԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՄԻ

ԳՐԵՑ

Հ. ՅԱԿՈՎԲՈՍ Վ. ՏԱՇԵԱՆ

ՄԻԹԹ. ՈՒԽՏԷՆ



ՎԻԵՆՆԱ

ՄԻԹԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1919.

737  
S - 21

# ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ

- Ժ. Շտրեք Մ., Հայաստան, Բրդաստան եւ արեւմտեան Պարսկաստան քաղաքական-ասորեստանեայ սեպագրերու համաձայն: Թրգմ. Հ. Բ. Պիլէզիկեան: 1904: էջ Է+222: Փր. 3.—
- ԺԱ. Խաչաթեանց Գր., Հայ Արշակունիք ըստ Մովս. Խորենացոյ, կամ նոր ուսումնասիրութիւններ Մովս. Խորենացոյ մասին: Թրգմ. Արսէն Ս. Սիմոնեանց: 1906: էջ Ը+124: Փր. 1.50
- ԺԲ. Պեդեքսըն Հ., Հայերէն եւ դրացի լեզուները: Թրգմ. Հ. Թ. Կէտիկեան: 1907: էջ ԺԱ+257: Փր. 5.—
- ԺԳ. Հիւրշման Հ., Հին Հայոց տեղոյ անունները: Թրգմ. Հ. Բ. Պիլէզիկեան: 1907: էջ ԺԶ+443: Փր. 7.—
- ԺԴ. Պեդեքսըն Հ., Հին հայերէնի ցուցական դերանունները: Թրգմ. Հ. Բ. Տաշեան: 1907: էջ Է+90: Փր. 2.—
- ԺԵ. Գալեքեանց Հ. Գ. Վ., Կենսագրութիւն Սարգիս Արքեպիսկոպոսի Սարաֆեան եւ ժամանակին հայ կաթողիկեայք: 1908: էջ ԺԳ+433: Փր. 5.—
- ԺԶ. Աճառեան Հ., Հայերէն նոր բառեր նորագիւտ Մնացորդաց գրոց մէջ: 1908: էջ 38: Փր. —.60
- ԺԷ. Կիւրեանց Բ. Ժ. Վ., Եղիշէ, քննական ուսումնասիրութիւն: 1909: էջ ԻԸ+458: Փր. 7.—
- ԺԸ<sup>1</sup>. Ակիւեան Հ. Ն., Տիմոթէոս Կուզ հայ մատենագրութեան մէջ: էջ 1—60:
- ԺԸ<sup>2</sup>. Աճառեան Հր., Հայերէն նոր բառեր Տիմոթէոս Կուզի Հակածառութեան մէջ: 1909: էջ 16—106: Փր. 1.50
- ԺԹ. Ակիւեան Հ. Ն., Զարարիա Եւ. Գնունեաց եւ իւր տաղերը: 1909: էջ ԺԲ+87: Փր. 1.—
- Կ. Ակիւեան Հ. Ն., Կիւրիոն Կաթողիկոս Վրաց: 1910: էջ ԻԷ+315: Փր. 5.—

# ԱՐՇԱԿՈՒՆԻ ԴՐԱՄՆԵՐ

Մ Ա Ս Ն Ե Ռ Ե Ջ Ի Ն

Ժ Ո Ղ Ո Վ Ե Ժ Ո Յ Ք Ե Ս Պ Ե Տ Ի Ն

ԵՂԵՔՍԵՆԴՐ ՊԵՏՐՈՎԻՉ

ՀԵՄԵՌՈՏ ՊԱՐԹԵՒԸՀԸՅ ՊԵՏՐՈՒԹԵԼՄԻ

ԳՐԵՅ

Հ. ՅԱԿՈՎԲՈՍ Վ. ՏԱՇԵԱՆ


ՄԻԻԹ. ՈՒԽՏԷՆ



Վ Ի Ե Ն Ն Ա

ՄԻԻԹ ԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1917.



494055

## Ա Ջ Դ

Անագան՝ եւ այն տակաւին իբր առաջին մաս ընդարձակագոյն ծրագրուած երկի մը՝ լոյս կը տեսնէ այժմ ներկայ հատորը: Տարիներ յառաջ նոյնը մաս առ մաս հրատարակուած էր Սիարանութեանս ուսումնաթերթին մէջ<sup>1</sup>: Գործը՝ նաեւ այս չափով՝ յինքեան կրնար ամբողջացած նկատուիլ, ցորչափ կը վերաքերի պարթեւական Արշակունեաց դրամներու, եւ ի լուսաւորութիւն ասոնց՝ մեր կողմանէ մանրագիր յաւելեալ պարթեւական-հայկական պատմութեան:

Բայց մեր ծրագիրը աւելի ընդարձակ էր: Նկատելով կարեւորութիւնը մեր հնագոյն պատմութեան համար Ասպետ Պետրովիչի այն կարծեաց՝ որով հայ Արշակունեաց կը վերագրուին այլեւայլ դրամներ եւ այն՝ Տիգրանայ Մեծի ժամանակէ յառաջ (տես էջ 160-192), եւ այս մասին կարծեաց տարբերութիւնները գիտնոց մէջ ծրագրուած էինք՝ իբրեւ երկրորդ մաս մը ներկայ գործոյս՝ ընդարձակօրէն ուսումնասիրել յետադերսամնդրեան շրջանը՝ մինչեւ հայ Արշակունեաց վերջնականապէս հաստատուիլը Հայոց զահուն վրայ: Այս մասն ալ մասամբ սկսած էր լոյս տեսնել խորագրովս՝ «Նախարշակունիք եւ Հնագոյն Արշակունիք եւ իրենց ծանօթ դրամները. պատմական տեսութիւն»<sup>2</sup>: Երկու մասերը միասին պիտի կազմէին ընդարձակ ուսումնասիրութիւն մը: Դժբախտաբար վերջին քաժնիս ներածական մասը միայն կրցաւ լոյս տեսնել:


<sup>1</sup> Հմմտ. ՀԱ. 1904, էջ 323-334, 337-353: - Անդ՝ 1905, էջ 9-15, 41-51, 70-75 եւ 97-107:

<sup>2</sup> Հմմտ. ՀԱ. 1905, էջ 129-137, 161-172, 198-200, 225-234, 289-299:

Բուն ուսումնասիրութիւնը, որ ի մասնաւորի ի նկատի պիտի առնուր մեր կրկին՝ մանաւանդ թէ երեք-կին չայաստանեայց (Էրեւելեան եւ չարաւային Մեծ չայք եւ Փոքր-չայք) շրջանը մինչեւ միացեալ չայաստանի ստեղծումը Տիգրանայ Մեծի ձեռք, եւ դարձեալ անոր յաջորդաց ժամանակամիջոցը գոնէ մինչեւ Տիրիթ-Տրդատայ գահակալութիւնը, ցայժմ մնաց անաւարտ՝ մեր կամքէն անկախ պատճառներով: Եւ որովհետեւ այժմ չենք կրնար գուշակել իսկ թէ երբ կարելի պիտի ըլլայ ավարտել այս մասը, պատշաճ տեսանք այլ եւս երկար ընդ մամլով չպահել նաեւ առաջին մասը, որուն տպագրութիւնը շատոնց ավարտած էր, եւ որ իւր այս վիճակին մէջ ալ՝ իւր որոշ արժանիքն ունի, ինչպէս կը յուսանք: Եթէ շնորհէ Տէր առողջութիւն՝ շարունակելու մեր ծրագրած ուսումնասիրութիւնը, այն տեղ ընականապէս ի նկատի պիտի առնուին նաեւ մեր ազգային գիտնոց այս իննորոց մասին յայտնած այլեւայլ տեսութիւնները: Այս պատճառաւ այս տեղ ակնորդ համարեցանք՝ գործոյս տպագրութենէ ետքն լոյս տեսած գործոց ու յօդուածոց, որոնք որեւէ կերպով այն նիւթին կը վերաբերին, ընդարձակ մատենախօսական ցուցակ մը դնել: Նոյնպէս՝ նկատելով մանաւանդ տեղոյս տպագրական ներկայ անհանդուրժելի դժուարութիւնները՝ զանց առինք հատորիս վերջը գետեղել Անուանց ցանկ մը, թէեւ շատ օգտակար ըլլար այն, նոյնը վերապահելով երկրորդ մասին, երբ յաջողի մեզի ավարտել զայն:



ԱՐՇԱԿՈՒՆԻ ԳՐԱՄՆԵՐ



# ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Զ.

## ԱՐՇԱԿՈՒՆԻ ԴՐԱՄՆԵՐ

ՄԱՍՆ Ա.



Վ Ի Ե Ն Ն Ա

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

1917.

ԱՐՇԱԿՈՒՆԻ ԴՐԱՄՆԵՐ

—

Մ Ա Ս Ն Ա .

Ժ Ո Ղ Ո Վ Ա Յ Ո Յ Ք

Ա Ս Պ Ե Տ Ի Ն Ա Ղ Ե Ք Ս Ա Ն Ի Ր Պ Ե Տ Ր Ո Վ Ի Զ

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ Պ Ա Ր Թ Ե Ի Ա Հ Ա Յ Պ Ա Տ Մ Ո Ի Թ Ե Ա Մ Բ

—



# ԱՐՇԱԿՈՒՆԻ ԳՐԱՄԿԵՐ

## ԺՈՂՈՎԱԾՈՅՔ ԱՍՊԵՏԻՆ ԱՂԵՔՍԱՆԻ ԳԵՏՐՈՎԻՉ

Առանձին հաճոյք մը կը պատճառէ մեզի՝ ծանօթացրնել մեր ընթերցողաց գեղեցիկ մատեան մը, նորերս չոյս տեսած, որ այլեւայլ տեսակիտով հետաքրքրական է, եւ աներկբայ ենք՝ պիտի ըլլայ նաեւ ընթերցողաց: Այս գիրքն է՝ «Ժողովածոյք Պետրովիչ. Արշակունի Գրամներ. Յուլի, 25 լուսատիպ տախտակներով», հեղինակուած նոյն իսկ Ժողովածոյից հաւաքողէն եւ ստացչէն՝ Աղեքսանդր Ասպետէ Պետրովիչ: Գեղեցիկ գործ մըն է, ոչ միայն արտաքնովն, այլ մանաւանդ ներքին ուշագրաւ պարունակութեամբն — եւ աւելցրնենք սնցողակի — ամենայն խնամքով տպագրուած Միաբանութեանս տպարանին մէջ: Գրամոց յուլի մ'առաջին տեսութեան կրնայ թերեւս երեւալ շատերուն՝ չոր ու ցամաք բան մը. (— եւ քիչ շատի հարկէ նոյնպիսի են մասնագիտական յուլիներ այլեւայլ բանասիրական ճիւղերու: —) Բայց միանգամայն անհրաժեշտ կարեւոր է՝ ամէն լուրջ քննութեան եւ ուսումնասիրութեան: Ներկայ

1 Sammlung Petrowicz. Arsaciden-Münzen. Katalog mit 25 Lichtdrucktafeln, verfasst von Alexander Ritter von Petrowicz. Wien (Mechtharisten-Buchdruckerei) 1904. Lexiconform. pp. VIII+206 +XXV Taf.

մատեանը՝ իբրեւ ցուցակ այնպիսի լիակատար հաւաքման մը՝ ինքնին ամենամեծ կարեւորութիւն ունի Պարթեւական պատմութեան համար, քիչ շատ գրեթէ ամէն արքայից արքայի ժամանակագրութեան եւ մանաւանդ վերջիններէն ամէն տարւոյ որոշ թուականաւ վկայ դրամ պարունակելով, եւ ասով շատ կէտերու վրայ լոյս սփռելով: Իւր տեսակին ամենակատարեալ հաւաքածոյներէն մին է հոս ներկայացուածը, եթէ ոչ կատարելագոյնը: Հեղինակը գիտցած է՝ բաց աստի՛ աւելի կատարեալ բնել գործը, պարունակելով նաեւ այն ամէնն՝ որ իրեն կը պակսէին եւ առ հասարակ ծանօթ էին, եւ շօշափելով պատմական ու ժամանակագրական շատ մը կարեւոր կէտեր, որոնց վկայ կը հանդիսանան այժմ պատմական այն փոքրիկ բայց ամենակարեւոր յիշատակարանները՝ դրամները: Հայ Արշակունիք կամ «արքայք», եւ Պարթեւական Արշակունիք կամ «արքայից-արքայք», որոնց ձեռքն էր շատ անգամ ուղղակի կամ անուղղակի մեր տոհմային հարստութեան բախտը, այնպէս անձուկ կապուած են ի հարկէ իրարու հետ, որ Պարթեւական պատմութեան որեւէ նորագոյն լուսաւորութիւն քիչ շատ լոյս մըն է նաեւ մեր պատմութեան համար: Ներկայ գործն ըստ այսմ՝ որչափ ալ էապէս բնիկ տան կամ Պարթեւական Արշակունեաց բնդհանուր պատմութեան վերաբերի՝ կարեւորութիւն ունի նաեւ մեր մասնական պատմութեան համար: Բաց աստի բոլորովին նոր տեսութիւն մը կը պարզէ Հեղինակը, մեր առջեւ դնելով շարք մը դրամներու իբրեւ Հայ Արշակունեաց դրամներ, — բան մը որ գոնէ ամէն ուշագրութեան արժանի է: Այս կէտը, — եւ Հեղինակին տեսութիւնն ու փաստերը — մանրամասնօրէն պիտի բացատրենք յետոյ: Հոս կը շեշտենք միայն այս պարագան անոր համար որ մատնանիչ ըրած ըլլանք գործին կարեւորութիւնը

նաեւ հայ բանասիրութեան եւ միեւնոյն ժամանակ՝ Խորենացւոյ խնդրոյն համար: Այսին զի այս տեղ յուզուած խնդիրը կապ ունի Խորենացւոյ գրոց այն մասին հետ, որ Հայ Արշակունեաց սկզբնաւորութիւնը կը պատմէ՝ Աղարշակայ, Արշակայ եւ Արտաշիսի անուանեց ներքեւ: Նորագոյն քննադատութիւնը մէտ է այս տեղ այլազգ տեսնել իրերը. եւ յիշեալ ժամանակաց համար շնորհունիլ Արշակունեաց հայ տան կամ հարստութեան գոյութիւնն ի Հայս, այլ աւելի կրտսերագոյն դնել ժամանակաւ նոյն հարստութեան սկզբնաւորութիւնը: Իսկ արդ մասնագէտ դրամագէտը կը գտնէ դրամներու շարք մը զորոնք անկարելի է բուն Պարթեւական Արշակունեաց վերագրել, եւ միանգամայն այնպիսի որոշ նկարագիրներով՝ որ աւելի կրտսերագոյն ժամանակաց ալ չեն կրնար դիւրաւ ընծայուիլ, մաս մ'արդէն որոշ թուականաւ. եւ կշռելով ամէն պարագաները՝ մէտ է Խորենացւոյ աւանդածը պատմական ընդունիլ գոնէ յէականս եւ յիշեալ արքայից տալ այն դրամները: Հեղինակին այս տեսութիւնն ըլլայ նորագոյն քննադատութեան առջեւ ընդունելի կամ ոչ, իւր փաստերը համարուին բաւական կամ ընդհակառակն, գոնէ յուզուած խնդիրը՝ կարծենք՝ հետաքրքրական է այլեւայլ տեսակիտով, եւ ոչ այնպէս խոտելի առանց անդրագոյն քննութեանց եւ փաստերուն նորագոյն մանրամասն քննութեան: Աւելորդ չենք համարիր ասոր համար յաջորդիւս այս ամէն կէտերը քիչ մ'աւելի մանրամասնաբար ներկայացընել մեր ընթերցողաց՝ բաղձալով յուզուած խնդրին վրայ հրաւիրել բանասիրաց ուշադրութիւնը:

Նախ քան բուն գործին պարունակութեան մասին խօսիլը՝ ներուի մեզի քանի մը խօսք ըսել Հեղինակին անձնաւորութեան մասին, այնչափ

աւելի՛ որչափ այս գեղեցիկ ժողովածոյից անխանջ հաւաքիչն, ստացիչն ու ցուցակագրող Հեղինակն ո՛չ եթէ օտար մըն է, ինչպէս թերեւս երեւար մեր հեռաւոր ընթերցողաց՝ գերդաստանին անուան քիչ մ'այլաձեւ կերպարանաց պատճառաւ. այլ ընդհակառակն հայազգի մը՝ շառաւիղ հայ հին ազնուական մէկ ընտանեաց: Արժեքինք հաճոյք մը պատճառել մեր ընթերցողաց՝ ներկայացընելով նաեւ Հեղինակին պատկերը՝ վերջին լուսանկարին համեմատ: Պետրովիչ ասպետական ընտանիքն արդի Աւստրիական Պետութեան մէջ ապրող այն ո՛չ սակաւաթիւ ազնուական գերդաստաններէն է, որոնք՝ բախտին բերմամբ — ծանօթ արդէն մեր պատմութեան մէջ — հեռաւոր աշխարհներ ինկած դարեր յառաջ, եւ նոր հայրենիք փնտռել ու գտնել ստիպուած՝ կրցած են իրենց բարեմասնական յատկութեամբքն նշանաւոր հանդիսանալ, իրենց ջանասիրութեամբն, ձեռնարկու ոգւովն ու աշաւրջութեամբն ո՛չ միայն տնտեսապէս մեծամեծ արդիւնքներ ձեռք բերել, այլ նաեւ նշանաւոր ծառայութիւններ մատուցանել իրենց հիւրընկալու աշխարհաց, եւ հանրութեան համակրանաց արժանանալով՝ ազնուականութեան այլեւայլ աստիճաններու բարձրանալ, եւ իրենց համար կարեւոր դիրք մը ստեղծել ու պահել նաեւ ցայսօր: Այսպիսի դիրք մը գրաւած էր Պետրովիչ գերդաստանն շատ ժամանակներէ ի վեր ի Բուկովինա, երբ այս երկիրը (— որ հնագոյն ժամանակները մասն էր Սիբեիբիւրգէնի որ արդի Հունգարահայոց երկրորդ հայրենիքն եղած է, իսկ ժէ դարէն սկսեալ բախտակից Մոլտաւիայի —) ժԸ դարու վերջին քառորդին միացաւ Աւստրիական Պետութեան հետ: Աւստրիական կառավարութեան կողմանէ կրկին հաստատուեցաւ գերդաստանն երկրին ազնուական տոհմերու դասակարգին մէջ՝ ասպետութեան աստիճանաւ: Գերդաստանին պատմութիւնը հիւսել



չըլլալով մեր նպատակը՝ անցնինք նորագոյն ժամանակներս: Մեր Հեղինակը՝ Աղեքսանդր ասպետ Պետրովիչ՝ ծնած է նոյն երկրին մայրաքաղաքը՝ Չեռնովից, 1857ին: Իւր ծնողքը՝ Յակոբ ասպետ Պետրովիչ եւ Անտոնիա (ծնեալ Միկուլի) ամէն խնամք տարած են իրենց զաւակաց կրթութեան, եւ յատկապէս ներկայ Գործոյս Հեղինակին: Իւր դասական ուսմունքն ըրած է քաղաքին պետական կրթարանին (Gymnasium) մէջ, զոր աւարտելով՝ անցած է երկրագործական բարձրագոյն վարժարանն, ինչպէս պարագաներն ալ կը պահանջէին: Իբրեւ ժառանգ իւր գերդաստանին անուան եւ կալուածոց, երբ տակաւին 11 տարւան պատանի էր, կը պատահի իւր հօրը մահը, եւ ասով պէտք կ'ըլլար պատրաստել զինքը ապագային յիշեալ կալուածոց մատակարարութեան: Երկրագործական ուսմանց ալ սէր ունենալով՝ մեծաւ յաջողութեամբ աւարտած է Հունգարական-Ալտենբուրգի Երկրագործական Ճեմարանին ընթացքները (Landwirtschaftliche Akademie in Ungarisch-Altenburg.) իբրեւ վկայեալ Երկրատնտես եւ անասնաբոյժ: Այնուհետեւ նուիրած է ինք զինքն երկրատնտեսութեան, իւր հայրենի կալուածքն ի Բուկովինա կառավարելով մասնագէտի հմտութեամբ ու եռանդուն գործունէութեամբ: Սակայն ճիշդ իւր այս եռանդուն գործունէութեամբ կրած էր իւր առողջութիւնն, եւ բժշկաց խորհրդով անգորրութիւն եւ հանգիստ փնտռելով՝ 1891էն ի վեր ստիպուած էր թողուլ կալուածատէրութիւնն. եւ եկած հաստատուած է ի Ալիեննա: Հոս կալուածական եւ ուրիշ ընտանեկան հոգերէն ազատ — (ասպետ Պետրովիչ՝ բաց ի մօրմէ որ կենդանի է տակաւին, ունի այժմ չորս քոյր ալ, որոնք արդէն ամուսնացած են, —) կը սկսի զբաղիլ իւր արդէն ի մանկութենէ առանձինն կերպով սիրած դրամագիտական ուսմանց. եւ քիչ ժամանակի

մէջ կը դառնայ եռանդուն դրամահաւար մասնագէտ մը: Իրեն սիրելի են մանաւանդ՝ բաց ի բուն հայ դրամներէ Ռուբենեանց՝ մեր երբեմն հզօրագոյն դրացեաց դրամները, Պարթեւաց եւ Սելեւկեանց: Առաջնոց դրամները՝ այժմ ամփոփ եւ ճոխ հաւաքածոյ մը կը կազմեն, — բան մը զոր անխոնջ ջանքով եւ դրամական մեծամեծ զոհողութեամբք միայն կարելի էր ձեռք բերել այսչափ սուղ ժամանակի մէջ, 1891էն ջայսօր: Սելեւկեանց հաւաքածոյն տակաւին թերի է. բայց նաեւ այսօր կրցած է ասպետն հաւաքել բազմաթիւ թանկագին, դժուարագիւտ եւ անտիպ կտորները, այնպէս որ մնացեալը լրացրնելը համեմատաբար աւելի դիւրին գործ կրնայ համարուիլ:

Այս համառօտ շեղումէն ետքն՝ անցնինք այժմ բուն գործն ու անոր պարունակութիւնը տեսնելու:

Ա.

Ներկայ գործն՝ ամէն խնամքով պատրաստուած ցուցակ մըն է Պարթեւական դրամոց, ուր մանրամասնաբար եւ թիւ առ թիւ նկարագրուած են իբր 1059 դրամ, որոնցմէ 400 դրամ ալ ներկայացուած է ճշգրտութեամբ գործոյն յարակից լուսատիպ տախտակներով: Գործոյն ներքին բաժանումն ինքնին յայտնի էր: Յառաջաբանականէն ետքը (էջ 1—VIII) կու գայ բուն բաժինը կամ «Պարթեւաստան» (էջ 1—177) իւրաքանչիւր արքայից արքայի կարգաւ ըստ յաջորդութեան եւ ժամանակագրութեան, ամէն մի արքայի դրամներն ալ յատուկ թուարկութեամբ եւ բաժնուած այլեւայլ հատածներու, բաժանման գլխաւոր հիմն առնելով դրամոց թէ՛ արձանագրութեանց եւ թէ՛ պատկերացմանց որպիսութիւնը կամ պէսպիսութիւնը: Համեմատաբար քիչ են «Քաղաքացի դրամները» (էջ 178—9,) ընդ ամէնը 9 կտոր: Ամբողջ Պարթեւական - Արշակունեաց դրամոց՝ որ հոս ցուցակագրուած են՝ ընդհանուր թիւն է 1022: Ար մնան ասկէ զատ կարգ մը դրամներ՝ թուով 33, զորոնք՝ ինչպէս յիշեցինք եւ ինչպէս յետոյ պիտի բացատրենք, Հեղինակը Հայ Արշակունեաց կ'ընծայէ. եւ ասոնք կը կազմեն առաձինն մաս մը՝ «Հայաստան» (էջ 181—191:) Աերջին բաժնիկ մըն է «Եղիւմայիս» կամ Աամնասկիրէս Բ արքայի դրամները՝ թուով չորս հատ. (էջ 193—6:) Բովանդակ դրամոց արձանագրութիւնքն իրարու հետ կշռելով եւ ամէն պէսպիսութիւն մանրամասն նշանակելով՝ քովէ քով միացած կը ներկայացուին

«Պարթեւ արքայից դրամագրական վերադիրք» (էջ 197 — 206.) որ շատ օգտակար նպաստ մըն է՝ ամէն նոր դրամ գիւրութեամբ ճանչնալու եւ դրամատէր-արքայն որոշելու, թողլով միւս պարագաները: Գործոյն վերջը դրուած են Ա — ԻԵ լուսատիպ տախտակներ՝ ամենայն խնամքով պատրաստուած քաղաքիս նշանաւոր մէկ գեղարուեստագիտական տան կողմանէ (Kunstanstalt Max Jaffé.) ուր դրամները՝ կարելի եղածին չափ պայծառութեամբ՝ կը ներկայացուին: Նաեւ այս գործին համար անհրաժեշտ գաճեայ նմանադրոշմները պատրաստած է ինքն իսկ Հեղինակն՝ ամենայն համբերատար խնամքով, անկէ յետոյ լուսանկարելու համար: Այսպիսով շատ աւելի որոշ ու պայծառ կ'ըլլայ դրամոց լուսատպութիւնը, քան նոյն իսկ ուղղակի դրամները լուսանկարելով: Տախտակք Ա — ԻԳ կը ներկայացընեն բուն Պարթեւական Դրամները. Տխտ. ԻԳ — ԻԵ՝ «Քաղաքաց», Հայ Արշակունեաց եւ Կամնասկիրեայ Բ դրամները:

Ինչպէս Յառաջաբանականի մէջ կը ծանուցանէ Հեղինակն, իւր հաւաքածոյն կը պարունակէ բազմաթիւ անձանօթ ու անտիպ կտորներ, եւ ասով ալ հետաքրքրական ըլլալու է ոչ միայն յատուկ դրամագիտաց, այլ նաեւ այն պատմաբան բանասիրաց՝ որոնք Արշակունեաց իրերով կը զբաղին: Պարթեւ արքայից անուանց ուղղագրութեան եւ ժամանակագրութեան մասին հետեւած է ընդհանրապէս Գուտշմիդի ծանօթ գործին՝ որ արդէն իւր ճիւղին մէջ նշանաւոր երկ մըն է՝ իսկ դրամոց դասաւորութեան եւ կարգին

<sup>1</sup> A. v. Gutschmid, Geschichte Irans und seiner Nachbarländer etc. mit einem Vorwort von Th. Nöldeke. Tübingen 1888. Գործոյս մեզի համար կարեւորագոյն մասերը ծանօթ են այժմ նաեւ հայ քաղուածոյ թարգմանութեամբ՝ Ն. Քարամեանց (Գուտշմիդ եւ Թ. Նեօլդէկէ)

Նկատմամբ մեծաւ մասամբ ուղիղ եւ յարմար կը գտնէ Գարդնէրի «Պարթեւական դրամներ», ծանօթ գործը՝ ի հարկէ՝ բայց ի բազմաթիւ ուրիշ կէտերէ՝ նաեւ այն գլխաւոր բացառութիւնը կ'ընէ Հեղինակն որ կարգ մը դրամներ կը բաժնէ կը հանէ պարթեւական դրամներու շարքէն: Ասոնք թէեւ յայնպէս կապակցութեան աղերս մը կը ցուցընեն, կ'ըսէ, բայց այս դրամոց տիպարն ու դրամահատութեան կերպն ակնյայտնի կը զանազանի պարթեւական դրամահատութեան նկարագրէն. եւ ասով անկարելի է յարմար կերպով դասաւորել բնիկ պարթեւական դրամներու շարքին մէջ: Ճիշդ այս դրամներն են՝ զորոնք Հեղինակը Հայ Արշակունեաց կ'ընծայէ: Դրամները ցուցակագրելու եւ նկարագրելու համար մեծապէս նպաստած է Ա. Բոթի խնամքով պատրաստուած եւ հմտալից գործը՝ «Յուցակ Պարթեւաց դրամոց Բրիտ. Թանգարանի», որ նորագոյն ալ գործ մըն է: Ինչպէս կը շեշտէ Հեղինակը՝ իւր ջանքն եղած է դրամներու նկարագրութիւնը կարելոյն չափ համառօտ, բայց միւս կողմանէ որչափ հնար է՝ ճշգրիտ ընել, գործածելով միայն սովորական համառօտութիւնները: Դրամոց կշիռը խնամով նշանակուած է, ցանցառ դրամներու համար՝ անոնց ցանցառութեան աստիճանն, որչափ ի հարկէ իրեն ծանօթ էր, (ցանցառ կամ շատ ցանցառ.) նոյնպէս պահպանութեան աստիճանը. (շատ լաւ պահուած, լաւ պահուած, եւ ոչ այնչափ լաւ:) Դրամոց արձանագիրքն՝ ուր թերութիւնք կ'երեւային՝ լրացուած են

«Պարթեւները Պարսկաստանում եւ նրանց յարաբերութիւնները Հայոց հետ» ԱՐԲՏ 1896, էջ 370—5, 406—8, 456—8, 505—7. անգ՝ 1897, էջ 157—61, 213—7 (եւ առանձինն:)

1 Percy Gardner, The Parthian Coinage. London 1877.

2 Warwick Wroth, Catalogue of the Coins of Parthia in the British Museum. London 1903.

գործածողին դիւրութեան համար, կ'ենթադրուի փակագծի մէջ: Առհասարակ ցուցակին յօրինուածութիւնն ամենամեծ խնամք ու ճշգրտութիւն կը ցուցնէ: Վ. մենագոյզն այլակերպութիւն իսկ նշանակուած կը գտնենք. օրինակի համար՝ նաեւ տառածեւերու եւ մանաւանդ մենագրերու, որոնք շատ յաճախ կը գործածուին Պարթեաց դրամահատներէ: Իւրաքանչիւր մենագրի ամէն այլակերպութիւն իսկ առանձինն նշանակուած է՝ կենթադրուի յատուկ այս նպատակաւ նշանածեւեր ձուլելով, եւ այն՝ ճշդիւ դրամոց իւրաքանչիւր ձեւին համեմատ: Այս կէտը շեշտեցինք իբրեւ օրինակ ընդհանուր յօրինուածութեան ցուցակին:

Որչափ ալ ճոխ է հաւաքածոյն եւ կատարեալ, բնական է որ գտնուէին տակաւին դրամներ այլեւայլ պէսպիսութեամբք, զորոնք չէր կրցած ձեռք բերել Հեղինակն, եւ որոնք ըստ այսմ պակսէին իւր հաւաքման մէջ: Ցուցակն ըստ կարելւոյն կատարեալ ընելու համար՝ զանց չէ բրած Հեղինակը նաեւ զանոնք, որոնք իրեն ծանօթ էին ուրիշ դրամական հաւաքածոյներէ եւ դրամագիտական երկերէն այլեւայլ դրամագիտաց, յանուանէ՝ Longpérier, Պրոկէշ-Ոստէն, Պ. Գարդնէր, Ա. Մարկով եւ Ա. Րոթ<sup>1</sup>: Այս գիտնականաց հրատարակած դրամներն՝ որոնք Հեղինակին հաւաքման մէջ կը պակսէին, յիշուած են իրենց տեղը: Ա' ենթադրուի

<sup>1</sup> Բացի Գարդնէրի եւ Րոթի գործերէ զոր յիշեցինք, միւսներուն խորագիրքն են Adrien de Longpérier, Mémoires sur la Chronologie et l'Iconographie des Rois Parthes Arsacides. Paris 1853—82. — Comte Prokesch-Osten, Les Monnaies des Rois Parthes: Mémoires de la Société Française de Numismatique et d'Archéologie. Paris 1874—5. — А. К. Марковъ, Неизданные Арсакидскія Монеты. St. Petersburg. 1892. («Зап. Вост. отдѣл. Имп. Русск. Археол. Общ.» VI, 265—304.) Քանի մ'ուրիշ գործեր՝ իրենց տեղը կը յիշենք:

շատ տեղ հարկ եղած է նաեւ շօշափել ուրիշ կարեւոր կէտերն՝ որոնք այս կամ այն կողմանէ կապունէին դրամոց հետ:

Յառաջաբանականին վերջերը Հեղինակը պատշաճ դատած է յիշել յանուանէ այն ամէնքն, որոնք նպատած են հաւաքածոյից ճոխացման եւ ներկայ ցուցակին հրատարակութեան: Յատկապէս կը յիշէ հաւաքածոյից ճոխանալն երկու ուրիշ մասնական հաւաքմանց գնմամբ (երկուքն ալ ի Վ. Պոլիս կը գտնուէին,) մին՝ Դր. Մորդտմանի (Dr. Mordtmann) հաւաքումն, միւսը՝ հանրածանօթ հանգուցեալ Պր. Սերովրէի Ալիշան, եւ այն ձեռնտուութիւնը՝ զոր այս ամէն նկատմամբ գտած է Միաբանութեանս անդամներէն: Բուն ցուցակին մէջ ալ իւրաքանչիւր դրամի քով նշանակուած կը գտնենք՝ այս կամ այն հաւաքմանէն ըլլալն նախնարար:

Այսչափ գործոյն ընդ հանուր նկարագրին մասին: Պէտք է այժմ տեսնել ներքին պարունակութեան գլխաւոր կէտերը՝ կ'ենթադրուի ըստ կարելւոյն համառօտիւ միայն, մեր նպատակը ըլլալով գործին էականին միայն ամփոփումն ընելն: Այսպիսի գործին մէջ անշուշտ շեն պակսիր կէտեր ալ, որոնք անընդունելի երեւան, նաեւ լոկ անուշադրութեան արդիւնքներ, օրինակի համար Սելեւկեան թուականաց համեմատականները մէկ երկու տեղ անմտադրութեամբ անձիշդ նշանակուած, մասամբ նաեւ տպագրական վրիպակաց հետեւութեամբ անձշգութիւններ, եւ նմանք: Բայց նաեւ այս նկատմամբ ընդ հանրապէս խնամեալ գործ մըն է: Քանի մ'անձշգութիւնք ուղղած է արդէն Հեղինակը. (հմտ. էջ VIII:) Մնացեալներէն մեծագոյն մասն ինքնին կ'ուղղուին մտադիր ընթերցողին կողմանէ:

Բ.

Արշակ Ա. հիմնադիր Արշակունեաց, 250—  
 248 Ն. Ք: Միակ դրամ մը, որ շատ հազուագիւտ  
 է. եւ որչափ ալ շատ լաւ պահուած չըլլայ՝ անզու-  
 գական արժէք ունի, կշիռը՝ 3.64 գրամ. (Տխտ.  
 Ա. 1:) Առաջակողմը՝ արքային գլուխը՝ սաղաւարտ  
 այտապահ եւ պարանոցապահ մասերով այնպէս որ  
 միայն կիսագէմն ու ծնօտը բաց կը տեսնուի. նոյն  
 ժամանակի Սելեւկեան ազատաց սովորութեան հա-  
 մեմատ՝ անմօրուս, իսկ ականջն՝ պարսկական սովո-  
 րութեան համեմատ՝ օղ: Յետասակողմը՝ (AP)ΣΑΚΟΥ  
 (“Արշակայ”,) նոյնպէս արքային պատկերը՝ հեծելոյ  
 սպառազինութեամբ եւ սաղաւարտով, անթիկունք  
 գահի վրայ բազմած դէպ ի աջ, եւ կարկառուն աջ  
 ձեռքով աղեղ մը բռնած. աջակողմն՝ անորոշ A մը,  
 զոր երկբայութեամբ կը մեկնէ Հեղինակն՝ (իբրեւ  
 դրամահատութեան տեղը) “Ասասկ յԱստաւենէ”:

Այսպիսի կարեւոր դրամ մը այն տիեզերա-  
 կալ հարստութեան հիմնադրին՝ անշուշտ ուշա-  
 դրութեան այլեւայլ կէտեր կը պարունակէ: Հեղի-  
 նակը նշանաւոր կը գտնէ այն պարագան մանաւանդ՝  
 որ դրամին ամենայն հանգամանքն ժամանակին Սե-  
 լեւկեան դրամոց համեմատ են, եւ ըստ հետեւորդի  
 անոնց վրայէն կաղապարուած, եւ քիչ շատ այնու-  
 հետեւ հաստատուն կանոն եղած յետագայ ամէն  
 արքայից դրամներուն համար: Արդէն պատմական  
 հանգամանքներն՝ որչափ ծանօթ են՝ նոյնն ենթա-  
 դրել կու տան: Սելեւկեանց Անտիոքայ Բ. Թէոսի  
 ոյժերը Պտղոմէոս Փիղատեղփոսի դէմ մղած պա-  
 տերագմական գործողութեամբք այնպէս տկարա-



ցած էին, որ ընդարձակ պետութեան այլեւայլ մասերն սկսան փորձել ինքնակաց ըլլալ եւ յաջողեցան: Արդէն 256ին Բակտրիա անջատեցաւ, ուր Գիոգոտոս նոր պետութիւն մը հիմնեց՝ որուն կառավարիչք յոյն էին տոհմաւ: Պարթեւաց անջատումն եղաւ 250ին, Երանեան ոգւոյն կենդանանալովն. եւ պատերազմասէր ազատք՝ որոնք աստուածային յարգութիւն մը կը տածէին իրենց վաղեմի Աքամենեան հարստութեան համար, ոտք ելած սպանեցին Անտիոքայ տեղակալը կամ Պարթեւաց աշխարհի սատրապն՝ Ագաթոկղէս կամ Փերեկղէս, եւ զԱրշակ թագաւոր հռչակեցին Ասակ (Asak) քաղաքին մէջ: Այս քաղաքը բուն Պարթեւաստանի մէջ չըլլալով՝ այլ անոր հիւսիս-արեւմտակողմն Աստաւենէ փոքրիկ աշխարհին մէջ, կը հետեւցընէ Գուտշմիդ թէ Աստաւենէ էր Արշակունեաց բնիկ նիստը, եւ թէ Ագաթոկղէս ոչ այնչափ Պարթեւաստանի եպարքոսն էր՝ որչափ Աստաւենեայ սատրապը: Հեղինակը կը կարծէ թէ քանի որ Պարթեւաց ազատման մասին է միշտ խօսքը, կամ այն ժամանակ Աստաւենէ ալ պարթեւական սատրապութեան մասն էր, կամ թերեւս ապստամբ Պարթեւք իրենց բուն աշխարհին մէջ Անտիոքայ կողմնակիցներէն մերժուած՝ ստիպուած էին Աստաւենէ ապաստանիլ, եւ հոն կռուան գտնելով իրենց առաջնորդը՝ զԱրշակ թագաւոր հռչակել: Արշակայ իշխանութիւնն ի հարկէ շատ խռովայոյզ էր եւ շատ ալ կարճատեւ, զո՛հ ըլլալով իւր ճգանց. եւ միայն իւր եղբայրը Տրդատ — ըստ Գուտշմիդի եւ Շնայդերվերթի՝ ոչ 242էն յառաջ — յաջողեցաւ վերջնականապէս ազատել զՊարթեւաստան Մակեդոնական լծէն, եւ այն՝ օգնութեամբ Սկիւթական վարձկանազօրուն (Պառնեան Գահաց), Սելեւկոս Բ. ի Անդրագորաս սա-

1 Dr. J. Hermann Schneiderwirth, die Parther. Heiligenstadt 1874, էջ 8. Գուտշմ. 31:

տրապին դէմ: Այս հանգամանաց մէջ, մտադիր կ'ընէ Հեղինակը, բնական է նախ որ Արշակ Ա. որչափ ալ փոքրիկ էր տակաւին իւր պետութիւնն՝ սկսած է դրամահատութեան իրաւունքը գործածել. բայց միւս կողմանէ կարճատեւ եւ խռովայոյզ իշխանութեան ատեն այս իրաւունքն առատապէս գործադրելու պատեհութիւն ալ չունեցաւ: Ասոր վկայ է վերոյիշեալ ցանցառագոյն դրամը, պարզ «Արշակայ» վերնագրութեամբ, առանց որեւէ ուրիշ վերագրի: Բայց այս պարզ անունն այնուհետեւ հարստութեան անուն կը դառնայ՝ իւր ամէն յաջորդաց համար: Գրամին ամէն հանգամանքն՝ Սելեւկեանց հետեւողութիւն է. այսպէս՝ առաջակողման վրայ արքային պատկերը դնելն, որ այնուհետեւ այնպէս սովորութիւն կը մնայ ամէն Արշակունեաց արքայից համար: Ժամանակին Սելեւկեանց սովորութեան համեմատ է, ինչպէս յիշեցինք, թէ Արշակայ եւ թէ իւր եղբոր Տրդատայ անձօրուս ըլլալն, մինչդեռ պարսկական է՝ ականջի օղը: Սելեւկեան դրամոց համեմատ է յետսակողմն ալ, Արշակ հեծելոյ սպառազինութեամբ եւ սաղաւարտով՝ անթիկունք գահի վրայ նստած, եւ ձեռքը՝ աղեղ: Սելեւկեանց դրամոց տիպարին հետեւողութիւն կը տեսնուի նաեւ թէ հոս եւ թէ Արշակայ անմիջական յաջորդաց դրամներուն վրայ, որոնք իրենց հիմնադրին Արշակայ այն դիրքը կու տան — իբրեւ նշան աստուածային յարգութեան մը, — զոր ունի Սելեւկեան դրամոց վրայ Ապողոն զոր Սելեւկեանք ալ իրենց հիմնադիր հռչակել կը ճգնէին, նստած Գեղփիական «պորտաքարին» վրայ: Միայն վեցերորդ յաջորդին օրով նորութիւն մը կը տեսնուի. այսինքն՝ Արշակ նստած է բարձր թիկնագահի վրայ, այնպէս՝ ինչպէս Յոյնք կը ներկայացընեն զԶեւս Յաղթական, եւ ինչպէս կը տեսնուի նաեւ Սելեւկեանց Անտիոքայ Գ Եպիփանուս դրամին վրայ: Համեմատութեան համար նմանադրոշմով յառաջ բե-

բուած երկու Սելեւկեան դրամներն ալ Պետրովիչի հաւաքմանէն են: Գրամին յետսակողմն եզերքը գրուած է A, թէեւ բաւական մաշած, եւ կը մեկնուի իբրեւ մենագիր դրամահատութեան տեղւոյ, եւ նկատելով վերոյիշեալ պարագաներն՝ ըլլալու է Ասակ յԱստաւենէ: Շատ կարելի է, կ'ըսէ, որ այս տառը մնացորդ միայն ըլլայ մենաշրին, եւ թերեւս ամբողջական չէր դրոշմուած, անով որ անգիր դրամն՝ կոխելու ատեն՝ կաղապարէն մասամբ դուրս մնացած էր: Այս երեւոյթը շատ յաճախ է ամէն միւս դրամներուն վրայ ալ: Թէ՛ Ասորական եւ թէ՛ Պարթեւ դրամներու վրայ անթիւ յաճախութեամբ են յետսակողման մենագրերը եւ տառերը, որոնք իւրաքանչիւր դրամահատութեան տեղն ու փողերանոցը կը ցուցնէին: — Մի անգամ ըսենք որ դրամոց առաջակողման պատկերը միշտ կիսանձնեայ պատկեր է, ո՛չ լիապատկեր. եւ թէ ամէն արքայից արքայի պատկերն այնպէս է որ դէպ ի յ-ի կը նայի: Այնչափ կարեւոր է այս պարագան եւ առանց բացառութեան, որ ամէն այլակերպ դրամ չենք կրնար բուն որեւէ արքայի-արքայից ընծայել: (Տես էջ 1—4:)

Մտադիր կ'ընէ շեղինակն որ դասական պատմչաց առած տեղեկութիւնքն շատ թերակատար են թէ՛ այս գործողութեանց՝ նորագոյն պետութեան հիմնարկութեան, եւ թէ՛ հիմնադրաց՝ Արշակայ եւ Տրդատայ ծագման մասին, վերջինքս բաց աստի անճիշդ եւ հակասական: Ստրաբոն զԱրշակ Սկիւթացի յը կարծէ, բայց կը յաւելու թէ ուրիշները Բակտրիացի կը համարէին: Յուստին (ԽԱ, 4) զԱրշակ անծանօթ ծագմամբ կ'ըսէ. Առիանոս զԱրշակ եւ իւր եղբայրը Տրդատ կ'ըսէ որդիք Արշակայ, սերունդ Փրիապիտեայ (Arrian., fragm. ed. C. Müller, 248:) Ըստ Սինկեղեայ Արշակ եւ Տրդատ՝ Արտաշէս Բ. ի որդիքն էին, եւ կ'ըսէ ըստ Առիանու թէ այս երկու եղբարքը յառաջ Բակտրիացւոց աշխարհին մէկ կողմն սատրապ էին. (Syncell. Chron., ed. Bonn, 539:) Յիշեալ Շնայդերվիրթ գիտնականը վերոյիշեալ երկասի-

բութեան մէջ այս անմիաբան աւանդութիւնքն կը մեկնէ անով որ Ստրաբոն, Յուստին եւ ուրիշներն Արշակայ Ա եւ Տրդատայ Ա. անձնաւորութիւնքն իրարու ձուլած են: Դրամոց վրայ տեսնուած հանգամանքները, կ'ըսէ Հեղինակը, յատկապէս պարսկական ականջի օղը, նոյնպէս անուանց բնիկ պարսկական ըլլալը՝ հակառակ չեն Առիանու տուած տեղեկութեանց (առ Սինկեղեայ,) եւ ընդունելի կ'երեւայ այն կարծիքը թէ այս առաջին Արշակունեաց տոհմն այն պատերազմասէր ազատատոհմերէն էր, զորոնք ստիպուած էին Մակեդոնացիք՝ իրենց սակաւութեան եւ կղզիացման պատճառաւ՝ ընդունիլ նոյնպէս եւ ամէն կերպով գոհ ընելու ջանալ: (Տես Յուցակին էջ 1—4:) — Ըստ այսմ բոլորովին մտացածին ըլլալու չեն անագանագոյն աւանդութեան տեղեկութիւնքն, ինչպէս ի վերջոյ հակամէտ էր կարծելու նաեւ Գուտշմիդ (Պամ. Երանեանց, 29—31.) որ հաւանական կ'ընդունէր թէ Արշակ եւ Տիգրան պարզ հինահարաց խմբի մ'առաջնորդք էին: Մնացեալը, կ'ըսէ, յետոյ յարգարուեցաւ՝ երբ Արշակունիք արգէն իրականին Աքամենեանց ժառանգն եղած եւ իրենց արքունիքն ըստ այնմ կարգադրած էին, ուստի յիշեալ անագանագոյն աւանդութեան յիշած Արշակայ եւ Տիգրանայ գործակից հինգ անձինքն ըլլալուն են, կ'ըսէ, իրականին պարզ յիշատակ մ'այն մեծագոյն ազնուական տոհմերուն՝ զորոնք յետոյ կը տեսնենք, եւ որոնցմէ ըլլալու են նաեւ Կարէն, Սուրէն եւ Ասպահապետ պահլաւ արշակունի տոհմերը: Այս առթիւ մտադիր կ'ընէ Գուտշմիդ որ Խորենացի (Բ, իր) միայն այս երեք տոհմերը գիտէ, մինչդեռ ուրիշ կողմանէ Հայք (Ագաթ., Սեբէոս) Արշակունեաց տան չորս ճիւղեր կը դնեն, որմէ կը հետեւցընէ թէ վերջինքս տեղն անցած ըլլալու են միւս սպառած տոհմերուն: Բայց եւ Գուտշմիդ, որ կը հաստատէր թէ Պարթեւք տակաւին 105ին Ն. Ք. իրենց տէրութեան բուն հիմնարկութիւնը կը դնէին 248/7 տարւոյ աշնան, մինչդեռ Արշակ երկու տարի միայն իշխած եւ ըստ այսմ նոյն ժամանակ սպաննուած ըլլալու էր, գոնէ բուն Արշակայ պատմական ըլլալն անուրանալի կը գտնէր. — ներկայ դրամն ալ չգտնուած: Բաւական էր արգէն որ իւր եղբայրը՝ Տրդատ զինքն անմահացուցած էր իւր դրամոց յետսակողմը դրողմելով, եւ որ այնուհետեւ՝ Արշակ անուան հետ ալ՝ մնացած է նոյնպէս: (Գուտշմ. 29—31.)



տուածաճօր․)՝ շատ ցանցառ, ոչ շատ լաւ պա-  
 ճուած, կշիռը՝ 0.53 գր.: Բրիտ. Թանգարան ունի  
 դրամ մը նոյն տպով եւ արձանագրութեամբ:  
 Longpérierի թղթոց մէջ գտնուած էր նմանա-  
 դրոշմ մը արքայիս մէկ դրամին, զոր հրատարակած է  
 Drouin, սա անծանօթ վերնագրութեամբ βασιλεως  
 θεου Αρσαχου (“արքային աստուծոյ Արշակայ:”)

1 “ԹԷՊՊՐ” = “Աստուածաճայր:” Յաջորդաց  
 մէջ աւ Արշակներու կամ պարթեւ Արշակունեաց միւս  
 յորջորջանքներն, որոնք նմանողութիւն են նոյնպէս Սե-  
 լեւկեանց եւ Պտղոմեանց նման յորջորջանաց, կը դնենք  
 միշտ հայերէն թարգմանութեամբ, թէպէտ կարելի էր  
 պահել նաեւ յունական բառերը, ինչպէս սովոր ենք պա-  
 ճեւ նոյները՝ ի հարկէ մասամբ՝ Սելեւկեանց մասին (օր.  
 Նիկատոր, Սովտեր, Թէոս, Եպիփան եւն:): Գլխաւորներն  
 որ Պարթեւաց դրամներուն վրայ կը տեսնուին շատ յաճախ  
 կրկնուած, են՝ ԹԷՊՊ (Աստուած. Տրդատայ Ա, Միհրդատայ  
 Բ, Հրահատայ Գ.) ԹԷՊՊՐ (Տրդատայ Ա, Հրահատայ Բ,  
 Արտաւանայ Ա, Որոգեայ Ա, Միհրդատայ Գ.) ՓԷՊՊԷԴՊՊՐ =  
 “Եղբայրասէր” (Արշակայ Գ.) եւ ՓԷՂՏԷՂԷՆՊՊՐ = “Հելլենասէր”  
 (նախ նոյն Արշակայ Գ քով, յետոյ՝ յաճախ.) ԵՊԷԴՊՊՐ =  
 “Նշանաւոր, Հռչակաւոր” (նախ Արշակայ Ջ կամ Միհր-  
 դատայ Ա քով, յետոյ յաճախ.) ՍՎՊԷՐ = “Փրկիչ”  
 (միայն Միհրդատայ Ա.) ԵՒԷՐԳԷՊԷՐ = “Բարեգործ, բա-  
 րերար” (նախ Միհրդատայ Ա քով, յետոյ՝ յաճախ.) ԴԷԷՊՊՐ  
 = “Արդար” (նախ նոյն Միհրդատայ քով, յետոյ՝ յաճախ.)  
 ԵՒԷԲԷՐ = “Բարեպաշտ” (Միհրդատայ Ա.) ՆԷԷՊՊՐ =  
 “Յաղթող” (Արտաւանայ Ա.) ԱՊՊՊՐՊՊՐ = “Ինքնակալ”  
 (Արշակայ ԺԱ կամ Սանատրկոյ եւ Արշակայ ԺԳ, 2 կամ  
 Տրդատայ Բ.) ՓԷՂՊՊՊՐ = “Հայրասէր” (Արշակայ ԺԱ  
 կամ Սանատրկոյ, եւ Որոգեայ Ա, Միհրդատայ Գ.) ԵՊՊՊՐ  
 = “Բարեհայր, հօրեմոյն, (Հրահատայ Գ.) Կրթիչ”  
 = “Շինող” (Հրահատայ Գ.) ՓԷՂՏՐՊՊՐ = “Հռոմասէր”  
 (Տրդատայ Բ.) ՆԷԷԴՊՊՐ = “Յաղթակիր, յաղթութիւն-  
 արբեր” (Գոտարգայ.) թողլով նաեւ ՄՊՊՊ թագուհւոյ  
 յորջորջանքն ԹԷՊ ( = աստուածուրհի) ՈՐՊՊՐ (“Երկ-  
 նային:”) Այս ամէնն՝ ինչպէս ըսինք, հայերէն յիշեալ  
 թարգմանութեամբք դրինք յաջորդներուս մէջ:

Հեղինակն՝ որ նոյն դրոշմն տեսած է անձամբ, կը հաստատէ որ ստուգիւ վաւերական դրամի մը դրոշմն է. եւ քանի որ արդէն «աստուածահայր» յորջորջանքը կը գտնենք արքայիս դրամներուն վրայ՝ անհաւատալի չէ որ «աստուած» յորջորջանքն ալ կրած ըլլայ: Այս յորջորջանքը կը հաստատէ պատմաբանից այն կարծիքը թէ Արշակունեաց պաշտօնական աւանդութիւնն էր՝ իրենց տոհմը սերած համարիլ Աքամենեանց տոհմէն՝ որոնք Երանեանց քով աստուածային յարգութիւն մը կը վայելէին: Եւ այս աւանդութեան հակառակ չեն ելլեր ճիշդ ծանօթ պատմական պարագաները՝ Արշակայ (որ ի բնէ անզօր էր եւ ստիպուած Գիողոտոսէն փախչիլ ի Պարթեւս,) թագաւոր հռչակուիլը, Արշակունեաց բնիկ պարսկական անուանքն, Արշակունեաց դրամապատկերները՝ որ յայտնապէս Արիական դիմագծով են. իրենց կրօնքը՝ զրադաշտական է, եւ իրենց դրամներու վրայ ալ պահլաւ արձանագիրներ չեն պակսիր: Ուստի, կ'ըսէ Հեղինակը, ճիշդ այս առաջին արքայից «աստուած» եւ «աստուածահայր» յորջորջումն այնպիսի ժամանակ մ'որ իրերուն շատ մօտ էր, կը հաստատէ Արշակունեաց արքամենեան սերունդ մ'ըլլալու աւանդութիւնը. (էջ 5—8:)

Պարթեւական գահուն բուն հաստատողը կրնանք այս առաջին Տրդատը համարիլ, ինքն ըլլալով որ իրական զօրութեան մը հասցուց նոր պետութիւնը: Ժամանակներն ալ յարմար էին: Սելեւկեանց Անտիոքայ Բ Թէոսի (261—246) յոռի վարչութեան, որով դիւրութիւն ունեցաւ Բակարիա անջատուելու եւ որուն օրինակին քիչ մ'ետքն հետեւեցան Պարթեւք, յաջորդած էր Սելեւկոս Բ Վալինիկոս (246—226,) որուն ժամանակն է այն մեծ պատերազմն զոր Պտղոմէոս Եւերգետէս մղեց Սելեւկեանց դէմ՝ նուաճելով Միջագետքն, Բարեւաստան, Շոշաստան, Մարաստան եւն. եւ յետոյ ծագեցաւ եղբայրասպան պատերազմն այս Սելեւկայ եւ իւր Անտիոքոս եղբօր մէջ, եւ որոշիչ ճակատամարտին մէջ Անկիւրեսոյ մօտ (242—1) Սելեւկոս բոլորովին

յաղթուեցաւ : Այս վայրկեանն էր զոր գործածեց Տրդատ իւր Պառնեանց (Պարթացոց) հետ մտնելով Պարթեաստան, եւ սպաննելով Անդրագորաս սատրապը՝ գրաւեց երկիրը : Քիչ մ'ետքն ալ յաջողեցաւ բռնել նաեւ Արկանաց աշխարհն, որով արդէն նշանաւոր զօրութիւն մը ստեղծած էր : Սելեւկոս՝ որ ի վերջոյ Եգիպտոսի հետ խաղաղութիւն բրած էւ նաեւ եղբօր դէմ զօրացած էր (նշ 238էն յառաջ ըստ Գուտշմ.) փորձեց այս աշխարհները կրկին հնազանդեցընել : Բայց Տրդատ՝ որ դաշնակցութիւն մըն ալ կապած էր Բակարիոյ արքային Դիոդոտայ Բ հետ, յաջողեցաւ Սելեւկեանց բանակին դէմ տուած ճակատին մէջ յաղթել. եւ այս օրը այնու հետեւ Պարթեւք իբրեւ իրենց ազատութեան օրը կը տօնէին (Գուտշմ. անդ 34) : Միւս կողմանէ Սելեւկեանց քով կրկին խռովութիւնք ծագած ըլլալով՝ Սելեւկոս ստիպուեցաւ դառնալ, որով իրականին Բակարիա եւ Պարթեաստան ժամանակ գտան իրենց նոր վիճակն ապահով հիման վրայ դնել եւ զօրացընել : Տրդատ վերակազմեց բանակն, շինեց ամուրներ, կանգնեց Գարա քաղաքն. իւր ճշտութեան եւ ազդեցութեան շափը կը տեսնուի անկէ որ ինքն առած է նախ մեծ արքայ, տիրողսըր : (Տես Գուտշմ. 31—34)

(Արշ-ի Գ.) Արշ-ի Բ, 210—191 ն. Ք. (ուրիշներէն Արշ-ի Ա կոչուած, ըստ Գուտշմ. էջ 36 պարզ Vaillant գիտնոյն մէկ վրիպակին հետեւութեամբ.) 12 կտոր, վեց՝ դրամ, երեք՝ լուծայ եւ երեք՝ պղինձ. լուծայք շատ ցանցառ, նաեւ ցանցառ՝ երկու դրամ (մին՝ Ալիշանէ) : Արքային պատկերն արդէն այլազգ է, այսինքն՝ Գրամոց վրայ՝ Արշակ Բ (Արիական դիմագծով) երկայնամօրուս, թեթեւ գանգրահեր, գլուխը՝ ապարօշ, ականջն՝ օղու վիզը՝ մանեակ : Յետսակողմը՝ βασιλεως μεγαλου Αρσαχου («արքային մեծի Արշակայ») : Արշակ Ա նստած՝ աղեղնաւոր, պորտաքարի վրայ, գլուխը սաղաւարտ, սպառազէն, եւ ոտքերը՝ տրեխ : Լուծայից վրայ ալ առաջակողման եւ յետսակողման պատկերը նոյն է : Պղինձներուն վրայ՝ առաջակողմը նոյն, յետսակողմը՝ ձիապատկեր : Աշիւ դրամներուն՝ 3.40—3.95 գր., լուծայից՝ 0.57—0.61, եւ պղինձներուն՝ 2.05—2.83 գր. : (Տես էջ 9—10.)



Տրդատ կ'ապրէր ոչ միայն յիշեալ Սելեւկոսի Բ, այլ եւ Սելեւկոսի Գ Սովտերի (226-223 Ն. Ք.) եւ Անտիոքայ Գ Մեծի (223-187) առաջին տարիները: Սակայն Անտիոքայ Գ բուն ժամանակակիցն էր այս Արշակ Բ, որուն դէմ արշաւեց Անտիոքոս: Բայց Պարթեւներէն աւելի ուրիշ անմիջական հոգեր ունէր. ի սկզբան մանաւանդ Մարաստան կ'ուզէր նոյն օրինակին հետեւիլ, եւ անոր սատրապը Մոլոն 222ին օգնութեամբ իւր եղբօր՝ Պարսիսի կամ բնիկ Պարսկաստանի սատրապին՝ Աղեքսանդր անուն, թագկապեց: Բայց փորձն այս անգամ յաջող չէր: Անտիոքոս շարաշար խորտակեց ապստամբները (220ին,) եւ Մոլոն եւ իւր օգնականք անձնասպան եղան: Նոյն տարին Անտիոքոս արշաւանք մ'ալ ըրաւ Ջագրոսէն անդին Արտաբազանեայ (Արտաւազ) երկիրն, որ կ'իշխէր Ատրպատականացւոց եւ շրջակայից (Գուտշմ. 36 կ'ըսէ նաեւ մանաւանդ Արեւելեան մէկ մասին Հայոց, հետեւցընելով Պողիւբ. Ե, 55, 7 տրուած տեղեկութենէն, որ Արտաւազայ երկրին սահմանակից կը դնէ Փասիսէն վեր բնակող Պոնտական ազգերը.) եւ ստիպեց զԱրտաւազ Անտիոքոսի համար շահաւոր դաշնագրութիւն մը կնքելու: Յաջորդ տարիներն ալ ուրիշ գործերով զբաղած էր. այսպէս նաեւ կարգադրելու Արշամաշատի Հայոց արքայութեան խնդիրը, որուն Շաւարշ (Քսերքսէս) արքայն սպաննուած էր իւր իսկ կնոջմէն, որ Անտիոքոսի քոյրն էր. (Գուտշմ. 36, ըստ Յովհաննու Անտիոքացւոյ հրտ. Müller, IV, 557:) Մարաստանի գործերէն ետքն (209ին)՝ սկսաւ իւր արշաւանքը Պարթեւաց դէմ, որոնց արքայն էր այն ժամանակ Արշակ Բ.: Այս արշաւանքին պատմութիւնը մանրամասնօրէն յայտնի չէ. կը պատմուի միայն որ Պարթեւք իրենց տկարութիւնը տեսնելով՝ միշտ ետ քաշուեցան, եւ Անտիոքոս կրցաւ Լաբուտի լեռներէն ալ անցնելով Արկանաց աշխարհը մտնել, թէեւ Պարթեւք զուր աշխատեցան այս անցքն արգիլել, եւ պաշարել Սիրիւնկա քաղաքն՝ ուր Պարթեւք ապաստանած էին, եւ առնուլ: Ի վերջոյ խաղաղութեան դաշինք մը դրուեցաւ, որով Արշակ թէեւ պահեց իւր իշխանութիւնը, բայց ըստ Գուտշմ. (անդ 37) անշուշտ ստիպուած էր սելեւկեան գերիշխանութիւնը ճանչնալ: Սակայն Փրիապատայ գրամներուն համեմատ այսչափ ալ մեծ չէր Սելեւկեանց յաջողութիւնը: Ընդհակառակն Մարաց մէկ մասը Պարթեւաց ձեռքն անցած ըլլալու է գոնէ քիչ մ'ետքը (տես վարը:) Ասկէ ետքն է որ արշաւեց Բակ-

տրիական թագաւորութեան դէմ, որուն վերջնական արդիւնքն ալ նման մեղմութեամբ կարգադրուեցաւ դաշամբ մը (206ի): Անտիոքայ միւս մեծագործ արշաւանքներն մեր ծրագրէն դուրս կը մնան: Իւր վերջը Ռայն յաջող չէր: Գրամական նեղութիւնը ստիպած էր զինքն Շօշ երթալով պատրուակաւ մը կողոպտել Բելայ հարուստ տաճարն յԵղիւմայիս: Այս գործն ի հարկէ գրգռեց Եղիւմայիսացիքն, որ ոտք ելած սպաննեցին զինքն եւ իրեն ընկերացող բանակը ջախջախեցին (187 Ն. Ք): Ասկէ սկսած ըլլալու է ըստ Գուտշմ. Եղիւմայիսի անկախութիւնն, որ Շօշաստանի լեռնոտ մասին մէջ փոքրիկ արքայութիւն մ'եղաւ: (Տես Գուտշմ. 34—9:)

(Արշակ Գ.) Փրիպատի (Phriapatius), 191—176 Ն. Ք., 12 կտոր՝ կրկին խմբի բաժնուած: — Նախ՝ 9 դրամ: Յառաջակողմը Փրիպատեայ Ա (արիական դիմագծով) արքային պատկերը սրածայր մօրուօք, գանգրահեր, գլուխն՝ ապարօշ, ականջն՝ օղ, վիզը՝ մանեակ, եւ կուրծքը՝ լանջապանակ: Յետսակողմը՝ Արշակ Ա նստած պորտաքարի վրայ՝ աղեղնաւոր, գլուխը սաղաւարտ, հեծելոյ սպառազինութեամբ, ոտքերը՝ տրեխ, վերնագրութեամբս βασιλεως μεγαλου Αρσαχου φιλαδελφου (արքային մեծի Արշակայ Եղբայրասիրի», Թ. 1 վերջինն գրուած վրիպակաւ φιλλαταιου). ինն հատ ցանցառ դրամներ են, կշիռնին 3.50—4.78 գր., մին (Թ. 9) շատ ցանցառ՝ Ալիշանի հաւաքմանէն, արքային գլխուն քով մենագրովս PA, զոր կը մեկնէ (իբրեւ դրամահատութեան տեղը) Ռագա ի Մարս: Այս պարագան նշանաւոր է այնու որ կը ցուցնէ թէ Սելեւկեանց Անտիոքոսի Գ եւ Արշակունեաց Արշակայ Բ կռած խաղաղութեան դաշինքն շատ աւելի նպաստաւոր էր Պարթեւաց համար, եւ ոչ եթէ այնպէս աննպաստ, ինչպէս ցայսօր կը կարծուէր. այլ ընդհակառակն Մարաց աշխարհէն գոնէ մաս մը Պարթեւաց ձեռքն ինկած էր: Ճիշդ նման դրամ ալ ունէր ռուս զօրավարն Աոմարով, այն տարբերութեամբ որ

Մենագիրն է MAT, եւ զոր Մարկով գիտնականն՝ որ վերոյիշեալ տեղը հրատարակած է գրամս, կը մեկնէ նոյնպէս՝ Մարտի-նէ ի Մարտ. այսինքն՝ հոն գրոշմուած: — Երկրորդ խմբին կը պատկանին գրամ մը (Թ. 10 շատ ցանցառ) եւ երկու ցանցառ պղինձներ, ընդհանրապէս նոյն տպով: Գրամին առաջակողմը՝ Փրիպատէս Ա (արիական դիմագծով.) ճօրութիւն սրածայր, մազը՝ գանգուրներով, նոյն՝ ապարօշ, օղ, մանեակ եւ լանջապանակ: Յետասակողմը՝ Արշակ Ա աղեղնաւոր՝ պորտաքարի վրայ, սաղաւարտաւոր, սպառազէն, եւ ոտքը՝ տրեխ: Արձանագրութեան մէջ կ'աւելնայ «Հելլենասէր», այսպէս՝ (βασι)λεως (με)γαλου Αρσαχου (φι)λαδελφου (φιλε)λληνος («արքայի մեծի Արշակայ Եղբայրասիրի Հելլենասիրի:») Կշիւք՝ 3.77 գր.: Պղինձներուն ալ (Թ. 11—12) առաջակողմը նոյն յետասակողմն՝ արձանագիրը նոյն, բայց անորոշ պատկերը՝ ձի մը. կշիւք՝ 5.78 եւ 6.24 գր.: Թ. 10 գրամն այն կարեւորութիւնն ալ ունի որ յետասակողմը կայ թուականս EKP = 125 Սելեւկեան թուականութեան: Այս երկու նորութիւնք ալ նշանաւոր կէտեր են: Առաջինը Փիլեւղի «Հելլենասէր» կը ցուցընէ որ յիշատակ մըն է նոյն ժամանակ արքայից արքային իշխանութեան ներքեւ ծաղկող յունական քաղաքաց եւ նոր իշխանաց անոնց բնակչաց հանդէպ ունեցած համակրութեան, եւ այնուհետեւ սովորական տիտղոս մը կը դառնայ յաջորդ ամէն արքայից համար: Թուականն որոշ նշան է որ ժամանակի վերաբերելուն, որ հոս ալ միայն Սելեւկեան թուականութիւն կրնայ ըլլալ, արդէն շատ յաճախ՝ յաջորդ ժամանակի գրամոց վրայ: Ունայն փորձ մը կ'ըլլար՝ ըսենք՝ Արշակունի թուականութիւն մը մտածել: Այս պարագային գրամը պէտք էր յետաձգել Ութերորդ Արշակունւոյ՝ Արտաւանայ Ա օրերը, որուն ամենեւին չի յարմարիր՝ բայց ի ուրիշ կէտերէ՝

Թագաւորին պատկերը: Հոս արքայն տակաւին առոյգ է, մինչդեռ գիտենք որ Արտաւան Ա. ծերութեան միայն գահ բարձրացաւ: — Ճիշդ այս արքայի դրամոց եւ նաեւ պատկերին ալ նման է մինայն դրամներէն, զորոնք ուրիշ դրամագէտք անյարմար կերպով կը փորձեն դասաւորել պարթեւականաց շարքին մէջ այս կամ այն տեղը, եւ Հեղինակը բաւական համոզիչ փաստերով կը ցուցնէ թէ չեն «արքայից արքայի» դրամներ, այլ հաւանականօրէն Հայ Արշակունեաց: Արդէն այն շատ նման դրամն որոշ թուական ունի՝ 188 Սելեւկ., որով ո՛չ թէ Փրիապատեայ, այլ Արտաւանայ Ա ժամանակակից անձէ մ'ըլլալու է: Նոյն կարգի է ուրիշ դրամ մըն ալ, որ հաւանութեամբ նոյնպէս չէ բնիկ պարթեւական, այլ ըստ ամենայն հաւանականութեան Վամնասկիրեայ հարստութեան, որ միանգամայն գեղեցիկ հաստատութիւն մը է Հայ Արշակունեաց դրամոց ժամանակակից գոյութեան: Այս մասին յետոյ: — Բրիտանական Թանգարանը նշանաւոր դրամ մ'ալ կայ, մէկ կողմը Փրիապատեայ պատկերով, միւս կողմն իւր յաջորդին՝ Հրահատայ Ա. սովորական արձանագրութեամբ: Ըսել է յետսակողմը յետոյ կրկին դրոշմուած է Հրահատայ օրով: Նման գէպքեր ծանօթ են նաեւ այլուստ<sup>1</sup>: (Տես էջ 11—17):

<sup>1</sup> Տես Հեղինակիս քով էջ 16—7: Դրամը մանրամասն նկարագրած է W. Wroth (Catalogue etc., նմանագրողմը՝ անդ Տխտ. Ե, 3): Արձանագիրը շորեքտողեան եւ կրկին դրոշմելուն պատճառաւ առաջին βασιλεως μεγαλου («արքայի մեծի») բառերն այլայլած. մնացեալը Αρσακου θεοπατορος («Արշակայ աստուածաճօր») տակաւին որոշ կը տեսնուի: Նման գէպքեր՝ դրամոց կրկին դրոշմուածներ կը նշանակէ Բարըլոն իւր նշանաւոր երկասիրութեան մէջ՝ Ernest Babelon, Les rois de Syrie, d'Arménie et de Comagène. (Paris 1887—8) Ներածութիւն էջ 246: Այս գործոյս Հայոց վերաբերեալ մասը

Երկու արքայից՝ Փրիապատեայ (191—176 Ն. Ք.) եւ Հրահատայ Ա (176—171) օրով անշուշտ աւելի զօրացած էր Պարթեւաց պետութիւնն որ կրնար այնուհետեւ Միհրդատ Ա յը դերիշխան իշխանութիւն ընել անկէ բոլոր արեւելեան Երանի վրայ: Բայց պատմագրաց աւանդածը մեծ բան չէ: Հրահատ Ա կը պատմուի որ նուաճեց Մարդաստանի քաջ ժողովուրդն եւ փոխադրեց զանոնք ի Charax. Ըստ Գուտշմիդի՝ այս քաղաքն կասպից Գրանց մօտ ըլլալով, կը հետեւի որ Պարթեւք արդէն առած էին կոմշ եւ խուար աշխարհները՝ Մարաստանէն առնլով: Ուստի, կ'ըսէ Գուտշմիդ, Անտիոքայ Մեծի մահուանէ ետքն եղածն ըլլալու է այս: Եւ եթէ նկատենք որ նոյն Choarene աշխարհի մէջ էր Ապամէա՝ միակ զուտ յունական քաղաքն Պարթեւաց հին կալուածոց մէջ, ի նկատի ունենալով ճիշդ Փրիապատեայ առաջին անգամ առած «Փիւհիւլէն» (= Հիւլենասէր) տիտղոսն Սելեւկեան ալ թուականաւ եւ այն դարձեալ ճիշդ Անտիոքոսի Գ մահուան տարիէն (համալ. վերը Փրիապատեայ Թ. 10՝ Սելեւկ. 125 տարիէն = 187—6 Ն. Ք.) կը հետեւի որ Փրիապատէս էր այս աշխարհներն առնողն, որով իրօք «Հելլենասէր» ըլլալու առիթ ունէր: (Գուտշմ. 43—44:)

(Արշակ Ե.) Հրահատ Ա. 176—171 Ն. Ք. 22 կտոր՝ երկու խմբով. — Նախ 5 կտոր՝ մէկ դրամ, մէկ լումայ եւ երեք պղինձ: Գրամն եւ լումայն շատ ցանցառ՝ Ալիշանի հաւաքմանէն: Առաջակողմն Հրահատ Ա արքային պատկերը՝ կարճ մօրուօք, գանգրահեր, նոյն՝ ապարօշ, օղ եւ մանեակ. յետսա-

տեա «Բարիզու Ազգային Թանգարանին Հայկական դրամք», ԲԶՄ, 1897, էջ 109—112, 113—9, 136—41, 153—6: Նշանաւոր է նաեւ նոյն Հելլենակին՝ Աքամենեան Գրամոց Ցուցակը (Պարիս 1893: ) — Գուտշմիդ այս արքային «Փիլատեղփոս» յորջորջանքը հակամէտ է մեկնելու անով որ թերեւս ըստ հին պարսկական սովորութեան քոյրն առած էր կնութեան, եւ «Հելլենասէր» յորջորջանքը նշանակալից կը համարի այն վայրկենին, երբ Սելեւկեանց ճոխութիւնը նուազելու վրայ էր: Պարթեւք ասով պաշտպան հանգիսացած հրապարակաւ մակեդոնական-յունական հաստատութեանց՝ արդէն ցոյց կու տային իրենց ապագայ ծրագիրը: (Գուտշմ. 43:)

կողմն՝ Արշակ նստած՝ օղեղնաւոր, պորտաքարի վրայ, սաղաւարտաւոր, սպառազէն եւ ոտքը՝ տրեխ. արձանագրութեամբս՝ βασιλεως μεγαλου Αρσαχου (“արքային մեծի Արշակայ,”) Լուծայի (թ. 2) յետսակողմն ալ նոյն արձանագրութիւնն է, բայց “մեծի” բառն կաղապարէն դուրս մնացած է. պատկերը՝ երկու դիոսկուրեան գլխարկ եւ երկու արմաւենւոյ ոտ. գլխարկներուն վրայ՝ երկու աստղ: Աշխարհ՝ 0.61 գր.: Պղինձներու ալ առաջակողման պատկերը նոյն, եւ նաեւ յետսակողման արձանագիրը. պատկերը՝ ձի: Աշխարհ՝ 4.82 (թ. 3.) 3.06 (թ. 4) եւ 2.61 (թ. 5): — Միւս խմբին կը վերաբերին՝ 11 դրամ (թ. 6—16) եւ 6 պղինձ (թ. 17—22) ճիշդ նոյն տպով՝ բայց սա արձանագրութեամբս՝ βασιλεως μεγαλου Αρσαχου θεοπατορος (“արքային մեծի Արշակայ աստուածասօր.”) բայց նաեւ պէսպէս առանձնայատկութեամբք, եւ մենագրերով: Ի մասնաւորի թ. 7 արքային գլխուն քով ունի A. թ. 8՝ մենագիր. թիւ 9 արքային գլխուն քով ունի դրամաճատութեան տեղին ΑΠΑ (Ապամէա.) թիւ 10 Ալիշանի Տաւաքձանէն IN. թ. 11՝ MI. թ. 12՝ NI. թիւ 13 լիովին գրուած դրամաճատութեան տեղը NICAIA. եւ յետսակողմն “արքայի Արշակայ,” բառերը ստորագծուած (նոյնպէս թ. 14). թ. 15—6 TAM, իսկ թ. 14 CVΛΣ. Աշխարհին՝ 3.61—4.61 գր.: Պղինձներու յետսակողմն նոյն արձանագրութեամբ, բայց ձիապատկեր եւ փղապատկեր. (առաջակողման արքայի պատկերն առանց մանեկի է): Աշխարհին պէսպէս՝ 1.63 էն մինչեւ 3.78 գր.: — Դրամ թիւ 6ի Տամմատ լուծայ մ’ալ կայ այս Հրաճատայ՝ Բրիտ. թանգարանը, եւ նոյն դրամին տպով ուրիշ դրամ մը Պետերսբուրգի կայսերական թանգարանը սա տարբերութեամբ որ առաջակողման արքայի գլխուն քով գրուած է ΕΠΑΡ, Տրատարակուած Մակարովէն յիշեալ տեղը: (Տես էջ 18—20:)

Հրահատայ մասին տես նախընթացը: Գասական մատենագրաց ալ Սեւեւեանց եւ արեւելեանց մասին հաղորդածներն աւելի կարեւոր բան մը չեն պարունակեր: Մեզի համար կարեւորն է այս ժամանակի համար Հայոց աշխարհի ալ խնդիրն, որ ի վերջոյ կապ ունի նաեւ Արշակունեաց հետ՝ այն կողմանէ թէ արդեօք արդէն որեւէ ազդեցութիւն մը կը նշմարուէր ի Հայս, ինչպէս կարծես կ'ուզէ հաստատել Խորենացոյ գիրքը: Արեւելից ապագայ ամբողջ պատմութեան համար նշանակալից եղաւ Սեւեւեանց եւ Հռոմայեցոց իրարու հետ բախիլը: Անտիոքայ Գ Մեծի պարտութիւնն Մազնիսեայ քով (190 Ն. Ք.) նշանանաւոր կէտ մ'եղաւ, ոչ միայն Պարթեւաց համար, որ այնուհետեւ կրնային կամաց կամաց դէպ ի արեւմուտք տարածել իրենց իշխանութիւնը, այլ նաեւ Հայոց: Հայք արդէն Սեւեւեանց տակ քիչ շատ անուանական միայն էին, եւ այն սատրապներ՝ զոր մերթ ընդ մերթ յիշուած կը գտնենք՝ աւելի իրօք արքայներ էին, որոնք ի հարկին Սեւեւեան իշխանութիւնը կը ճանչնային, որչափ որ կը զօրէր անոնց զօրութիւնը: Այսպէս ալ կը յիշուին արքայքս Արտաւազդ 301 Ն. Ք. տարիէն (Գիող., Մնացորդք ԼԱ, 19, 5.) Արշամ իբր 240ին (Պողիէն. Գ. 17.) Շաւարշ (Քսերքսէս) Արշամաշատայ 215ին, զոր վերն յիշեցինք (Պողիբ, Մնացորդք Ը, 25) եւ ուրիշ մը 260ին կը յիշէ Մեմմոն (տես Գարագաշ, Պամ. Հայոց, Բ, 130, ըստ Թ. Ռայնախի, եւ այլոց:) Յիշեալ մեծ պարտութենէն ետքը (189), կ'աւանդեն դասական պատմիչք, Անտիոքայ երկու զօրավարքն՝ որ Հայոց սատրապ դրուած էին (այսինքն ուրեմն ի բնէ երկու փոքր արքայք) Արտաշէս (Արտաքսիաս) եւ Չարեհ (Չարիադրէս) վերջնականապէս անկախ եղած էին, երկու արքայութեանց գլուխ ըլլալով, Արտաշէս՝ Մեծ Հայոց եւ Չարեհ՝ Ծոփաց (եւ մասին Փոքր Հայոց). եւ երկուքն ալ այնուհետեւ զարգացած կը տեսնենք: Մանրամասնութիւնքն թողլով՝ բաւ է յիշել որ Անտիոքայ Մեծի յաջորդը՝ Սեւեւեոս Գ Փիղոպատոր (187—175) տկար էր, եւ դժուարաւ կրնար շարեացն առջեւ առնուլ: Յաջորդը՝ Անտիոքոս Գ Եպիփան (175—164) իրօք հզօրագոյններէն մին էր Սեւեւեանց, թէեւ ի վերջոյ իւր ալ ճգունքը՝ Սեւեւեան պատմութեան նախկին փայլը տալն՝ անօգուտ եղան: Ասոր գործերէն մին եղաւ եւ այն՝ արքունի միշտ դատարկ գանձը լրացընելու համար՝ արշաւել Եփրատէն առջին

(166ին:) Անտիոքոս Եպիփան դիմեց նախ ի Հայս, եւ այն՝ յաջողութեամբ, մինչեւ անգամ յիշեալ Արտաշէս իւր ձեռքն ինկաւ, բայց նոյն իսկ այն պարագան՝ որ Արտաշէս կրկին ընդունեցաւ եւ պահեց իւր արքայութիւնը, կը ցուցընէ որ հոս ալ իրերն այն վիճակի մէջ էին՝ ինչ վիճակի մէջ էին Պարթեւացն՝ Անտիոքայ Մեծի արշաւանաց օրով (տես վերը՝ էջ 21:) Եպիփանու միւս գործերը՝ հոս կրնանք թողուլ՝ իւր արշաւանք ի բուն Պարսկաստան (Պարսիս) եւ Պարսից ծոցը, եւն: Իրեն վախճանին մօտերն ալ այնպէս կը պատմուի ինչպէս էր Անտիոքայ Մեծինն, այսինքն՝ լսելով որ Եղիւմայիսացիք Նանէա տիկնոջ հարուստ մեհեան մ'ունին, ուզեց կողոպտել, բայց շտաղկեցաւ: Մեռած կ'ըսուի 164ին Պարսից Տարէ քաղաքին մէջ՝ իրեն յաջորդներուն թողլով Միհրդատայ Ա նման հակառակորդ մը: (Տես Գուտշմ. 40—42:)

(Արշ. 2.) Միհրդատ Ա. 171—138 Ն. Ք. 79 կտոր՝ բազմաթիւ պէսպիսութեամբք եւ պէսպէս խմբերով: Նախ կան երկու դրամ, մին Մորդտմանի՝ միւսն Ալիշանի հաւաքմանէն, երկուքն ալ շատ ցանցառ, առաջինը 3.69 դր., երկրորդը 4.30 դր.: Առաջակողմը՝ Միհրդատայ Ա պատկերը (արիական դիմագծով) որ լիամօրուս է եւ թեթեւ գանգրահեր, նոյն՝ ապարօշ, ականջի օղ, մանեակ եւ լանջապանակ: Յետսակողմը՝ Արշակ նստած՝ աղեղնաւոր, պորտաքարի վրայ, սաղաւարտով, սպառազէն եւ ոտքերը՝ տրեխ: Արձանագիրը՝ βασιλεως μεγαλου Αρσαχου σωτηρος (“արքայի մեծի Արշակայ Փրկչի”): — Երկրորդ խումբը շատ բազմաթիւ է երկու բաժնով: Նախ վեց երկդրամեան (Թ. 3—8), 13 դրամ, մէկ երեքլումայ եւ եօթն պղինձ: Առաջակողման՝ Զորեքդրամեանց արքայի պատկերը նոյնպէս, յետսակողմը նոյնպէս՝ Արշակ Ա նստած, եւ աղեղնաւոր, սպառազէն, տրեխով եւն. բայց վերնագրութեամբս՝ βασιλεως μεγαλου Αρσαχου επιφανους (“արքայի մեծի Արշակայ Նշանաւորի”): Ասոնց մեծագոյն մասն այլեւայլ առանձնայատկութեամբք



է, եւ մենագրերով (Թ. 7—8 TY), առհասարակ շատր՝ ցանցառ եւ շատ ցանցառ (Ալիշանի, Մորդտմանի հաւաքումներէն, մէկ քանին Ադլէրի հաւաքմանէ ի Բաղդադ:) կշիռն՝ 14.83 մինչեւ 16.05 գր.: Նոյն կարգի ուրիշ չորեքդրամեան մ'ալ կայ այլաձեւ մենագրերով՝ Պետերսբուրգի թանգարանը: Գրամներուն ալ (Թ. 9—20) թէ՛ առաջակողմը եւ թէ՛ յետսակողմը նոյն է եւ նոյն արձանագրութեամբ, բայց բազմաթիւ մենագրերով, բաւական մաս մը շատ ցանցառ (Ալիշանի եւ Մորդտմանի հաւաքումներէ.) կշիռնին՝ 3.12 մինչեւ 4.25 գր.: Թ. 22 ալ դրամ է, որուն վրայ արքային լիամօրուքն սրածայր է: Երեքլումայն (Թ. 21) որ շատ ցանցառ է՝ չորս տողով արձանագրութիւն մ'ունի, բայց անընթեռնլի է. կշիռն՝ 2.02 գր.: Պղինձներու (Թ. 23—9) առաջակողմը նոյն. յետսակողմը նոյն արձանագրով, բայց պատկերը կամ ձիապատկեր է կամ ձիու գլուխ, թիւ 27 Յաղթութիւն՝ աջ ձեռքը պսակ բռնած, թիւ 28—9՝ պատկանդարան: Նաեւ ասոնց ոմանք մենագրեր ունին, այսպէս Թ. 26՝ Մլ. կշիռն՝ պէսպէս 1.50 էն մինչեւ 8.30 գր.: — Նոյն խմբին երկրորդ բաժինը կը պարունակէ 11 դրամ եւ 6 պղինձ, (Թ. 30—46) ընդհանրապէս նոյն տպով եւ նոյն վերնագրով, բայց սա տարբերութեամբ որ արքային պատկերն՝ երկար ու սրածայր մօրուօք է, եւ պարանոցի մանեակը զարդով, եւ մանաւանդ յետսակողմն ցայժմ տիրող անթիկունք ակտուին տեղը՝ բարձր թիկունքներով գահոյք կը սկսի, որուն վրայ բազմած է Արշակ Ա սպառազէն, սաղաւարտով, աղեղնաւոր, ոտքը տրեխ. (միշտ աջով աղեղ բռնած:) Արձանագիրը նոյն՝ «Արքայի մեծի Արշակայ Նշանաւորի:» Նաեւ ասոնց շատր պէսպէս մենագրերով է եւ ուրիշ առանձնայատկութեամբք. այսպէս թիւ 31 լանջապանակին վրայ մահիկ մ'ունի. Թ. 34 Արշակայ գահին ետեւ՝ Δ (նոյն

Թ. 35.) եւ նոյն տեղը Թ. 36, 39՝ Ե, Թ. 37՝ Լ, Թ. 40՝ Է: Մեծ մասը՝ ցանցառ եւ ցանցառագոյն: Դրամներուն կշիռն է 3.08էն մինչեւ 4.16 գր.: Նոյն տպով են պղինձները, միայն յետսակողմը՝ ձիագլուխ, պատկանդարան, եւ (Թիւ 46) Յաղթութիւն ձեռքը պսակ. Թ. 43—4 արքայի գլխուն ետեւ՝ Մ. կշիռն՝ 1.00էն մինչեւ 5.87 գր.: — Երրորդ խումբը նոյնպէս կրկին բաժնով է: Երկու բաժնին ալ յատուկ է այսուհետեւ “*ար+այից ար+այ*” վերնագիրն, որ ասկէ կը սկսի. բայց իրարմէ կը բաժնուին անով որ առաջին բաժնին դրամներուն վրայ արքային գլուխն ապարօշ է, իսկ երկրորդին մէջ՝ սաղաւարտ զարդարուն: Ա բաժնին կը վերաբերին վեց դրամ եւ ութ պղինձ (Թ. 47—60.): Արքային մօրուքը շատ երկայն է եւ սրածայր, մազը՝ գանգուր., նոյն ապարօշ, օղ, զարդարուն մանեակ եւ լանջապանակ. յետսակողմն՝ Արշակ բարձր թիկնագահի վրայ՝ աղեղնաւոր, սաղաւարտով եւն, վերնագրութեամբ՝ βασιλεως βασιλεων μεγαλου Αρσαχου επιφανους (“արքայի արքայից մեծի Արշակայ Նշանաւորի:”) Թիւ 51—2 արքային կերպարանքը ծերացած կը ցուցնեն: Կշիռնին՝ 3.90—4.48 գր.: Նոյն տպով են պղինձները՝ յետսակողմն ձիագլուխ, Պեգասոս (Թ. 56), Յաղթութիւն (Թ. 57) եւ պատկանդարան. կշիռն՝ 1.40էն մինչեւ 4.61 գր.: Շատ յաճախ են մենագիրները: Միւս բաժնին կը վերաբերին ութ դրամ եւ ութ պղինձ (Թ. 61—76), ինչպէս ըսինք՝ նոյն տպով եւ սա տարբերութեամբ որ առաջակողման գլխուն ապարօշի տեղ կ'երեւայ սաղաւարտ: Սաղաւարտի զարդերը բաւական տարբեր են իրարմէ այլեւայլ դրամներու վրայ, եւ ճիշդ ասոնք (Թ. 64—8) շատ ցանցառ են: Կշիռն՝ 3.71էն մինչեւ 4.26 գր.: Պղինձներէն որոնց նոյն է առաջակողմն եւ յետսակողման արձանագիրը, Թիւ 74—6 յետսակողմն ուրիշ պատ-

կեր ունին, այսինքն՝ լախտ. միւսներէն՝ Թ. 69—70  
Պեգասոս, Թ. 71—3՝ Յաղթութիւն ձեռքը պսակ:  
Աշիւն պէսպէս, 1.00էն մինչեւ 3.70 գր.: — Զոր-  
րորդ խումբ մը կը կազմեն երեք դրամ (Թ. 77—9),  
առհասարակ նոյն տպով, բայց սա արձանագրովս՝  
βασιλεως βασιλεων Αρσαχου ευεργετου δικαιου  
και φιλελληνος (“արքայի արքայից Արշակայ Բա-  
րեգործի Արդարոյ եւ Հելլենասիրի:”) Այլուստ  
երկու կողմն ալ նոյն միւսներուն հետ: Աշիւն 3.90  
մինչեւ 4.44 գր.: (Տես էջ 21—31.)

Անտիոքայ Եպիփանու յաջորդը՝ Անտիոքոս Ե Եւ-  
պատոս (164—162) աղայ էր, զոր սպաննեց Գեմեարիոս  
Սոփաէր (162—150) եւ ճիշդ այս յաջող պարագայից մէջ  
Պարթեւք իրենց հաշիւը գտան: Գործին մէջ մատ ունէին  
Հռոմէացիք ալ, որ Սելեւկեանց դէմ խռովութիւններ սար-  
քելէն չէին գաղբիր: Մարք կրկին փորձ փորձեցին, եւ իրենց  
սասորապը Տիմարքոս Միլետացի — որ Հռոմ գործերով  
գացած ըլլալով կրնար իւր ձեռնարկին յաջողութիւնը  
կամ ձախորդութիւնը կշռել — յաջողուց այնչափ որ  
Հռոմայ ծերակոյտն որոշեց իրեն տալ արքայի տիտղոսը  
(161ին): Գիմարքոս անմիջապէս դաշնակից եղաւ Արտաշիսի  
Հայոց: Մարաստանի սահմանակիցքն հնազանդեցուց, եւ  
գրաւեց մինչեւ Չեւգմա, եւ նաեւ Բարեւաստան. (այսպէս  
Գուտշմ. 42, ուղղելով Գիտգորոսի մէկ ընթերցուածը:) Բայց  
Տիմարքոսի՝ որ սիրուած ալ չէր, փորձը նոյն վախճանն ու-  
նեցաւ՝ զոր ունեցաւ առաջինը կամ Մոլոնի փորձը: Ան-  
տիոքոս Սոփաէր քաջ զորավար մ'էր, շուտով վերջ տուաւ  
այս ձեռնարկին. Տիմարքոս ինկաւ, եւ իւր եղբայրը փախ-  
չելով միայն ազատեցաւ: Բարեւաստան առաւ Անտիոքոս  
“Փրկիչ” (Սոփաէր) տիտղոսը: Չարմանալի կերպով ճիշդ  
Միհրդատ Ա, որ Սելեւկեանց խեղճ վիճակէն օգտուելով՝  
Պարթեւաց սահմանները մինչեւ Եփրատ յառաջ մղեց եւ  
Բարեւաստանն առաւ, իւր գրամոց վրայ առած է նոյն  
“Սփրէր” = Փրկիչ յորջորջանքը (տես վերը՝ Միհրդատայ  
Թ. 1—2), ինչպէս իրմէ կը սկսի Եպիփանէս տիտղոսն՝ իւր  
գրամոց մեծագոյն մասին վրայ (եւ անկէ ետքը՝ սովորական  
ամենուն,) միայն վերջերը (համտ. Միհրդատայ 77—9) նաեւ  
Եփրէտէս եւ Գիլիս տիտղոսներն. (այս վերջինս ըստ  
Գուտշմիդի առած է Միհրդատ՝ Բակարիական Հեղինկղէսի

«Արդարոյ» յորջորջանքէն, Գուտշ. 79) որոնք նոյնպէս յետոյ սովորական կը դառնան: Միհրդատ նախ յօգուտ գործածեց իւր մերձակայ Բակտրիական-յունական պետութեան մէջ ծագած խռովութիւնքն: Այս պետութիւնն Գեմեարիոսի եւ անոր հօր Եւթիւդեմոսի օրով մեծ զարգացումն ընդունած էր եւ հետզհետէ յարաբերութիւնք հաստատուած էին արեւելքի ամենավերջին կողմանց հետ. բայց ճիշդ այս ծաղկման ժամանակ ներքին խռովութիւնքն սկսան, երբ Եւկրատիդէս բռնաւորը տիրեց գահուն եւ յաջորդեցին ներքին պատերազմները. (այս իրաց մասին հմտ. Գուտշմ. 44—51): Միհրդատ օգտին գործածելով պարագաները գրաւած էր Ասպիոնէս եւ Տուրիւա սատրապութիւնքն, եւ կ'ըսուի թէ (Յուստ. ԽԱ, 6, 8) մինչեւ Հընդկական Կաւկաս տարածեց իւր ազդեցութիւնը: Ուրիշ աղբիւր մը (Որոս. Ե, 4) կ'ըսէ՝ իւր ձեռքին տակն էին Ինդոսի եւ Հիւդասպէսի մէջտեղ բնակող ամէն ազգերը: Այս աւանդութիւնքն՝ որ իրարու հակառակ կ'երեւան՝ միարանել կը ջանայ Գուտշմ. (անդ 50 եւն): Կարեւորագոյն է մեզի համար Միհրդատայ ձեռնարկութիւնքն արեւմտեան կողմերն: Ասորոց վիճակը խեղճ էր. քաջ Գեմեարիոսի դէմ Հոռմայեցւոց լարած որոգայթներն ապարդիւն չեղան: Իրեն դէմ ելած էր հակառքայ որ իբր թէ Անտիոքոս Եպիփանու որդին ըլլար (152) եւ Գեմեարիոս ինկաւ անոր դէմ մղած խիստ ճակատի մը մէջ (150): Այս հակառքայն եւ այժմ նոր արքայն՝ Աղէքսանդր Թէոպատոր Եւերգետէս անկարող էր, եւ իրեն դէմ ելաւ (147ի) Գեմեարիոսի համանուն որդին, որ յաղթեց, եւ Աղէքսանդր փախչելու ատեն սպաննուեցաւ (145ին): Բայց արդ նաեւ այս նոր արքայն՝ Գեմեարիոս Բ՝ Նիկատոր շիրջաւ խաղաղցընել երկիրը, եւ իրեն դէմ ելան ուրիշները՝ նախ Անտիոքոս Եպիփանէս Գիոնիոսս (Աղէքսանդրի որդին) եւ անոր սպաննուելէն ետքը Գիոդոտոս Կասիանացի՝ Տրիւփոն անուամբ: Բնական էր որ Միհրդատ այս պարագաներէն օգտուէր: Մարաց եւ Պարթեւաց մէջ պատերազմ ծալեցաւ, եւ Պարթեւք գրաւեցին երկիրը: Միհրդատ վերակացու դրաւ հօն գԲակասիս, եւ ինքն Արկանաց աշխարհը գնաց: Մարաստանի կորուստէն (147ին) ինքնին հետեւեցաւ Բարեւաստանի կորուստը, որուն Գեմեարիոսի հպատակ սատրապը սպաննուեցաւ, եւ Միհրդատ գրաւեց Սելեւկիա մայրաքաղաքը: Ասով Արեւելք կորսուած էր Մակեդոնացւոց համար:

(Գուռաշմ. 44 եւն, 51-52) Պահ մը կարծես իրերը փոխուելու վրայ էին: Նոր հպատակները գոհ չէին, եւ թախանձագին կը խնդրէին Գեմեարիոս Նիկատորէ օգնելու: Գեմեարիոս իրօք 140ի Միջագետքէն Քարելոն եւ անկէ վերին սատրապութեանց կողմերն անցաւ. բազմաթիւ տեղացիք օգնութեան եկան, նաեւ Պարսիկք եւ Եղիւմացիք, եւ Պարթեւք այլեւայլ ճակատներու մէջ յաղթուեցան: Բայց որոշիչ եղաւ ճակատն որ Մարաց աշխարհին մէջ տրուեցաւ 139ին: Միհրդատայ զօրավարն յանկարծ, երբ խաղաղութեան բանակցութիւնք կ'ըլլային, յարձակեցաւ, խորտակեց Գեմեարեայ բանակը, եւ զԳեմեարիոս ալ գերի բռնեց. եւ շղթայակապ շրջեցընելով բոլոր նորէն ապստամբած քաղաքներէն՝ Միհրդատայ ձեռքը տրուեցաւ: Միհրդատ գոնէ այն ազնուութիւններէն երթագաւորաբար հոգաց զԳեմեար՝ բնակութեան տեղ տալով ի Վրկանս, եւ իւր Հռոգոգունէ գուսարն ալ՝ կնութեան: Միհրդատայ բոլոր ոյժն այժմ դարձած էր Եղիւմացւոց դէմ, որ իրեն դէմ ելած էին Գեմեարիոսի հետ: Մտաւ յԵղիւմայիս, կողոպտեց երկրին հարուստ մեհեանները (կ'ըսուի մինչեւ ըիւր տաղանդ, նոր դրամով մինչեւ 46 միլիոն մարկ, Գուռաշմ. 53) եւ հպատակեցուց երկիրը: Բայց նաեւ ասկէ ետքը Եղիւմայիսի արքայներ կան, որոնցմէ դրամներ ալ մնացած. եւ նկատելով այս պարագաները՝ նաեւ Գուռաշմիդ (անդ 53-4) այն եզրակացութեան կու գայ թէ Միհրդատ նոյն աշխարհին Արշակունի ճիւղ մը դրած էր իրրեւ թագաւոր, պարագայ մը՝ որ զարմանալի կերպով կը յիշեցընէ հոյ աւանդութիւնն (առ խորենացւոյ) թէ նոյն ժամանակները նաեւ ի Հայս Արշակունի ճիւղ մը սկսած ըլլայ: Եղիւմայիսի այս արքայներէն է Վամնասկիրէս, որմէ դրամ կայ 80-81 Ն. Ք. տարիներէն: Նաեւ այն դրամներն՝ որ Արշակայ անունը կը կրեն, բայց որ «արքայից արքայ» մը չի կրնար ըլլալ, այս արքային նախորդին կ'ուզէ ընծայել Գուռաշմիդ (անդ՝ 54): Ճիշդ այս դրամներուն մասին տես այժմ մեր Յուցակին Հայ Արշակունեաց եւ Եղիւմայիսի բաժինը: — Միհրդատ մեռած ատեն թողուց ընդարձակաճաւալ պետութիւն մը, որով «արքայ արքայից» էր ստուգիւ՝ վերին տէր ըլլալով բոլոր աշխարհաց Հնդկական Վասկասէն մինչեւ Եփրատ: Այս տեղերը գտած լաւագոյն կարգադրութիւնքն Պարթեւաց մէջ մտցուց, եւ պետութեան կարգերը յարգարեց: Յօրինուածական կարգաց զլիսաւոր

քանի մը կէտերը, իւր ժամանակին համար յօրինուած աշխարհաց յուցակներն եւ անոնց լուսաւորութիւնը՝ «ես Քուաշմ. 54—74. բայց այժմ աշխարհագրական ճօխագոյն եւ նորագոյն քննութիւնը՝ Մարքարտի «Երանշահ», (Բերլին 1901:)

(Արշակ Է.) Հրահար Բ, 138—128 Ն. Ք. 23 կտոր, երեք խմբով: Նախ՝ ինն երկդրամեան, Հրահարայ Բ պատկերով, որ կարճամօրուս է, բայց երկար գանգուրներով. նոյն՝ ապարօշ, մանեակ եւ լանջապանակ: Յետսակողմն՝ Արշակ Ա բարձր թիկնագահի վրայ, ձեռքն աղեղ, եւ ամէն դրամի վրայ իրարմէ տարբեր մենագիր: Վերնագիրն է՝ βασιλεως μεγαλου Αρσαχου θεοπατορος ευεργετου επιφανους φιλελληνος («արքայի մեծի Արշակայ Աստուածահօր բարեգործի նշանաւորի հելլենասիրի:») Թ. 2 յետսակողմն ունի մենագրին տեղը ΑΠΟ. Թ. 8 (Ε?)ΥΣ, եւն: Չորեքդրամեանցս կշիռը 14.28էն մինչեւ 16.00 գր.: Մեծ մասը շատ ցանցառ: — Երկրորդ խումբ մը կը կազմեն երեք կտոր՝ որ անսովոր ընթերցուածներ ունին: Նախ շատ ցանցառ չորեքդրամեան մը (Թ. 10) կը գրէ՝ βασιλεως μεγαλου Αρσαχου θεοπατορος ευεργετου ευσεβους φιλελληνος («արքայի մեծի Արշակայ Աստուածահօր բարեգործի Բարեպաշտի Հելլենասիրի.») Ալիշանի հաւաքմանէն. կշիռը՝ 16.00: Նոյն հաւաքմանէն դրամ մը (Թ. 11) կ'ընթեռնու սկիզբները նոյնպէս, բայց «բարեպաշտի Հելլենասիրի» բառերուն տեղ (x)αταστρατει(α.) այսպէս՝ «Արքայի Մեծի Արշակայ Աստուածահօր բարեգործի. հարահարարի.» (կշիռը՝ 4.06, շատ ցանցառ.) եւ ուրիշ դրամ մը (Թ. 12) Մորդտիանի հաւաքմանէն անոր տեղ կը գրէ Μαργιανη, այսպէս՝ «Արքայի մեծի Արշակայ բարեգործի Աստուածահօր. Մարգիանի.» կշիռը՝ 3.66, շատ ցանցառ: Նոյնպէս են Բրիտ. Թանգարանի մէկ դրամն որ նոյն տեղն ունի Τρα-

Ճիշտ կամ Կրաճիանի (Բոթ եւ Գարգնէր.) եւ Պե-  
տերոբուրգի ուրիշ մէկ դրամը՝ Արեւա. Խնդիր չկայ  
որ այս անուանքս «Արիա» եւ «Մարգիանէ» աշ-  
խարհացն անուանքն են, զորոնք Հրահատ Բ գրաւեց  
Սկիւթացիներէ, եւ նոյնպիսի է աներկբայ նաեւ  
Տրապիանէ: Ար մնայ *καταστρατεια* ընթերցուածը  
Թիւ 11 դրամին, զոր կը մեկնէ Հեղինակն իբր  
«վասն բանակի» կամ «վասն ամրութեանց» որով  
դրամին կոխուելուն մասնաւոր նպատակը բացա-  
տրուած ըլլայ: Ինչպէս մտադիր կ'ընէ՝ ճիշդ այս  
արքային «Բարեպաշտ» կամ Ե-«էքէ» (Թ. 10)  
յորջորջանքն՝ բոլոր Պարթեւական դրամոց մէջ ե-  
զական երեւոյթ մըն է. եւ այս «բարեպաշտութիւնը»  
կը կարծէ Հեղինակը թէ արքային պատերազմասէր  
բարոյից նշանակ մ'ըլլայ: Նոյն յորջորջանքն սովո-  
րական էր Վամրաց թագաւորաց դրամներուն վրայ,  
նոյնպէս Արիարաթէս Ե արքայի (220—163 Ն. Ք.)  
դրամոց: — Երրորդ խումբը՝ ութ դրամ եւ երեք  
պղինձ (Թ. 13—23) առաջակողմը նոյն, յետսա-  
կողմն՝ Արշակ Ի գահի՝ աղեղնաւոր. վերնագիրը՝  
*βασίλειως μεγάλου Αρσαχου θεοπατορος ευερ-*  
*γετου* («արքայի մեծի Արշակայ աստուածաճօր  
բարեգործի») դրամներուն կշիռը՝ 3.08էն 4.15 գր.:  
Պղինձներուն առաջակողմը նոյն. յետսակողմն՝ ար-  
ձանագրութիւնը նոյն, իսկ պատկերը ձի կամ փիղ,  
հատ մ'ալ Բրիտ. Թանգարանի մէջ՝ ձիու գլուխ  
պարանոցը միասին: (Տես էջ 32—5:)

Հրահատայ Բ այս դրամներն՝ որ Մարգիանէ, Արիա  
եւ Տրապիանէ աշխարհաց անունները կը կրեն, կը ցու-  
ցընեն որ այս արքայս ալ Միհրդատայ գործը շարու-  
նակելու վրայ էր, զորոնք Բակարիոյ տիրող Սկիւթացիներէն  
եւս առած է: Այս աշխարհաց մասին տեսնելու է այժմ  
Մարքարտի վերոյիշեալ գործը՝ «Երանշահը»՝ — կարեւ-  
որագոյն կէտն էր Պարթեւաց համար այս միջոցին՝ պաշտ-  
պանել իրենց կալուածքները Սելեւկեաններէ, որոնք վեր-  
ջին փորձ մ'ըրին այս կորսուած հողերը կրկին ձեռք ձգելու:  
Վտանգն ամենամեծն էր, զործին գլուխն ըլլալով Սելեւ-

կեանց լուսագոյն արքայից մին՝ Անտիոքոս է, որ կրցած էր ներքին խռովութեանց վերջ տալ: Ահագին բանակով (կ'ըսուի 300.000) արշաւեց 130ին Պարթեւաց դէմ. — իրեն յարեցան փոքր արքայից ալ շատերը: Երեք մեծ ճակատներու մէջ յաղթեց Պարթեւաց, որոց առաջինն տեղի ունեցաւ Լիւկոսի քով (Մեծ Զար): Բարեւոն եւ Եկրատան իւր ձեռքն ինկան, եւ բոլոր նոր նուաճուած ազգերը Պարթեւներէն ապստամբեցան: Պարթեւք այսպէս մէկէն իրենց հնագոյն սահմանին մէջ ամփոփուած եղան: Բայց ձմեռը Մարաստան անցընելով՝ ստիպուած էր զօրքը բաժնել ուցրուել: Հրահատ Բ ստիպուած էր հաշտութիւն խնդրել, բայց Անտիոքայ պայմանները ծանր էին՝ արձակել իւր Գեմեարիոս եղբայրը, բոլոր գրաւած երկիրներն ետ տալ, եւ հարկ տալ բնիկ Պարթեւաստանի իրեն թողուելուն համար: Բայց արդ Հրահատ Բ սիրով կատարեց առաջին պայմանը, Գեմեարիոս արձակուեցաւ՝ ի հարկէ Ասորիք նորէն խռովութիւն հանելու համար: Անտիոքայ բանակին ալ անկարգութիւնքն կրկին դառնացուցին ժողովուրդն, եւ Մարք ծածուկէն միաբանեցան Պարթեւաց հետ, եւ որոշ օր մ'այլեւայլ քաղաքները գրուած զօրամասերուն վրայ յարձակեցան: Անտիոքոս աճապարեց օգնութեան ամէնէն աւելի վտանգեալ տեղւոյն, բայց ճամբուն գէմն ելաւ Հրահատ Բ մեծ բանակով մը (120.000 կ'ըսուի): Անտիոքոս իւր զօրավարաց խորհրդին հակառակ իրեն համար անյարմար տեղ մը ճակատն ընդունեցաւ, եւ իւր Աթենէոս զօրավարին վտտթարութեամբը բոլորովին ջախջախեցաւ իւր ոյժն, ինքն ալ վիրաւոր՝ թշնամեաց ձեռք շիյնալու համար՝ դահաճեժ եղաւ ժայռէ մը վար: Այս մեծ պարտութիւնն՝ որ ընդ միշտ վերջ տուաւ Ասորոց կողմանէ սպասելիք որեւէ վտանգի մը, ըստ Գուաշմիդի եղած ըլլալու է 129ին Ն. Ք. իւր Փետրուարին: Հրահատ պատուով թաղեց զԱնտիոքոս եւ մարմինն արծաթի դագաղով ալ Ասորիք խաւրեց. նաեւ Անտիոքոսի բնտանիրն որ գերի ինկած էր՝ թագաւորաբար պահեց, դուստրներէն մին կին առաւ, եւ անդրանիկ որդին Սելեւկոս արձակեց Ասորիք՝ թագն առնելու: — Բայց ասկէ ետքն եկաւ ձախորդութիւնը բոլորովին ուրիշ կողմանէ: Հրահատ իւր նեղ ժամանակին Սկիւթացիները վարձած էր Անտիոքոսի դէմ: Ասոնք ուշ հասան, եւ Հրահատ վարձքը տալ չուզեց: Սկիւթացիք այն ժամանակ այրացաւեր ըրին Պարթեւաստան, եւ Հրահատայ մղած պատերազմն ասոնց



դէմ՝ անյաջող եւք ունեցաւ: Հինահարք ողողելով բոլոր Պարթեաց պետութիւնը՝ հասան մինչեւ Միջագետք, աւեր դործելով ամէն կողմ: Հրահատ ճարահատ առած էր նաեւ Անտիոքոսի երբեմն ծառայող զինուորներն, որոնց հետ աւլ լաւ չէր վարուած. եւ ասոնք որոշիչ ճակատին մէջ անցան Ալիւթացոց կողմը: Պարթեաց բանակը խորտակեցաւ, եւ հրահատ աւլ ինչաւ. ըստ Գուռզմիդի ամէնէն կանուխ 128ի, հաւանորէն աւելի ուշ աւլ: Իւր յաջորդներուն դժուարին դործ մ'ընել մնացած էր, զոր հազիւ Միհրդատ Բ կրցաւ. բիշ շատ կարգի բերել: (Գուռզմ. 75-81)

(Արշակ Ը.) Արշակ Ա, 128—123 Ն. Ք., 12 կտոր, վեց դրամ եւ վեց պղինձ: Գրամոց տառաջակողմը՝ Արտաւանայ Ա արքային պատկերը՝ լիամօրուս, բայց ծայրը սրածեւ, գլուխը՝ սաղաւարտ զարդերով (կողմնակի՝ եղջիւր եւ երեք կարգ գոհար, կատարն՝ կ'երեւայ վիթ.) եւ ապարօշ. նոյն՝ օղ, մանեակ եւ լանջապանակ: Յետսակողմն՝ Արշակ Ա ի գահի՝ աղեղնաւոր: Թիւ 12 դրամն (Մորդտմանի, շատ ցանցառ) կոշտ սճ մ'ունի, յետսակողմն հինգ տող արձանագրութիւն, բայց անընթեռնի: Գրամոց ընթերցուածն է՝ βασιλεως μεγαλου Αρσαχου θεοπατορος νικατορος (“արքայի մեծի Արշակայ աստուածահօր Յարաւանի:”) կշիւր՝ 3.95 մինչեւ 4.04.: — Պղինձներու տառաջակողմը նոյն, եւ նոյն արձանագիրը յետսակողմն. պատկերքն՝ Պեգասոս եւ Յաղթութիւն. իսկ Բրիտ. թանգարանն ունի պղինձ մ'աւլ՝ 11 հազարորդամետր տրամագծով, յետսակողմն՝ լախտ: Պղինձներուն կշիւր 1.66էն մինչեւ 5.12: (Տես էջ 36—7:)

Արշակ Ը, 2. անունն անձանօթ, ըստ Հեղինակին հաւանորէն հակարքայ մը Արտաւանայ դէմ: Այս գաղափարին յանգած է Հեղինակը նկատելով դրամ մ'ուր այլակերպ դիմօք արքայ մը կը տեսնուի, շատ երկայն մօրուօք, գլուխը սաղաւարտ եւ ապարօշ, վիզը՝ մանեակ եւ կուրծքը՝ լանջապանակ: Սաղաւարտին զարդերն են՝ աստղ եւ երեք կարգ գոհար: Յետսակողմը՝ Արշակ բարձր

Թիկնագահի վրայ՝ աղեղնաւոր: Վերնագիրը շափա-  
 րանց սխալաշատ այսպէս՝ ΒΛΛΕΩΣ ΜΕΓΛΛ(ΟΥ)  
 ΛΡΣΛΛΥΙ ΘΕΙΤΛΤΙΛ ΟΥ) ΕΥΕΡΓΕ(ΤΟΥ , այս-  
 ինքն βασιλεως μεγαλου Αρσαχου θεοπατορος (?)  
 ευεργετου («արքայի մեծի Արշակայ աստուածա-  
 Տօր(°) բարեգործի.») կշիռը՝ 3.82 գրամ. (Տխտ.  
 2, 5.) կ'ենթադրուի շատ ցանցառ. (Աղէրի  
 հաւաքմանէն ի Բաղդադ:) Հեղինակը մտադիր  
 կ'ընէ սա պարագաներուն. քանդակիչը՝ յայտնա-  
 պէս յունարէնի անտեղեակ էր եւ ուրիշ դրամոց  
 վրայէն փորձած է յարմարցընել արձանագիրը:  
 Ծեր արքային պատկերագիրը տարբեր է միւս ծեր  
 արքայից (Միհրդատ Ա., Արտաւան Ա, Սանա-  
 տրուկ եւ Միհրդատ Բ) պատկերներէն: Գրամին  
 ոճն ու դրամահատութեան կերպն անկարելի  
 կ'ընեն դրամս ուրիշ կանխագոյն կամ յետնագոյն  
 ժամանակի վերագրել: Այս ամէնը նկատի ունե-  
 նալով՝ կը կարծէ թէ Արտաւանայ դէմ ելող  
 հակառակ-արքայի մ'ընծայելու է: Գժուարին է  
 ըսելը թէ ինչ բառ կ'ուզէր քանդակիչն ակնարկել  
 ժեյտլտիլ սխալագրութեամբը. թերեւս սովորական  
 θεοπατορος (աստուածատոր) բառը: (Տես էջ 38:)

Փուաշմիդ (Gesch. Irans, 78—9) Արտաւանայ Ա  
 դէմ երկու հակառակ իսկ կ'ընդունի եւ մէտ է Քարդնէրի  
 (էջ 30 եւն) հետեւելով անոնց այլեւայլ դրամներ ընծայե-  
 լու, որոնցմէ մին, կ'ըսէ, կը ներկայացընէ իբր քսանամեայ  
 երիտասարդ մ'որ Արշակ Նիկեոսի կը կոչէ ինք զինքը, եւ  
 միւսը՝ «Արշակ Բարեգործ (Եւերգետէս) Արդար (Դիկէոս)  
 Հելլենասէր» (Փիլհելլէն) եւ այն՝ «արքայից արքայ» յոր-  
 ջորջանօք՝ զոր Միհրդատէ Ա ետքն առաջին անգամ այս  
 հակառակին սկսած ըլլայ վերստին կրել. եւ իրաւունք  
 կու տայ Քարդնէրի՝ որ այս դրամները Միհրդատոսյ Ա տալ  
 կը ժխտէ եւ անոր մահուանէ ետքը դրոշմուած կ'ըսէ:  
 Փոնէ վերջինը կամ «արքայ արքայից Արշակ Բարեգործ  
 Արդար Հելլենասէր» իրաւամբ խնդրական ըլլալու է, եւ  
 ամենեւին անկարելի՝ ճիշդ Արտաւանայ օրով հակառակ մը  
 համար, երբ նոյն իսկ Արտաւան նոյն տիտղոսը կրել շէր

Համարձակեր: Ինչպէս ինքն իսկ Գուտշմիդ կ'ըսէ (անդ՝ 85) «արքայից արքայ», տիտղոսը լոկ այնպէս անուանական բան մը չէր, այլ կապուած էր գոնէ յետոյ ուրիշ «արքայից», վրայ ունեցած գերիշխանութեան հետ, որոնք էին մանաւանդ արքայք Ատրպատականի, Ադիարենեայ, Կորդուաց եւ կ'երեւայ Ուռհայաստանի: Առաջին Արշակունեաց տիտղոսն էր լոկ «Արքայ Մեծ» (Արշակ Ա-Ե.) եւ առաջին անգամ Արշակ Զ (Միհրդատ Ա) առաւ նոյն տիտղոսը, եւ այն՝ ինչպէս նոյն արքայի գործերը կը ցուցընեն՝ իրաւամբ: Բայց նաեւ իւր յաջորդները (Արշակ Է-ԺԱ) նոյն տիտղոսը չեն կրեր, այլ դարձեալ միայն «Արքայ Մեծ», եւ օրինակի համար երբ ընդհակառակն Տիգրան Մեծ Հայոց նոյն եւ ուրիշ աշխարհները գրաւելով՝ կ'առնու նոյն «Արքայից արքայ», տիտղոսը, իւր ժամանակակից Արշակունին միայն «Արքայ մեծ» է: Յամենայն դէպս Արտաւանու օրով եւ սկտութեան այն վիճակի մէջ «Արքայից արքայ», իրօք ի դէպ չէր: Աւերստին Արշակ ԺԲ (Հրահատ Գ) գրաւեց Տիգրանէն նոյն աշխարհները, եւ կը սկսի գրամներու վրայ «Արքայից արքայ», յորջորջանքն: Ըստ այսմ, ինչպէս պարզ կը տեսնուի Հեղինակիս հաւաքմանէն ալ (հմմտ. նաեւ յորջորջանաց հաւաքումն՝ էջ 199-201), Արտաւանայ Ա օրով որեւէ «Արքայից արքայի», եւ այն՝ հակարքայի մը դրամ՝ բոլորովին անհաւանական է: Յիշեալ խորագրով երեք պղինձներ կան Հեղինակին հաւաքմանս մէջ, եւ այն՝ ինչպէս յիշեցինք՝ Միհրդատայ Ա պատկերովն, եւ նոյն արքային դահեկանաց շորթորդ խումբը կը կազմեն. (տես Յուցակիս էջ 31): Իսկ «Արշակ Նեփէթ» յորջորջանքը չենք գտներ Հեղինակիս հաւաքման մէջ այս ժամանակներէն բուն Արշակունեաց դրամոց մէջ, այլ շատ ուշ՝ Արշակայ Ի կամ Գոտարզայ օրով, ինչպէս պիտի յիշենք: Իսկ այս տեղ Գուտշմիդի եւ Գարգնէրի ակնարկած «Արշակայ Նեփէթ», գրամներն անոնք են՝ զոր մեր Հեղինակն հայ Արշակունեաց կ'ընծայէ, եւ այն Արտաշիսի Ա: Այս մասին յետոյ: — Ժամանակիս պատմական մասին շատ բան չենք գիտեր: Արտաւան Ա, որ Փրիապատեայ երրորդ սրդին կ'ըսուի, ծեր էր՝ երբ գահ ելաւ: Յամենայն դէպս սկտութեան դիրքը շատ գէշ էր: Ըստ աւանդութեան՝ Սկիւթացիք Պարթեաստանն աւերելէն ետքն ինքնին դարձան իրենց տեղը: Բայց Գուտշմիդ կը կարծէ թէ այնպէս դիւրաւ լմնցած ըլլալու չէ իրը: Նախ, կ'ըսէ, Հրահատայ յաջորդը ստիպուած իսկ

էր հարկ տալ Սկիւթացւոց (ըստ Յովհ. Անտիոք. Հտկո. 66, 2.) դարձեալ Գրանդիանա աշխարհին հարաւային մասն Սկիւթացիները տեւականապէս գրաւած ըլլալու են, որմէ մնացած է ցայժմ ալ անունը՝ Սագաստան, նոր՝ Սիստան։ Միւս կողմանէ ներքին խռովութիւնք ալ պակաս չեն, ինչպէս հակառքայք կը վկայեն։ Բնական էր որ Սելեւկեանք ալ օգտուիլ ուզէին իրաց այս վիճակէն։ Հրահատ Բ նոր աշխարհակալած այն կողմանց վրայ դրած էր զԵւհեմերոս Արկանացին. որ պատերազմեցաւ Մեսենացւոց դէմ, եւ խստութեամբ եւ անգթութեամբ վարուեցաւ Բարեւա-ցւոց եւ Սելեւկացւոց հետ։ Արդ դառնացեալ Սելեւկացիք սօք ելան եւ դառն տանջանքներով սպաննեցին զԵւհեմերոս. այսպէս կ'ուղղէ Քուաշմ. 79՝ Գիողորի մէկ հատուածը։) Ա՛րսուի թէ երբ Սելեւկացիք արքային պատգամաւորութիւն խաւրեցին՝ ներուժ խնդրելու, պատասխան տուած ըլլայ Արտաւան թէ բոլոր Սելեւկացւոց աչքը փո-րել պիտի տայ։ Բայց բան մը չեղաւ. վասն զի Արտաւան Տոխարացւոց դէմ պատերազմած ատեն՝ բազկին վրայ վէրք մ'տանելով մեռաւ, քիչ ժամանակ թագաւորելով։ Այս պարագայից մէջ զարմանալի է որ Արտաւան Ա կ'առնու-նէ՛ր (Յալթոյ) փաղոսն, որ սովորական ալ չէ Պար-թեւոց դրամներուն վրայ։ Իրաւունք ունենալու է Քուա-շմիդ, երբ կ'ըսէ թէ այս մեծահնչիւն փաղոսներն իրենց ծա-ղումն առած ըլլալու են կղզիացեալ յաջողութիւններէն՝ զոր Պարթեւք ունեցած էին զիրենք ընկճող Սկիւթացւոց վրայ. բայց բուն մեծ հակասութիւն մ'էր պետութեան ընդհանուր խեղճ վիճակին նայելով։ (Տես Քուաշմ. 78-9։)

(Արշալ. Թ.) Մէհրդադ Բ, 123-88 Ն. Բ. 35 կտոր՝ երկու խմբով, այսինքն՝ նախ դրամներ՝ որոնց վրայ արքային գլուխն ապարօշ է, եւ երկրորդ՝ դրամներ որոնց վրայ սաղաւարտ է։ Ախուճք. Թ. 1 Չորեքդրամեան Միհրդատայ Բ պատկերը կը ցուցնէ երկայն լիամօրուք մը՝ ծայրը սրածեւ, երկայն գանգուրներ, ապարօշ, մանեակ եւ լանջապանակ։ Յետսակողմն՝ Արշակ բարձր թիկնա-գահի վրայ՝ աղեղնաւոր։ Արձանագիրը՝ βασιλεως μεγαλου Αρσαχου ευεργετου επιφανους και φιλελήθους (արքայի մեծի Արշակայ Բարեգործի

Նշանաւորի եւ Հելլենասիրի.) կշիռ՝ 15.71 գր. շատ ցանցառ: Այս խմբին կը վերաբերին՝ մէկ շորեքդրամեան, 12 դրամ եւ հինգ պղինձ: Գրամներուն (թ. 2 - 13) թէ առաջակողմն եւ թէ յետասակողմը նոյն է շորեքդրամեանին հետ, եւ նոյն՝ արձանագիրը: Արշակայ աղեղան ներքեւ՝ պէսպէս մենագրեր: Աշիռնին՝ 3.57 մինչեւ 4.09 գր., ոմանք ցանցառ: Նոյն տպով են նաեւ Պղինձներու (թ. 14 - 18) առաջակողմն եւ արձանագիրը, եւ նոյնպէս պէսպէս մենագրերով: Յետասակողման պատկերը՝ ձի (թ. 14 - 5.) ձիու գլուխ (թ. 16 - 7) եւ պատկանդ արան (թ. 18:) Աշիռը պէսպէս՝ 1.63էն (թ. 16) մինչեւ 4.13 (թ. 14:) Թիւ 2 դրամին տպով կիսադրամ մ'ալ կայ Պետերբուրգի Թանգարանը հրատարակուած Մակարովէ: — Բ խմբի կը վերաբերին՝ մէկ շորեքդրամեան, 13 դրամ եւ երեք պղինձ: Շորեքդրամեանին (թ. 19) վրայ Միհրդատ արքայն սրածայր լիամօրուօք է եւ սաղաւարտով, սրուն զարդերն են՝ եղջիր եւ երկու կարդ գոհար, կատարը՝ կ'երեւայ վիթ. նոյն՝ ապարօշ, մանեակ եւ լանջապանակ: Մանեակը զարդ մ'ունի՝ կ'երեւայ ճարմանդ. Յետասակողմը՝ արձանագիրս՝ βασιλεως μεγαλου Αρσαχου θεου ευεργετου επιφανους φιλελληνης (“արքայի մեծի Արշակայ Աստուծոյ Բարեգործի Նշանաւորի Հելլենասիրի.”) պատկերը տարբեր՝ Միհրդատ Բ պարթեւական արքունի տարագով նստած է բարձր թիկնագահի վրայ. աջ ձեռքը կարկառած՝ արծիւ մը կը բռնէ, իսկ ձախը կը հանգչի արքունի իշխանութեան ցուպին վրայ՝ սրուն ծայրը շուշանածեւ զարդով է. իւր ետեւը կեցած է Բախտը, որ զինքը կը պսակէ: Բախտը պատմուճանաւ է, գլուխը՝ բրդաւոր թագ, ձախով ցուպը բռնած, աջով՝ պսակ: Աշիռն է 15.25 գրամ. ի հարկէ շատ ցանցառ (Ալիշանի հաւաքմանէն), եւ բաւական լաւ պահուած. (Տխտ. 2, 12:) Այս խմբի դրամը

ներուն (Թ. 20—32) ալ առաջակողմը նոյն, եւ յետսակողման արձանագիրը. յետսակողման պատկերը՝ Արշակ Ա ի գահի՝ աղեղնաւոր: Աշխար՝ 3.60 մինչեւ 4.10 գր., պէսպէս մենագրերով. մաս մը՝ ցանցառ: Պղինձներուն (Թ. 33—5) յետսակողման պատկերներն են՝ ձի (Թ. 33—4) եւ ձիու գլուխ (Թ. 35.) ուրիշ կողմանէ նոյն՝ դրամներուն հետ: Աշխար կարգաւ 4.27, եւ 3.55, եւ 1.97 գր.: (Տես էջ 39—43:)

Միհրդատ Բ Մեծ կը յորջորջուի իրաւամբ, իբրեւ վերստին նորոգող Պարթեւական պետութեան՝ յիշեալ նեղ վիճակէն: Կ'ըսուի թէ շատ պատերազմներ մղեց եւ շատ ազգեր Պարթեւաց գերիշխանութեան ենթարկեց: Սկիւթացւոց դէմ կռուեցաւ քանի մ'անգամ եւ իւր նախորդաց վրէժն առաւ: Ինչպէս կ'ըսէ Քուտշմիդ՝ այս ամենուն իմաստն այն ըլլալու է որ Պարթեւք կորսնցուցածնին ետ առնուլ յաջողեցան: Մեզի համար կարեւորն է այն դերը զոր խաղացած կ'ըսուի Հայոց աշխարհին նկատմամբ, անոր գործոց միջամտելով: Ըստ Յուստինի, Ստրաբ. եւ այլոց (Յուստ. ԼԸ, 3. ԽԲ, 2, 16. հմմտ. Ստրբ. ԺԱ, 14—5, եւ Ապպիան. Ասոր. 48) Միհրդատ պատերազմ մղած էր Հայոց արքայի դէմ, եւ ստիպած որ (որդին) Տիգրան պատանդ տրուի. եւ այժմ այս Տիգրանը դահ հանել ուզեց զինու զօրութեամբ ընդդէմ Արտաւազդայ Ա (ըստ Քուտշմ. թերեւս եղբայր Տիգրանայ), եւ հանեց ալ 94ին Ն. Գ. բայց ի փոխարէն 70 հովիտ Հայոց աշխարհէն կարելով հանելով ի վարձատրութիւն: (Այսպէս Քուտշմ. 80, եւ ուրիշները. սյլք՝ օր. Ռայնախ եւն՝ այլազգ կը հասկնան կցկտուր տեղեկութիւնքս. ըստ Յուստինի՝ թագաւորն Արտաւազդ էր, որուն դէմ պատերազմ մղեց Միհրդատ Բ, եւ որ ստիպուեցաւ պատանդ տալ իւր որդին. բայց ըստ Ապպիանու Տիգրան որդի էր Տիգրանայ, ոչ Արտաւազդայ եւն. տես նաեւ Քարազաշ, «Պամ. Հայոց», Բ, 131): Իբրեւ տէր Միջագետաց՝ Հռոմայեցւոց հետ ալ բանակցութեան մտաւ, երբ Սուդդա 92ին Քամիրք էր եւ այն՝ Քամրաց Արիորարզան արքայն ներկայութեամբ: Այս հրեշտակութեան նպատակն էր, կ'ըսէ Քուտշմիդ, Հռոմայեցիներէն ապահով ըլլալ Ասորւոց նկատմամբ իւր ծրագրին համար: Արդէն Պարթեւք պատերազմ կը մղէին Լաւոդիկէ գշխոյի

դէմ (— որ, կ'ըսէ, է՝ Լաւոդիկէ Թէա Փիղադեղփոս, Անտիոքոսի Ը դուստրն, եւ կոմագինեայ արքայից նախաժայրն է, ինչպէս Մոմսէն ցուցուցած է. —) եւ որուն օգնական էր Անտիոքոս Ժ. որ ինկաւ Պարթեւաց դէմ մղած պատերազմին մէջ: Քիչ մ'ետքն ալ երբ Գեմետրիոս Գ պաշարած էր իւր Փիլիպպոս եղբայրն ի Բերէա՝ վերջնոյս օգնականը՝ Ստրատոն նոյն տեղը ոյ տէրը՝ օգնութեան կոչեց բաց ի Արաբացիներէ՝ Չիհրդատայ Սինակ, Միջագետաց պարթեւ կուսակալն, որոնք եկան եւ հարկադրեցին Չիհրդատրիոս իւր բանակով անձնատուր ըլլալու (88 Ն. Ք.) Գեմետրիոս խաւրեցաւ Միհրդատայ, որուն արքունիքը կեցաւ մինչեւ ցմահ, ինչպէս յառաջ ալ Սելեւկոս, զոր վերը յիշեցինք. 128ին կրկին դարձած էր Հրահատայ Բ քով՝ շկարենալով դիմադրել իւր Գեմետրիոս Բ եղբոր: (Գուտշմ. 79-81:)

(Արշակ Ժ.) Արտաւան Բ. 88—77 Ն. Ք.  
 4 կտոր դրամ: Առաջակողմն Արտաւանայ արքային պատկերը՝ սրածայր մօրուօք. գլուխը՝ սաղաւարտ, որուն զարդերն են երեքբաժնեան տերեւ եւ երեք կարգ գոհար, կատարը՝ կարգ մը գնդակներ. դարձեալ՝ ապարօշ, մանեակ եւ լանջապանակ: Յետսակողմն՝ Արշակ ի գահի՝ աղեղնաւոր. արձանագիրն՝ βασιλεως μεγαλου Αρσαχου ευεργετου επιφανους φιλελληνης («արքայի մեծի Արշակայ Բարեգործի Նշանաւորի Հելլենասիրի»): Աշխարհ 3.52—4.05 դրամ., չորսն ալ՝ ցանցառ: Գարդնէր այս դրամները Արշակայ Թ (Միհրդատայ Բ) վերջին օրերէն կը դնէր կամ նոյն ժամանակի որեւէ մէկ բռնաւորին կամ հակառքային կ'ընծայէր: Առաջին անգամ Գուտշմիդ վերագրեց զասոնք Արշակայ Ժ (Արտաւանայ Բ)՝ զոր նորագոյն քննիչք անտես ըրած էին: (Տես էջ 44:)

1 Այս մասին տես Գուտշմիդ՝ անդ 81. ծան. 1: Այս Արտաւանայ Բ վրայ կ'առնու Տրոգոսի (Trogus. prol. 41) խօսքը թէ «յաջորդք նորա Արտաւան եւ Տիգրան յորջորջանօք աստուած», եւն, զոր Vaillant եւ անկէ ետքն ուրիշները Միհրդատայ Ա վրայ կ'առնուին: Հոս յիշուածն

Արտաւանայ Բ եւ Սանատրկոյ օրերուն համար բուն Պարթեւաց մասին ցանցառագոյն են աղբիւրները: Բոլոր դասական մատենագիրք այս ժամանակի համար կարծես կը զբաղին միայն Պոնտացի Միհրդատով եւ Հայոց Տիգրանով: Աերջինս այս միջոցին կ'առնու Պարթեւաց տիազոսը «արքայից արքայ», եւ «Պարթեւաց զօրութիւնը կը տկարացընէ այնչափ որչափ չէ ըրած ուրիշ մը.» (Գուտշմ. 81.) եւ երբ 86ի ընտրուեցաւ նաեւ արքայ Ասորոց՝ այն պատճառաբանութիւնն ալ յառաջ կը բերուէր թէ Պարթեւաց դաշնակից է (Յուստ. Խ, 1, 3.) եւ քիչ մ'ետքը Պարթեւք ներքին քաղաքական եւ դրացի ազգաց դէմ մղած պատերազմներով այնպէս տկարացած էին որ Տիգրանայ եւ Հայոց դէմ ելլել չէին կրնար. (ըստ Պղոտ. Ղուկուղղ. 36:) Գուտշմիդ (անդ՝ 82) այս ներքին խռովութեանց առթիւ կը դնէ նաեւ Սանատրկոյ գահակալութիւնն, որ 77ին եկաւ՝ արդէն ութսնամեայ՝ Սակարաւկաց աշխարհէն գահ ելլելու եւ գահակալեց 7 տարի. բայց, կ'ըսէ, սպահովաբար գահի միակ թիկնածու բռնաւորը չէր: Գրամոց լռելը հակառակապացոյց մը չէ, այլ ընդհակառակն գրամահատութեան դադրիլը դժբախտ ժամանակամիջոցի մը յայտարար է: — Միհրդատայ եւ Տիգրանայ մասին պատմչաց աւանդածները ծանօթ են, եւ պէտք մը չկայ կրկնելու հոս. (հմտ. ընդարձակօրէն վկայութիւնքն յիշուած՝ Գարազաշ, «Պտմ. Հայոց», Բ, 104—168:) Պարթեւական պատմութեան հետ շոշափումն ունեցող կէտերը՝ Սանատրկոյ եւ Հրահատայ Գ օրերուն, համառօտիւ հետեւեալքն են. (Գուտշմ. 82 ff.) Տիգրան գրաւեց նախ, կը պատմուի, զՄարաստան, որով գլխաւորաբար հասկընալու

իրօք Տիգրան Մեծ է, կ'ըսէ, որուն կը պատշաճի իրօք այն տեղն ըսուածը: Միայն թէ յիշեալ խօսքը չէ մնացած իւր բուն տեղն (Trog. prol. 42.) այլ վերջաւորութեան նմանութեամբ շփոթութիւն մը ծագած եւ սխալ տեղ գրուած էր յետագայ պատճենից մէջ: Ուստի այս Արտաւան Բ իրօք Միհրդատայ Բ յաջորդն է, եւ իրեն ըլլալու են գրամներն Արշակայ Եւերգետէս Եպիփանէս Փիլհելէն, մաշուած պատկերով եւ յոռի մետաղով, զորոնք Գարդներ (էջ 38) կամ Միհրդատայ Բ վերջին դրոշմածները կը համարէր, կամ Միհրդատայ Բ մահուանէ ետքը ծագած յուզմանց ժամանակի որեւէ բռնաւորի մը կ'ընծայէր:



է, կ'ըսէ. Ատրպատական-Մարաստան, որուն այլեւայլ մասերն արդէն Հայոց ձեռքն ինկած էին: Բայց նաեւ արշաւեց ի Մեծ Մարաստան՝ որ Պարթեւաց էր, եւ կործանեց զԱդրապանան որ Եկրատանայ տեառն գղեակն էր, Եկրատանէն քիչ մը հեռու (ըստ Իսիդ. Քարակ. 6:) Այս խօսքով կը հասկընայ Փուտշմիդ Արշակունեաց տունն՝ որ հոն նստած էր կամ իւր արքայանիստն ըրած. վասն զի թէեւ Միհրդատ Ա տակաւին ի Արկանս կը նստէր, Հրահատ Բ արդէն ի Մարս էր (այսպէս կը հասընայ վկայութիւնն Գիորգորայ՝ Diod. exc. Vales. 603) եւ այն տեղ մնաց արքայից նիստը մինչեւ Միհրդատ Գ: (Ռայնախ կը հասկընայ թէ Մեծաց Մարաց բռեաշխին էր նիստն, որ ըլլայ ալ հաւանօրէն Գարեհ անուն ըստ Ապպիանու, Միհրդ. 106, տես Գարապաշ, անդ՝ Բ, 134:) Բնական էր որ ետ առաւ բոլոր այն 70 հովիտները՝ զոր Պարթեւաց տալ ստիպուած էր, գահ ելլելու ատեն՝ իբրեւ պատանդ Պարթեւաց քով: Տիգրան յառաջացաւ մինչեւ Նինուէի եւ Արրեւայի կողմերն, եւ Պարթեւաց գերիշխանութենէն իրեն առաւ Ադիաբենական տէրութիւնն եւ նաեւ Միջագետք ամուր Մծմնով: Աերջին պատերազմին մէջ Տիգրան գործ ունէր Սանատրուկի հետ (Սալուստ. Գ, 19) եւ ըստ Փուտշմ. հաւանօրէն նաեւ 73ին կը շարունակուէր այս պատերազմն՝ երբ Պոնտացւոց Միհրդատ Եւպատոր թէ՛ Տիգրանէ եւ թէ՛ Սանատրուկէն օգնութիւն կ'ուզէր (ըստ Մեմմոնի առ Փոսայ) իւր նեղութեան մէջ, բայց ըսելի չեղաւ: (Փուտշմ. 81 - 2:)

(Արշալ. ԺԱ.) Սանատրուկ, 77 - 70 Ն. Ք: 12 կտոր, որոնց երկուքն երկդրամեան, շորսն. դրամ, հատ մը՝ երեքլումայ, եւ հինգ՝ պղինձ՝ Չորեքդրամեանց (Թ. 1 - 2) առաջակողմը Սանատրուկ արքային պատկերը՝ սրածայր մօրուօք, գլուխը՝ սաղաւարտ, որուն զարդերն են՝ աստղ եւ երեք կարգ գոհար, եւ ապարօշ, ականջն՝ օղ, վիզը՝ մանեակ, կուրծքը՝ լանջապանակ: Յետսակողմն՝ Արշակ Ա բարձր թիկնագահի վրայ՝ աղեղնաւոր. արձանագիրն է՝ βασιλεως μεγαλου Αρσαχου αυτοκρατορος φιλοπατορος επιφανους φιλελληνος (արքայի մեծի Արշակայ Ինչուսիսի Հայրապետի նշա-

Նաւորի Հեյլենասիրի.,») մենագիր՝ A եւ ΔI. կշիռն՝ 15.55 եւ 16.24 գրամ, շատ ցանցառ: Ճիշդ նոյն տպով եւ նոյն արձանագրով են գրամները (Թ. 3—6.) միայն Թ. 5—6 սաղաւարտի կողմնակի զարդ ունին երեքբաժնեան տերեւածեւ մը եւ չորս կարգ գոհար: կշիռ՝ 3.81—4.11 գր.: Երեքլումային (Թ. 7) ալ սաղաւարտի զարդը Թ. 3 գրամի համաձայն, արձանագիրն անընթեռնլի. կշիռը՝ 1.59 գր., շատ ցանցառ: Պղինձներուն (Թ. 8—12) յետսակողման պատկերը ձի եւ ձիու գլուխ, Թ. 12՝ պատկանգարան: կշիռ՝ պէսպէս 2.00 էն մինչեւ 4.49 գր.: (Տես էջ 45—6:)

Սանատրկոյ մահն եղած ըլլալու է հաւանօրէն 70ին: Նոյն տարին կ'իշխէր իւր յաջորդը՝ Հրահատ Գ. ինչպէս կը վկայէ Մեմֆոն՝ (առ Փոտայ) որ Ղուկուղղոյ 70ին գալէն քիչ մը յառաջ գահ ելած կը գնէ: Եւ թէեւ Միհրդատեան երրորդ պատերազմին երկու պատմիչք (Սպպիանոս, Միհրդ. 104 եւ Դիոն Կասիոս ԼԶ, 45) աւելի ուշ կը գնեն, այսինքն՝ Պոմպէի գալէն քիչ մը յառաջ, սակայն Գուտշմիդ (անդ 83) կը նախընտրէ 70 թուականն, այնու՝ որ անկախ ժամանակագիր մ'ալ (Փղեգոն առ Փոտայ) կը հաստատէ նոյնը: Շատ բնական էր որ Հրահատայ առաջին գործն ըլլալու էր Տիգրանայ զօրութիւնը կոտրել, եւ ինքնին կը հասկըցուի որ երբ Տիգրան եւ Միհրդատ 69ին (որ տարին է Տիգրանակերտի ճակատն, ուր Ղուկուղղոս յաղթեց Տիգրանայ) օգնութիւն ուղեցին իրմէ՝ ջսեց, թէեւ Տիգրան փոխադարձ վարձք կը խոստանար ետ դարձընել Միջագետքն, Ադիաբենէ եւ յիշեալ եօթանասուն հովիտները: Ընդհակառակն երբ Ղուկուղղոս ալ պատգամաւորութիւն խաւրեց՝ անոր հետ բանակցութեան մտաւ եւ դաշնագիր ալ եղաւ: Ի հարկէ քիչ մ'ետքն սկսաւ տեսնել որ թերեւս լաւ չէր ընթացքն երբ իբր թէ դաշինքն հաստատելու համար եկաւ Սեստիլիոս որ կարծես աւելի լրտես էր, որով որոշեց չէզոք մնալ: Երբ Միհրդատայ յաջողութեամբն ի վերջոյ Ղուկուղղեայ ձեռք ձգած յաջողութիւնքն ի դերեւ ելան, եւ երբ Հռոմայեցիք զՊոմպէոս խաւրեցին իրերը շտկելու (67ին,) ասի նոյն ընթացքը բռնեց: Նախ նոյնպէս դաշնա-

Նաւորի Հելլենասիրի.,») մենագիր՝ A եւ ΔI. կշիռն՝ 15.55 եւ 16.24 գրամ, շատ ցանցառ: Ճիշդ նոյն տպով եւ նոյն արձանագրով են գրամները (Թ. 3—6.) միայն Թ. 5—6 սաղաւարտի կողմնակի զարդ ունին երեքբաժնեան տերեւածեւ մը եւ չորս կարգ գոհար: կշիռ՝ 3.81—4.11 գր.: Երեքլումային (Թ. 7) ալ սաղաւարտի զարդը Թ. 3 գրամի համաձայն, արձանագիրն անընթեռնի. կշիռը՝ 1.59 գր., շատ ցանցառ: Պղինձներուն (Թ. 8—12) յետսակողման պատկերը ձի եւ ձիու գլուխ, Թ. 12՝ պատկան գարան: կշիռ՝ պէսպէս 2.00 էն մինչեւ 4.49 գր.: (Տես էջ 45—6:)

Սանատրկոյ մահն եղած ըլլալու է հաւանօրէն 70ին: Նոյն տարին կ'իշխէր իւր յաջորդը՝ Հրահատ Գ. ինչպէս կը վկայէ Մեմֆոն՝ (առ Փոտայ) որ Ղուկուղղոյ 70ին գալէն քիչ մը յառաջ գահ ելած կը գնէ: Եւ թէեւ Միհրդատեան երրորդ պատերազմին երկու պատմիչք (Սպպիանոս, Միհրդ. 104 եւ Դիոն Կասիոս ԼԶ, 45) աւելի ուշ կը գնեն, այսինքն՝ Պոմպէի գալէն քիչ մը յառաջ, սակայն Գուտշմիդ (անդ 83) կը նախընտրէ 70 թուականն, այնու՝ որ անկախ ժամանակագիր մ'ալ (Փղեգոն առ Փոտայ) կը հաստատէ նոյնը: Շատ բնական էր որ Հրահատայ առաջին գործն ըլլալու էր Տիգրանայ զօրութիւնը կոտրել, եւ ինքնին կը հասկըցուի որ երբ Տիգրան եւ Միհրդատ 69ին (որ տարին է Տիգրանակերտի ճակատն, ուր Ղուկուղղոս յաղթեց Տիգրանայ) օգնութիւն ուղեցին իրմէ՝ ջսեց, թէեւ Տիգրան փոխադարձ վարձք կը խոստանար ետ դարձընել Միջագետքն, Ադիաբենէ եւ յիշեալ եօթանասուն հովիտները: Ընդհակառակն երբ Ղուկուղղոս ալ պատգամաւորութիւն խաւրեց՝ անոր հետ բանակցութեան մտաւ եւ դաշնագիր ալ եղաւ: Ի հարկէ քիչ մ'ետքն սկսաւ տեսնել որ թերեւս լաւ չէր ընթացքն երբ իբր թէ դաշինքն հաստատելու համար եկաւ Սեստիլիոս որ կարծես աւելի լրտես էր, որով որոշեց չէզոք մնալ: Երբ Միհրդատայ յաջողութեամբն ի վերջոյ Ղուկուղղեայ ձեռք ձգած յաջողութիւնքն ի դերեւ ելան, եւ երբ Հռոմայեցիք զՊոմպէոս խաւրեցին իրերը շտկելու (67ին,) ասի նոյն ընթացքը բռնեց: Նախ նոյնպէս դաշնա-

դիր եղաւ Հրահատայ հետ, եւ յորդորեց իսկ արշաւել ի Հայս: Ասոր լաւ առիթ ալ կար, քանի որ Տիգրանայ որդին եւ գահակիցը Տիգրան Արտսեր հօր հետ գժտուած Պարթեւաց ապաստանեցաւ: Հրահատ ընդունեցաւ զՏիգրան Արտսեր, եւ կնուիթեան տուաւ անոր իւր դստերաց մին, եւ անոր առաջնորդութեամբ մտաւ ի Հայս (66ին): Տիգրան Մեծ ստիպուած էր լեռներն ապաստանիլ, եւ Պարթեւք պաշարեցին Արտաշատն: Բայց պաշարումն երկար տեւեց, եւ Պարթեւք ստիպուեցան եղ գառնալ՝ Տիգրան Արտսերի քով թողլով մաս մը բանակին: Տիգրան Արտսեր չէր կրնար դիմանալ Հօր դէմ, եւ մեծ պարտութիւն կրելով՝ այս անգամ ճարահատ դիմեց Պոմպէոսի, որ ի Հայս մտնելու վրայ էր: Միհրդատ Եւսպատոր արդէն խորտակուած ըլլալով Եփրատայ քով մեծ ճակատամարտին մէջ՝ Տիգրան չփորձեց սլ զիմադրել, եւ Պոմպէոսի հետ՝ որուն առաջնորդն էր Տիգրան Արտսեր՝ ի հարկէ ծանր պայմաններով — այնչափ ժամանակի իւր ճգանց պտուղները մէկէն կորսնցընելով — հաշտութիւն ըրաւ, որով գրեթէ իւր պետութեան սահմանները մնացին այն ինչ որ էին յառաջագոյն (66 Ն. ք.): Թէ Հրահատ եւ թէ մանաւանդ Տիգրան Արտսեր շուտով իմացան որ լաւ խաբուած էին Հռոմայեցիներէն, որոնք մասնաւանդ առաջնոյն խոստացած էին Եփրատն ընել սահման Պարթեւաց: Անշուշտ Հրահատ օգտուեցաւ իրերէն, այնպէս որ կորսուած գաւառներն ետ առաւ, եւ նաեւ Կորդուք մտած էր: Արտսեր Տիգրան իւր մտանութեան գիմացը նախ առաւ միայն Ծովք, բայց ասոր փոխարէն լաւ դրամական հատուցում պահանջուեցաւ, եւ երբ այս ամէնուն դէմ ըմբոստացաւ՝ շղթայակապ իւր կնոջ եւ որդւոյն հետ Հռոմ խրկուեցաւ ձաղանաց, ի զուր բողոքեց Հրահատ իւր փեսային դէմ բռնուած այս ընթացքին (65): Պոմպէոս պէտք չունենալով այլ եւս Հրահատայ դաշնակցութեան, պարզապէս մերժեց, եւ նաեւ պահանջից որ Կորդուաց աշխարհէն ելլեն Պարթեւք, վասն զի այն աշխարհն Տիգրանայ է, եւ ասանց բանակցութեանց ելքին սպասելու՝ խաւրեց զԵփրանիոս որ Պարթեւները դուրս հանեց: Քիչ մ'ետքն ալ անցաւ Միջագետքէն — որ ըստ դաշանց բացայայտ Պարթեւաց ըլլալու էր, — եւ մտաւ Ասորիք: Պոմպէոս յառաջ գնաց այնչափ որ Հրահատայ զլացաւ «արքայից արքայո թիաղոսը զոր աւել կոչի՝ առած էր, եւ ի սկզբան բան ըսող չկար, ըստ Գուաշմիդի անշուշտ անոր համար՝ որ այն Տի-

գրանայ իրաւունքն էր որ տակաւին կ'ապրէր: Ասոնք բաւա-  
կանէն աւելի թշնամանք էին Հրահատայ, բայց ասի խոհե-  
մութիւն համարեցաւ լուռ կենալ: Բայց 64ի գարնան կրկին  
արշաւանք մը ձեռնարկեց Հրահատ Տիգրանայ դէմ, կ'ե-  
րեւայ Կորդուաց խնդրոյն համար: Այս անգամ Տիգրան էր  
որ Պոմպէոսէ օգնութիւն խնդրեց: Իսկ Պոմպէոս յայտա-  
բարեց որ իւր հոգը չէ երկուքին վէճը, միայն երբ Հրահատ  
ալ պատգամաւորութիւն մը խաւրեց, որոշեց երեք հոգի  
վէճը հաշտարարութեամբ որոշելու: Թէ Հրահատ եւ թէ Տի-  
գրան իրենց ընթացքին վախճանը տեսնելով՝ մէջերնին հաշ-  
թիւն գոյացուցին: Յամենայն դէպս Պարթեւք կրնային  
գոնէ այնուհետեւ իրենց ոյժերն ամփոփել եւ զօրացընել,  
եւ աշխարհաճաւալ պետութիւնը բոլորովին ուրիշ ոյժ մը  
կ'ըլար, եթէ ճիշդ Հրահատայ յաջորդաց օրերէն չսկսէին  
ներքին անվերջ երկպառակութիւնքն ու գահակալութեան  
կռիւները: Սկիզբն եղաւ նոյն իսկ Հրահատայ վերջին օրե-  
րէն, որ իւր որդիներէն սպաննուեցաւ: (Գուտմ. 83-6:)

(Արշ. ժ. Բ.) Հրահատ Գ. 70—57 Ն. Ք.  
31 կտոր՝ երեք խմբերու բաժնուած: Նախ՝ երեք  
շատ ցանցառ շորեքդրամեաններ, որոնց առաջա-  
կողմն՝ Հրահատ Գ կարճ մօրուօք, երկայն գանգրա-  
հեր մազով, գլուխն՝ ապարօշ. դարձեալ՝ օղ եւ  
լանջապանակ: Յետսակողմն՝ Արշակի գահի՝ աղեղ-  
նաւոր. արձանագիրն βασιλεως βασιλεων μεγαλου  
Αρσαχου και χριστου (“Արքայի արքայից մեծի  
Արշակայ եւ Շինողի”) Աշխ. 15.20—15.66 գր.,  
երեքն ալ շատ ցանցառ: — Երկրորդ՝ ութ դրամ  
եւ երեք պղինձ (4—14) առաջակողմը եւ յետսակողմը  
նոյն տպով, բայց սա վերնագրով՝ βασιλεως μεγαλου  
Αρσαχου δικαιου επιφανους θεου ευπατορος και  
φιλελληνης. (“արքայի մեծի Արշակայ Արդարոյ՝ Նշա-  
նաւորի Աստուծոյ Բարեհաւր եւ Հելլենասիրի”)  
ամէնն ալ պէսպէս մենագրերով, մաս մը շատ  
ցանցառ. բաց աստի Թ. 8 Արշակայ ետեւը՝ Β,  
Թ. 9, 11 աղեղան ներքեւ K եւ T, եւն: Գրամնե-  
րուն կշիռը՝ 3.62 մինչեւ 4.00 գր.: Պղինձներու  
ալ տիպը նոյն. յետսակողման պատկերը՝ ձի եւ

ձիագլուխ: Աշխ.՝ 3.66, եւ 3.68, եւ 1.38 գր. Արձանագիրը նոյն, բայց «Հայրասէր» եւ «Հելլենասէր» բառերու մէջ «է-» կը պակսի (նոյնպէս Թ. 7—11 դրամները.) եւ առանց մենագրի: Աիայն Բրիտ. Թանգարան կայ հաստ մը՝ որուն պատկերն ցլու գլուխ է, եւ մենագիր մ'ունի Ո. — Երրորդ՝ միակ դրամ մը (Թ. 15) որուն առաջակողման տիպն ընդհանրապէս նոյն է, եւ յետակողմն նոյնպէս Արշակ Ա ի գահի՝ աղեղնաւոր. նաեւ վերնագիրը յէականս նոյնպէս՝ բայց սկիզբը պարզ «արքայի արքայից», բառերու տեղ «Թագաւորոյի Թագաւորաց», այսպէս βασιλεοντος βασιλεων μεγαλου Αρσαχου δικαι(ου) επιφανου θεου ευπατ(οροσ) (χα)ι φιλελ(ληνοσ) «Թագաւորոյի արքայից մեծի Արշակայ Արդարոյ նշանաւորի Աստուծոյ Բարեհօր եւ Հելլենասիրի»: Արշակայ բռնած աղեղան ներքեւ յատուկ մենագիր մը կայ: Աշխ.՝ 3.95 գր.: — Զորրորդ խմբի վեց դրամոց եւ տասն պղինձներու (Թ. 16—31) տիպը նոյն է. եւ նաեւ վերնագիրը նոյն է, յիշեալ երրորդ խմբի միակ դրամին հետ, միայն փխ. «Թագաւորոյի», գրուած է ուղղութեամբ «արքայի», այսինքն՝ βασιλεωσ βασιλεων μεγαλου Αρσαχου δικαιου επιφανου θεου ευπατοροσ φιλελληνοσ, դրամները պէսպէս մենագրերով, օրինակ Թ. 18 աղեղան ներքեւ K, Թ. 19 նոյն տեղ NI, եւն: Աշխ.՝ 3.02էն մինչեւ 3.99 գր.: Պղինձներու առաջակողմն եւ յետակողման արձանագիրը՝ նոյն. պատկերն ըստ սովորութեան՝ Պեգասոս (Թ. 21—3), Յաղթութիւն (Թ. 24—5), լախտ (Թ. 26), փիղ եւ փղի գլուխ (Թ. 28—31): Թ. 27 դրամին եւ Թ. 28—31 պղինձներու առաջակողմը արքային զլխուն ետեւ՝ աստղ մը: Պղինձներու կշիռը՝ շատ պէսպէս, 1.51էն մինչեւ 4.49 գր.: — Կը ծանուցանէ Հեղինակն՝ այս դրամներու երեք վերջին խմբերը (Թիւ 4—31) ճշգիւ Հրահատայ Գ ըն-

ծայելու ատեն հետեւած է Գուտշմիդի տուած ուղղութեան<sup>1</sup>։ Բրիտ. Թանգարան ունի դրամ

<sup>1</sup> Գուտշմիդ, անդ՝ էջ 83, ծան. 5։ Այս դրամները Գարդնէր (էջ 39) կ'ընծայէր Միհրդատայ Գ։ Բայց Գուտշմիդ կ'ըսէ թէ բերած պատճառներն այն արժէքը չունին, երբ նկատի առնունք որ դասական մատենագիրք կը վկայեն բացայայտ թէ Հրաշատ Գ վերստին սկսաւ կրել «Արքայից արքայ» տիտղոսը (Պղուտ. Պոմպ. 38. Դիոն Կաս. Լէ, 6.) եւ երկրորդ թէ Թէոս (= Աստուած) յորջորջանքը ունէր (Փղեգոն առ Փոտայ)։ Եւ արդարեւ, ինչպէս տեսանք, Հրաշատայ վերջին գրեթէ բոլոր դրամներուն վրայ կայ յորջորջանքն «Արքայից Արքայ Մեծ Արշակ Դիկէոս (Արդար) Եպիփանէս (Նշանաւոր) Թէոս (Աստուած) Եւպատոր (Բարեհայր) Փիլհեւէն (Հելենասէր)»։ Ինչպէս տեսանք այս «Թէոս» յորջորջանքն այս ժամանակներէն միայն Հրաշատ Գ ունի, եւ ասկէ ետքը չ'երեւար. իրմէ յառաջ ունէին միայն Արշակ Բ (Տրդատ Ա Թէոպատոր) եւ Արշակ Թ (Միհրդատ Բ Թէոս Եւերգետէս Եպիփանէս Փիլհեւէն.) թէեւ «Թէոպատոր» յորջորջանքը կը կրեն ուրիշներն ալ. (ասկէ ետքը՝ Որոգէս Ա եւ Միհրդատ Գ)։ — Մեր շեղինակը Հրաշատայ Գ կու տայ (եւ արդէն արքային կիսապատկերը կը վկայէ ասոր ուղղութեան) նաեւ Թ. 1—3 չորեքդրամեանքն, որոնց վրայ «Թէոս» յորջորջանք չկայ, եւ անոր տեղ ցանցառագոյն մը՝ Կրիստոս (Շինող)։ Այս յորջորջանքն կ'երեւայ ամենայն իրաւամբք կապակցութիւն ունի ըստ Գուտշմիդի (անդ՝ 97) Սելեւկիայ կամ աւելի ճիշդ անոր կից արեւելեան քաղաքամասին՝ Կտեսեփոնի կամ Տիգրանի շինութեան հետ։ Ի հարկէ աւանդութիւնքը տարբեր են։ Ըստ Ամմիանու Մարկեղէայ (Ի Գ. 6, 23) առաջին շինողն էր Վարդան, եւ երկրորդը՝ Բակուր։ Գուտշմիդ այն առաջին շինողն Վարդան առասպելեալ անձնաւորութիւն մը կը համարի. իսկ Բակուրի անուան ներքեւ կը հասկընայ միայն Որոգէայ որդին զՀրաշատ Գ, որոնք արդէն ժամանակակից են. (Բակուր Ա 38՝ Ն. Բ. Հրաշատ Գ՝ 37—2 Ն. Բ.) եւ ասոր հետ կապակցութեան կը դնէ այն դրամներ, ուր Պարթեւաց արքայն Հրաշատ «Կտիստէս» կը յորջորջուի։ Սակայն ինքն իսկ Գուտշմիդ կը նշանակէ այն պարագան որ Սելեւկիա-Տիգրոն արդէն արքայանիստ էր Պարթեւաց, երբ Կրասոս իւր դժբախտ

Մ'ալ (Թիւ 27ի տպով) անսովոր ընթերցուածով՝  
 զոր շատ դժուարին է առեղծուլը. ուստի կարելի է  
 որ այս ալ ի վերջոյ Հրահատայ Գ վերաբերի  
 (Տես էջ 47—51):

(Արշակ ԺԳ.)՝ Որոգէս Ա, 57—37 Ն. Բ.  
 134 կտոր՝ շափաղանց մեծ պէսպիսութեամբ:

արշաւանքն սկսաւ 54ին Ն. Բ., ուստի Որոգէայ օրով:  
 Այս պարագային շատ աւելի յարմարագոյն է որ Հրահատ  
 Գ էր զՏիգրոն արքայանիստ շինել սկսողը: Եւ նկատելով  
 Հրահատայ դիրքն ժամանակին՝ անշուշտ երբ Տիգրանայ  
 ձեռքէն առած էր կրկին կորուսեալ երկիրները, գոնէ այս  
 ժամանակին ի դէպ է Տիգրոնի նոր դիրք մ'առնուլը: Բաց  
 աստի եթէ Թ. 4—31 Արքայից արքայ «Թէոսի» են՝ ուստի  
 Հրահատայ Գ, ի հարկէ անոր ըլլալու են նաեւ Թ. 1—3  
 չորեքդրամեաներն «Արքայի արքայից մեծի Արշակայ եւ  
 Կախատէսի», որոնց տիպը եւ առաջակողման արքային  
 պատկերը նոյն է միւսներուն հետ: Մեր Հեղինակին  
 դասաւորութիւնն ըստ այսմ ուղղագոյն է:

1 Այսպէս՝ ինչպէս կը յիշենք հոս՝ դասաւորած է  
 Հեղինակը վերնագրաց հաւաքման մէջ (Ցուցակիս 201—2)  
 այսինքն դնելով նախ (Արշակ ԺԳ)՝ Որոգէս Ա, եւ յետոյ  
 (Արշակ ԺԳ, 2)՝ Միհրդատ Գ եւ (Արշակ ԺԳ, 3)՝ Բակուր  
 Ա: Բուն Ցուցակին մէջ դասաւորած էր նախ Միհրդատայ  
 Գ դրամները (էջ 52—55,) յետոյ Որոգէայ Ա (էջ 56—75)  
 եւ Բակուրայ Ա (էջ 76:) Գասաւորութեան այս խնդիրն  
 ի հարկէ կարելի որ կէտ մը չէ. բայց ուղղագոյն է առաջին  
 դասաւորութիւնը, ինչպէս մենք ալ գրինք: Հրահատ Գ,  
 ինչպէս ծանօթ է պատմութենէն, սպաննուեցաւ իւր երկու  
 որդիներէն (57 Ն. Բ.:) Գահուն բուն յաջորդն եղաւ իւր  
 որդին Որոգէս կամ Հուրոգէս (զնդ. Huraodha), մինչ  
 միւս որդին Միհրդատ Գ նախ Մարաստանն ընդունեցաւ:  
 Այսպէս կը պատմէ Գիոն, որուն աւանդութիւնն՝ ընդդէմ  
 այլոց՝ կը հաստատուի նաեւ դրամներէն: Արդարեւ մինչդեռ  
 Որոգէս իւր դրամներու վրայ «արտայից արտայ», կը կոչէ  
 ինք զինք, Միհրդատ Գ իւր բոլոր դրամներու վրայ միայն  
 «արտայ ԹՅ» կը կոչէ: Ի հարկէ երկու եղբարց առաջին  
 միարանութիւնը շտեւեց երկար, եւ Միհրդատ Գ որ իւր  
 անգթութեան համար նախ մերժուեցաւ, որով Որոգէս



Նախ կան 17 չորեքդրամեանք (Թ. 1—17), մաս մը շատ ցանցառ: Առաջակողմն՝ պատկերն է Որոգեայ Ա արքային՝ կարճ մօրուօք, երկայն գանգուրներով, գլուխն՝ ապարօշ, վիզը՝ մանեակ, եւ կուրծքը լանջապանակ: Յետսակողմն՝ Արշակայ տեղ՝ Որոգէս Ա արքայի պատկերն՝ արքունի տարազով բազմած բարձր թիկնագահի վրայ, աջ ձեռքը յեցած Բախտի ձախ թելին վրայ, Բախտն իւր առջեւ ծնրադրած՝ պատմութեան աւոր, գլուխը բրգաւոր թագով, ձախ ձեռքը իշխանութեան ցուպ բռնած: Աւերը կը թռչի Յաղթութիւն (դիցուհին)՝ աջով պսակ եւ ձախով արմաւենւոյ ոստ բռնած: Այս Թ. 1 չորեքդրամեանին արձանագիրը կրկին դրոշմելուն պատճառաւ այ-

եղաւ միակ իշխան, ապաստանեցաւ Հռոմայեցւոց քով եւ Գաբինիոսէն ի սկզբան օգնութիւն գտաւ՝ մինչեւ որ այս ծրագիրը չյաջողեցաւ Պոմպէոսի հրամանաւ որ Փաբինիոսի հրաման տուաւ Եգիպտոսի Պտղոմէոս ԺԱ տանել նստեցընել իւր գահը (55): Այն կարծիքը թէ Միհրդատ Գ պատերազմ մղած է Հայոց հետ, ինչպէս կը պատմէ ալ Յուստին (ԽԲ, 4, 1), ըստ Փուտշմիդի (անդ 86) ապացուցուած չէ. վասն զի Յուստին այն տեղ այս Միհրդատ Գ արքայն խառնած շփոթած է Միհրդատայ Բ հետ, եւ խօսքն ալ ճիշդ անցման նախադասութեան մէջ է: Միհրդատայ ուրիշ բան չէր մնար, բայց միայն անձամբ փորձն ընել: Ի սկզբան յաջողեցաւ ալ գահէն մերժել եղբայրը Որոգէս, բայց երկար չտեւեց այս յաջողութիւնը, եւ Միհրդատ բռնուելով իւր Որոգէս եղբորէն՝ սպաննուեցաւ: (Տես Փուտշմիդ՝ անդ 86—7:) Բախտայն միջոցին տակաւին մանուկ էր, եւ հազիւ յետոյ 51ին կը տեսնենք զինքն իբրեւ զօրավար՝ տակաւին պատանի, եւ իբր 50ին հակարքայ ելած, որ բարեբախտաբար շուտով կարգադրուեցաւ, եւ Բակուր գահակից եղաւ եւ մեռաւ քաջաբար 38ին՝ տակաւին առոյգ: Այս մասին տես յետոյ պատմական տեղեկութեանց մէջ: Ըստ այսմ՝ իրաւացի է Արշակ ԺԳ գնել զՈրոգէս, եւ ԺԳ, ա-բ (ԺԳ, 2 եւ 3) ժամանակակից՝ նախ Միհրդատ Գ եւ ապա՝ Բակուր Ա՝ իսկ Արշակ ԺԳ՝ զՀրահատ Գ:

լայլած է. կշիռը 15.03, շատ ցանցառ: Թ. 2 ff առաջակողմը նոյն, իսկ յետսակողման վերնագիրն է՝ βασιλεως βασιλεων Αρσαχου ευεργετου δικαιου επιφανους φιλελληνος («արքայի արքայից Արշակայ Բարեգործի Արդարոյ Նշանաւորի Հելլենասիրի»)<sup>1</sup> Այլեւայլ կտորներ պէսպիսութիւններ կը ցուցնեն: Այսպէս Թիւ 2—6 չորեքդրամեանք չունին Թաշող Յաղթութիւնը, նոյնպէս Թիւ 7—11՝ որոնց վրայ Բախտն ալ ոտքի վրայ է արքային առջեւ եւ ձեռքը ցպէն զատ՝ բռնած է նաեւ արմաւենի: Հատերը բացի այլեւայլ մենագրերէ՝ կը կրեն նաեւ Մակեդոնական ամսոց համառօտութիւնքն: Այսպէս Թ. 2 միայն մենագիր, կշիռ 13.70, շատ ցանցառ. — Թիւ 3 ՈՕ, կշիռ՝ 15.05, շատ ցանցառ. — Թ. 4, ամիսն՝ ՍԷ (Պերիտիոս.) կշիռ 15.44. — Թ. 6, ամիսն՝ ΞΑ (Քսանտիկոս,) կշիռ 15.53: — Թ. 6, ամիսն՝ ΓΟΡ (Գորպիէոս.) կշիռ՝ 14.27: Թիւ 7էն սկսեալ՝ Թ է եւ ընդ հանուր նկարագիրը նոյն, բայց յետսակողմն արքային առջեւ կեցած է Բախտը պատմութեան եւ վերնահանդերձով, գլուխը բրգաւոր թագ, ձախով իշխանութեան ցուպ բռնած, աջով՝ արմաւենի, զոր արքային կու տայ: Ամիսն Թ. 7 ΑΥ (Աւդիւնէոս.) կշիռը 14.94. — Թ. 8՝ ՍԷ (Պերիտիոս), կշիռ 14.45. — Թ. 9՝ ΑΡ (Արտեմիտիոս), կշիռ 15.78. — Թ. 10՝ ΠΑ (Պանեմոս), կշիռ 15.11 — Թ. 11՝ ΓΟΡ (Գորպիէոս) եւ ասկէ զատ ΕΜΤΙ, կշիռը 15.62, շատ ցանցառ: Նշանաւոր տարբերութիւն մ'ունին մնացեալներն (Թ. 12 ff,) այսինքն առաջակողմն Որոգեայ ճակատին վրայ տեսնուած գնդաձեւ նշան մը: Ասանցմէ Թիւ 12—13 յետ-

1 Ճակատի այս նշանը նշանակական (symbolique) կը համարի Հեղինակը, եւ այս հետեւեալ դիտողութիւնքը կ'ընէ: Որոգէս Ա արքայի այլեւայլ չորեքդրամեաներուն, դրամներուն եւ դրամի ւանրութիւններուն վրայ, կ'ըսէ, արքային պատկերները ճիշդ ճակատին վրայ փոքրիկ գնդաձեւ ուռեցքի

սակողմը կը ցուցընեն դարձեալ Բախտն նոյն տարազով եւ բրգաւոր թագով արքային առջեւ կեցած՝ եւ անոր արմաւենի կ'ընծայէ՝ աջ ձեռքը բռնած,

պէս բան մը կը ցուցընեն, որ առաջին տեսութեան կոծիծ մըն է կարծես: Սակայն Արշակունեաց բոլոր դրամներն աչքէ անցընելով կը տեսնուի որ նոյն նշանը նոյնպէս յաճախ կը գտնուի Հրաճատայ Գ, Հրաճատայ Ե, Վարդանայ Ա, չորեքդրամեաներուն եւ Հրաճատայ Գ, Հրաճատայ Ե, Վարդանայ Ա, Գոտարզի, Վաղարշայ Ա եւ Վարդանայ Բ դրամներուն վրայ: Ասով լաւագոյն է ընդունիլը թէ այս նշանը նշանակական արժէք մ'ունի: Գարձեալ նոյն ճակատի նշանը կը գտնենք Շիւայի եւ Քուրդճայի պատկերաց վրայ, եւ այս դից համար ի հարկէ նոյնը նշանակական բան մըն է: Նաեւ Թաթարաց եւ Կալմիւկներու շերտիկան եւն դիցապատկերաց վրայ նման ճակատի-նշան մը կը տեսնենք, որ սովորաբար կը մեկնուի իբրեւ երրորդ աչք այս դից: Անշուշտ այսպիսի բան մ'ըլլալու էր նաեւ Արշակունի արքայից ճակատին վրայ տեսնուած այս աչքի նման նշանակը. բայց դիւցաբանական մթութեան մէջ կը մնայ այն կէտը թէ բուն ինչ նշանակութիւն կու տային ասոր էջրանեան ազգերն եւ ինչ մասնաւոր յատկութեանց արտայայտիչ էր: Եթէ հոս ալ՝ վերոյիշեալ դից համեմատ՝ իբրեւ երրորդ աչք մը կը համարուէր, այն ժամանակ անշուշտ շրջահայեաց եւ արթուն արքային ամենատեսութեան նշանակին էր: Բաց աստի, կը յաւելու շեղինակին, իւր Հասարման մէջ կան դրամներ ալ որոնց վրայ՝ անշուշտ նոյնպէս նշանակական արժողութեամբ՝ գնդակաձեւ նշան մը կը տեսնուի ուրիշ տեղեր, այսինքն՝ 1. Ազատ ձգուած գնդակ մը արքային գահուն ներքեւ՝ Հրաճատայ Գ արքային այն չորեքդրամեանց յետսակողմը որ սա թուականաւ են՝ Յուլիս եւ Հոկտ. 280, Հոկտ. 283, Փետր. 284 եւ Յունիս 288 Սելեւկ. թուականութեան. — 2. Նոյնպէս ազատ ձգուած գնդակ մը Հրաճատայ Ե չորեքդրամեաներու յետսակողմն որ այս թուականաւ են՝ Օգոստ., Սեպտ. եւ Հոկտ. 310 Սելեւկ. թուականութեան, եւ այն Արքային եւ Բախտին՝ որ արքային առջեւ կեցած է եւ զանի կը պսակէ, մէջ տեղ կեցած է գնդակը. — 3. Ազատ ձգուած գնդակ մը Հրաճատայ Ե եւ Մուսայ տիկնոջ եր-

իսկ ձախը՝ ամաղթեղջիւր: Թիւ 12 ունի ամսոյ ա-  
նունս ΞΑΝ քսանտիկոս.) եւ դարձեալ ZHN, կշիռ  
13.32, շատ ցանցառ. իսկ Թ. 13 ΔΑΙ (Գէսիոս:)  
եւ Α, կշիռ 14.88, շատ ցանցառ: Միւսներուն որ  
ուրիշ կողմանէ նոյն են՝ յետսակողմն ինքն արքայն  
ձախով բռնած է իշխանութեան ցուպը, իսկ աջ  
ձեռքը կարկառած՝ ափին վրայ կը կենայ Յաղթու-  
թիւնն որ զինքը կը պսակէ: Թ. 14 առանց ամսոյ  
անուն, կշիռ 14.25 — Թ. 15 արքային առջեւ Γ, կշիռ  
15.08. — Թ. 16 նոյն տեղ Υ, կշիռ 12.00: Նշանաւոր-  
ագոյն է Թիւ 17, որ ունի տարեթիւ յետսակողմն  
□Σ = 273 Սելեւկեանց (= 39 Ն. Բ.) կշիռ  
13.49, շատ ցանցառ: — Միւս դրամներն շատ  
պէսպէս ըլլալով՝ ստիպուած էր Հեղինակը այլեւ-  
այլ խմբերու, եւ խմբերն ալ՝ բաժիններու զատել:  
Առաջին խմբի երկու բաժիններն (մին ութ դրամ եւ  
չորս պղինձ, միւսը՝ երեք դրամ եւ երկու պղինձ.)  
իրարմէ այն տարբերութիւնն ունին, որ առաջին  
բաժնին մէջ արքային պատկերը (առաջակողմն)  
առանց յաւելուածոյ է, մինչ երկրորդ բաժնին  
դրամոց վրայ արքային գլխուն ետեւը Յաղթու-  
թիւն կեցած է պսակաւոր: Այս Ա բաժնին (Թ. 18  
— 29) առաջակողմն Արոգէսի կիսանձնեայն, կարճ  
ձորուօք, երկայն գանգ ուրներով, գլուխը՝ ապարօշ,  
վիզը՝ մանեակ եւ կուրծքը լանջապանակ: Յետսակողմն  
արձանագիրն է՝ βασιλεως βασιλεων Αρσαχου φιλο-  
πατορος δικαιου επιφανους φιλελληνος (“արքայի  
արքայից Արշակայ Հայրասիրի Արդարոյ Նշանաւորի  
Հելլենասիրի.”) իսկ յետսակողմն պատկերը՝ Ար-  
շակ ի գահի՝ աղեղնաւոր: Մենագրերը պէսպէս, ի  
մասնաւորի Թ. 20 Τ, Թ. 24 Π, Թ. 2. K. կշիռնին  
3.56 մինչեւ 3.91 գր.: Պղինձներուն առաջակողմն

կու շորեքդրամեաններուն վրայ, թագուհւոյն կիսապատ-  
կերին ետեւը, իւր ապարօշին՝ գլխէն վար փողփողեալ վեր-  
ջաւորաց մէջտեղ: Տես Հեղինակիս Յուցակը՝ էջ 58, Ծան.

եւ արձանագիրը նոյն . ետեւը Պեգասոս (Թ. 26), ձիու  
 գլուխ եւ պատկանդարան (Թ. 28—9,) եւ եղջերու  
 (Թիւ 27.) կշիռնին՝ 2.17 մինչեւ 3.57: Բ բաժնին  
 (Թ. 30—34) նախ երեք դրամները (որոնց երկուքն  
 Ալիշանի հաւաքմանէն) շատ ցանցառ են: Առաջա-  
 կողմն՝ Արողէս Ա կարճ մօրուօք, երկար գանգուր-  
 ներով . նոյն՝ ապարօշ, մանեակ եւ լանջապանակ .  
 արքային գլխուն ետեւ Յաղթուիւն՝ որ արքային  
 կիսանձնեայ պատկերը կը պսակէ: Յետսակողմն Ար-  
 շակ Ա ի գահի՝ աղեղնաւոր . արձանագիրը՝ βασιλεωσ  
 βασιλεων Αρσαχου φιλοπατορος δικαιου επι-  
 φανουσ φιλελληνοσ (“արքայի արքայից Արշակայ  
 Հայրասիրի Արդարոյ Նշանաւորի Հելլենասիրի . . .)  
 մենագիրները պէսպէս . կշիռ՝ 4.06, եւ 3.87  
 եւ 3.51: Երկու պղինձներու ալ առաջակողմը  
 եւ արձանագիրը նոյն . յետսակողման պատկերը՝  
 արծիւ թեւատարած, բաց աստի մենագիր մը:  
 Այս երկուքին կշիռը՝ 3.63 եւ 3.70: — Երկրորդ  
 առանձինն խումբ մը կը կազմէ միակ դրամ մը (Ալի-  
 շանի հաւաքման) շատ ցանցառ (Թ. 35), կշիռը 3.41  
 դրամ . առաջակողմն՝ պատկեր Արողէսայ կարճ մօ-  
 րուօք, մազն՝ երկայն գանգրահեր . նոյն՝ ապարօշ, մա-  
 նեակ եւ լանջապանակ . յետսակողմն՝ Արշակի գահի՝  
 աղեղնաւոր . արձանագիրը՝ βασιλε(ωσ) βασιλε(ων)  
 μεγαλ(ου) Αρσα(χου) θεοπατ(ορος) επιφα(νουσ)  
 φιλελλην(οσ) (“արքայի արքայից մեծի Արշակայ Աս-  
 տուածահօր Նշանաւորի Հելլենասիրի . . .”) աղեղին  
 տակ՝ մենագիր: — Երրորդ խմբի չորս բաժնիներն  
 ալ նոյն տարբերութիւնն ունին որ նախ մաս մը  
 (Բաժին Ա, Թ. 36—59a, 14 դրամ, 11 պղինձ)  
 յառաջակողմն առանց յաւելուածոյ ունին արքային  
 պատկերը, որ այլուստ նոյն է՝ կարճ մօրուօք, եր-  
 կայն գանգուրներով, ապարօշով, մանեկով եւ լան-  
 ջապանակով, մինչդեռ Բ բաժինը (Թ. 60—75 .  
 9 դրամ, 7 պղինձ)՝ արքայի գլխուն ետեւը մահիկ  
 մ'ունին: Յետսակողմն նոյն ընդհանուր տիպն է,

պատմէ յիշեալ աւանդութիւնը. (տես նախընթացը:) Կարեւոր է այն պարագան որ չորեքդրամեանս ընդհանուր տպով շատ նման է Աաղարշայ Ձգրամներուն: Այս պատճառաւ Գարդնէր (էջ 59) իրօք Աաղարշայ Ձ կ'ընծայէր, եւ կ'ընդունէր որ Արտաւանայ մահուանէն ետքը Աաղարշ Ձ կրկին ձեռք ձգած էր իշխանութիւնն ի Տիգրօն: Նոյնն այնպէս կ'ընդունէր նաեւ Գուտշմիդ (անդ 163,) որուն բաց աստի ծանօթ էր դարձեալ միակ դրամ մ'Արտաւազդայ արքայի, որ յայտնապէս, կ'ըսէ, «Արտաւանայ մէկ որդիէն ի Մարս դրոշմուած է»: Սակայն քանի որ այժմ գիտենք թէ ո՛չ թէ Աաղարշ Ձ, այլ նոյն ինքն այն Արտաւազդ է 539 (= 228b) չորեքդրամեանն հատանել տուողը, պէտք է ընդունիլ որ Արտաւազդ էր Արտաւանէ ետքը բուն արշակունի «արքայից արքայն», գոնէ ըստ իրականց, որուն մասին ի հարկէ ոչինչ գիտենք: Յամենայն դէպս չկրցաւ իւր հայրենի գահն առաջին դրից բարձրացընել: Իւր իշխանութիւնը Տիգրօնի եւ բուն Պարթեւական մասանց քիչ ժամանակի մէջ Սասանեանց ձեռքով առնուելովն, աւելի անուանական նշանակութիւն մ'ունեցած ըլլալու է՝ գոնէ իրրեւ «արքայից արքայ»: Անշուշտ Սասանեանց ալ յաջողութիւնն ի սկզբան այն ծաւալով չէր՝ ինչպէս յետոյ եղաւ կամաց կամաց. բայց «Արշակունեաց» գահի առաջին նշանակութիւնը կորսուած էր յիրականին: Քաց ի մանր արքայութիւններէ՝ կը տեւէին տակաւին մեծեր ալ. իրրեւ Արշակունի այնուհետեւ կարեւորագոյնը կը մնար Հայոց Արշակունեաց տունը, որ՝ ինչպէս ծանօթ է՝ փորձեց իսկ Արտաւանայ վրէժն առնուլ — Արտաւազդայ եւ այլոց ալ օգնութեամբ, — այսինքն կենդրոնական տան նախկին իշխանութիւնը վերահաստատել: Փորձն անյաջող էր նաեւ այնու որ՝ ինչպէս բացայայտ կ'ըսուի՝ նոյն իսկ պահլացեղեր եւ արշակունի ճիւղեր կողմն էին նոր կարգաց. եւ այնուհետեւ կը մնար հոգալ նոյն իսկ իւր գոյութիւնը հզօրագոյն նոր իշխանութեան դէմ, որուն ներքին կազմակերպութիւնն եւ կենդրոնական ոյժն աւելի էր քան Պարթեւականին: Ի վերջոյ խոնարհեցաւ այս ալ, եւ Սասանեանց իրական նպատակը՝ Արշակունի ամէն տուն վերջնականապէս անզօր ընել, յաջողեցաւ, երբ հայ Արշակունիք ալ ինկան Ե դարուն առաջին քառորդին, բնիկ տան իյնալէն ճիշդ երկու դար վերջը: — Այս անապանագոյն ժամանակներ մեր ծրագրէն դուրս են: Հոս կը մնայ շօշա-

Արշակ Ա ի գահի աղեղնաւոր՝ դրամներուն համար. իսկ արձանագիրն այսպէս՝ βασιλεως βασιλεων Αρσαχου ευεργετου δικαιου επιφανους φιλελληνης (՝արքայի արքայից Արշակայ Բարեգործի Արդարոյ նշանաւորի Հելլենասիրի:») Ոչ միայն դրամներն՝ այլ եւ պղինձները բաղձագգի մենագրերով են: Կշիռ Ա բաժնի դրամներուն 3.51 մինչեւ 4.03, Բ բաժնի՝ 3.45 մինչեւ 4.07. Պղինձներուն Ա բաժնի՝ 1.50 մինչեւ 4.13, Բ բաժնի՝ 1.10 մինչեւ 2.12: Պղինձները բաց ի սովորական պատկերներէն (ձի, ձիու գլուխ, պատկանդարան, Պեղասոս եւն) ունին՝ եղջերու (Թիւ 50, եղջերուի գլուխ Թ. 53.) Բախտ՝ պատկով (Թիւ 56.) Բախտ բրգաւոր թագով (Թիւ 69, 70, 72), չորս աշտարակով բերդապարիսպ (Թ. 57.) մահիկ եւ աստղ (Թիւ 58.) Բախտ (Թ. 59a) Յաղթու թիւն (Թ. 73:) Իսկ Թ. 71 նշանակս Չ եւ վարը K. — Երրորդ բաժնին 16 դրամոց եւ 11 պղինձներու (Թ. 76—102) գլխաւոր տարբերութիւնն է՝ Գրամոց առաջակողման արքային գլխուն առջեւ աստղ մը եւ գլխուն ետեւը մահիկ. միւս կողմանէ նոյն. մինչդեռ Չորրորդ բաժնին 5 դրամոց 10 պղինձներու (Թ. 103—116a) սեպհական յատկութիւնն է՝ առաջակողմն արքային գլխուն առջեւ աստղ, գլխու ետեւ՝ աստղ եւ մահիկ, յետսակողմն Արշակայ գահուն տակ՝ խարիսխ. եւ բաց աստի արքային ճակտին վրայ այն գնդաձեւ նշանակն զոր վերը յիշեցինք: Միւս ընդհանուր նկարագիրը նոյն է հոս ալ, եւ նոյն նաեւ արձանագիրն՝ ՝Արքայի արքայից Արշակայ Բարեգործի արդարոյ նշանաւորի հելլենասիրի.՝ (տես քիչ մը յառաջ:) Գրամներն երկու բաժնին ալ պէսպէս մենագրով են, ի մասնաւորի Թ. 80՝ K, Թ. 81՝ T. Թ. 84՝ NI, Թ. 85—6՝ Λ, Թ. 89՝ X. Կշիռը՝ երրորդ բաժնի դրամոց 3.21 մինչեւ 4.14, չորրորդ բաժնինը՝ 3.56 մինչեւ 4.70: Կրկին բաժնին ալ պղինձներն իրենց համեմատական դրամներուն պէս ունին յառաջակողմն եւ յետ-

սակողման ալ արձանագիրը, շատերը նաեւ՝ մենագիր. իսկ յետսակողման պատկերները՝ Աշտարակաւոր պատնէշ (թ. 92.) Յաղթութիւն ձեռքը պսակ (թիւ 93,) եղջերու (թ. 94,) եղջերուի գլուխ (թ. 116a.) արծիւ թեւերը բացած (թ. 95, 115—6.) փղի գլուխ (թ. 97.) ձիու գլուխ (թ. 98.) աստղ ու մահիկ (թ. 99.) խարիսխ եւ մահիկ (թ. 100, 112.) նշանակո Չ (թ. 101,) պատկանդարան (թ. 102.) Բախտ բրգաւոր թագով (թ. 108, 113), մահիկ միայն (թ. 109.) արմաւենի (թ. 110.) խարիսխ միայն (թ. 111.) սափոր (թ. 114.) իսկ Բրիտ. Թանգարանի մէկ պղնձի վրայ թ. 108ի տպով՝ Պալլասի գլուխը: Պղինձներուս կշիռը՝ երրորդ բաժնին 0.73էն մինչեւ 2.92, չորրորդ բաժնին 0.76էն 2.40: — Չորրորդ խմբի կը վերաբերին նախ երեքլումայ մը (թ. 117) կշիռ՝ 1.92, Ալեշանի հաւաքմանէն՝ շատ ցանցառ, եւ հինգ լումայ (թ. 118—22,) որոնց վրայ արքային ճակատը կայ գնդակաձեւ նշանը. մօրուքը կարճ, մազն երկայն գանգրահեր. նոյն՝ ապարօշ, մանեակ եւ լանջապանակ. յետսակողմն՝ Արշակի գահի՝ աղեղնաւոր, աղեղան ներքեւ՝ մենագիր. իսկ վերնագիրն է միայն βασιλεως βασιλε(ων) Αρσαχου δικαιου («արքայի արքայից Արշակայ Արդարոյ:») Լումայից կշիռն է՝ 0.55—0.63, ցանցառ: Այս խմբի միւս բաժնին մնացեալ երեք երեքլումայքն (թ. 123—5) բայ ի նախընթացին համեմատ յառաջակողմն եւ ճակտի նշանէն, ունին նաեւ արմաւենւոյ ոստ մը արքային պատկերին առջեւը. յետսակողմը նոյն, եւ նոյն մենագիրը՝ Արշակայ աղեղան ներքեւ, երեքն ալ ցանցառագոյն կտորներ, կշիռն՝ 1.16, եւ 1.14, եւ 1.09 — Հինգերորդ խումբ մըն է միակ լումայ մը (թ. 126). 0.58 կշիռով, շատ ցանցառ, որ յառաջակողմն ունի՝ Որողէսի պատկերը ճակտի գնդաձեւ նշանով, նոյն՝ կարճ մօրուք, գանգրահեր մազ, ապարօշ, մանեակ եւ լանջապանակ. յետսակողմն՝



Արշակ ի գահի՝ աղեղնաւոր եւ մենագիր, իսկ արձանագիրն այսպէս միայն՝ βασιλεως) (βασιλεων?) Αρσα(χου) (φι)λελλ(ηνος) (“արքայի արքայից Արշակայ Հելլենասիրի.”) — Ար մնան՝ իբրեւ վեցերորդ խումբ՝ վեց լուծայք (Թ. 127—132), որոնք նախընթացէն (Թ. 126) տարբեր միայն են իրենց յետսակողման արձանագրութեամբն, ուր յայտնապէս ալ կը յիշուի արքային անունը, այսինքն՝ βασιλε(ως) βασιλε(ων) Αρσαχου Υρωδου (“արքայի արքայից Արշակայ Իւրուդու.”) արքային պատկերն եւն նոյն՝ նախընթաց Թ. 127ին պէս՝ ճակատին գնդաձեւ ալ նշանոյն: Ասոնց կշիռն՝ 0.55 մինչեւ 0.65: (Տես էջ 56—75:)

(Արշ. ժ. Գ, 2.) Միհրդատ Գ, 57—54. Ն. Բ. 32 կտոր, որոնց չորսը շորեքդրամեան է, 15 դրամ եւ մնացեալը պղինձ: Չորեքդրամեաններու նկարագիրն է (Թ. 1—4)՝ առաջակողմը Միհրդատայ Գ պատկերը կարճ ձորուօք, երկայն գանդուրներով. գլուխը՝ ապարոշ. նոյն՝ մանեակ եւ լանջանպանակ: Յետսակողմը՝ Արշակ ի գահի՝ աղեղնաւոր եւ աղեղան տակ մենագիր. արձանագիրը՝ βασιλεως μεγαλου Αρσαχου φιλοπατορος ευεργετου επιφανους φιλελληνος (“արքայի մեծի Արշակայ Հայրասիրի Բարեգործի Նշանաւորի Հելլենասիրի.”) Ասոնց կշիռը՝ 13.67 մինչեւ 15.91, շատ ցանցաւ: — Իրամներուն կէտը (Թ. 5—13) նոյնպէս ունին առաջակողմը, եւ յետսակողմը՝ այն միայն դոյզն տարբերութեամբ որ արձանագրին վերջն է ΕΠΙΦΑΝΟΥΣ και φιλελληνος “... Նշանաւորի է- Հելլենասիրի.” Արշակայ աղեղան ներքեւ եղած մենագրերը պէսպէս, (Թ. 11՝ N1.) ասոնց կշիռը՝ 3.66 մինչեւ 4.13: Այս բաժնին Պղինձներու (Թ. 14—17) առաջակողմն այն տարբերութեամբ է, որ արքային գլխուն ետեւ կեցած է Յաղթութիւն որ կը պսակէ: Յետսակողման արձանագիրն ալ շորեքդրամեաններուն համեմատ (առանց “է-”.) պատկերը՝ ձի

(Թ. 14.) Յաղթութիւն պատմութեանաւ, ձախով արմաւենի՝ աջով պսակ բռնած (Թ. 15.) ձիու գլուխ (Թ. 16) եւ լախտ (Թ. 17.) կշիռն՝ 1.46էն մինչեւ 2.76: — Բ բաժնին Գրամներն (Թ. 18—23) եւ Պղինձները (Թ. 24—32) առաջակողմը Միհրդատայ Գ պատկերն ոչ թէ սովորականին պէս կողմնակի կամ կիսադէմ ունին, այլ լիերես՝ նայողին դէմ յանդիման կեցած, կարծ մօրուք եւն, միայն վզի մանեակն առջեւը ճարմանդ ունի: Յետասակողմն՝ Արշակ ի գահի՝ աղեղնաւոր, աղեղան տակ մենագիր (Գրամները.) այլազգ է արձանագրութիւնը՝ «Տայրասէր» յորջորջանաց տեղ «աստուածահայր», այսպէս՝ βασιλεως μεγαλου Αρσαχου θεοπατορος ευεργετου επιφανους και φιλελλη- νος. («արքայի մեծի Արշակայ սաստիւստ Բարեգործի նշանաւորի եւ Հելլենասիրի:») Գրամները շատ ցանցառ են. կշիռնին՝ 3.31էն մինչեւ 4.03: Բաժնիս պղինձներուն առաջակողմը գրամներուն պէս, ինչպէս ըսինք, նաեւ յետասակողման արձանագիրը նոյնպէս. իսկ պատկերներն են՝ ձի (Թ. 24—7.) Յաղթութիւն պատմութեանաւ, ձախով արմաւենի եւ աջով պսակ բռնած (Թ. 28—9.) փիղ (Թ. 30—32:) կշիռն՝ 1.06էն մինչեւ 4.83: (Տես էջ 52—55:)<sup>1</sup>

<sup>1</sup> Հեղինակը մտադիր կ'ընէ (Յուցակիս էջ 55) որ բոլոր այս Թ. 1—32 կտորները Միհրդատայ Գ ընծայելու ատեն հետեւած է Գուաշմիդի տուած ուղղութեան, որ ինչպէս քիչ մը վերը յիշեցինք (տես էջ 341, Ծան. 1) Գիտնի Կասիոսի աւանդածն՝ ընդդէմ այլոց՝ հաստատուած կը գտնէր գրամներէս, որոնց պարզ «Արքայ Մեծ» կոչածն է Միհրդատ Գ, իսկ նոյն ժամանակի «Արքայից արքայն» եղբայրը Որոգէս: Գուաշմիդ ըստ այսմ կը բաժնէր գրամներս՝ Միհրդատ Գ է գրամոց յորջորջածն Արտայ Մեծ Արշակ Փէլուպոսը (տես վերն Ա բաժինը կամ Թեոպոսը՝ տես Բ բաժինը) Եւերգեաէս Եպիփանէս Փիլհելէն (որ գրամները Գարգնէր՝ էջ 39 ասոր հօր՝ Հրահատայ Գ կ'ընծայէր, ոչ ուղղութեամբ:) Թեոպոսը յորջորջանքը, կ'ընէ, յայտ-

(Արշակ ԺԳ, 3.) Բահուր, 38 Ն. Ք., միայն 3 կտոր, մէկ դրամ եւ երկու պղինձ: Առաջակողմը Բահուրի պատկերը՝ անձօրուս է, կարծ ճաղով, գլուխն՝ ապարօշ, ակունջն՝ օղ, վիզը՝ մանեակ եւ կուրծքը լանջապանակ: Արքային գլխուն ետեւը՝ Յաղթութիւն որ զթագաւորը կը պսակէ: Յետսակողմն՝ Արշակ ի գահի՝ աղեղնաւոր, գահուն ետեւը՝ մահիկ. աղեղան տակ՝ մենագիր. արձանագրութիւնն՝ βασιλεω(ς) βασιλεων Αρσαχου ευεργετου δεχαιου επιφανους φιλελληνης («արքայի արքայից Արշակայ Բարեգործի Արդարոյ Նշանաւորի Հելլենասիրի:») Գրամին կշիռը՝ 3.48, շատ ցանցառ: Թ. 2—3 Պղինձներու յառաջակողմը նոյն, բայց արքայն լանջապանակ չունի: Յետսակողմը Թ. 2 արձանագրութիւն չունի՝ կաղապարէն դուրս ինկած, կշիռը՝ 1.07, շատ ցանցառ. (պատկերը՝ երեք աշտարակով պարիսպ:) Թ. 3 յետսակողմն արձանագիրը թերակատար, եւ մէջտեղը անձօրուս երիտասարդի մը կիսապատկերը կոնաձեւ գլխու ծածկութով, վարը՝ մենագիր. կշիռը՝ 1.39, շատ ցանցառ: (Տես էջ 76:)

Աւերը յիշեցինք Արոգեայ եւ իւր եղբօր Միհրդատայ Գ գահ ելելը հայրասպանութեամբ՝ առաջինը Պարթեւաց եւ երկրորդը Մարաց (57ին.) նոյնպէս Միհրդատայ փորձերը՝ մերժելու իւր եղբայրն եւ գահը գրաւելու յաջողիւ պահ մը (55.) մինչեւ որ Արոգէս կրկին գլուխ ելաւ նի կը ցուցնէ թէ Արշակայ Թեոսի մը որդին էր որ է Հրաշատ Գ: Իսկ Արոգէս Ա իւր դրամոց մէջ կը կրէ յորջորջանքս՝ «Արքայից արքայ Արշակ Փէլոպոսոս (մաս մ'ասոր ակղ ալ՝ Թեոպոսոս) Եւերգետէս Գիկէոս Եպիփանէս Փիլհելէն» կամ վերջնոցս միայն մին կամ մէկալը (տես վերը): Գուաշմիդ մտադիր կ'ընէ որ երկու եղբարքն ալ իրենց Փէլոպոսոս յորջորջանքն — որ կ'ըսէ սովորաբար կը արուէր գահակից կամ գահաժառանգ հաշակուած արքայորդաց, — յետոյ թողուցած եւ փոխած են, որ գոնէ, կ'ըսէ, անուղղակի հաստատութիւն մըն է իրենց հայրասպան սճրին: (Տես Գուաշմիդ՝ անդ 86, Ծան. 1:)

Միհրդատայ դէմ, եւ այն Սուրենայ (Պարթեւաց թագադիրք էին տան անդամքն եւ երկրորդը՝ արքայէն ետքը) արդեամբք, որ առաւ զՍելեւկիա: Միհրդատ Բարեւոն ապաստանեցաւ, ըստ երկար պաշարմամբ անձնատուր ըլլալ ստիպուած, Որոգեայ ձեռքն ինկաւ՝ որ իւր աչքին առջեւ սպաննել տուաւ: Այս ամէնն մինչեւ 54 տարւոյն սկիզբներն տեւած ըլլալու է, որ ատեն կը սկսի Կրասոսի արկածը, որ Գարինիոսի յաջորդն էր, եւ անջան լաւ աւարառութիւն մ'ընելու յոյս ունէր: Պատրուակաւ մը մտաւ Միջագետք (54): Տաղիւմենոս Սիղակէս սատրապի սակաւածեռն գնդին յաղթելով՝ հետ զհետէ առաւ նշանաւոր յունական քաղաքները՝ Նիկեփորիոն, Իքնէա եւ Կառէա: Իւր մեծ սխալն էր Նիկեփորիոնէն Եփրատն ի վար Բարեւոնի եւ Սելեւկիոյ վրայ շարշաւելն (Պղոտ. Կաս. 17.) այլ ձմերեց Ասորիք դարձած՝ Միջագետաց մէջ բանակ մը թողլով: Ճիշդ այս բանակին պատճառաւ շիրցաւ յետոյ անսալ Արտաւազդայ Հայոց արքայի խորհրդին՝ իւր երկրէն անցնելու, խոստանալով աջակցութիւն: Պարթեւք իրենց պատրաստութիւնը տեսած էին. եւ Սուրեն՝ որ Սիղակէսի օգնական տրուած էր, յետս մղեց այն թողուած բանակն եւ Կրասոսի դէմ գնաց, մինչդեռ Որոգէս արքայն մտաւ ի Հայս արգիլելու զԱրտաւազդ որ շօգնէ Հռոմայեցւոց, եւ յաջողեցաւ: Կրասոս եօթն լեգէոնով անցնելով Եփրատն (53ին), Ուսայի Արգար Բ արքայի խորհրդով՝ գետէն հեռացաւ եւ արեւելք դիմեց: Բալիսոս (այժմու Նասր Բէլիկ) գետին քով հանդիպեցաւ Սուրենի բանակին, եւ Հռոմայեցի բանակը կրեց ծանօթ այն նշանաւոր պարտութիւնը, (9 Յունիս, որ ըստ Գուտշմ. այն տարին իրականին 6 Մայիսի էր:) Գիշերանց փախչիլ ստիպուելով դէպ ի հիւսիս՝ Հայոց լեռանց կողմերը, եւ խաբուելով Սուրենի խաղաղութեան առաջարկութենէն՝ իջաւ կրկին դաշտավայրն, եւ երբ ծուղակ մ'ըլլալն հասկցան Հռոմայեցիք՝ արդէն ուշ էր. ձեռն ի ձեռն խռան մէջ Կրասոս սպաննուեցաւ, եւ հազիւ բիւր մը կրցաւ ի Հայս ապաստանելով Ասորիք անցնիլ (ըստ Ապպիանու:) Աւելի քան երկու բիւր ինկած էին, եւ բիւր մ'ալ գերի ինկած, զորոնք Պարթեւք տարին բնակեցուցին յԱնտիոքիա՝ Մարգիանայ մայրաքաղաքը: Կրասոսի գլուխը ու ձեռքը Սուրեն Որոգէս արքայի խաւրեց որ ի Հայս էր, եւ ճիշդ Արտաւազդայ հետ խաղաղութեան դաշինք դրած, եւ Արտաւազդայ քոյրն իւր Բակուր որդւոյն կնութեան առած: Պարթեւք կարելի

օգուտը չքաղեցին այս յաղթութենէն: Թէեւ մտան Միջագետք եւ մինչեւ Եփրատ յառաջացան (— ըստ Ասորի աղբերաց Աբգար Բ մեռած էր նոյն 53 տարին, եւ աստուծոյ տարի մը դատարկ մնաց. —) բայց հազիւ 52ին դուզնաքեայ ուժով Ասորիք մտան, եւ դիւրաւ ետ մղուեցան: Միայն յաջորդ 51 տարին էր որ մեծ ուժով կրկին Եփրատն անցան, առաջնորդ ունենալով զԲաղուր (աւելի անուանական՝ տակաւին պատանի,) բուն՝ Ոսակէս զօրավարը, եւ այն՝ այնպիսի յաջողութեամբ որ մինչեւ Անտիոքիա պաշարուեցաւ: Բայց երբ Պարթեւք առնուլ չկարենալով ետ կը դառնային, Կասիոս որ առջեւինն առած էր Անտիգոնիայի մօտ՝ յաղթութիւն մը ձեռք բերաւ, եւ Ոսակէս ծանր վիրաւորուեցաւ եւ մեռաւ: Բայց Պարթեւաց իրերը տակաւին ձախորդ չէին, եւ Բաղուր ձմերեց ի Կիւրեստիկա. եւ մինչեւ Քիբուլոս հռոմայեցի նոր զօրավարն Անտիոքէն ելլել չէր համարձակեր, քանի որ Պարթեւք հոն էին: Սակայն հոս ծագեցան ներքին խռովութիւնքն: Որոնդապատէս (այսպէս կ'ուղղէ Գուտշմ. 93, Գիոնի քով Խ. 30 «Որոնդապանտէ» գրուածը) Միջագետք սատրապը՝ տժգոհ Որոգեայ վարչութենէն՝ զԲաղուր արքայ հռչակեց եւ անոր անուամբ ոտք ելաւ Որոգեայ դէմ: Ասով Որոգէս ստիպուած էր Բաղուրն ու բանակն ետ կանչել Միջագետքէն (50ին): Գժտութիւնը գոնէ երկարատեւ չեղաւ, վասն զի ինչպէս կ'երեւայ դրամներէն՝ Որոգէս զԲաղուր գահակից ըրաւ. (այսպէս Գուտշմ. 93: ) Յաջորդ Հռոմէական հասարակապետութեան ներքին պատերազմաց ատեն՝ Պարթեւք զօրութեամբ եւ որոշ ծրագրով չմիջամտեցին: Այսպէս Պոմպէոսի Որոգէ խնդրած օգնութիւնն ապարդիւն մնաց, վասն զի Պարթեւք դիմացն Ասորիք կ'ուզէին ի վարձ. բայց երբ պոմպէական կուսակցութեան վերաբերող Կեկիղիոս Բասսոս՝ Կեսարի դէմ ելած էր Ասորւոց աշխարհի մէջ եւ վերջնոյս Անտիստիոս Վետուս զօրավարէն ընկճուելու վրայ էր, վրան հասաւ յանկարծ Պարթեւ բանակն՝ Բաղուրի առաջնորդութեամբ՝ եւ ազատեց. բայց ձմեռն սկսելուն ետ դարձաւ (45ին Գեկտ.) նոյնպէս 43ին պարթեւ օգնական գունդ մ'եկաւ Կասիոսի, որ քիչ մ'ետքն արձակեց զանոնք, երբ Կասիոս ճամբայ ելաւ Բրուտոսի հետ միանալու ընդդէմ եռապետաց: Երկու կողմն ալ հրեշտակութիւն խաւրեցին Որոգի, որ յապաղեց որոշել իւր ընկիւնքն, եւ երբ տակաւին հոն էր Կուրինտոս Լարթենոս պատգամաւորն՝ Փիլիպպեայ քով

մղուած ճակատին լուրը հասաւ (42), որուն հետեւութեամբն Ոկտաւիանոսի ինկաւ արեւմուտքն, իսկ արեւելքն՝ Անտոնեայ. որով Լարիենոս ստիպուած էր հոն մնալ: Ասի հազիւ 40ին կրցաւ համոզել որ Պարթեւք Ասորիք մտնեն Բաղուրի եւ իւր առաջնորդութեամբ: Ասորւոց զօրաց մասը՝ որ յառաջ Բրուտոսի եւ Կասիոսի ներքեւ էին, անցան Լարիենոսի կողմն. եւ Անտոնեայ խաւրած նոր զօրավարն Գելիդիոս Սաքսա պարտուեցաւ ալ Ապամէայի քով եւ բանակէն փախաւ: Ապամէա, քիչ մ'ետքն մայրաքաղաքն Անտիոքիա եւ ամբողջ Ասորւոց երկիրը Պարթեւաց ձեռքն ինկաւ: Բաղուրը հասաւ մինչեւ Ծով, եւ բուր ծովեզերեայ քաղաքները՝ բաց ի Տիւրոսէ՝ հնազանդեցան: Բարզափրան սատրապը մտաւ Գալիլէա (— որ կը յիշեցընէ Խորենացւոյ համանունն, իբր Տիգրանոյ կողմանէ —) եւ Հրէաստանի վրայ արքայ դրուեցաւ Անտիգոնոս՝ անկարող Հիւրկանոսի տեղ: Բաղուր սիրելի ալ ընել կրցաւ Ասորւոց՝ իւր կամ Պարթեւական իշխանութիւնը: Այս միջոցին Լարիենոս նուաճած էր Կիլիկիա եւ Ասիա մինչեւ Լիւդացւոց եւ Յոնիացւոց աշխարհն, եւ Անտոնեայ անուանած Ասիոյ նոր կուսակալն Պղանկոս ջանաց Կէթ կղզիները պահել. եւ Լարիենոս «Պարթեւական Ինքնակալ» տիտղոսն անգամ առաւ: Բայց այս ամէն յաջողութիւնք երկարատեւ չեղան: Անտոնեայ Ալեքսիդիոս Բասոս զօրավարը 39ին յանկարծակի հասնելով Ասիա՝ դիւրաւ կրցան զԼարիենոս մերժել եւ հալածել մինչեւ Տաւրոս: Պարթեւք օգնութեան եկան, բայց առանց Լարիենոսի սպասելու իրենց համար անյարմար տեղ մը ճակատ տուին, ուր մեծապէս յաղթուեցան: Ասոր հետեւութեամբ նաեւ Լարիենոսի բանակը վտանգեցաւ, մասամբ անձնատուր ըլլալ ստիպուեցաւ: Լարիենոս Կիլիկիա ապաստանեցաւ, բայց Կիւրոսի կուսակալին ձեռքն իյնալով, գլխատուեցաւ: Բասոս Կիլիկիոյ տէր դառնալով, զՊոմպէդիոս Աիդոյ խաւրեց Ամանոսի դրուէքը բռնելու: Բակրոյ քաջագոյն զօրավարը Փրանիպատէս հոս շատ նեղ ձգած էր Հռոմայեցիները. բայց Բասոս ժամանակին օգնութեան հասաւ, եւ թուոյ առաւելութիւնն իւր կողմն ըլլալով՝ Տրապեզոն ըլլան քով Արոնդէսի հովտին հիւսիսակողմն՝ որոշիչ պարտութիւն մը կրեցին Պարթեւք, եւ Փրանիպատէս ինկաւ: Հետեւութիւնն եղաւ Պարթեւաց թողուլն զԱսորիս, որով Ալեքսիդիոս կրկին բռնեց Ասորիքն ու Պաղեստին: Պարթեւք ի

հարկէ կրկին արշաւեցին Ասորիք. բայց Աենտիդիոս կրցաւ խարեւ զԲաղուր — Պարթեւաց մէկ լրտեսին խաբուելովն — այնպէս որ փոխանակ Ձեւգմայի քով Եփրատն անցնելու, ուրիշ տեղ մը փորձեց կամուրջ ձգել: Ժամանակի այս կորուստն օգուտ էր Աենտիդիոսի, որուն օգնութեան հասան Քամրաց աշխարհին լեզէօնները, եւ Գինդարոսի քով տրուեցաւ այն մեծ ճակատամարտն (38ին, կ'ըսուի 9 Յունիս, ուստի իբր թէ Կրասոսի պարտութեան օրը,) ուր Պարթեւք որոշիչ պարտութիւն կրեցին: Երիտասարդ արքայն Բաղուր ինկաւ ճակատին մէջ. եւ գլուխն շրջեցուցին Հռոմայեցիք բոլոր Ասորեստան՝ ցուցընելու որ Պարթեւներէն յոյս պէտք չեն ունենալ: Եւ իրօք բոլոր այն կողմանք կրկին հնազանդեցան. միայն Արագոս հարկ եղաւ պաշարմամբ առնուլ, ինչպէս նաեւ Երուսաղէմ երեքամսեայ պաշարմանէ ետքը, եւ Հերովդէս կրկին դրուեցաւ, թէեւ Անտիգոնոս յառաջուընէ Աենտիդիոսի հետ հաշտուած էր: — Բաղուրի մահը մահացու հարուած էր ծեր Արոգէսի, որ իւր երեսուն որդիներէն երկրորդ երիցագոյնը՝ Հրահատ Գ՝ յաջորդ կարգեց իրեն կենդանութեանն: Եւ ճիշդ այս որդին ապերախտագոյն սկզբնաւորութիւն մ'ըրաւ: Նախ բնաջինջ ըրաւ իւր այն եղբարքն որոնց մայրն էր Աոմագինեայ Անտիոքոս արքայի դուստրն, ուստի իբրեւ ազնուածին՝ կրնային վտանգաւոր ըլլալ. եւ երբ հայրն այս իրաց վրայ բարկացաւ՝ ջանաց թունաւորել, եւ չյաջողելուն՝ խեղդամահ ըրաւ Արշակունի այն արքայն (37 Ն. Բ.), որուն ժամանակն էր Պարթեւաց զօրութեան եւ ճոխութեան գագաթնակէտը: Արոգէսի առած յորջորջանքները՝ «արքայից արքայ Արշակ Եւերգետէս Գիկէոս Եպիփանէս Փիլհելէն» (որոնք մաս մաս ուրիշներուն քով ալ կային)՝ այնպէս այս ձեւով գրեթէ անփոփոխ մնացին յետագայ Արշակունեաց քով: (Գուտշմ. 86-97:)

(Արշակ ԺԴ.) Հրահատ Գ, 37—2 Ն. Բ. 126 կտոր, այլեւայլ տիպերով: Նախ կան նշանաւոր քանակութեամբ (Թ. 1—45) չորեքդրամեաններ, շատը թուականաւ եւ ամսոյ անուններով: Ասոնց առաջակողմը՝ Հրահատայ Գ. արքային պատկերը՝ կարճ սրածայր մօրուօք, երկայն եւ գանգրահեր մազով, գլուխն՝ ապարօշ, վիզը մանեակ եւ կուրծքը՝ լանջապանակ: Մանեակն հնգեկին է եւ

առջեւի կողմն ճարմանդ մ'ունի որ ձիագլխու նմա-  
 նութեամբ է: Լանջապանակին վրայ ալ զարդ կայ՝  
 աստղ եւ կորճ: Յետսակողմն՝ ինքն շրահատ Գ  
 արքունի տարազով բարձր թիկնագահի վրայ, առ-  
 ջեւը կեցած Բախտ պատմութեանաւ եւ վերնահան-  
 դերձով, գլուխը կաղաթ, եւ արքային ապա-  
 րոջ մը կու տայ աջով, միւս ձեռքը բռնած է ամաղ-  
 թեղջիւր: Արձանագիրն է՝ βασιλεω βασιλεων  
 Αρσαχου ευεργετου δικαιου επιφανου φιλελληνου  
 («արքայի արքայից Արշակայ Բարեգործի Արդա-  
 րոյ նշանաւորի Հելլենասիրի:») Գահին տակն  
 է թուականը ΕΟϸ = 275 Սելեւկ., եւ վարր՝  
 ամսոյ անունն ΠΑΝ(ΗΜΟΥ) «Պանեմոս», կշիռը՝  
 14.90, շատ ցանցառ: (Տխտ. ԺԱ, 1:) Այս  
 առաջին չորեքդրամեանին համեմատ՝ բայց մանրա-  
 մասնութեանց մէջ բաւական տարբեր են միւսները,  
 որոնցմէ թուագրեալ են՝ թիւ 2՝ ΕΟϸ = 275,  
 ամիս ΟΛΩ(ΙΟΥ, այսինքն՝ Լուվոս ամիս) կշիռ՝  
 11.63. — թիւ 3՝ ΕΟϸ = 275, ամիս ΓΟΡ (Գոր-  
 պիէոս) կշիռ՝ 14.09. — թիւ 4՝ ΕΟϸ = 275,  
 ամիս ΥΠΕΡ (Հիւպերբերետոս.) կշիռ՝ 15.27: —  
 թիւ 5—11 արքային ճակտին վրայ վերոյիշեալ  
 գնդածեւ ճակատի-նշանակն ալ ունին, եւ մանեակը  
 չորեքկին է եւ ճարմանդի զարդը՝ կորճ, լանջա-  
 պանակի զարդն ալ՝ կորճ եւ Յաղթութիւն (թ.  
 6—7) կամ կորճ եւ աստղ (թ. 5, 7—11.) եւ  
 ոմանք յետսակողմը Բախտին ետեւը՝ մահիկ (թ.  
 5—7, 9—11, իսկ թ. 8 չունի մահիկը:) Տարեթիւ  
 ունին ամէնքն ալ, թիւ 5—9՝ ΗΟϸ = 278, ամիս-  
 ները՝ ΑΡΤΕ (Արտեմիսիոս՝ թ. 5, կշիռ 11.40.)  
 ΠΑΝΗ (Պանեմոս, թ. 6, կշիռ 11.45.) ΟΛΩ  
 (Ոլուվոս՝ թ. 7, կշիռ 11.93.) ΓΟΡ (Գոր-  
 պիէոս՝ թ. 8, կշիռ 12.78.) ΥΠΕ (Հիւպերբերե-  
 տոս՝ թ. 9, կշիռ 13.37.) թ. 10 տարին ΘΟϸ =  
 279, ամիս Արտեմիսիոս, կշիռ 12.00. — թ. 11  
 նոյն 279 տարին, ամիս Գորպիէոս, կշիռ 14.47:



Թիւ 12—15 ուրիշ տարբերութիւններ ունին, առաջակողմը՝ Թ. 5ff. կտորներուն նման, միայն լանջապանակի զարդը՝ աստղ եւ Յաղթութիւն. յետսակողմը՝ Հրահատ մէկ ձեռքով կը բռնէ իշխանութեան ցուպը, միւսին ափին վրայ Յաղթութիւն՝ որ զինքը կը պսակէ. արձանագրութիւնը նոյն է: Թուականքն են՝ Թ. 12—15՝ ՈԸ = 280 Սելեւկ., ամիսները՝ Թ. 12 Արտեմիսիոս, կշիռ 15.25. — Թ. 13՝ ΔΑΙΣΙ (Գէսիոս), կշիռ 15.17. — Թ. 14՝ Պանեմոս, կշիռ 14.20. յետսակողմը գահին տակ՝ գնդակածեւ նշանակը. նոյնպէս Թ. 15՝ Հիւպերբերետոս, կշիռ 14.25: — Թ. 16 առաջակողմն առանց ճակատի նշանին, մանեակը չորեքկին, լանջապանակի զարդը՝ կործ եւ աստղ. յետսակողմն՝ արձանագիրը նոյն, նաեւ արքայի պատկերը, բայց Բախտ առջեւ կեցած, գլուխը կաղաթ եւն (տես վերը), արքային արմաւենի կուտայ աջով, ձախով ամաղթեղջիւր բռնած, ետեւը՝ մահիկ. տարին՝ ΑΠԸ = 281, ամիս Հիւպերբ., կշիռ 14.30: — Թ. 17 ունի ճակատի նշանակը, մանեակը չորեքկին (ճարմանդով.) լանջապանակը պարզ. յետսակողմը՝ Հրահատ Դ ի գահի եւն՝ յեցած է Բախտի ձախ թեւին վրայ, Բախտը ծնրադրած, գլուխը բրգաւոր թաղով. տարին ΓΠԸ = 283, ամիսը՝ Հիւպերբ., կշիռ՝ 14.00. շատ ցանցառ՝ — Թ. 18 ճակատի նշանով, մանեակն երեքկին, լանջապանակը պարզ. յետսակողմը՝ Բախտ արքայի առջեւ կեցած՝ ապարօշ կուտայ աջով, ձախով ամաղթեղջիւր բռնած, գլուխը՝ կաղաթ. տարին ΔΠ(Ը) = 284, ամիս Պերիտիոս,

1 Հեղինակը կը ծանուցանէ որ այս Թ. 17 չորեքդրամեանն գէշ պահուած եւ որսիօացած ըլլալով՝ իսկզբան ՈԸ = 280 կը կարգար թուականն, եւ այս իմաստով ալ ծանուցած էր W. Wroth գիտնականին. յետոյ որսիօար մարբէլ կարենալով՝ ուղիղ ընթերցուածը տեսած է: Տես Ցուցակիս էջ 80:

կշիռ 11.95, շատ ցանցառ. — Թ. 19 նոյն Թ. 18ի հետ, տարին նոյնպէս 284, ամիսն անրնթեռնլի, կշիռ 13.16. — Թ. 20 առաջակողմն առանց ճակատի նշանակին, մանեակն երեքկին, լանջապանակ պարզ. յետսակողմը՝ Բախտն արքային առջեւ կեցած արմաւենի կուտայ աջով, ձախով ամաղթեղջիւր բռնած, գլուխը՝ կաղաթ. տարեթիւ չկայ, բայց ըստ պատկերին 284 տարւոյն, ամիսը՝ Գէսիոս, կշիռ 14.06. — Թ. 21 նոյն Թ. 20ի հետ, միայն գահին տակը՝ կայ գնդակաձեւ նշանակը. թուական չկայ. ամիս՝ Պանեմոս, կշիռ 14.54. — նոյն են եւ անթուական Թ. 22—22a, ամիսը՝ Ոլովոս, կշիռ՝ 14.95 եւ 15.20: — Թ. 23—25 առանց ճակատի նշանին, մանեակն երեքկին, լանջապանակը պարզ. յետսակողմն՝ ինքն չրահատ ձախով իշխանութեան ցուպը բռնած, աջ ափին վրայ Յաղթութիւն որ կը պսակէ: Տարեթիւ երեքին ալ ΕΠΣ (= 285, ամիս՝ առաջնոյն Արտեմիսիոս, կշիռ 12.30, միւս երկուքին՝ Գէսիոս, կշիռ 12.21 եւ 13.38. — Թ. 26—27 ճակատի նշանով, մանեակն երեքկին, լանջապանակի զարդ՝ աստղ. յետսակողմն՝ արքային առջեւը կեցած Բախտ, կաղաթը գլուխն, աջով արմաւենի կուտայ, ձախով ամաղթեղջիւր բռնած. երկուքին տարին՝ ՀΠΣ = 286, ամիս՝ Գորպիէոս եւ Հիւպերբ., կշիռ՝ 14.52 եւ 13.15. — Թ. 28—9 առանց ճակատի նշանի, մանեակը շորեքկին եւ ճարմանդով, լանջապանակը զարդով. յետսակողմը՝ Բախտ, գլուխը կաղաթ, աջով արմաւենի կուտայ եւ միւսով ամաղթեղջիւր բռնած, տարին երկուքին՝ ΖΠΣ = 287, ամիս՝ Գէսիոս եւ (Թ. 29) ΑΠΕ (Ապեղղէոս.) կշիռ՝ 9.46 եւ 14.36. — Թ. 30—32 ճակատի նշանով, մանեակն երեքկին, լանջապանակի զարդ՝ աստղ. յետսակողմն արքային առջեւ կեցած Բախտ՝ կաղաթը գլուխը, արքային ապարօշ կուտայ, միւս ձեռքն ամաղթեղջիւր. երեքին

տարեթիւր՝  $Z\Pi\Sigma = 287$ , ամիս՝ Գէսիոս (թ. 30, կշիռ՝ 13.74.) անորոշ (թ. 31, կշիռ 14.02.) եւ (E)MBO (Եմպոդիմոս՝ Մակեդոնական «Աւելեաց», ամիսը) կշիռ 14.76: — Թ. 33—37՝ ճակատի նշանով, մանեակ երեքկին, լանջապանակի զարդ՝ աստղ եւ արծիւ. յետսակողմն՝ Արքային առջեւ կեցած Պալլաս որ ապարօշ կուտայ, գահին տակ գնդակաձեւ նշանակը. հնգին ալ տարեթիւր  $H\Pi\Sigma = 288$ , կշիռն ու ամիսները՝ Թ. 33՝ Գէսիոս, 10.64. — Թ. 34՝ Գէսիոս, 14.00. — Թ. 35՝ Պանեմոս, 13.82. — Թ. 36՝ Ուոլոս, 14.62 եւ Թ. 37՝ Հիւպերբ. 12.30: — Թ. 38—41 ճակատի նշանով, մանեակն երեքկին, լանջապանակի զարդ՝ աստղ. յետսակողմն՝ Արքային առջեւ կեցած Բախտ որ աջով արմաւենի կուտայ, ձախով ամաղթեղջիւր բռնած, գլուխը բաց. չորսին ալ տարին  $\Theta\Pi\Gamma = 289$ . ամիսներն ու կշիռը՝ Թ. 38  $\Delta I O Y$  (Դիոս.) 14.48. — Թ. 39՝ Աւդիւնէոս, 10.45. — Թ. 40՝ Պերիտիոս, 11.98 եւ Թ. 41՝ Քսանտիկոս, 14.98: — Ինչպէս կը ծանուցանէ Հեղինակը՝ Հրահատայ իշխանութեան 276, 277, 282 եւ 290 մինչեւ 310 Սելեւկ. տարիներէն որոշ թուականաւ չորեքդրամեաններ չէ տեսած, եւ նոյններն անձանօթ են նաեւ Փարդներ, Պրսկէշ-Ոստէն, Մարկով եւ Վ. Բոթ գիանոց: Նաեւ այն չորեքդրամեանն զոր հրատարակած է Longpérier<sup>1</sup> եւ իբր թէ Սելեւկ. 276 թուականը կը կրէ՝ ըստ Հեղինակին պէտք է կարդալ 275: Բայց, կը յաւելու, Հ. Աղեմէս Սիպիլեան Սուպհի փաշայի հաւաքածոյից իւր յօրի-

<sup>1</sup> Յիշեալ գործին մէջ՝ Adrien de Longpérier: Mémoires sur la Chronologie et l'Iconographie des Rois Parthes Arsacides. Paris 1853-82. չորեքդրամեանին տիպը՝ «Բախտը նստած արքային ապարօշ կը մատուցանէ:», Բայց կ'ըսէ Հեղինակը, նոյն գործին մէջ դրուած դրամին շատ ճշգրիտ պատկերները լաւ գննելով՝ խոհեմական կը համարի տարին 275 կարդալ: Տես Յուլիանիս էջ 85՝

նաժ Յուդայական մէջ (Կ. Պ. 1874) կը նկարագրէ այս արքային մէկ շորեքդրամեանն՝ (տիպը՝ «Բախտը նստած արքային ապարօշ կու տայ») որ ունենայ Սելեւկեան 302 թուականը: Նոյնպէս կը յիշուին երկու շորեքդրամեաններ 291 եւ 308 Սելեւկ. թուականաւ: — Մնացեալ թիւ 42 — 45 շորեքդրամեանք՝ թէեւ ամսոյ անուն կը կրեն՝ բայց ոչ թուական: Ասոնց առաջակողմն՝ առանց ճակատի նշանի, մանեակն երեքկին, լանջապանակն անզարդ. յետսակողմը թ. 42 — 44 Հրաճատ Գ նստած — Նիկի — Ն + գահի վրայ, աջով աղեղ բռնած, ձախով՝ իշխանութեան ցուպ. գահի տակ A. իսկ թ. 45 յետսակողմը դարձեալ՝ Բախտ կեցած արքային առջեւ՝ գլուխը կաղաթ եւն, աջով արմաւենի կու տայ արքային, իսկ ձախով ցուպը բռնած: Ամիսներն են՝ թ. 42 — 5 Արտեմիսիոս (կշիւ՝ 13.46, եւ 14.09, եւ 14.25, եւ 10.29:) Հրաճատայ դրամոց ամիսներու այս լիառատ յիշատակութիւնը պայծառ կը տեսնուի Հեղինակին յօրինած մէկ Տախտակէն: — Մնացեալ բազմաթիւ դրամներն ու պղինձները

1 Չորեքդրամեաններս նկարագրողներն են Pellerin, որուն դրամին տիպն է «Բախտ՝ նստած արքային ապարօշ կու տայ» թուական 291, եւ Sestini որ նոյն տպով շորեքդրամեան մը կ'ըսէ 308 թուականաւ: Այս մասին Հեղինակը կը յիշէ սա գործը՝ John Lindsay, A View of the History and Coinage of the Parthians. Lond. 1852, p. 182. Տես Յուդայիս էջ 86:

2 Տես Յուդայիս էջ 87: Տախտակին առաջին սիւնը կը ցուցընէ տարեթուերը՝ ΕΟΘ — ΘΠΕ, քոյն տարեաց կարգաւ՝ Գրամոց նկարագիրը, եւ անկէ ետքը՝ իւրաքանչիւր տարւոյ դիմաց ամսոց առանձին սիւնեկաց մէջ նշանակուած՝ թէ որ ամիսն յիշուած է այն տարեթուին Հրաճատայ դրամոցս վրայ: Կը տեսնենք որ Մակեդոնական ամէն ամիսները յիշուած են՝ աւելի կամ պակաս տարիներուն. պակաս է կամ չէ յիշուած միայն Դիւստրոս ամիսը՝ Ճամանակագրական խնդրոց համար ալ հետաքրքրական է այս տախտակը:

նոյնպէս բազմաթիւ պէսպիսութիւններ ունենալով՝  
 Հեղինակը բաժնած է ութ տիպերու: Ընդհանուր  
 նկարագիրը նոյն է՝ առաջակողման վրայ արքային  
 վերոյիշեալ պատկերը. յետսակողմն՝ Արշակի գահի՝  
 աղեղնաւոր. (պղինձները բնականապէս իրենց յա-  
 տուկ դրոշմով՝ ձի, եւն.) արձանագիրը նոյն՝ վե-  
 րոյիշելոյն հետ, այսինքն՝ «Արքայի արքայից Ար-  
 շակայ Բարեգործի Արդարոյ Նշանաւորի Հելլենա-  
 սիրի:», Իւրաքանչիւր դրամ եւ նաեւ պղինձ՝ պէս-  
 պէս մենագրերով: Առաջին տպին՝ առանձնայատուկ  
 է արքային ճակատի նշանակէն զատ՝ գլխուն ետեւը  
 թեւատարած արծիւ որ կտցով պսակ բռնած է  
 արքայի գլխուն վրայ (15 դրամ, 32 պղինձ, թիւ  
 46 - 92.) իսկ ուրիշ հինգ դրամ ալ արքային  
 առաջակողման պատկերն թէեւ նոյն տպով՝ բայց  
 ուրիշ ոճով մ'ունին (թիւ 93—8:) Գրամներուս  
 կշիռը պէսպէս՝ 3.23էն մինչեւ 4.00, պղինձներունը՝  
 0.78էն մինչեւ 1.72: Պղինձներու պատկերներէն  
 յիշուին՝ Արդարութիւն աջ ձեռքը կշիռք, ձախը՝  
 կուշտը յեցուցած (թ. 61.) Յաղթութիւն պսակաւ  
 աջ ձեռքը, ձախ ուսը՝ արմաւենի (թ. 62—3, եւն.)  
 Պայլաս սաղաւարտով, ձախը՝ նիզակ բռնած, աջն՝  
 արմաւենի (թ. 64—5.) Բախտ բրգաւոր թագով,  
 աջը՝ արմաւենի, ձախը՝ ամաղթեղջիւր, կամ նման  
 (թ. 66, 71-2.) Հելիոսի գլուխը ճառագայթարձակ  
 (թ. 67—8:) Երեքերեսեան դից մը գլուխը, նման  
 Տրիմուրտեայ (թ. 69, 70.) Հերմէ, ձախ կողմն  
 իւր քարոզականն (թ. 73, իսկ 74՝ աստղով մ'ալ.)  
 սփինքս (թ. 75.) երեքաշտարակ պարիսպ (թ.  
 76—7.) ձի (թ. 78—9.) եղջիւրաւոր ոչխար (թ.  
 80.) սապատաւոր եզն (թ. 81—2.) աստղ ու մահիկ  
 (թ. 83.) գոմէշի գլուխ՝ եղջիւրներուն մէջ աստղ  
 (թ. 84.) թեւաւոր քարոզական Հերմեայ (թ. 87.)  
 երկու ամաղթեղջիւր (թ. 85—6.) հասկ եւ խաղող  
 (թ. 88—9.) կամփսակ (թ. 90—1.) առանց պատ-  
 կերի միայն մենագիր (թ. 92:) Իսկ թ. 98 դրամին

ալ յետսակողմն՝ Արշակայ ետեւը մահիկ: — Բ տիպը կը ներկայացընեն երեք պղինձ (Թ. 99—101:) Ասոնց առաջակողման Հրահատայ Գ պատկերը կոշտ ոճով է, սրածայր մօրուք, մազը երկայն գանգուրներով, գլուխն ապարօշ, մանեակն յօդուածոյ, լանջապանակը պարզ: Յետսակողմն՝ արձանագրութիւնը կամ թերակատար եւ անընթեռնի է կամ կը պակսի. մենագրէ զատ՝ Թ. 99 նուա, (կշիռ՝ 3.37, շատ ցանցառ.) Թ. 100՝ զոհի անօթ մը. (կշիռ՝ 3.32, շատ ցանցառ.) Թ. 101՝ Բախտ պատմութեան եւ վերնագգեստով, աջով թիակ բռնած, ձախով ամաղթեղջիւր. (կշիռ՝ 1.66:) — Գ Տիպ՝ վեց դրամ, չորս պղինձ (Թ. 102—111:) Ասոնց առաջակողմը Հրահատայ Գ պատկերը՝ ճակատի գնդաձեւ նշանակով, սրածայր մօրուք, երկայն գանգրահեր մազ, ապարօշ, յօդուածոյ մանեակ եւ լանջապանակ. արքային գլխուն ետեւ արծիւ թեւատարած՝ կտցով պսակ բռնած արքային գլխուն վրայ: Յետսակողմը դրամոց՝ Արշակ ի գահի՝ աղեղնաւոր, ետեւը՝ աստղ, աղեղան տակ մենագիր: Արձանագիրը նոյն՝ «Արքայի Արքայից Արշակայ Բարեգործի Արդարոյ նշանաւորի Հելլենասիրի»: Դրամոց կշիռը՝ 2.90էն (Թ. 106) մինչեւ 3.88 (Թ. 102:) Այս տպին պղինձներուն (Թ. 108—111) առաջակողմն՝ ճակատի նշանը չկայ, արքային գլխուն առջեւն ալ աստղ մը, ետեւը՝ արծիւ պսակաւ նոյնպէս: Յետսակողման արձանագիրը նոյն, բայց թերակատար. հոս ալ Թ. 108—9 պատկերը՝ Արշակ ի գահի՝ աղեղնաւոր, աղեղան տակ մենագիր. (կշիռ՝ 1.09 եւ 1.55:) Իսկ Թ. 110 քաջ մը (կշիռ՝ 1.69) եւ Թ. 111՝ ձուկ (կշիռ՝ 1.50:) Մենագիր ունին վերջինքս ալ: — Գ Տիպ՝ երեք դրամ (Թ. 112—114:) Առաջակողմը՝ Հրահատայ պատկերը գնդաձեւ ճակատի-նշանակով, սրածայր մօրուք եւն՝ նոյն Գ Տպին հետ. բայց արքայի գլխուն առջեւ՝ աստղ

եւ մահիկ. ետեւը՝ արծիւ թեւատարած կտցով  
 պսակ բռնած արքային գլխուն վրայ: Յետասկողմն՝  
 Արշակ ի գահի եւ արձանագիրը՝ նոյն Գ. Տպին  
 հետ. աղեղան տակ մենագիր: Ասոնց կշիռը՝ 3.61,  
 եւ 3.88 եւ 3.72: — Ե տիպ՝ միակ պղինձ մը  
 (Թ. 115.) առաջակողմն Հրահատայ Գ պատկերը  
 եւն նոյն նախընթացներուն հետ՝ առանց ճակատի  
 նշանի, միայն՝ արքային գլխուն առջեւ մահիկ եւ  
 աստղ, առանց ուրիշ զարդի: Յետասկողմն արձանա-  
 գրութիւն չկայ. պատկերը՝ գլուխ Բախտի բրգաւոր  
 թագով, վարը Գարեթի-ն՝  $\Pi\Sigma = 280$  Սելեկ.  
 (կշիռը՝ 2.29:) — Զ Տիպ՝ երեք պղինձ (Թ.  
 116—8:) Առաջակողմը՝ Հրահատայ Գ պատկերն  
 եւն նոյն, միայն լանջապանակն որոշ չ'երեւար,  
 եւ արքային գլխուն առջեւ՝ աստղ, ետեւն ալ՝  
 աստղ եւ մահիկ: Յետասկողմն՝ արձանագրութիւնը  
 հատուկտիր. Թ. 116 մենագրով. պատկերը՝  
 Թ. 116 եղջերու արօտական՝ գլխուն վերեւը  
 թռչող արծիւ մը (կշիռ՝ 1.55.) եւ Թ. 117—8՝  
 սափօր, որուն երկու ունկերէն խաղող կախուած,  
 վրան արծիւ մը նստած. (կշիռ՝ 1.19 եւ 1.59:) —  
 Է Տիպ՝ չորս գրամ (Թ. 119—122:) Առաջակողմը՝  
 Հրահատայ Գ պատկերը եւն՝ նոյն, առանց ճա-  
 կատի նշանի. արքային գլխուն առջեւ՝ աստղ եւ  
 մահիկ. գլխուն ետեւ՝ Յաղթութիւն որ զարքայն  
 կը պսակէ: Յետասկողմն՝ արձանագրութիւնն  
 անընթեռնելի՝ բարբարոսական նմանողութիւն  
 մ'ըլլալով յունական արձանագրին. պատկերը  
 սովորական՝ Արշակ ի գահի՝ աղեղնաւոր. աղեղան  
 տակ՝ մենագրեր, Թ. 120 Արշակայ կռնակը՝  
 աստղ, Թ. 121—2 նոյն տեղը՝ մահիկ եւ նշան  
 մը: Ասոնց կշիռը՝ 3.60—3.67: — Ը Տիպ՝ երկու  
 պղինձ (Թ. 123—4:) Առաջակողմը պարզ՝ Հրա-  
 հատայ Գ պատկերը, սրածայր մօրուք, երկայն  
 դանգրահեր մաղ, ապարօշ եւ մանեակ. գլխուն  
 ետեւը՝ Յաղթութիւն որ զարքայն կը պսակէ:

Յետասկողմն արձանագիր չկայ կամ թերակատար. պատկերը՝ Բախտ բրգաւոր թագով (Թ. 123) կամ վիթ (Թ. 124. վերջինս մենագրով.) կշիռ՝ 2.60 եւ 1.76: — Թ. Տիպ՝ երկու պղինձ (Թ. 125—6:) Առաջակողմը պարզ՝ Ը տպի պէս, միայն արքային գլխուն առջեւ՝ աստղ մը, ետեւը՝ Յաղթութիւն նոյնպէս: Յետասկողմն՝ արձանագրութիւն չկայ. պատկերի տեղ ալ նշան մը. կշիռ՝ 0.95 եւ 0.90, շատ ցանցառ: — Բրիտ. թանգարանը կան երեք ուրիշ պղինձներ ալ, առաջակողմը՝ Հրահատայ գլուխն առանց ուրիշ յաւելուածոց, յետասկողմը՝ ձիու գլուխ եւ ուրիշ նշաններ: (Տես էջ 77—98:)

Հրահատ Գ Պարթեւաց հզօրագոյն արքայից մին էր, բայց նաեւ անգութ եւ բռնաւորագոյն, որ արդէն՝ ինչպէս յիշեցինք՝ սպաննեց եղբարքն, ու խեղդամահ ըրաւ հայրը՝ Պարթեւաց նշանաւորագոյն արքայն Որոդէս (37ին): Չինայեց նաեւ չափահաս որդւոյն, որպէս զի չգտնուի նշանաւոր Արշակունի մը՝ զոր Պարթեւք հակարքայ դնել կարենան: Բռնութիւնն այնչափ էր որ շատ մ'ազատք Պարթեւաց աշխարհէն փախած էին: Այս ժամանակը նպաստաւոր համարեցաւ Անտոնիոս վրէժ առնելու Պարթեւներէն: Անտոնիոս որոշեց՝ Եփրատայ կողմն լաւ պահուած ըլլալով՝ Մարաստանէն սկսիլ. եւ ասոր դիւրութիւն էր Հայոց սյն ժամանակ Հռոմայեցւոց հետ ըլլալն. վասն զի Բաղուրի վերը յիշուած պարտութենէն ետքը՝ Կանիդիոս Հռոմայեցւոց կողմ վաստկած էր Հայոց արքայն Արտաւագդ (Պղուտ. Անտ. 34:): Իսկ Ատրպատականի Մարք — որոնց արքայն Միհրդատ 67ին Ն. Ք. Տիգրանայ Մեծի փեսան՝ անոր գերիշխանութեան տակ էր (Դիոն ԼԶ, 16), իսկ յաջորդն Գարեհ՝ Պոմպէոսի հետ բանակցեցաւ (Ապպիան. Միհրդ. 106, Պղուտ. Պոմպ. 36) ազատելու համար, — յետոյ արդէն բոլորովին Պարթեւաց ճոխութեան տակն ինկած էին, ինչպէս Հայք՝ մինչեւ Բաղուրի պարտութիւնը: Անտոնիոս 36ին սկսաւ արշաւանքն 16 լեզէոնով եւ բազմաթիւ օգնական գնդերով, որոնց մէջ էին 6000 հայ հեծեալք, բայց տարւոյն ուշ եղանակին. եւ մտաւ Ատրպատական, եւ պաշարեց Փրասպա մայրաքաղաքն (— Գուտլմ. 98 կ'ըսէ թէ ըստ Հռաւլինսլնի քննութեանց՝ է այժմու



Տախտի-Սուլէյման -) ուր էին Մարաց արքային Արտաւազ-  
 գայ՝ որդւոյ Արիօբարզանեայ՝ կանայքն ու որդիքն, մինչդեռ  
 ինքն արքայն օգնութեան դացած էր Հրահատայ՝ որ ուրիշ  
 տեղէ կը սպասէր յարձակումն: Բայց Ռպպիոս Սաատիանոս  
 որ երկու լեզէոնով, պաշարման գործեօք եւ մթերներով  
 պիտի հասնէր Անտոնեայ քով, չկրցաւ դիւրաւ հասնիլ ժա-  
 մանակին. մանաւանդ թէ Սաատիոսի բանակն գիշեր մը յան-  
 կարծակի յարձակում կրելով Պարթեւներէ, որոնց գլուխն  
 էր Մոնեսէս, ջարդուեցաւ բոլորովին (7500 հոգի,) եւ պա-  
 շարման մեքենայք գերի ինկան: Այս լուրն այնպէս վախցուց  
 զԱրտաւազդ Հայոց՝ որ իւր զօրքով ետ դարձաւ իւր աշ-  
 խարհն, առանց Անտոնեայ քով հասնելու: Փրասպայ քով  
 թէեւ ետ մերժուեցան Պարթեւք Անտոնիոսէն, բայց  
 քիչ մ'ետքն պաշարն հատած էր, եւ պաշար փնտռելու  
 գացող Հռոմայեցի բաժինները Պարթեւներէն մեծապէս կը  
 մնասուէին: Չմեռն ալ մօտալուտ ըլլալով՝ Հռոմայեցւոց ու-  
 րիշ բան չէր մնար, բայց բանակցիլ Հրահատայ հետ, եւ  
 դառնալու սկսիլ, Հրահատայ խօսքէն ալ խաբուելով թէ  
 խաղաղ կը թողու՝ եթէ ետ քաշուին երթան: Բայց երբ  
 դարձն սկսաւ՝ Պարթեւք հալածումն սկսան, եւ ամէն օր  
 պէտք էր ամէն կողմանէ պաշտպանել. պաշարն պակսեցաւ.  
 եւ հիւանդութիւնք սկսան: Երբ 27 օրւան մէջ Հռոմայեցիք  
 Հայոց երկիրն Երասխի ափն հասան, ուր Պարթեւք ստի-  
 պուած էին հալածումը դադրեցընել, Հռոմայեցիք կորսըն-  
 ցուցած էին պատերազմողաց չորրորդ մասն (24.000 հոգի,)  
 պաշարաբերաց երրորդն, եւ ամէն մթերք: Ութ հազար  
 հոգի ալ մեռան Հայոց լեռնոտ աշխարհը կտրել անցնելու  
 ատեն ցրտէն եւ ձեան հիւսերէ, եւ Հռոմայեցի բանակն  
 բնաջինջ կ'ըլլար՝ եթէ Արտաւազդ Հայոց՝ շներէր որ ձմեռն  
 Հայոց աշխարհն անցնեն եւ խնամք չտանէր: Քուաշմիգ  
 (անդ 100-1) գեղեցիկ կը նկարագրէ այս ամէնուն պատ-  
 ճառը (— անհմտութիւն տեղեաց, պատրաստութեանց  
 թերութիւն, բարեկարգութեան պակասութիւն՝ որ արդէն  
 Փրասպայ պաշարմանէն յառաջ երեւան եկած էր, բայց  
 մանաւանդ յետոյ՝ դարձի ատեն, գունդագունդ անձնատուր  
 ըլլալ, բացօյսայտ ապստամբութիւն իսկ զօրավարին դէմ,  
 եւն, ամբողջ պատահարն համեմատելով Նարոլէոնի Ա  
 ռուսական արշաւանաց հետ. —) եւ լաւ կերպով կը մերժէ  
 այն ամբաստանութիւնքն, զոր պատմագիրք ալ կրկնած  
 են, իբր թէ այս ամէնուն պատճառն ըլլայ Արտաւազդ

Հայոց, որ գրգռած ըլլայ զԱնտոնիոս պատերազմին, բայց ծածուկ Պարթեւաց հետ ի բանի ըլլալով՝ կամաւ օգնութեան չհասած Ստատիանոսի: Աերջին կէտիս մէջ՝ օգնութեան չհասնիլը՝ թերեւս բոլորովին անհիմ չըլլայ, կ'ըսէ, բայց նաեւ կարելի չէ ասպացուցանել: Յամենայն դեպս Հռոմայեցիք պարտուած՝ դաւածան մը գտնելու պէտքն ունէին. եւ առ ի չգոյէ՝ դտան Արտաւազդն, զոր Անտոնիոս խարէութեամբ իրեն կանչելով — իբրեւ թէ իւր ի կղէոպատրայ ունեցած Աղէքսանդր որդւոյն կնութեան կ'ուզէ առնուլ արքային դուստրը, — բանտարգել ըրաւ, եւ Հայոց աշխարհը բռնեց, եւ զԱրտաւազդ իւր տամբ խաւրեց Աղէքսանդրիա առ կղէոպատրա: Բնական էր որ աւարը բաժնելու ատեն առիւծի բաժինը Հրահատ առած՝ Մարաց Արտաւազդն դժգոհ մնար: Ասի գժտուած՝ սկսաւ բանակցութեան մէջ մտնել Անտոնեայ հետ, որով 33ին Երասխի ափունքն տեսնուելով դաշնադիր եղան Անտոնիոս եւ Արտաւազդ Մարաց: Ըստ այսմ նախ Հայոց աշխարհին մաս մը, յատկապէս Symbace աշխարհն որ ի բնէ Մարաց էր (Ստրբ. ԺԱ, 523) արուեցաւ Արտաւազդայ եւ օգնական զօրք Պարթեւաց դէմ, մինչդեռ Արտաւազդ ալ օգնական զօրք տուաւ Անտոնեայ ընդդէմ Հոկտաւիանոսի: Անտոնիոս յիշեալ Աղէքսանդր որդւոյն սահմանած էր՝ իբր թէ ալ իւրն ըլլայ՝ Հայոց թագն, եւ որոշուած էր որ Մարաց արքային դուստրն անոր կնութեան արուի: Սակայն արդէն Հայր Արտաւազդայ բռնուելուն պէս՝ արքայ հրատարակած էին անոր որդին Արտաշէս (34ին,) որ ի հարկէ ստիպուած էր ելլել աշխարհէն, եւ ասպատանիլ Հրահատայ Դ քով, եւ որ որոշեց Հայոց գահը դնել նոյնը՝ իրատ մ'ալ տալով Մարաց Արտաւազդայ: Աերջինս ի սկզբան կրցաւ պաշտպանել ինք զինքն Պարթեւաց դէմ. բայց երբ Անտոնիոս ետ կանչել ստիպուեցաւ օգնական հռոմայեցի զօրքն ընդդէմ Հոկտաւիանու գործածելու, իսկ իւր առած մարականն չարձակեց, Արտաւազդ Մարաց շարաչօր խորտակուեցաւ եւ գերի ինկաւ. Մարաստան եւ Հայք Պարթեւաց ձեռքն ինկան, մնացեալ հռոմայեցի պահակազօրը ջարդուեցաւ, եւ Արտաշէս Հայոց գահը դրուեցաւ (30ին). Այս յաջողութեանց վրայ կը սկսին Պարթեւաց ներքին խռովութիւնքն, որուն միջոցին Մարաց Արտաւազդ յաջողեցաւ իւր տամբն փախչիլ ասպատանիլ Հռոմայեցւոց: Հայք ալ արդէն 29ին Հռոմայեցւոց հետ գործերնին կար-

գաղբած էին, վասն զի Պարթեւաց ներքին վիճակը շատ ալ մխիթարական չէր: Գժրախտ Արտաւազգայ որդիքն ալ՝ Անտոնեայ եւ Կղէոպատրեայ պարսուելէն եւ մեռնելէն եւ Հոկտաւիանու միահեծան ըլլալէն (31 եւ 30) ետքն՝ Հռոմ տարուած էին, եւ երբ Հոկտաւիան արեւելք եկաւ (29ին) պատճառ մը չկար զԱրտաշէս չճանչնալու: Ի հարկէ նաեւ ի Հայս ներքին երկպառակութիւնք անպակաս եղան, եւ հռոմէասէր կողմնակցութիւնն ի վերջոյ զօրացած՝ նենգութեամբ սպաննեց զԱրտաշէս (21ին) եւ խնդրեց Հոկտաւիանոսէ Արտաւազգայ որդին Տիգրան՝ Արտաշիսի եղբայրն՝ զոր Հոկտաւիանոս Տիրերեայ ձեռք տուաւ տանելու ի Հայս, եւ որ եկաւ եւ նուաճելով երկիրն՝ արքայ դրաւ զՏիգրան (20ին): Պարթեւաց ներքին վիճակը չէր ձգեր որ այս ամէնուն արգելք մ'ըլլան: (Գուտշմ. 97-102:)

(Արշակ ԺԴ, 2.) ՏՐԴԱՏ Բ, իբր 32 եւ 26 Ն. Ք. միայն երկու շորեքդրամեան: Առաջակողմն արքային պատկերը՝ լիամօրուս, երկայն գանգրահեր մազով, գլուխն՝ ապարոշ, վիզը մանեակ եւ կուրծքը լանջապանակ: Յետսակողմը՝ Տրդատ Բ արքունի տարազով գահի վրայ, առջեւը՝ Բախտն պատմուճանաւ եւ վերնահանդերձով, գլուխը՝ կաղաթ, իրեն արմաւենի մը կու տայ աջով, ձախ ձեռքով իշխանութեան ցուպը բռնած: Բախտին ետեւն աջակողմը տարեթիւս  $\zeta \Pi \Sigma = 286$  Սելեւկ., վերը՝ ամիս  $\Xi A$  (Քսանտիկոս): Արձանագիրը՝ (βασιλειωσ βασιλεων Αρσαχου ευεργετου αυτοκρατωρ (φιλο)ορωμαιο (επι)φανου(ς) (φιλελληνοσ) (“արքայի արքայից Արշակայ Բարեգործի Ինքնակալ Հռոմէասէրէն նշանաւորի Հելլենասիրի:”) Կշիւր՝ 13.72 գր., շատ ցանցառ: Երկրորդ շորեքդրամեանը նոյն, բայց արքայի ճակատին վրայ վերը յիշուած նշանակն ունի. արձանագիրն ալ նոյն, բայց ճիշդ “Ինքնակալ Հռոմէասէր” բառերը մաշած. տարեթիւր՝  $\zeta \Pi \Sigma = 286$  Սելեւկ., ամիսը  $\Delta A I$  (Գէսիոս.) կշիւր՝ 14.01 գր., շատ ցանցառ: (Տես էջ 99:)

(Արշակ ԺԴ, 3.) ՄԻՆԵՐԴԱՏ Դ, 12 - 9 Ն. Ք. Գրամ չէ գտնուած տակաւին:

Հրահատայ Գ յաջողութիւնքն Հասմայեցոց դէմ  
 զինքն աւելի բռնաւոր ըրած էին: Արդէն 33ի ապստամբու-  
 թիւն ծագած ըլլալու էր, եւ 32ին արդէն հակարքայ մը  
 կար (— Գուտշ. 102 կարծէ թէ թերեւս Հրահատայ երեց  
 որդին, որ ասոր համար սպաննուած ըլլայ հօրմէն, ինչպէս  
 ըսինք, եւ իրմէն ըլլան այն գրամները՝ Մարտ-Յունիս 32  
 Ն. ք. թուէն, զոր Գարդնէր՝ էջ 44՝ Տրդատայ Բ կ'ըն-  
 ծայեր): Յամենայն դէպս 32ին Տրդատ Բ հակարքայ լած  
 էր Հրահատայ դէմ, թէեւ 30ին Ն. ք. պարտուած՝ ստի-  
 պուած էր Ասորիք ապաստանել Հասմայեցոց քով: Հրա-  
 հատ եւս պահանջեց զՏրդատ Հոկտաւիանոսէ, որ Ասորիք  
 էր այն ժամանակ, բայց ասի մերժեց: Տրդատ կրցաւ կրկին  
 մտնել Պարթեւաստան, եւ այնպէս յանկարծակի բերաւ  
 զՀրահատ՝ որ աճապարեց փախչիլ, սպաննելով ալ իւր կա-  
 նայքն որ գերի շննան, բայց իւր կրտսեր որդին ձեռք  
 ինկաւ: Տրդատ Բ գրաւեց գահը իւր 27ին Ն. ք., եւ  
 Հրահատ ստիպուեցաւ փախչիլ եւ Սկիւթացոց քով  
 օգնութիւն փնտռել: Այս Տրդատէն են 286 Սելեւկ.  
 թուականութեամբ չորեքգրամեաններն «Արքայից Արքայի  
 Արշակայ Եւերգետէս Ա-Կ-Կ-Կ-Փիլհո-Ք-» Եպիփանէս  
 Փիլհեւքենոսի տես վերը. (Գուտշ. 102-3): Հրահատ Սկիւ-  
 թաց օգնութեամբ կրկին եկաւ գահն առնելու, եւ Տրդատ  
 Բ ստիպուեցաւ՝ առանց իսկ պատերազմի՝ ապաստանիլ  
 Աւգոստոսի քով (25 Ն. ք. տարին): Աւգոստոս վճռեց  
 (23ին Ն. ք.) չօգնել Տրդատայ, եւ Հրահատայ հետ բա-  
 նակցութեամբ իրերը կարգադրեց, եւ տալով Հրահատայ  
 որդին՝ զոր Տրդատ բերած տուած էր պատանդ, փոխարէնն  
 առնլով Պարթեւաց առած գերիներն ու նշանակները Արա-  
 սոսի եւ Անտոնեայ օրերուն: Այս գերեզարձն եղաւ 20ին,  
 երբ Աւգոստոս Ասորիք էր: Գուտշմիդ իրաւամբ կ'ըսէ թէ  
 Պարթեւք այս իրն յանձն չէին առնուր, եթէ իրենց ներ-  
 քին վիճակը ներէր: Ասան զի յայտնի է որ խռովութիւնք  
 դադրած չէին: Գուտշմիդ կը հետեւցընէ այս պարագան  
 նաեւ անկէ որ 23էն Ն. ք. սկսեալ գրամահատութիւնը  
 դադրած է՝ նշան խեղճ ժամանակին, եւ միակ գրամը 10  
 թուին Ն. ք. Հոկտեմբերէն՝ առանձինն յիշատակաց ար-  
 ժանի դէպքի մը առթիւ ըլլալու է. թերեւս, կ'ըսէ, գահը  
 կրկին ձեռք անցընելու ատեն: (Իրօք ալ, ինչպէս վերը տե-  
 սանք, Հրահատայ որոշ թուականաւ չորեքգրամեանն է 289  
 Սելեւկ., եւ 290էն մինչեւ 310 գրամ չկայ, բայց միայն այն՝ որ

կը յիշուի 302 եւ 308 Սելեւկ. թուականաւ, ըսել է իբր քսան տարի: Թէ Հրահատ անգամ մ'ալ մերժուած է, յայտնի է անկէ որ 12-9 Ն. ք. տարիները կը տեսնենք որ Արշակունեաց գահը նստած է ուրիշ մը, այսինքն՝ Մէհրդատ Գ, որուն հետ՝ ըստ Յովսէպոսի (Յովս. Հնախ. Հր. Ժ. 2, 8, 4) գաւազրութեան մէջ էր ընդդէմ Հռոմայ՝ Հերովդէս Հրէից, որ՝ ինչպէս մտադիր կ'ընէ Գուաշմ. (տես 116.) գիտնոց ուղադրութենէն վրիպած է: Այս միջոցներուն կրկին անջատեցան Ատրպատականի Մարք, որոնց թագաւոր եղաւ յիշեալ Արատապատայ որդին՝ Արիորարզանէս Բ, Հռոմայեցոց օգնութեամբ: Սակայն իբր 10-9ին Ն. ք. Հրահատ Գ կրկին ձեռք բերած էր գահը. եւ որպէս զի ամէն գահի հակառակորդներէն ազատի նորանշան բան մ'ըրաւ, — իւր մէկ սիրելի կնոջն — Թէ-Մ- - - - - Ս- - - - - անուն, որ խոստացի գերի մըն էր՝ Ա. գոստոսէն իրեն իբր հարձ պարգեւ խաւրուած — խորհրդով, Ա. գոստոսի քով պատանդ խաւրեց իւր շորս շափահաս որդիքն, երկու կանայքն եւ անոնց զաւակները, քովը պահելով միայն յիշեալ Մուսայի մէկ զաւակն՝ իւր կրտսերագոյն որդին: Բայց ճիշտ այս որդին՝ իւր մօր հաւանութեամբ՝ սպաննեց բանաւոր հայրն, եւ իրեն գրաւեց գահն՝ իբր Հր-հ-տ Ե կամ Հր-հ-տ-Կ: (Գուաշմ. 102-3, 115-7:)

(Արշ-Կ ԺԵ.) Հր-հ-տ Ե, 2 Ն. ք. — 4 Յ. ք. 22 կտոր, որոնց 15 կտորն իրեն Հրահատայ, եւ 7 կտորն Հրահատայ եւ (իւր մօր ու կնոջ) Մ- - - - - փիկնոջ: Հրահատայ են նախ ինն Չորեքդրամեանք (Թ. 1-9): Առաջակողմն՝ արքային պատկերը, սրածայր մօրուօք, երկայն գանգրահեր մազով. գլուխն ապարօշ, ականջն օղ, վիզը՝ մանեակ եւ կուրծքը լանջապանակ: Յետսակողմն՝ Հրահատ Ե արքունի տարազով գահի վրայ նստած, առջեւը կեցած Բախար՝ պատմութեանաւոր եւ վերնահանգերձով, գլուխը՝ կաղաթ, եւ իրեն ապարօշ մը կու տայ, միւս ձեռքն ալ ամաղթեղջիւր բռնած: Արձանագիրն (βασιλεως) βασιλε(ων) (Αρχαχου) ευεργετου δικαιου επιφανους φιλελληγνος («արքայի արքայից Արշակայ Բարեգործի Արդարոյ Նշանաւորի Հելլենասիրի») Թ. 1-3՝ յետսակողմն

գնդաձեւ նշանակը: Թուականքն են՝ Թ. 1՝ IT = 310 Սելեւկ, ամիսը՝ □ΛΩ (Ողովիտս.) կշիռ՝ 12.62, շատ ցանցառ. — Թիւ 2՝ Թուականը նոյն, ամիսն՝ Գորպիէոս, կշիռ՝ 10.82, շատ ցանցառ. — Թիւ 3, Թուականը նոյնը, ամիսը՝ Հիւպերբ. կշիռ՝ 11.85, շատ ցանցառ: Թիւ 4էն սկսեալ առաջակողմը նոյն, միայն ոմանց վրայ արքային ճակատին վերը յիշուած նշանը կայ (Թ. 6, 8.) եւ արքային գլխուն առջեւը եւ ետեւը Յաղթութիւն որ զարքայն կը պսակէ. յետսակողմն՝ Արշակի գահի՝ աղեղնաւոր. աղեղան ներքեւ՝ մենագիր. արձանագիրը նոյն: Թ. 9 Արշակայ գահի տակ՝ մահիկ: Ամէնուն՝ այսինքն Թ. 4—9՝ Թուականն է նոյն՝ AIT = 311 Սելեւկ. ամիսն եւ կշիռը Թիւ 4՝ Դիոս, 9.76. — Թ. 5՝ Ողովիտս՝ 11.15. — Թ. 6՝ Գորպիէոս՝ 11.47. — Թ. 7՝ Հիւպերբ., 14.00. — Թ. 8—9 ամսոյ անուան տեղ չէ մնացած. կշիռ՝ 10.95 եւ 14.10: Ընդհանրապէս ցանցառ կտորներ են, իսկ Թիւ 1—3 շատ ցանցառ: — Ասոնցմէ զատ կան երկու դրամ (Թ. 10, 11) որոնց վրայ ալ նոյնպէս Թագաւորին գլխուն առջեւն եւ ետեւը պսակող Յաղթութիւն. յետսակողմն եւ արձանագիրը նոյնպէս. կշիռը՝ 3.72 եւ 3.77: Յառաջակողմը ճիշդ նոյն տպով՝ շորս պղինձ (Թ. 12—15), որոնց յետսակողմն է՝ Հրահատ Ե ձիու վրայ (Թ. 12.) կին մը բազնի մ'առջեւ, ձախ ձեռքն արմաւենի, աջը՝ բազնին վրայ բարձրացած (Թ. 13.) ինքն արքայն խարակաձեւի մը վրայ նստած (Թ. 14) եւ մահիկ վրան աստղ (Թ. 15): Ասոնց կշիռը՝ 1.30—1.94:

Հրահատայ Ե Մ----- արկն զրամներն են նախ երկու շորեքդրամեան (Թ. 16, 17): Առաջակողմն՝ շորս կողմն գրուածքի մնացորդ («արքայի արքայից» կ'երեւայ.) Հրահատայ Ե պատկերը նախրնթացներուն պէս, բայց արքային գլխուն առջեւ է պսակող Յաղթութիւնը. եւ գլխուն ետեւը Թուականս ΔIT = 314: Յետսակողմը՝ շրջա-

փակ արձանագրին մնացորդ՝ ΘΕΑΙ ΟΥ (ΡΑΝΙΑΙΕ)  
 (ΜΟΥΕΗΕ) (ΒΑΣΙΛΙΕΗΕ.) (Թիւ 16—7 արձա-  
 նագիրս թերակատար, բայց Թ. 18 եւն դրամք  
 լիակատար այսպէս պահած.) այսինքն՝ («Թէս  
 Ո-ր-նի-ս Մ-ս-ս թագուհւոյ, կամ եթէ թարգ-  
 մանել ուզուի «Աստուածուրհեայ Երկնայնոյ  
 Մուսայ թագուհւոյ»<sup>1)</sup> Մէջտեղն Մուսա տիկնոջ  
 պատկերը թագաւ, ապարոշով, մանեկով եւ օղով.  
 գլխուն առջեւ Յաղթութիւն որ զթագուհին  
 կը պսակէ. գլխուն ետեւ ապարոշի փողփողեալ  
 վերջաւորաց մէջ գնդաձեւ նշանակը, եւ ամսոյ  
 անունը ΛΟ (Λովոս), կշիռ 12.27: Թ. 17ի  
 տարեթիւն ու արձանագիրը մաշած. ամիսն՝  
 Հիւպերբ., կշիռ 14.05: Երկուքն ալ շատ ցան-  
 ցառ: — Ասոնցմէ զառ կան չորս դրամ եւ մէկ  
 պղինձ (Թ. 18—22), որոնց վրայ առաջա-  
 կողմն Հրահատ Ե լիամօրուս է, մաղն՝ երկայն գան-  
 դրահեր. նոյնպէս՝ ապարոշ, մանեակ եւ լանջա-  
 պանակ. գլխուն առջեւ եւ ետեւ մէկ մէկ Յաղ-  
 թութիւն պսակաւ: Յետսակողմն ալ Մուսայ  
 տիկնոջ պատկերը՝ նոյնպէս թագով, ապարոշով,  
 օղով եւ մանեկով. արձանագիրն նոյն՝ լաւագոյն  
 ամբողջութեամբ պահուած. իւրաքանչիւր դրամ  
 մենագրով. կշիռ՝ 3.57 մինչեւ 3.89: Նաեւ պղինձը  
 ճիշդ նոյն տպով է, ուստի առաջակողմն Հրահատայ  
 եւ յետսակողմը՝ Մուսայ պատկերներով. թուական  
 եւ ամսոյ անուն չունի, կշիռ՝ 1.22: (Տես էջ 100—3:)

<sup>1</sup> Այս յորջորջանաց առթիւ դիտել կու տայ Գուտ-  
 շմիդ որ նոյն ժամանակներն արեւելեան արքունեաց մէջ  
 շատ սիրուած էին մուսայից յորջորջանքները. այսպէս Երանի  
 արեւելքն յունական պետութեան վերջին արքային Հեր-  
 մեոսի կինը կը կոչուէր Կալլիոպէ, եւ Հայոց այս Տիգրան  
 արքային կինը՝ Երատոյ: (Գուտշմ. անդ 116, Ծան. 5:)  
 Զարմանալի զուգահիսով թեամբ նաեւ նոյն Երատոյ քոյրն  
 էր Տիգրանայ եւ դրամոց վրայ անոր հետ կ'երեւայ, մինչդեռ  
 Հրահատակ եւ իւր մայրը նոյն հանգամանաց մէջ են:

Հրահատ Ե կամ Հրահատակ, որ շին Ն. Ք. գահ  
 ելաւ, իւր սակաւատեւ իշխանութեան ատեն ալ առիթ  
 ունեցաւ Հայոց գործերուն խառնուելու: Յիշեցինք վերը  
 Արտաշեսի սպանմամբ եղբորն Տիգրանայ գահ ելելն (20ին):  
 Երկար շտեւեց իշխանութիւնը, եւ քիչ մ'ետքը գահակից  
 էր որդին Տիգրան Արտաք եւ իւր քոյրը Երատոյ, զոր  
 պարսկական սովորութեան համեմատ կնութեան ալ առած  
 էր: Հրահատայ եւ Մուսայի նման՝ ասոնցմէ ալ դրամ կայ  
 մէկ կողմն Տիգրանայ՝ եւ միւս կողմն Երատոյի պատկե-  
 րով եւ յունական արձանագրով (Պաթրճ., Բ, 96): Կ'ե-  
 րեւայ թէ իրաց վիճակը Հռոմայեցւոց հաճոյ չէր. վասն  
 զի կը խաւրէ Աւգոստոս զՏիգր (6ին Ն. Ք.) եւ սա իւր  
 ստորակարգելոց ձեռք կը մերժէ զՏիգրան, եւ թագը կը  
 տրուի Արտաւազգայ մը: Բայց Տիգրան դիմած էր Հրա-  
 հատակայ, եւ ասի օգնական եղաւ Հայոց, որ Արտաւազ-  
 գայ գէմ ելած էին: Արտաւազգ եւ իւր օգնական Հռո-  
 մայեցիք մերժուեցան աշխարհէն եւ Տիգրան կրկին  
 գահը նստաւ, կ'երեւայ Հրահատայ Ե առաջին իսկ տարին  
 (2ին Ն. Ք.): Այս միջոցին մերժեցին Պարթեւք նաեւ  
 զԱրիորարզան Մար, զոր Մարաց Ատրպատականի արքայ  
 դրած էր Աւգոստոս, եւ որ քիչ մ'ետքը՝ երկրազուրկ  
 փախստական մըն էր Աւգոստոսայ քով (Իրր : Ն. Ք.): Ըստ  
 Փուտլմիդի (անդ 117) կ'երեւայ թէ ասով ալ վախճան  
 առաւ Ատրպատականի Մարաց բնիկ թագաւորութիւնը,  
 եւ տեղը Արշակունի ճիւղ մը դրուեցաւ: Ի հարկէ, կ'ըսէ,  
 Սարաբոն (ՃԱ, 523) նաեւ իւր օրերը (18 Յ. Ք.) կեցած  
 կ'ըսէ նոյն հարստութիւնը. բայց, կը յաւելու Փուտլմիդ,  
 թերեւս այս մասին նորագոյն լուրերը տակաւին չու-  
 նէր, վասն զի ապագայ դէպքերն ասոր հակառակ կը  
 խօսին: Բնական է որ Աւգոստոս լուռ չկենար այս եղա-  
 ծին, եւ իւր միւս որդեգիրը Փայիոս խաւրուեցաւ Ասո-  
 րիք՝ գործերը կարգադրելու: Երկու կողմանէ ալ մեծ պա-  
 տերազմի միտութիւն չըլլալով, անշուշտ վասն զի Հրահա-  
 տակ ալ շատ ապահով չէր իւր հպատակներէն, եւ որով-  
 հետեւ Տիգրան գործը կարգադրած էր Հռովմայեցւոց հետ  
 (ըստ Գիոնի արդէն մեռած պատերազմի մը մէջ,) ուստի  
 հաշտութիւն գոյացաւ Փայիոս Կեսարի եւ Հրահատակայ  
 մէջ (1 Ն. Ք.) այն պայմանաւ որ Հրահատակ հրաժարի  
 Հայոց գործերուն միջամտելէն, եւ իւր եղբարքն ալ  
 Հռոմ պատանդ մնան (Յիշատակարան Անկիւրեայ, Ե, 54):



Այս յիշատակարանին մէջ կայ ժամանակացս եւ ասոր հետեւ  
 լուծեամբ յառաջ եկած Հայոց վիճակը, զոր աւելի կը լու-  
 սարանեն պատմադիրք: Քայիոս տակաւին ի Հայս շմտած՝  
 մեռած էր Տիգրան ճակատու մը մէջ, եւ Երատոյ դշտոյն  
 ալ հրաժարեցաւ: Քայիոս կարգադրեց Հայոց գործն այն-  
 պէս որ յիշեալ Արիորարզանն՝ Արտաւազգայ Մարաց որ-  
 դին, զոր Պարթեւք մերժած էին եւ որ Աւգոստոսի  
 ապաւինած էր, գրուեցաւ արքայ Հայոց, որուն թէ՛ գե-  
 ղեցկութիւնն եւ թէ՛ քաջութիւնն հաճոյ էին (ըստ Տա-  
 կիտեայ) նաեւ Հայոց: Բայց արդէն յաջորդ տարին (2ին)  
 դիմադրութիւն կար Հայոց մէկ մասէն, եւ ապստամբու-  
 թիւն ծագեցաւ: Քայիոս յաջողեցաւ ապստամբութիւնը  
 զսպել եւ պաշարել Արտազերս, զոր առաւ ալ երկար  
 պաշարմանէ ետքը, բայց նաեւ ընդունեցաւ վերք մ'որուն  
 հետեւութեամբ ի դարձին մեռաւ յետոյ (4ին): Արիորար-  
 զան երկայն շապրեցաւ, եւ տեղը դրուեցաւ Հռոմայեցւոց  
 կողմանէ որդին Արտաւազգ Մար: Բայց Հայք գոհ չէին  
 եւ նոր արքայն սպաննուեցաւ: Աւգոստոս խաղաղցընելու  
 համար երկիրը՝ Հայոց գահը նստեցուց զՏիգրան, «որ էր  
 յարքունի տոհմէ» (ըստ Քաթրճ., Բ, 97 հաւանորէն ու-  
 րեմն Արտաւազգայ Ա. թոռներէն, ըստ Քարագաշեանի,  
 Պատմ. Հայ. Բ, 190 «արշակունի, այսինքն ի զաւակէն Ար-  
 տաքսիասայ», = Արտաշիսի, ուստի Արտաշիսեան հարըս-  
 տութենէն: Աւգոստոսի կտակը այս Տիգրանով կը լմնայ,  
 որմէ թերեւս հետեւցուի որ իշխած էր մինչեւ Աւգոս-  
 տեայ մահը (14 Յ. Ք:): Սակայն ժամանակամիջոց պէտք է  
 յաջորդ դիպաց համար ալ. այս Տիգրանէ ետքը կրկին գահ  
 կ'ելէ Երատոյ դշտոյն, բայց Հայք որ չէին սիրեր կնով  
 իշխանութիւնը՝ ձանձրացած կը մերժեն զանի ալ, եւ այնու-  
 հետեւ վարանաց եւ անիշխանութեան մէջ էին, «ոչ այն-  
 չափ յազատութեան որչափ անտերուչ» (ըստ Տակիտ.)  
 ուստի՝ երբ Պարթեւաց Ռոմն արքայից արքայն ի Հայս  
 ապաստանիլ ստիպուեցաւ, առին զինքը դրին արքայ Հայոց  
 (16 Յ. Ք:): — Հրահատայ հեա գրամոց վրայ կ'երեւայ  
 (Երատոյի պէս) Թէա Ուրանիա Մոռոս, Հրահատակայ  
 մայրը, զոր սա կնութեան ալ առած էր, եւ ըստ Քուտ-  
 շմիդի (անդ 118) Աւեստայի մէջ իբրեւ առանձինն ար-  
 դիւնաւոր գործ գովուած այս ամուսնութիւնն անշուշտ  
 հպատակաց որեւէ գայթակղութիւն մը պատճառած չէ,  
 մանաւանդ թէ կրնանք գուշակել թէ ասով մոգաց սիրտը

շահել կուզուէր:» Բայց Հրահատակ սիրելի չէր ի վերջոյ ազատաց, եւ ապստամբութիւն ծագեցաւ (4 Յ. Ք. Հոկտ.) եւ ստիպեցաւ Հոռոմայեցոց հողն ապաստանիլ (Յշակր. Անկիւր. է. 54.) ուր քիչ մ'եօքն մեռած ըլլալու է: (Գուտշմ. 117-81)

(Արշակ ԺԶ.) Որորէն Բ. 4 — 1 (°) Յ. Ք.: Հեղինակին հաւաքման մէջ այս արքայէն բուն դրամ չկայ: Այլուր ալ ծանօթ են միայն երկու շորեքդրամեան, մին՝ Բերլինի Թանգարանը, միւսը՝ Պետերսբուրգի: Բերլինի օրինակը Պրոկէշ-Ոսաէն գիտնականին էր՝ որ գնած էր զայն ի Ա. Պոլիս, ինչպէս կ'երեւայ Ալիշանէն: Այսին զի նաեւ Հեղինակին Ալիշանի պարթեւական հաւաքումը գնած ատեն՝ մէջը գտած է յիշեալ շորեքդրամեանին ալ մաշկահոյզ (գուտտապերքա) մէկնման ապատճենը, զոր Ալիշան յօրինած ըլլալու է՝ ծախուած դրամին պատճեն մը քովն ունենալու համար: Առաջակողմը՝ Արոգէս Բ արքային պատկերը՝ սրածայր մօրուօք, երկայն գանգուրներով, զլուխն ապարօշ. նոյն՝ մանեակ եւ լանջապանակ: Յետսակողմն ալ Արոգէս Բ արքունի տարագով գահի վրայ, ձեռքն աղեղ բռնած, ձախը՝ իշխանութեան ցուպ: Արձանագիրն է՝ (Βασιλεως) βασιλε(ων) (Αρχαχου) ευεργετο(υ) (ο)υχατο(υ) (επ)ιφανουε (φιλελ)ιτηνος (արքայի արքայից Արշակայ Բարեգործի Արդարոյ նշանատրի Հելլենասիրի:») Գլխուն ետեւը տարեթիւ ZIT = 317 Սելեւկ., վարը՝ ամիս EM. (Աւելեաց ամիս Մակեդոնացոց:) Տես էջ 104:

(Արշակ ԺԷ.) Որորէն Ա. 8 — 12 (°) Յ. Ք.: 12 կտոր, որոնց շորսը՝ շորեքդրամեան, շորսը՝ դրամ եւ նոյնչափ ալ պղինձ: Չորեքդրամեանց աս աջինը (Թ. 1) նաեւ աս աջակողմն արձանագրութիւն ունի եղերքը թերակատար՝ ΒΑΣΙΛΕΥΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΟΝΩΝΗΕ («արքայ արքայից Որորէն:») Արքային պատկերն է՝ լիամօրուք սրածայր, մազ գանգրահեր, զլուխն՝ ապարօշ, ականջն՝ օղ, վիզը՝ մանեակ եւ կուրծքն լանջապանակ: Յետսակողմը՝

Յաղթութիւն աջ ձեռքն ապարոշ բռնած, ձախ  
ուսին վրայ արմաւենի: Արձանագիրն է՝ (βασιλεως)  
(βασιλεων) (Αρ)αχου (ε)υεργετου δικαιου  
(επ)ιφανουε (φιλε)λληνος (“արքայի արքայից  
Արշակայ Բարեգործի Արդարոյ Նշանաւորի Հելլե-  
նասիրի:”) Յաղթութեան առջեւ՝ տարեթիւս  
ΓΚΤ = 323 Սելեւկ., վարն՝ ամիս ΑΠΕΛΛΑΙΟΥ  
(Ապելլէոս.) կշիռը՝ 12.10 գր., շատ ցանցառ:  
Ճիշդ այս տպով երկու չորեքդրամեան ալ կայ  
Բրիտ. եւ Բերլինի թանգարանները՝ տարբեր  
թուականաւ, այսինքն՝ 320 եւ 322 Սելեւկ.: Հե-  
ղինակիս հաւաքման միւս երեք չորեքդրամեանք  
այլազգ են, այսինքն՝ Թ. 2 եւն՝ նախ առաջակողմն  
արքայի պատկերը առանց արձանագրութեան է,  
ուրիշ մասամբ նոյն. յետսակողմն ալ՝ Յաղթու-  
թեան տեղ՝ ինքն Ոնոն գահի վրայ նստած,  
առջեւը կեցած Բախտ պատմութեանաւ եւ վերնա-  
զգեստով, գլուխը կաղաթ, եւ արքային ար-  
մաւենի կու տայ, ձախ ձեռքով ամաղթեղջիւր  
բռնած: Արձանագիրը նոյն է եւ աւելի լաւ պա-  
հուած: Թիւ 2—3 չորեքդրամեաններուն վրայ  
տարեթիւները կոխուելու կերպին պատճառաւ  
դուրս ինկած են. ամիսն է Թ. 2—3՝ □ΛΥ եւ  
ΛΟ այսինքն՝ Ուրվոս. կշիռը՝ 12.97 եւ 9.55 գր.:  
Չորորդ չորեքդրամեանը (Թ. 4) որ նոյն է՝ կը կրէ  
բայ ի ΓΟΡ (Գորպիէոս) ամսէն՝ տարեթուոյ տեղը  
այսպէս (Ε)ΤΟΥΣ Γ(ΚΤ) “զամս 323,” Սելեւկ.  
(տարեթուոյ փակագծեալը խնդրական): կշիռը  
12.48 գր.: Արդ այս Թ. 2—4 չորեքդրա-  
մեաններու համար կը յաւելու Հեղինակը թէ ըստ  
ամենայն հաւանականութեան Ոնոնի ըլլալու են,  
իրենց վրայ դրոշմուած արքայի պատկերը նոյն  
ըլլալով Թ. 1 չորեքդրամեանին հետ: Բայց բոլո-  
րովին աներկբայ ալ չէ: Ասան զի շատ կարելի է որ  
Արտաւան Գ՝ արդէն Սելեւկեան 323 թուին Օգոս-  
տոսին գահ ելած ըլլայ, իսկ դրամներս նոյն տարուոյ

Օգոստոս եւ Սեպտեմբեր ամիսներէն են, որով կրնան Արտաւանայ հրամանաւ կոխուած ըլլալ: — Ոնոնի չորս դրամներու (Թ. 5—8) առաջակողմը՝ արքային պատկերը լիամօրու է, կարճ մազով, գլուխն ապարօշ, ականջն՝ օղ եւ վիզը՝ մանեակ: Յետսակողմը՝ Յաղթութիւն աջ ձեռքով բռնած արմաւենի, եւ ձախով՝ ապարօշ: Աերնագիրն է βασιλευσ Ουωνγς νειχησac Αρταβανου («Արտայ Ուօնգէս յաղթեալ Արտաւանայ») վարը մենագիր: Աշիռը (Թ. 5) 3.93 գր., միւսներուն՝ 3.82 եւ 3.93 եւ 3.74 այլազգի մենագրերով: Աերնագրին կամ արձանագրին այս անսովոր եւ յոխորտաբան ոճը, նաեւ դրամոցս առհասարակ բնիկ պարթեւականներէն տարբեր տիպը կը մեկնուի, կ'ըսէ, անով որ Ոնոն իւր առած հռոմէական կրթութիւնը կ'ուզէր պանծանօք երեւցընել, կրթութիւն մ'որ իրեն աղետաբեր եղաւ ի Պարթեւս: Պղինձներուն (Թ. 9—12) առաջակողմը բաց ի Ոնոնի պատկերէն դրամոց համեմատ եւ տպով կայ արձանագիրս՝ βασιλευσ Ουωνγς («արքայ Ուօնգէս») Յետսակողմը նոյն արձանագրութիւնը, այսինքն՝ «Արքայ Ոնոնգէս յաղթեալ Արտաւանայ», եւ մենագրեր. բայց արձանագրութիւնը միայն Թ. 9ի վրայ, միւսներուն արձանագրութիւնքն՝ կոխուելու կերպին պատճառաւ դուրս ինկած են: Թ. 11—12 յետսակողմը՝ Յաղթութիւն, աջ ձեռքը բռնած արմաւենի, ձախն ապարօշ: Աշիռնին՝ 1.47, եւ 1.15, եւ 1.43, եւ 1.44: (Տես էջ 105—107:)

Հրահատայ Ե կամ Հրահատակայ մերժուելով (4 Յ. Ք.) Պարթեւաց գահն ելաւ Ուօնգէս Բ, որ աքսորը գացած էր, եւ ետ դարձաւ. ասկէ դրամ կայ Սելեւկ. 317 տարւոյ Աւելեաց ամսէն (= 6 Յ. Ք. աշնան, տես վերը): Բայց զայրացկոտ եւ անգութ բնաւորութեամբն չկրցաւ երկար կենալ, եւ որսի ժամանակ սպաննուեցաւ, յայտնի չէ ճիշդ որ տարին: Ներքին խռովութիւնքն սաստկացան այնչափ որ վերջ մը տալու համար Պարթեւք սրոշեցին Հռոմ պատգամաւորութիւն խաւրել Աւգոստոսի եւ

խնդրել հոն գտնուած Հրահատայ Գ զուականերէն երի-  
ցագոյնը զՈՆՈՆ (կամ ԱՆՈՆ,) զոր ընտրած էին արքայ (8ին  
Յ. Ք:) ՈՆՈՆ արեւմտեան կրթութեամբ սնած՝ անշուշտ  
յուսալից էր, եւ երբ մեծաւ շքեղութեամբ հասաւ՝ կ'ըսուի  
թէ ուրախութեամբ ընդունուեցաւ: Բայց քիչ մ'ետքը  
դժգոհութիւնք սկսան, իբր թէ կ'ամչնային որ կայսեր  
ծառայած մէկը Արշակունեաց գահը նստի: Բուն պատճառն  
էր որ ՈՆՈՆի կենցաղը Պարթեւաց բիրտ սովորութեանց հա-  
կառակ էր, եւ ասով ատելի. որսի ելլել շատ չէր սիրեր,  
նոյնպէս ձի հեծնել, այլ դեսպակով կը շրջէր. փոխանակ  
տաճարակցաց հետ խրախճանութեանց զբաղելու, Յունաց  
հետ տեսակցիլ կը սիրէր. իբրեւ արեւելեան իշխան անմատ-  
չելի անձ մ'ըլլալու տեղը՝ դիւրամատոյց էր հպատակաց, եւ  
— որ թերեւս ամենէն ծանրակշիռն էր — խիստ կը հսկէր  
արքունի պաշտօնէից գործողութեանց վրայ, եւ որ ի հարկէ  
ազահութիւն պիտի երեւար անոնց: Զարմանալի չէ ու-  
րեմն որ տժգոհ Պարթեւք շուտ մ'ուրիշ թիկնածու գտնելու  
ետեւէ եղան. եւ որովհետեւ Արշակունի մնացած չէր որ  
կս'մ սպաննուած կամ արտաքսուած չըլլար, դտան ի  
վերջոյ զԱրտաւան Գ, մայրենեօք միայն Արշակունի,  
Դահաց քով մեծցած, եւ Մարաց (այսինքն, կ'ըսէ Գուաշմ.  
119՝ Ատրպատականի) արքայ դրուած, եւ կանչեցին 10ին  
կամ 11ին Յ. Ք: Ըստ Գուաշմիզի (անդ 119) 11 Յ. Ք.  
տարիէն երկու արքայիցս ալ դրամ կայ: ՈՆՈՆի դրամն  
ապահով է. ինչպէս տեսանք սկսելով՝ իրմէ որոշ թուա-  
կանաւ դրամ կայ Սելեւկեան 320 թուականէն մինչեւ 323.  
գոնէ որոշ թուականաւ եղածները (= 8-12 Յ. Ք. տես վերը):  
Բայց Արտաւանայ Գ որոշ եւ ապահով թուականաւ  
դրամք կը սկսին ուշ, այսինքն Սելեւկ. 334էն (= 22 Յ. Ք.)  
էթէ շահուենք Արտաւանայ Թ. 1-4 չորեքդրամեանքն եւ  
նմաններն, որոնց վրայ եղած՝ ինչպէս պիտի տեսնենք՝ խառ-  
նակաձեւ ամսոյ անուանց նշանագիրք կրնային դիւրաւ տա-  
րեթիւ կարծուիլ եւ մեկնուիլ իբր BKT = 322, որ այն  
ատեն իրօք կ'ըլլար յիշեալ 11 Յ. Ք. տարին. (տես վարը՝  
Արտաւանայ՝ Թ. 4:) Մեր Հեղինակը բացայայտ կ'ըսէ որ  
այն Թիւ 4ի վրայ սխալ է յիշեալ BKT թուական մը  
կարգալը: Պայծառ կը տեսնուի այս՝ իւր դրած յիշեալ  
տառաձեւերու ճշգրիտ նմանապատճեններէ, որոնք միայն  
սխալաձեւ ամսոյ անուն կրնան ըլլալ, եւ գոնէ Թ. 3-4  
պայծառ ալ է «Գոր(պիէոս:),» նոյն՝ է նաեւ միւս գիտնոց

յիշածը (Գարդնէր, Տխտ. Ե, 7 եւ Բոթ, Տխտ. ԻԵ, 1.) ուստի ոչ թուական մը «222», (տես Յուցակիս էջ 108-9:) Զինչէւիցէ՝ Արտաւանայ Գ թիկնածութեան առաջին փորձն անյաջող էր, եւ ստիպուեցաւ կրկին Մարաստան քաջուիլ: Այս առթիւ գրոշմած ըլլալու է Ոնոն՝ պարթեւական գրամոց վրայ անսովոր արձանագրութեամբ գրամները թէ «Արտայ Ոնոն յաղթեալ Արտասանայ» (տես վեր՝ Ոնոնի Թ. 5-10 գրամներն ու պղինձները) Գուտշմիդ (անդ 119) այս գրամին այն նշանակութիւնն ալ կու տայ, որ իւր պարզ «Արտայ Ոնոն» տիտղոսը համեմատ կը գտնէ արքային ուրիշ կողմանէ ծանօթ համեմատ նկարագրին. (— Ի հարկէ իրաւունք ունի միւս կողմանէ մեր Հեղինակը մատնանիշ ընելու որ այսպէս ալ փքուռոյց ոճ մըն է իւր հակառակորդին վրայ տարած յաղթութիւնը յանուանէ նշանակել, տես վարը. —) եւ միւս կողմանէ անով որ գահու ընդհանուր անուն գարձած «Արշալ» անուան տեղ կ'անցնի արքայի բուն անունը՝ Ոնոն: Ասի, կ'ըսէ, ասկէ ետքը կը սկսի յաճախել, եւ ապահով նշան է թէ այն ատենները Պարթեւաց պետութեան համար թիկնածուաց, գահի հակառակորդաց կամ հաքարքայից ժամանակամիջոց մըն են: Ուստի հպատակ մ'երբ գրամ մը ձեռքն հասնէր՝ կրնար իմանալ թէ ո՞ր արքայն, կամ ո՞ր հակարքայն ու թիկնածուն գրոշմել տուած էր: Արտաւան Գ կրկին փորձ ըրաւ գահը յափշտակելու, եւ այս անգամ յաջողեցաւ որոշիչ ճակատամարտի մէջ լիովին յաղթել Ոնոնի փախստականները անխնայ կոտորեց, եւ այնպէս մտաւ Տիգրոն իբրեւ Արքայից Արքայ: Ոնոն փախաւ նախ Սելեւկիա, եւ անկէ ի Հայս, ուր՝ ինչպէս ըսինք՝ զինքը սիրով ընդունեցան Հայք, եւ իրենց արքայ դրին (16 Յ. Բ.) ճիշդ այն միջոցին անտերունջ ըլլալով: Այսպէս «արքայից արքայ» Ոնոն Արշակունեաց եղաւ «արքայ» Հայոց, դժբախտաբար նաեւ հոս ոչ երկար ժամանակ: (Գուտշմ. 118-9:)

(Արշալ ժԸ.) Արտասան Գ., 10 (°) — 40 Յ. Բ. 20 կտոր, որոնց 12 չորեքգրամեան, 3՝ գրամ եւ 5՝ պղինձ: Չորեքգրամեանց նկարագիրն է (Թիւ 1.) առաջակողմն՝ արքային պատկերը, սրածայր մօրուօք, երկայն գանգուրներով, գլուխն՝ ապարօշ, վիզը՝ մանեակ, եւ կուրծքը լանջապանակ: Յետսակողմն՝ Արտաւան Գ արքունի տարա-

դով գահի վրայ, առջեւը կեցած Բախտ պատ-  
 մուճանաւ եւ գլուխը կողաթն, եւ իրեն արմաւենի  
 կ'ընծայէ, ձախ ձեռքն ամաղթեղջիւր բռնած :  
 Արձանագիրն է՝ (βασιλεωσ) βασιλ(εων) (Αρχαχου)  
 (εσ)εργε(ου) δικαίου (επ)ιφανουσ (φιλελ)ιγ-  
 (νουσ) ("Արքայի արքայից Արշակայ Բարեգործի  
 Արդարոյ Նշանաւորի Հելլենասիրի :") Աստուելու  
 կերպին պատճառաւ տարեթիւր դուրս մնացած .  
 ամսոյ անունն ալ այլաձեւ : Աշխար 9.80, շատ ցան-  
 ցառ : Նոյն է միւսներուն ալ ընդ հանուր նկարա-  
 գիրը : Թ. 2 տարեթիւն նոյնպէս դուրս մնացած ,  
 Թ. 3 մաշած . երկուքին ալ ամիսն է Գորպիէոս .  
 (կշիռ՝ 12.65 եւ 13.51 . շատ ցանցառ : ) Թ. 4  
 Հաւաքմանս՝ բուն դրամ չէ, այլ նոյնպէս Ալեշանի  
 հաւաքման մէջ գտնուած մաշկահայտէ նմանապատ-  
 ճեն՝ որ բոլորովին նոյն է Պրոկէշ - Ոստէնի ունեցած  
 մէկ շորեքդրամեանին հետ : Աւրիշ նման մ'ալ կայ  
 Բրիտ . Թանգարանը : Ասոնց վրայ նորանշան տա-  
 ռեր գտնուելուն՝ փորձեր եղած են զանոնք իրրեւ  
 տարեթիւ մեկնելու : Հեղինակը մէտ չէ այսպիսի  
 մեկնութեան մը համամիտ ըլլալու, այլ ամսոց  
 անուանց անորոշ եւ անյաջող գրութիւններ կը  
 համարի : Թիւ 5 շորեքդրամեանն աւելի լաւ պա-  
 հուած է, եւ առաջակողմն արքային գլխուն առ-  
 ջեւ ունի տարեթիւ  $\Delta\Lambda\Gamma = 334$  Սելեւկ : Յետ-  
 սակողմն ալ արձանագիրն է միայն (βασιλεωσ)  
 (βα)σιλ(εων) (ε)σ(ε)ργε(ου) (Αρχαχου) ("Արքայի  
 արքայից Բարեգործի Արշակայ :") Պատկերն ալ  
 քիչ մ'այլազգ է, այսինքն՝ Արտաւան կը նստի կարճ  
 թիկունքով գահի վրայ . առջեւը կեցած Բախտը՝  
 իրեն արմաւենի կ'ընծայէ, իսկ Արտաւանայ առջեւ  
 ճնրադրած է պարթեւական տարազով մօրուքով  
 մարդ մը (անշուշտ, կ'ըսէ Հեղինակը՝ յաղթուած  
 հակառքայ մը,) որ ապարոշ կու տայ արքային :  
 Տարեթիւն է հոս ալ  $\Delta\Lambda\Gamma = 334$  : Աշխար 13.43  
 շատ ցանցառ : Գրամիտ այս եզական երեւոյթը կը

ձեկնէ Հեղինակն անով որ Արտաւան բնիկ պարթեւական ոճով վրէժ կը լուծէ հոս իւր հակառակորդին՝ Ոնոնի Ա դէմ, որ հռոմէական սովորութեան համեմատ պանծանօք դրոշմել տուած էր, ինչպէս տեսանք, իւր դրամները՝ «Արքայ Ոնովնէս յաղթեալ Արտաւանայ.» (տես վերը): Նշանակալից կը գտնէ Հեղինակը նաեւ այն պարագան որ հոս կը պակսի «Հելլենասէր», յորջորջանքը, որ գրեթէ սովորական եղած էր ամէն արքայից դրամոց վրայ. եւ այս՝ իբրեւ նշան իւր հակառակութեան ընդդէմ արեւմտից՝ որ պաշտպան էր Ոնոնի: Թ. 6 չորեքդրամեանն՝ որ Ալիշանի հաւաքմանէն է եւ շատ ցանցառ, ունի տարեթիւս  $\Delta\Lambda T = 334$ . կշիռը՝ 8.77: Հեղինակը Բրիտ. Թանգարան տեսած է նման չորեքդրամեան մը  $E\Lambda T = 335$  թուականաւ, եւ Վ. Բոթ (էջ 147) կը յիշէ ուրիշ մը  $A\Lambda T = 331$  թուականաւ: Թ. 7 չորեքդրամեանն եւ անոր հետ միւսներն այն տարբերութիւնն ունին, որ նախ արձանագիրն է  $\beta\alpha\sigma\iota\lambda\epsilon(\omega\epsilon)$  (*Αρσαχου*) (*δικαιου*) (*επιφανους*) («Արքայի Արշակայ Արդարոյ Նշանաւորի.») յետսակողման պատկերն է Արտաւան Գ արքունի տարագով ձիու վրայ, առջեւը կեցած Բախտ որ աջով իրեն արմաւենի կու տայ, ձախով իշխանութեան ցուպը բռնած, վերնագգեստ հագած եւ գլուխը՝ բրգածեւ թագ: Բացի մենագրէ՝ տարեթիւն է  $H\Lambda T = 338$ . կշիռ. 12.32: Մենագիրները տարբեր բայց ճիշդ նոյն 338 թուականն ունին միւս չորեքդրամեանքն ալ՝ Թ. 8—12. (կշիռքնին՝ 13.42—14.81:) — Գրամները (Թ. 13—15.) առաջակողմն ունին արքային պատկերը երկար եւ սրածայր մօրուօք, երկար գանգուրներով, միւս հանգամանքները նոյն: Յետսակողմը՝ Արշակ ի գահի՝ աղեղնաւոր. արձանագիրն է  $\beta\alpha\sigma\iota\lambda\epsilon\omega\epsilon$   $\beta\alpha\sigma\iota\lambda\epsilon\omega\nu$  *Αρσαχου* *ευεργετου* *δικαιου* *επιφανους* (*φιλε*)*αλληνο* («արքայի արքայից Արշակայ Բարեգործի Ար-



դարոյ նշանաւորի Հելլենասիրի:») Տառերը բաւական խառնակ եւ սխալաձեւ են, Թ. 15 նաեւ անընթեռնի: Արշակայ աղեղան տակ՝ մենագրեր: Կշիռն՝ 3.77 մինչեւ 3.89, վերջինը շատ ցանցառ: Պղինձներու (Թ. 16—20) առաջակողմը նոյն. յետասակողմը՝ Բախտ բրգաւոր թագով (Թ. 16, կշիռ 1.45.) Քաջ մր (Թ. 17, կշիռ 1.37.) մահիկ եւ աստղ (Թ. 18, կշիռ 1.15.), սրուակ (Թ. 19, կշիռ 1.13) եւ ձիագլուխ (Թ. 20, կշիռ 1.78, շատ ցանցառ:) (Տես էջ 108—112:)

(Արշակ ԺԸ, 2.) Տրդատ Գ, 36 Յ. Ք: Գրամ անձանօթ է կամ անգիւտ:

(Արշակ ԺԸ, 3.) Կիննամուս, 37 (°) Յ. Ք: Գրամ չէ գտնուած:

Արտաւան Գ հաշա աշքով չէր կրնար նայիլ իւր հակառակորդին՝ Ոնոնի՝ Հայոց գահը նստիլը, եւ կրցաւ իրեն գրաւել հայ սպասաց մէկ մասն եւ կը սպասանար Հռոմայեցւոց, եթէ օգնէին: Տիրեր կայսր՝ որ զՔերմանիկոս խաւրեց իրերը շտկելու, պատերազմի կամք չուներ, որով Ոնոն ստիպուեցաւ Ասորիք ապաստանիլ. եւ հոս ալ Արտաւանայ սագրելով էր որ Քերմանիկոս զՈնոն ի Պոմպեուսովիս Կիլիկիոյ պահպանութեան ներքեւ դրաւ. (Ոնոն փախչիլ փորձելով՝ սպաննուեցաւ 19 Յ. Ք:) Քերմանիկոս Հայոց ալ հաճութեամբ գահ հանած էր Պոնտացւոց Պողեմոնեայ որդին Չենոն, որուն անունը Հայք փոխեցին եւ կոչեցին Արտաշէս (18 Յ. Ք:) Բայց այս Արտաշիսի մահուանէ ետքը՝ Արտաւան Գ իւր Արշակ որդին Հայոց գահը բարձրացընել կրցաւ, եւ նաեւ Քամիրք կ'ուզէր հռոմէական ազդեցութենէ կորզել (34ին): Ասոր դէմ Տիրերեայ ձեռնարկութիւնն էր կրկին. նախ Արաց Փարսման արքայն համոզել որ իւր եղբայրն՝ Միհրդատ՝ Հայոց թագին թիկնածու ըլլայ եւ զոր թագաւոր ալ Հայոց հաստատեց, եւ իրօք Վիրք կրցան ողողել աշխարհն: Արշակ՝ Արտաւանայ Գ որդին՝ կաշառարեկ ծառաներէ սպաննուեցաւ, եւ Վիրք առին զԱրտաշատ (35 Յ. Ք:) Արտաւան ասոր դէմ իւր Որոդէս որդին Հայոց թագով պսակեց եւ բանակաւ ի Հայս խաւրեց: Փարսման Սարմատաց կամ Ալանաց հինահար խմբերով ողողեց

Հայոց աշխարհն, եւ արիւնահեղ ճակատի մը մէջ նոյն ինքն  
 Որողէս վիրաւորեցաւ Փարսմանէ, եւ Պարթեւք փախչիլ  
 ստիպուեցան: Արտաւան (36ին) կրկին փորձեց իւր ձեռ-  
 նարկն ի Հայս. բայց կրկին Աիրք տէր մնացին: Այս ժամա-  
 նակ արդէն Տիրեր անոր կռնակը յարուցած էր այն խռո-  
 վութիւնն որ յառաջուրնէ պատրաստուած էր Պարթեւաց  
 ազատաց ամգոհ մասին հետ եւ յանձնուած Ղուկիոս Աի-  
 տեղղիոսի Ասորոց կուսակալին: Ապստամբութեան հոգին էր  
 Սիննակէս, եւ հակարքայ ընտրուեցաւ Հրահատայ Գորդին  
 նոյնպէս Հրահատ անուամբ, եւ ասոր քիչ մ'ետքը մեռնե-  
 լով՝ Հրահատայ Գ թոռն Տրդատ Գ. (ուստի մեր Յուցակին  
 Արշակ ԺԸ, 2:) Ղուկիոս Աիտեղղիոս հռոմէական լեգէոննե-  
 րով ընկերացաւ ասոր մինչեւ սահմանն, եւ մինչեւ որ անոր  
 կուսակիցք զօրացան: Արտաւան Գ խոհեմութիւն համար-  
 եցաւ փախչիլ ի Արկանս՝ այն կողման վաչկատուններէ  
 օգնութիւն գտնելու: Տրդատ Գ պսակուեցաւ իրրեւ ար-  
 քայից արքայ ի Տիգրոն: Բայց ճիշդ իւր գլխաւոր օգնա-  
 կանին՝ Սիննակէսայ՝ գէժ հակառակութիւն ունէին Հրահատ  
 եւ Հերոն սատրապներն, որոնք եւ իրենց կողմնակիցք կրկին  
 ետ կանչեցին զԱրտաւան Գ. եւ ասի եկաւ Արկանաց աշ-  
 խարհէն Գահաց եւ Շակաց օգնական գնդերով: Տրդատ  
 Միջագետք քաշուեցաւ կռուոյ ապահով կռուան մը  
 գտնելու համար, բայց ճիշդ հոն դասալիք ըլլալով իւր  
 բանակն, ստիպուեցաւ Ասորիք ապաստանիլ (36 Յ. Գ:)  
 Արտաւանայ այս նոր իշխանութիւնն ալ անխռով չմնաց:  
 Տժգոհ կողմնակցութիւնը քիչ մ'ետքը կրկին նոր հակար-  
 քայ մը գահ հանեց՝ Կիննամոս անուն. (ուստի մեր Յուցա-  
 կին՝ Արշակ ԺԸ, 3:) Կ'ըսուի Արտաւանայ մէկ որդեգիրը:  
 Արտաւան այս անգամ ապաստանեցաւ Ադիաբենեայ Ըզա-  
 տէս (Յազդ) արքայի քով, եւ Կիննամոս գահ ելաւ: Բայց  
 Ըզատէս յաջողեցաւ համոզել զԿիննամոս հրաժարելու եւ  
 Պարթեւները՝ զԱրտաւան ընդունելու: Ըզատէս ի հարկէ  
 ի վարձատրութիւն ստացաւ զՄծբին՝ զոր Հայք բռնա-  
 դատեցան թողուլ: Ասան զի Հռոմայեցիք — ինչպէս  
 Գուտշմ. (անդ 123) կ'ըսէ՝ Գայիոսի Կաղիպուղայ յիմա-  
 րական մէկ քաղաքականութեամբը — Հռոմ կոչած էին  
 խարկանօք զՄիհրդատ արքայ Հայոց եւ բանդարգել ըրած  
 (37ին.) եւ Հայք անշուշտ Պարթեւաց ձեռքն ինկան, մին-  
 չեւ որ Կղաւղիոս (որ կայսր եղաւ 41ին) կրկին արձակեց ի  
 Հայս: Արտաւան, որ տակաւին 39ին Յ. Գ. կը յիշուի

(Յովսեփոսէ), մեռաւ հասնակահասարար 40ին Յ. Ք. Իւր յաջորդքն են Վարդան եւ գրեթէ նոյն ժամանակ նաեւ Գոսորզ: (Տես Գուաշմ. անդ՝ 119-123):

(Արշի ԺԹ.) ՎԱՐԳԱՆ Ա, 42—45 Յ. Ք. 22 կտոր, որոնց ութ հատն շորեքդրամեան, երեքը դրամ եւ 11 պղինձ: Չորեքդրամեանց նկարագիրն է՝ (Թ. 1.) Վարդանայ Ա արքային պատկերը, ճակատը վերը յիշուած գնդաձեւ նշանակով, մօրուքը կարճ եւ սրածայր. մազն երկար եւ գանգրահեր, գլուխը՝ ապարօշ եւ կուրծքը՝ լանջապանակ, որուն վրայ աստղ մը եւ A. Յետասկողմը՝ Վարդան Ա արքունի տարագով բարձր թիկնագահի վրայ, առջեւը կեցած Բախտ պատմուձանաւ եւ վերնագգեստով, որ իրեն արմուեանի կ'ընծայէ, ձախ ձեռքն ամաղթեղջիւր բռնած: Արձանագիրը (βασιλεωσ) βασιλε(ων) (Αρ)σαχ(ου) ευεργετου δικαιου (επι)φανουσ (φιλε)λληνου. ("Արքայի արքայից Արշակայ Բարեգործի Արդարոյ նշանաւորի Հելլենասիրի",) Տարեթիւն է ΓΝΤ = 353 Սելեւկ., ամիսն՝ Պանեմոս. կշիռն՝ 13.05 գր.: Միւս շորեքդրամեաններէն ալ Թ. 2—4 նոյն թուականաւ են, ամիսքն՝ Ալովիոս, Գորպիէոս եւ Հիւպերբ. (կշիռ՝ 9.01, եւ 13.23, եւ 12.90.) — Թ. 5՝ ΔΝΤ = 354, ամիս Աւգիւնէոս, կշիռ՝ 11.14 — Թ. 6՝ ΕΝΤ = 355, ամիսն՝ դուրս մնացած, կշիռ՝ 13.28. — Թ. 7՝ նոյն տարին, ամիսն՝ Գէսիոս, կշիռ՝ 12.59. — Թ. 8՝ ΣΝΤ = 356, ամիսն՝ դուրս մնացած, կշիռ՝ 13.71: Պրոկէշ-Աստէն կը ստորագրէ ուրիշ շորեքդրամեան մ'ալ 351 Սելեւկ. թուականաւ. բայց, կը յաւելու Հեղինակը, միաւոր թիւն աւելի Δ է քան A, որով ըլլալու է 354, ինչպէս արդէն Գարգնէր նկատած էր (էջ 48): — Գրամներու (Թ. 9—11) առաջակողմը՝ արքային նոյն պատկերն, բայց կը կրէ նաեւ ականջի օղ եւ պարանոցի մանեակ: Յետասկողմը՝ Արշակի իգահի աղեղնաւոր, աղեղան տակ՝ մենագիր: Արձանագիրը նոյն է շորեքդրամեաններու հետ, բայց բաւական

խառնակ եւ սխալաձեւ տառերով. կշիռն՝ 3.82, եւ 3.78, եւ 3.32: Թ. 10էն սկսեալ արքային մօրուաց ձեւը կը փոխուի, աւելի կարճ եւ բոլորաձեւ: — Պղինձներէն Թ. 12 առաջակողմը՝ Վարդան Ա կարճ բոլորաձեւ լիամօրուօք, երկար գանգուրներով, գլուխն ապարօշ եւ վիզը մանեակ. դիտուեն առջեւ Δ. յետսակողմը՝ անրնթեռնի այլաձեւ յունական տառերով արձանագիր մը. կշիռ՝ 3.05, շատ ցանցառ: Թ. 13—16 առաջակողմը Վարդանայ պատկերն աւելի չորեքդրամեանց պատկերին համեմատ, երկար սրածայր մօրուօք, երկար գանգուրներով, նոյն՝ ապարօշ, մանեակ եւ լանջապանակ. իսկ Թ. 17—22 կրկին Թ. 12ի նման՝ կարճ բոլորաձեւ լիամօրուօք եւն, ունենալով աւելի՛ականջի օղ եւ լանջապանակ. եւ ասոնց առհասարակ ոճը Վարդանայ դրամներուն համեմատ, մինչդեռ Թ. 13—16ի ոճը չորեքդրամեաններու պէս է: Թ. 14 պղինձն արքայի գլխուն առջեւ թուական ունի, որ կ'երեւայ  $\Gamma NT = 353$  Սելեւկ., Թ. 15—16 ալ թուական ունեցած են, բայց այժմ անորոշ: Ասոնց Յետսակողմը Βουλή բարձր եւ ոլորածոյ թիկունքով գահի վրայ (Թ. 13), Բախաբրգաւոր թագով (Թ. 14, 15, 16), Յաղթութիւն (Թ. 17—8.) կարճահանգերձ այր մը, աջ ձեռքն ամբարձած, ձախը՝ ամաղթեղջիւր (Թ. 19, 20.) եւ թեւատարած արծիւ՝ կտցով պսակ բռնած (Թ. 21—2: ) կշիռ՝ պէսպէս, 0.86էն մինչեւ 3.05: (Տես էջ 113—116:)

(Արշի Ի.) Գոտորչ, 40—51 Յ. ք. 76 կտոր, որոնց 12 հատը չորեքդրամեան, 14 հատը՝ դրամ, եւ 50՝ պղինձ: Չորեքդրամեանց նկարագիրն է (Թ. 1)՝ Գոտարղայ արքային պատկերը, մօրուքը երկայն սրածայր, մազն՝ երկար գանգրահեր. գլուխն՝ ապարօշ, վիզը՝ մանեակ եւ կուրծքը՝ լանջապանակ: Յետսակողմը՝ Գոտորղ արքունի տարազով բարձր թիկնագահի վրայ նստած, առջեւը կե-

ցած Բախտ պատմութեանու եւ վերնաճանդերձով որ իրեն ապարոջ կու տայ աջոյն, իսկ ձախով ածաղթեղջիւր բռնած: Արձանագիրն է՝ (βασιλεωε) (β)ασιλεω(ν) (Αρ)αα(χου) ευεργε(του) δικαιου επιφαν(ουε) (φιλελληνοε) (“արքայի արքայից Արշակայ Բարեգործի Արդարոյ Նշանաւորի Հելլենասիրի:”) Տարեթիւն է ZNT = 357. ամսոյ թիւն ինկած. կշիռն 13.27: Միւս չորեքդրամեաններէն՝ Թ. 2 — 3 նոյն թուականն ունին, ամիսն՝ Պանեմոս եւ Գորպիէոս, կշիռ՝ 13.67 եւ 14.02 — Թ. 4՝ HNT = 358, ամիսն ինկած, կշիռ 14.01: — Թ. 5. նախ՝ առաջակողմն գլխուն ետեւ Γ, եւ դարձեալ նշանաւոր է իւր այլակերպութեամբ ընթերցուածոյն՝ (βασιλεωε) (β)ασιλεων (φιλελληνοε) επιφα(νουε) (δικαιου) ευεργε(του) (Γω)ταρ(ζου,) այսինքն՝ “Արքայի արքայից Հելլենասիրի Նշանաւորի Արդարոյ Բարեգործի Գորպիէոս.”) տարեթիւր նոյն HNT = 358. ամիսն ինկած. կշիռը՝ 9.25. շատ ցանցառ. — Թ. 6 — 7 ունին տարեթիւս ԹNT = 359, ամիսն ինկած, կշիռ՝ 13.32 եւ 9.76. — Թ. 8՝ ΞΤ = 360, ամիս՝ Գէսիոս, կշիռ 14.00. — Թ. 9՝ ΑΞΤ = 361, ամիս ինկած. կշիռ 13.78. — Թ. 10՝ ΒΞΤ = 362, ամիսն ինկած, կշիռ 13.69. — Թ. 11 — 12 նոյն 362 տարին, ամիսն՝ Ապեղղէոս եւ Գէսիոս, կշիռ՝ 9.18 եւ 13.02: Ինչպէս կը ծանուցանէ Հեղինակը՝ Բրիտ. Թանգարանը կրկին չորեքդրամեան կայ, մին ENT = 355, եւ միւսը SNT = 356 թուականաւ, (Վ. Բոթ, էջ 161:) Ասոնք, կ’ըսէ, Գոտորղայ հնագոյն չորեքդրամեանքն ըլլալու են: Պրոկէշ-Ոստէն կը նկարագրէ արդարեւ ուրիշ չորեքդրամեան մ’որ 352 թուականն ունենայ: Բայց ասի, կ’ըսէ, շատ երկբայական է, նոյն իսկ անով որ նոյն տեղ Β կամ 2 թուագիր կարծուած ձեւն այլակերպ է, եւ ինչպէս համեմատութեամբ կը տեսնուի՝ է Θ, որ Գոտորղի դրամներու վրայ Θ տառին ձեւն է. ուստի

Թուականն է 359: Այս առթիւ մտադիր կ'ընէ որ ճիշդ այս թուական-տառերու ձեւերուն ամենամեծ զգուշութիւն ընել պէտք է, քանի որ դրամոց տառերու ձեւերն այնպէս են որ յաճախ փոքր կէտի եւ մասնկի մը քերելովն՝ կարելի է ուրիշ եւ հնագոյն թուական մ'ընել ակամայ թէ կամաւ. (օր. վաճառողի մը կողմանէ:)<sup>1</sup> — Գրամներէն (Թ. 13—26) նախ շատ նորանշան արձանագրութիւն մ'ունին առաջինքն կամ Թ. 13 եւ 14: Ասոնց առաջակողմը՝ Գոտորղի պատկերը, ճակատին վրայ գնդակաձեւ նշանակով. արքային մօրուքը՝ երկայն լիամօրուք, մօզն երկայն՝ թեթեւ գանգուրներով, գլուխն՝ ապարօշ. նոյնպէս՝ օղ, մանեակ եւ լանջապանակ: Յետսակողմն՝ Արշակ ի գահի աղեղնաւոր, աղեղան տակ՝ մենագիր: Արձանագիրը՝ բաւական խառնակ եւ սխալաձեւ տառերով՝ βασιλε(ωε) βασιλεων Αρσαχο(υ) (υ)οσ κεχα λου μενοσ Αρταβανου Γωτερζης (“արքայի արքայից Արշակայ որդի ինչեցեւ: Արտաբանուց Գոտերզիս:”) Աշխար՝ 3.72 եւ 3.57, երկուքն ալ շատ ցանցառ: Միւս գրամներէն նոյնպէս առանձնայատուկ է Թ. 15, որուն առաջակողման պատկերը ճակատին նշան չունի եւ ոչ ականջի օղ. (ուրիշ կողմանէ նոյն.) բայց մանաւանդ սեպհական նկարագրով է յետսակողմը՝ Գոտորղ արքունի տարազով գահի

<sup>1</sup> Այսպէս, կ'ըսէ Հեղինակը, օրինակի համար ΘNT (= 359) գրուածքը դիւրաւ կրնայ կամաւ նենգողի մը կողմանէ փոխուիլ եւ ըլլալ ΓNT (= 353) կամ ENT (= 355) կամ HNT (= 358). ուստի այս թուականները միշտ ճշգրտաւ քննելու է: Նոյն զգուշութեան պէտք կայ նաեւ յաջորդ թուատառերուն համար՝ Γ (= 3.) Δ (= 4.) Ε (= 5.) Ι (= 10.) Ο (= 70.) Π (= 80.), որոնք դիւրաւ կրնան փոխուիլ կարգաւ հետեւեալ թուատառերու՝ Ε (= 5.) Α (= 1.) Φ (= 9.) Κ (= 20.) Ϙ (= 90.) □ (= 70.): Տես Յուցակիս էջ 119:

վրայ նստած, ուրիշ պարթեւական տարազով մտրդ  
 մ'առջեւ ծնրադրած՝ աջով ապարոշ կու տայ  
 արքային. արձանագիրն է՝ βασιλ(εωε) βασιλ(εων)  
 Αρσα(χου) ευεργε(του) δικαιο(υ) νικηφορ(ου)  
 (ε)πιφανουε («արքայի արքայից Արշակայ Բարե-  
 գործի Արդարոյ Յաղթողի Նշանաւորի.» = Νικηφο-  
 ρος «Նիկեփորոս», այսինքն «Յաղթակիր») կշիռն՝  
 3.36 գր., շատ ցանցառ. (Մորդտմանի հաւաք-  
 մանէն:) Ինչպէս մտադիր կ'ընէ Հեղինակը՝ Գո-  
 տորղի այս դրամը յաղթութեան մը կոթող է, եւ  
 ծնրադրող այրն ըլլալու է իւր հակառակորդը,  
 թերեւս Միհրդատ (Ե) զոր գերի բռնեց Գոտորղ,  
 բայց կեանքը շնորհեց՝ եւ միայն ականջատ ընել  
 տուաւ: Միւս դրամներուն առաջակողման պատկերը  
 նոյն է, առանց ճակատի նշանին, բայց ականջի  
 ղով եւ մանեկով եւ լանջապանակով: Յետսա-  
 ողմն է՝ Արշակ Ի գահի աղեղենաւոր, աղեղան  
 ռակ մենագիր. արձանագրութեան մէջ «Յաղթող»  
 կամ «Նիկեփոր» չկայ, ասոր տեղ կ'աւելցուի  
 «Հելլենասէր», ուստի այսպէս՝ «արքայի արքայից  
 Արշակայ Բարեգործի Արդարոյ Նշանաւորի Հելլե-  
 նասիրի»: Մէկ մասին տառերը բոլորովին բար-  
 բարոսական ոճով են (այսպէս Թ. 20—26,  
 գլխաւորաբար ΛΥΛΥ եւ նման բաներ կրկնուած,  
 իբր թէ արձանագրութիւնն է). Թ. 26ի յետսա-  
 կողման պատկերն ալ քանի մը գծերով նշանա-  
 կուած եւ հազիւ ճանաչելի: Ասոնց կշիռը՝ 3.31էն  
 մինչեւ 3.92: — Պղինձներուն (Թ. 27—76)  
 առաջակողմը նոյն է, ոմանց վրայ փոքրիկ տար-  
 բերութեամբ, այսպէս՝ գլխուն քով մահիկ եւ  
 աստղ (Թ. 27:) Պէսպէս են յետսակողման հան-  
 գամանքն. այսպէս՝ Գոտորղ արքունի տարազով եւ  
 գլուխը ողաւարտ՝ ձիու վրայ (Թ. 28—29.) կամ  
 Գոտորղ արքունի տարազով գահի վրայ՝ ձեռքն  
 աղեղ (Թ. 30—1) կամ արմաւենի (Թ. 32—3.)  
 բռնած. կին մը գլխու ցած եւ լայն ծածկութով,

գօտիէն վար բազմախորշան հանդերձով, ձեռքը՝  
արմաւենի (Թ. 34.) Գոտորզ սաղաւարտով եւ  
ապարօշով սիւնաձեւ բազնի առջեւ զոհ կը մա-  
տուցանէ (Թ. 35—6.) այր մը՝ ձեռքն արմաւենի  
(Թ. 37—8.) Բախտ արմաւենի բռնած (Թ.  
39—40.) Գոտորզ ժայռաձեւ բանի մը վրայ  
նստած (Թ. 41—2.) Պալլաս սաղաւարտաւոր՝  
տիգաւ եւ ասպարաւ (Թ. 43—4.) Յաղթու-  
թիւն աջով արմաւենի բռնած (Թ. 45, եւն.)  
Ապողոն (°) դափնեպսակ (Թ. 46—7.) Բախտ  
բրգաւոր թագով (Թ. 48—9.) կիսանձնեայ Գո-  
տորզայ՝ սաղաւարտով, ապարօշով, մանեկով եւ  
լանջապանակով (Թ. 50—1.) կիսանձնեայ Բ-  
հ-հ-այ՝ թագով, ապարօշով եւ մանեկով  
(Թ. 52—3.) ձիու գլուխ (Թ. 54—5.) ձուկ  
(Թ. 56—7.) արծիւ թռուցեալ՝ ոտքով պսակ  
բռնած (Թ. 58—9.) արծիւ կտցով պսակ բռնած  
(Թ. 60—1.) կործի գլուխ (Թ. 62—3.) նուռ  
(Թ. 64—5.) պսակ (Թ. 66.) ամաղթեղջիւր  
(Թ. 67—8.) աջ ձեռք քարոզական մը բռնած  
(Թ. 69—70.) գեղեցիկ կուժ՝ երկու ունկերով  
(Թ. 71.) սափոր (Թ. 72—3.) աստղ ու մահիկ  
(74—6.) Ասոնց կշիռն ի հարկէ շատ պէսպէս՝  
0.80է մինչեւ 2.56: Բրիտ. Թանգարան կան  
պղինձներ՝ յետասակողման նման կամ ուրիշ պատ-  
կերներով, այսինքն՝ ի մասնաւորի՝ Արտեմիս,  
մահիկ եւ աստղ, եւ ձի: Ասոնց մաս մը շատ ցան-  
ցառ է: — Յատկապէս Թ. 76 պղինձը առաջակողմն  
արքային պատկերն այնպէս ունի՝ որ Գոտորզ Դէպ  
է — ջ կը նայի: Արդ մտադիր կ'ընէ Հեղինակն որ  
պղնձադրամին այս տիպը՝ Գոտորզի գլխուն դէպ  
ի աջ դարձած ըլլալը՝ նշան է թէ տակաւին  
«սատրապ» էր այն ժամանակ եւ ոչ արքայից  
արքայ: Արդէն Բիսուտունի մէկ յունական ար-  
ձանագրութեան մէջ Գոտորզ ինք զինք կ'անուանէ  
«սատրապ սատրապաց, որդի Գեւայ»: Անոր հա-



ճար կը կարծէ Հեղինակը թէ Գոտորզ այս վերջին գրամբը կտրել տուած է իբրեւ սատրապ Արտաւանայ Գ. կամ Վարդանայ Ա: (Տես էջ 117—126:)

Այս մասին Հեղինակը զընթերցողը կը խաւրէ Գուտզմ. անդ էջ 123 եւ Շնայդերվիրթ «Պարթեւք» էջ 121: — Խնդրոյս հետ կապ ունի նաեւ այն Թ. 13 գրամբը, զոր յիշեցինք, եւ որուն արձանագրութիւնն՝ ինչպէս Հեղինակիս օրինակին մէջ որոշ գրուած էր՝ եզական ընթերցուածքս ունէր՝ *Αρχακου (υ)οc κεκα λου μενος Αρχταβανου Γωτεροζης*, ուստի՝ ինչպէս բնական էր թարգմանել «Արշակայ որդի ինչեցեւ Արտաւանայ Գոտորզ»՝ Գուտզմիդ այլազգ կ'ուզէ մեկնել եւ *κεκαλούμενος* «պարզ ընթերցուածոյ սխալ» կը հաշուէ, եւ կը գրէ այսպէս. Գոտորզ արդէն Արտաւանայ օրով արքային երկրորդ տեղը կը բռնէր եւ Բիսուտունի յունական մէկ արձանագրութեան մէջ կը կոչէ ինք զինքը «սատրապ սատրապաց» եւ *Γεόποθρος*, զոր իրաւամբ մեկնած է Հռաւիւսըն «որդի *Γέωθι.*» եւ գրամբ մը վրայ ալ, կ'ըսէ (— այսինքն յիշեալ Թ. 13/ տիպը —) հաւանօրէն «*Göterzès*, արքայից արքայ Արտաւանայ, որդի *Geθ. Kalymenos Արտաւանայ:*» Գուտզմիդ ուրեմն գրամբն վրայ կը կարգայ նախ «Արտաւանայ», այսինքն *Ariana* աշխարհին՝ արեւելեան մասին երանի. բայց մեր Թ. 13 գրամբն վրայ չկայ, այլ որոշ «Աշխարհ» է հոն: Մնացեալը կը մեկնէ՝ *(υ)οc κε(որդի Կէ) καλούμενος* («կալու մենոս»՝ իբրեւ երկրորդական՝ տեղապահ) Արտաւանայ» ըսելով որ ասի յորջորջանք մ'ըլլալու է, որուն մէկ սխալագիրն է *Ταλύμενος* որ կը տրուի Միզակէս սատրապին՝ զոր Արոգէս Ա Արասոսի դէմ խաւրեց, եւ նշանակելու է, կ'ըսէ, իբր *Alter ego* մը, եւ թերեւս Արտաւանայ գահակիցն էր վերին սատրապութեանց վարչութեան մէջ, եւ թէ՛ թէեւ Յովսէպոս եւ անուղղակի Տակիրոս զԳոտորզ որդի կ'ըսեն Արտաւանայ, անոր որդեգիրը միայն ըլլալու է: (Գուտզմ. 123:) Կարծենք այս մեկնութիւնը՝ ներկայ Յուցակիս ընթերցմանէն ետքը՝ շատ ընդունելի ըլլալու չէ: Միւս կողմանէ «որդի կոչեցեալ Արտաւանայ» նոյնպէս որոշ կը բացատրէ Գոտորզայ որդեգիր մ'ըլլալը, ինչպէս Թ. 76 պղինձին տիպը՝ անոր տակաւին ըկ սատրապ ըլլալը: Ըստ Գուտզմ. (անդ) ճիշդ Գոտորզի

լոկ որդեգիրն ըլլալն էր անշուշտ պատճառն որ Արտաւա-  
նայ Գ անմիջական յաջորդն եղաւ՝ ոչ թէ Գոփորչ, այլ  
Վարդան Ա՝ ինչպէս կ'երեւայ Արտաւանայ որդին եւ ինչ-  
պէս կը վկայէ, կ'ըսէ, իրեն մէկ դրամը 40 (Յ. Բ.) տարւոյ  
Սեպտեմբերէն (Փարդնէր, էջ 48:) Բայց այս ճիշդ Պրո-  
կէշ-Ոստէնի նկարագրած այն շորեքդրամեանն է 351 Սե-  
լեւկ. թուականաւ, որ իրականին ըստ մեր Հեղինակին  
ըլլալու է աւելի 354 Սելեւկ. (Հմմտ. Δ եւ Α,) ինչպէս  
յիշեցինք վերը: Ուստի Վարդանայ արդէն 40ին գահ էլեւու  
այս վկայն շատ խնդրական է: Վարդանայ շորեքդրամեանք կը  
սկսին ապահով թուով Սելեւկ. 353 տարիէն (= 42 Յ.  
Բ.) եւ կը տեւեն մինչեւ Սելեւկ. 356 (= 45 Յ. Բ.): Գո-  
տորզ՝ որ գահ էլած կ'ըսուի արդէն 40ին, ամէնէն ուշ  
41ին (այսպէս Գուտշ. անդ՝ 124.) իբր «արքայից արքայ»  
դրամ հատանել կը սկսի միայն Վարդանայ մահուանէ  
ետքը. իւր շորեքդրամեանք կը սկսին շարունակարար Սե-  
լեւկ. 357 (= 46 Ն. Բ.) տարիէն. ի հարկէ՝ ինչպէս յիշե-  
ցինք՝ Բրիտ. թանգարանը կան նաեւ շորեքդրամեանք 355  
եւ 356 տարիներէ (44—5 Յ. Բ.), մինչդեռ Պրոկէշ-Ոս-  
տէնի 342 (= 41) թուականը հաւանօրէն սխալ է փխ.  
359ին (տես վերը՝ Չորեքդրամեանքն): Պատմական հանգա-  
մանքները կը հաստատեն դրամահատութեան այս վիճակը:  
Ըստ Գուտշմիդի Գոփորչի (որ իբր թէ արդէն 41ին (40ին)  
գահ էլած էր.) անգթութեան պատճառաւ — անմիջապէս,  
կ'ըսուի, սպաննեց իւր Արտաւան եղբայրն՝ կնոջ եւ զաւա-  
կաց հետ — տգոհութիւնն աճեցաւ, եւ Պարթեւք զՎար-  
դան կանչեցին Գոտորզի դէմ: Վարդան ըստ աւանդու-  
թեան անլուր արագութեամբ հասաւ, յանկարծակի բե-  
րաւ զԳոտորզ եւ բռնադատեց փախչիլ: Այս կէտէն (42ին  
Յուլիս) կը սկսին իւր դրամները: Ի հարկէ Գոտորզ Գա-  
հաց եւ Վրկանաց օգնութեամբ կրկին գահն առնելու  
կ'աշխատէր: Այս ներքին խռովութիւնը յօգուտ գործա-  
ծեց Վղաւդիոս կայսր՝ զՀայս Պարթեւներէն թափելու, եւ  
Փարսմանայ եղբայրը Միհրդատ կրկին արձակուելով թա-  
գաւոր դրուեցաւ, եւ իրօք գրաւեցին Հռովմայեցիք եւ  
Վիրք աշխարհը՝ Պարթեւաց Գեմոնաքս մարզպանին յաղ-  
թուելէն ետքը: Նաեւ Առտիւս արքայ Փոքր Հայոց փոր-  
ձեց դիմադրել Վրաց. բայց Վղաւդեայ հրամանը զինքն  
արգելեց, եւ այսպէս տիրեց Միհրդատ Վիր (42ին կ'ե-  
րեւայ): Վարդան մինչեւ Բակուրիացւոց կողմերը Գոտորզի

դէմ գացած էր. ճակատը շտրուած՝ Վարդանայ դէմ դաւ  
մը նիւթուած էր, զոր Գոտորզ յայտնեց, եւ այսպէս եր-  
կուքին մէջ հաշտութիւն մը գոյացաւ. Վարդան մնաց  
«արքայից արքայ» եւ Գոտորզ կրկին Վրկանաց աշխարհը  
քաշուեցաւ: Քայց հազիւ Վարդան դարձած էր, եւ Սե-  
լեւկիա՝ որ տարիներէ վեր ապստամբած էր, եւ շատ նշա-  
նաւոր քաղաք մըն էր (Պղինիոսի օրով 600.000 բնակիչ  
ունէր) առնուած (43ին) եւ կը պատրաստուէր Հայոց մա-  
սին ծրագիրներ պատրաստել — զոր արդէն անգամ մը  
փորձել սկսած էր, բայց արգիլուած Վիքիոս Մարտոսի  
Ասորւոց հռոմայեցի կուսակալին (42—44) սպառնալեօք  
Պարթեւաց վրայ յարձակելու, եւ յիշեալ ներքին դործոց  
պատճառաւ, — երբ Գոտորզ կրկին թիկնածու ելաւ (45ին):  
Վարդան դիմաց գնաց եւ Երինդէս (Պտղոմ. Զ, 2, 2 քա-  
րինդաս, այժմ՝ Կերինդ՝ որ Աստարապատի քով կը թա-  
փուի) գետին քով ճակատ տալով նաեւ այս անգամ յաղ-  
թող ելաւ, եւ Գոտարզ ստիպուեցաւ անապատները փախ-  
չիլ. մինչ Վարդան՝ յաղթահարելով վաշկատուն ցեղերը  
մինչեւ Սինդէս գետը (ըստ Գուլտիմ. այժմու Տեջենդ) յա-  
ռաջացաւ, ուր յիշատակարան մը կանգնեց: Սակայն նաեւ  
այս նշանաւոր արքային դէմ դաւադրութիւն չպակսեցաւ,  
եւ այն՝ իւր խստութեանց պատճառաւ, եւ սպաննուեցաւ  
ալ որոի ժամանակ տակաւին առոյգ տիօք. (45ի Օգոստոսէ  
է իւր վերջին գրամը): Պարթեւաց գահն այնուհետեւ  
Գոտորզայ մնաց (46ին), եւ սակայն ոչ առանց ալ սովոր-  
ական դարձած ներքին երկպառակութեանց, վասն զի ինքն  
ալ լաւագոյն չէր եղած: Արդէն 47ին հակառակ կողմնա-  
կցութիւն մը բանակցութեան մտաւ Հռոմայ հետ, եւ  
խնդրեց Կղաւղիոսէ՝ Ոնոնի որդին զՄիհրդատ (Meher-  
dates) իրրեւ արքայ: Եւ 49ին Միհրդատ Ե՝ (ուստի Ար-  
շակ Ի, 2) ընկերակցութեամբ Գայիոս Կասսիոսի Ասոր-  
ւոց կուսակալի լեգէոններուն հասաւ Չեւզմա, ուր իրեն  
քով հասան պարթեւ կողմնակիցք եւ Ուռհայաստանի  
Արգար Ե արքայն: Վերջնոյս խորհրդով — որ ծածուկ  
Գոտորզի հետ էր — ճամբան Հայոց լեռներէն եղաւ ձմեռը,  
եւ շատ նեղութեամբ. եւ ուշ հասան Միջագետք ուր միա-  
ցաւ Կարէն՝ այս շարժման բուն հոգին: Յետոյ Տիգրիս  
անցնելուն միացաւ Ըզատ (Յազդ) Ադիաբենեայ արքայն՝  
նոյնպէս բուն Գոտորզայ կողմնակից: Թէեւ նինուէ եւ  
Արբելա առնուեցան, սակայն թէ Արգար եւ թէ Ըզատ

Քիչ մ'ետքը թողուցին զինքն ու հեռացան, նոյնպէս ուրիշները: Գոտորզ քաջուած էր Սանբուլուս լեռան ոտքը կորմաս գետէն անդին, եւ իրեն յարմար դրից մէջ այնուհետեւ որոշիչ ճակատամարտին մէջ կարէն եւ Միհրդատ լիակատար պարտութիւն կրեցին (50 Ն. Ք.). Միհրդատ ալ Գոտորզայ ձեռք ինկաւ, որ — ըստ տեղական սովորութեան այս անգամ անլուր մեղմութեամբ — կեանքը շնորհեց, եւ միայն ականջատ ընել տուաւ: Քիչ մ'ետքը մեռաւ նաեւ Գոտորզ, յամենայն դէպս 51 Յ. Ք. տարւոյ կէսէրը, որ թուականաւ դրամ կայ: Իւր յաջորդէն Ո՛՛ն Բ (ուստի Արշակ ԻԱ. իբր 51ին), որ Ատրպատականի Մարաց թագաւորն էր, բան մը չենք գիտեր: (Տես Գուտշմ. 123-8:)

(Արշակ Ի, 2.) Միհրդատ է, 49—50 Յ. Ք: Դրամ տակաւին չէ գտնուած. (եթէ իրեն չեն Աարդանայ Բ տրուած Թ. 5—9 դրամները. տես վարն իւր տեղը:)

(Արշակ ԻԱ.) Ո՛՛ն Բ, 51 Յ. Ք: Դրամ չէ գտնուած:

Միհրդատայ է մասին՝ տես նախընթացը: Ո՛ննի Բ (Արշակ ԻԱ) դրամ չկայ, եւ ըստ ամենայն հաւանականութեան դժուարաւ ալ գտնուի: Ի հարկէ Գուտշմիդասոր ալ այլեւայլ դրամներ կ'ընծայէ, եւ ասով կը յարուցանէ դժուարութիւններ, զորոնք լուծել դժուարին կ'ըլլայ: Աաղարշայ Ա չորեքդրամեանները (իրեն ծանօթ Գարդնէր՝ էջ 51) կը ժխտէ Աաղարշայ տալ, այլ կ'ընծայէ Ո՛ննի Բ: Այն ատեն դրամ կ'ըլլայ 51 (Յ. Ք.) Սեպտեմբերէն մինչեւ 54 (Յ. Ք.) Հոկտեմբեր. եւ կամ, կ'ըսէ, եթէ ընդունինք որ այն ատեն տարին կը սկսէր Հիւպերբերետէոս ամսէն՝ վերջինը դրամը կ'ըլլայ Մարտ 54, որով դժուարութիւնը չի բարձուիր: Քանի որ Տակիտեայ անժխտելի վկայութեամբ Աաղարշ Ա գահ ելած էր, կ'ըսէ, արդէն 52ին կամ ամէնէն ուշ 53ին, կը մնայ դժուարութիւնը մեկնել, կը յաւելու, միայն անով որ Ո՛նն զԱաղարշ արդէն իւր կենդանութեան գահակից ըրած էր. (Գուտշմ. 128:)

Սակայն այս դժուարութիւնն աւելորդ է: Հեղինակիս Յուցակէն այժմ որոշ կը տեսնուի որ տարին Դիոս ամսով կը սկսէր Սեւեւկ. 362 թուին: Աասն զի այս 362 տարիէն թէ Գոտորզի չորեքդրամեան կայ Ապեղղէոս

ամսէն (Բ ամիս Մակեդոնացւոց. տես Գոտորղայ Թ. 11) եւ թէ Վաղարշայ Ա՝ Հիւպերբերեաէոս ամսէն (ԺԲ ամիս) որմէ են աներկբայ այն շորեքդրամեանները: Եւ որովհետեւ Գոտորղի Թ. 12 շորեքդրամեանն է նոյն 362 տարւոյ Գեօֆիլոս ամսէն (Ը ամիս) եւ միւս կողմանէ Longpérier Վաղարշայ Ա շորեքդրամեան մը գիտէ նոյն 362 տարւոյ Գորդիէֆիլոս ամսէն (ԺԱ ամիս), ուրեմն Ոնոնի Բ կը մնայ միայն իբր երեք ամիս յիշեալ տարւոյն: Տես Վաղարշայ գրամները: Յուցակիս էջ 127:

(Արշակ ԻԲ.) Վաղարշ Ա. 51 մինչեւ ամէնէն ուշ 61 Յ. Ք. 15 կտոր, որոնց վեցը շորեքդրամեան, չորսը՝ դրամ եւ հինգը՝ պղինձ: Չորեքդրամեան կտորներու նկարագիրն է (Թ. 1)՝ Վաղարշայ Ա արքային պատկերը, որ լիամօրուս է, երկար գանգրահեր մազով, գլուխն՝ ապարոշ, մանեակը շորեքկուսի ճարմանդով, կուրծքը լանջապանակ: Յետսակողմը՝ Վաղարշ Ա արքունի տարազով գահի վրայ, առջեւը կեցած Բախտ պատմուճանաւ եւ վերնազգեստով, գլուխը բրգաւոր թագով, որ իրեն ապարոշ կու տայ աջով, իսկ ձախով իշխանութեան երկար ցուպ մը բռնած: Արձանագիրն է (βασιλεωσ) (βασιλεων) (Αρ)αχου ευεργετου δικαιου επιφανουσ (φιλε)λληνουσ (“արքայի արքայից Արշակայ Բարեգործի Արդարոյ Նշանաւորի Հելլենասիրի:”) Տարեթիւր ΒΞΤ = 362 Սելեւկ., ամիսը՝ ΥΠΕΡΒΕ (Հիւպերբերեաէոս.) կշիռը՝ 13.65: Մտադիր կ'ընէ Հեղինակն որ եթէ այս 362 Սելեւկ. թուականն եւ Հիւպերբ. ամիսը համեմատուի Գոտորղի Թ. 11 շորեքդրամեանին թուականին հետ (362, ամիս՝ Ապեղղէոս), կը տեսնուի որ տարւոյ առաջին ամիսը կը համարուէր Գիոս ամիսը: Longpérier, կ'ըսէ, կը յիշէ դարձեալ այս արքայիս ուրիշ մէկ շորեքդրամեանն 362 թուականին Գորպիէոս ամսոյն, եւ որովհետեւ Գոտորղի ուրիշ մէկ շորեքդրամեանը նոյն 362 թուին Գէսիոս ամսէն է, կը հետեւցընէր որ Գոտորղի անմիջական յաջորդը՝ Ոնոն Բ՝ շատ շատ երեք ամիս միայն գահուն վրայ բազմած է:

— Արքայիս միւս չորեքդրամեաններու թուականքն են՝ թ. 2 նոյն  $BET = 362$ , ամիս Հիւպերբ. թերի, կշիռ 9.95. — թ. 3՝  $\Gamma ET = 363$ , ամիսն ինկած, կշիռ 13.92. — թ. 4՝  $\Delta ET = 364$ , ամիս ինկած, կշիռ 13.09. — թ. 5—6՝  $E ET = 365$ , ամիսն ինկած, կշիռ 12.41 եւ 14.97:՝ — Գրամներուն (թ. 7—9, 14) վրայ առաջակողմը՝ Վաղարշայ Ա պատկերը կը ցուցնէ ճակատին վրայ վերը յիշուած գնդաձեւ նշանակը. արքայն ունայէս լիամօրուս է, մազն երկար գանգրահեր. գլուխն ապարօշ, ականջն՝ օղ, նոյն՝ մանեակ եւ լանջապանակ: Յետսակողմը՝ Արշակ ի գահի աղեղնաւոր. արձանագրութիւնը նոյն՝ բայց շատ սխալաձեւ եւ խառնակ տառերով. աղեղան տակ մենագրերը՝ պէսպէս. կշիռը՝ 3.63, եւ 3.10 եւ 3.57: թ. 14 գրամին առաջակողմը՝ արքային ճակատի նշանակը չկայ, նոյն-

1 Վաղարշայ Ա գրամներն ըստ այսմ 362—365 Սելեւկ. թուականաւ են, ըսել է վերջին որոշ թուականաւն 54ին Յ. Ք: Այնուհետեւ կու գան Արշակայ ԻԱ. 2 (Վարդանայ) հակարքայի գրամները 55—58 Յ. Ք. թուականաւ (տես վարը:) Վաղարշայ Բ գրամները կը սկսին միայն որոշ 373ին Սելեւկ. (= 61/2 Յ. Ք., իսկ 372 = 60/1 Յ. Ք. թուականաւը խնդրական է, տես վարը:) Յամենայն դէպս Վաղարշ Ա իշխած է շատ շատ մինչեւ 61 Յ. Ք. իսկ ճիշդ այս թուականէն վերջն եղած գրամներն ուրիշ Վաղարշի մ'են՝ այսինքն Վաղարշայ Բ (61 մինչեւ իբր 77:) Գրամոց ցուցուցած այս նշանաւոր պարագային արժէքը կը տեսնուի անկէ, որ նաեւ տակաւին Գուաշմիդ (հմմտ. էջ 130 եւն) այս ամբողջ ժամանակի համար մէկ Վաղարշ գիտէ, ուստի Վաղարշ Ա է՝ որ կ'իշխէ 51էն (կամ ըստ Գուաշ. 54էն, անկէ յառաջ գահակից Ոնոնի Բ, որ ճիշդ չէ, ինչպէս տեսանք,) մինչեւ իբր 77, որմէ ետքը կը գնէ զՎաղարշ Բ (հմմտ. Գուաշ. 137 եւն) = մեր գրամոց եւ Յուցակիս Վաղարշ Գ. եւ ըստ հետեւորդի գրամոցս կամ Յուցակիս Վաղարշ Գ—Զ են Գուաշմիդի քով Վաղարշ Գ—Ե (Գուաշ. 147 եւն, 151 եւն, եւ 154:) Տես նաեւ յաջորդները:

պէս մանեակ եւ լանջապանակ կը պակտի, իսկ արքայի գլխուն առջեւ մահիկ եւ աստղ. յետսակողման արձանագիրն ալ անրնթեռնլի. կշիւը՝ 3.46, շատ ցանցառ: — Պղինձներուն (թ. 10—13, 15) առաջակողմը նոյն. իսկ յետսակողման պատկերներն են՝ Բախտ բրդաւոր թագով, պատմութեանաւ եւ վերնազգեստով, ձախով կ'երեւայ ոստ մը բռնած, իր ետեւը՝ սիւն մը (սահմանաքար.) (թ. 10—11.) ձիու գլուխ (թ. 12.) Վաղարշ արքային գլուխը խորաքանդակ (թ. 13. զոր կը մեկնէ այնու որ կոխելու ատեն կաղապարն արդէն կոխուած դրամի մ'առաջակողման հանդիպած է.) եւ Արշակ ի գահի աղեղնաւոր (թ. 15.) վերջինս կոպիտ եւ անարուեստ: Պղինձներու կշիւը՝ 0.97էն մինչեւ 3.72: (Տես էջ 127—9:)

(Արշ-ի ԻԲ, 2.) Վարդան Բ (?), դրամները 55—58 Յ. ք. տարիներէն: Ինը կտոր դրամ, չորսը՝ չորեքդրամեան, երեք՝ դրամ, երկու՝ պղինձ: Արքայիս բուն անունը, կ'ըսէ Հեղինակը, տակաւին վերջնականապէս վճռուած չէ: Տակիտեայ Տար. ԺԳ, 7 խօսքը *aemulus Volagasi filius Vardanis* կ'ուղղեն գիտունք *Vardanes*, բայց ըստ Գուտշմիրի առանց անհրաժեշտ հարկի: Բրիտ. Թանգարանի մէկ պղինձի վրայ կը կարդար Գարդնէր *BNANO* (— որ երկբայական է. —) եւ զասիկայ ընծայելով Վաղարշայ Ա հակառակ ելլող հակարքային՝ կ'ուղղէր եւ կը կարդար *BAPΔANO*(Y) կամ «Վարդանայ.» մինչ Գուտշմիրի կ'ուզէ ուղղել *B(ασιλεωσ) NANO*(Y), որով նախ ըլլայ անունը: Իսկ նոյն Բրիտ. Թանգարանի վարիչներն Վ. Բոթայժ մ կ'երկբայի թէ այն դրամն Վաղարշայ հակառակորդին ըլլայ, եւ կը դնէ պարթեւական անորոշ դրամներու շարքին մէջ:՝ — Այս Չորեքդրամեաններու (թ. 1—4) նկարագիրն է (թ. 1.)՝

1 Այս հետաքրքրական դրամին պատկերը կրնայ տեսնուիլ՝ Գարդնէր, Տխտ. 2, 2 եւ Վ. Բոթ, Տխտ. ԼԷ, 1:

յառաջակողմն արքայի մը պատկերը, ճակատը գնդաձեւ նշանովն, ճորուքը կարճ, մազն երկայն գանգրահեր, գլուխն՝ ապարոջ, վիզը՝ մանեակ եւ կուրծքը՝ լանջապանակ: Յետսակողմը՝ նոյն արքայն արքունի տարազով բարձր թիկնագահի վրայ, առջեւը կեցած Բախտ պատմուճանաւոր եւ վերնազգեստով, գլուխը բրգաւոր թագով, իրեն ապարոջ կու տայ աջովն, ձախով բռնած իշխանութեան երկայն ցուպ մը: Արձանագիրն է՝ (βασιλεωσ) (βα)σιλε(ων) (Αρ)σαχου ευεργετ(ου) διχαιου επιφανουσ (φιλελληνοσ) («արքայի արքայից Արշակայ Բարեգործի Արդարոյ նշանաւորի շեղենասիրի:») Թուականը՝ ΖΞΤ = 367, ամիսն ΥΠΕΡΒ (Հիւպերբ.) կշիռն՝ 13.83: Միւս չորեքդրամեանց թուականքն են՝ Թ. 2 նոյն տարին եւ ամիսը, կշիռ 12.92: -- նոյն թուով բայց Լովիոս ամսոյն՝ ուրիշ մ'ալ Բրիտ. Թանգարանը (Վ. Բոթ, Տիտ. ԻԸ, 13.) — Թ. 3՝ ΗΞΤ = 368, ամիսն հնկած, կշիռ 14.40, եւ Թ. 4՝ ΘΞΤ = 369, ամիս՝ Պերիտիոս, կշիռ 9.59: — Դրամներուն (Թ. 5—7) յառաջակողման պատկերն այն տարբերութիւնն ունի որ արքայն ընչացք միայն կը կրէ, ճակատը նոյն գնդաձեւ նշանը, գլուխը՝ սաղաւարտ եւ ապարոջ, վիզը մանեակ եւ կուրծքը լանջապանակ. գլխուն երկու կողմն ալ մէկ մէկ աստղ: Յետսակողմը՝ Արշակ ի գահի աղեղնաւոր, աղեղան տակ՝ մենագիր. արձանագիրը՝ նոյն է. կշիռն՝ 3.79, եւ 3.60, եւ 3.65: — Պղինձներուն (Թ. 8—9) յառաջակողման պատկերն ալ դրամներուն համեմատ է, այսինքն՝ արքայն ընչացքով է եւն, բայց չկայ ճակատի նշանը. եւ գլխաւորաբար պատկերը լիբրես է, ոչ կողմնակի կիսադէմ. յետսակողմը՝ մերկ այր մը կանգուն՝ թեւը տարածած եւ թեւին վրայ արծիւ. կշիռն՝ 1.33 եւ 1.54: Մտադիր կ'ընէ շեղինակն որ այս ΖΞΤ մինչեւ ΘΞΤ (= 367 - 9 սելեւկ.) թուականաւ չո-



ընթացող բաներուն արքայի պատկերը բացորոշ կերպով տարբեր է Վաղարշայ Ա BΞT մինչեւ EΞT (= 362—5 Սեւեւկ.) թուականաւ չորենթացող բաներուն վրայ գտնուած պատկերէն: Եւ ճիշդ այս ժամանակին համար կը պատմէ Տակիտոս Վարդանայ որդւոյն ապստամբիլն Վաղարշայ Ա դէմ: Ուստի հիմ չկայ երկբայելու թէ մի գուցէ այս 367—9 Սեւեւկ. թուականաւ դրամները յիշեալ հակառքային չըլլան: Միւս կողմանէ, կ'ըսէ, այն թէ Տուցակիս մէջ հոս դրուած Թ. 5—9 դրամներն աւ պղինձներն ալ ճիշդ իրմէն կոխուած ըլլան՝ բոլորովին ապահով չէ. վասն զի այս Թ. 5—9 դրամներուն եւ պղինձներուն վրայ երեւցած արքային պատկերը ճիշդ նոյն չէ այն պատկերին հետ, զոր կը տեսնենք 367—9 տարիները կոխուած չորենթացող բաներուն վրայ: Մանաւանդ թէ, կ'ըսէ, այս դրամներս եւ պղինձներս հատանել տուող արքայն կրնայ աւելի ըլլալ՝ կամ Տրդատ Գ՝ հակառքայ Արտաւանայ դէմ, կամ Միհրդատ Ե՝ հակառքայ Գոտորղայ դէմ: Եւ ճիշդ այս՝ Հռոմ իբրեւ պատանդ պահուած՝ իշխանազունները կարծելու այն պատճառն ալ կայ որ յիշեալ դրամներուն եւ պղինձներուն արքայն նկարուած է անմօրուս կամ մօրուքն ածիլուած, մինչդեռ բուն Պարթեւաց քով կրթուած իշխանազունք եւ արքայք միշտ մօրուքաւոր են: (Տես էջ 130—132:)

Գուաշմիդ այսպէս կը ներկայացընէ Վաղարշայ Ա եւ այս հակառքայի օրերու իրերը: Ոնոնի Բ յաջորդն անոր երիցագոյն որդին Վաղարշ Ա (թէեւ նուազագոյն տոհմի մօրէ, վասն զի մայրն Միլետացի հարձ մըն էր, ինչպէս կը հետեւցընէ Գուաշմ. սա տեղերու համեմատութենէն՝ Տակիտ. Տար. ԺԲ, 44 եւ Պղուտ. Արաս. 32. —) զարմանալի կերպով այս անգամ իւր եղբարց հաւանութեամբ գահ ելաւ. եւ որպէս զի այս Պարթեւաց այն ժամանակներուն համար գրեթէ անլուր եղբայրական համաձայնութիւնը չխանգարի, որոշեց եղբարքն ալ Կոհացընել բուն Պարթեւաստանէն դուրս աշխարհքներ ձեռք բերելով անոնց

Համար. Բակուր առաւ Ատրպատականի Մարաց արքայութիւնը, եւ Տրդատայ որոշուեցաւ Հայոց աշխարհն, որոնք երկրորդ եւ երրորդ Արշակունի գահեր պիտի ըլլային բուն արքայից արքայէն ետքը (Տակ. Տար. ԺԵ, 2) Ըստ այսմ, կ'ըսէ, շատ ուղիղ է որ յետոյ Հայ պատմիչք (Ագաթ. Սերէոս եւն) չորս արշակունի ճիւղ եւ գահ կ'ըսեն. վասն զի կ'երեւայ թէ երկրորդը կամ Մարականն այն ժամանակները միացած էր բուն տան հետ: Զորրորդ արշակունի գահ մը կար արդէն Երանի արեւելակողմն եւ Ինգոսի վրայ. եւ հինգերորդ մը Մասթթաց երկիրը՝ Վաւկասի լեռանց հիւսիսակողմն, որոնց Արշակունի մ'արքայ էր 19ին Յ. Ք. (Տակ. Բ, 68:) Տրդատայ գահակալութիւնն ալ դիւրին կ'երեւար, քանի որ Հայք այն ժամանակ մեծ խռովութեան մէջ էին՝ Արական տան ներքին թիկնածական վէճերուն պատճառաւ: Միհրդատ Ա իր որ հռոմէական օգնութեամբ Վղաւդիոսի կայսեր ձեռքով Հայոց գահն առած էր՝ ինչպէս ըսինք (42ին)՝ սպանուած էր իւր եղբորորդի Հռադամիզդէ՝ Քառնոյ Վեղիոս Պողոտն հռոմայեցի հրամատարը կաշառելով, եւ գրաւած էր թագը: Պարթեւաց բանակաւ մտաւ Տրդատ ի Հայս, եւ Հռադամիզդ ստիպուեցաւ փախչիլ. առնուեցան Արտաշատ եւ Տիգրանակերտ, որով Տրդատ տէր եղաւ աշխարհին (իր 52 Յ. Ք:) Սակայն, կ'ըսուի, բանակին մէջ ծագած համաճարակ մը ստիպեց Պարթեւները (53ին գարնան) ելլել աշխարհէն, եւ Հռադամիզդ կրկին մտաւ բռնեց իւր տեղն, ի հարկէ առանց երկար տեւողութեան: Այս անգամ Հայք էին որ ապստամբած զինքն դուրս արտաքսեցին (54ին. — այս առթիւ է Զենոբիայ թագուհւոյ՝ Հռադամիզդի կնոջ՝ եղերական արկածն, որ իւր աղաչելովն Հռադամիզդէ զարնուած եւ Երասխ նետուած՝ շինականներէ աղատուեցաւ եւ Տրդատայ բերուեցաւ, եւ որ գեղեցիկ բանագործական գրութեան մ'ալ նիւթ տուած է՝ Մետաստասիոյի «Զենոբիա» —) Տրդատ ու Պարթեւք կրկին գրաւեցին երկիրը: Անյարմար չէր կարծելն որ այս Հռադամիզդն ըլլայ «Հայ անուամբ Եր—անդ» զոր կը պատմէ Խորենացի, մինչդեռ Պարթեւ Տրդատս ըլլայ Հայոց վիպասանաց եւ Խորենացւոյ պատմած Արտաշէ—Բ (Գաթըրձեան, Տիեզ. Պամ., Բ, 594. Գարագաշ, Պամ. ՀԵԳ, Բ, 205 եւն:) Կը մնար կարգադրել գործը Հռոմայեցւոց հետ՝ երբ Վաղարշայ Ա դէմ ելաւ ճիշդ այն հակարքայն (Արշակ ԻԲ, 2) որուն մասին խնդիր կայ: Սովոր-

աբար կ'ըսուի նոյն իսկ Վաղարշայ Ա որդին էր՝ Վարդան (Բ) անուն, իսկ Գուաշ. կ'ըսէ ընդհակառակն՝ Վարդանայ որդին Նանէն անուն: Այս շնորհանութեան պատճառն արդէն վերը բացատրուեցաւ: Տակիտ. Տարեգ. ԺԳ, 7 կը կարգան նոր քննիչք «Հակառակորդ Վաղարշայ որդի Վարդան» (Vardanes ուղղելով.) մինչ հին ընթերցուածն է «Հակառակորդ Վաղարշայ որդի Վարդանայ» (Vardanis.) (Տակիտեայ բովանդակ այս ժամանակի եւ յաջորդաց վերաբերեալ մասը հայ թարգմանուած՝ տես Գարագաշ, Պամ. Հյց, Բ 208—233. Հիւրմիւզեանի թարգմանութիւնն ալ ըստ ուղղեալ ընթերցման է հոս՝ «Ի դէպ ժամանակի ոսոխ եւս Վոլոգեսի յարեալ յայնժամ որդի նորա Վարդան.» տես «Կ. Տակիտեայ Տարեգիրք» եւն՝ Վենետ. 1872, էջ 345:) Այսպէս ալ կ'ընդունի Գուաշ., բաւական պատճառ չգտնելով յիշեալ սրբագրութեան: «Նանէն» անհաւանական անունը կը գտնէր Գուաշմիդ, ինչպէս ըսուեցաւ, պղնձի դրամի մը (Գարգնէր, էջ 51) այն շատ խնդրական βρανο ընթերցման մէջ, զոր կը մեկնէր Β(ασιλῆως) NANO(ν) «արքայի Նանեայ»: Մեկնութիւնը շատ բռնազբօսիկ է, եւ կարծենք բոլոր Արշակունի դրամոց վրայ ուրիշ տեղ մը չկայ լիկ Β. համառօտագրութիւն մը փխ. «արքայի»: Ինչեւիցէ, այս հակարքային յառնելով՝ Վաղարշայ գործունէութեան մեծ խափան մ'եղաւ: Այս հակարքային Գեկտ. 55 մինչեւ Յուլիս 58 ժամանակէն եղած դրամները, միւս կողմանէ Վաղարշայ Ա այս ժամանակներէն դրամ չգտնուիլը (գոնէ որոշ թուականաւ,) կը ցուցնէ թէ Վաղարշայ դիրքը բաւական դժուար էր: Յայտնի չէ թէ ճիշդ էրբ եւ ինչպէս վերջ առաւ այս գահակալութեան խնդիրը: Գուաշմ. անկէ որ ըստ իւր հաշուին այս Վաղարշ Ա է որ 61ի կը սկսի նորէն դրամ դրոշմել, կը հետեւցնէ թէ այն թուին միայն Վաղարշ կրցաւ գլուխ ելլել հակառակորդին դէմ. (Գուաշմ. 129—30:) Սակայն խնդիրն աւելի մթին է անով, որ ինչպէս վերն ալ ըսինք՝ այն 61 թուականաւ սկսող դրամներուն արքայն ս'լ այս Վաղարշ Ա չէ, այլ -- ընչ Վաղարշ Բ. (տես նախընթաց Ծան.:) Այս ժամանակի Պարթեւաց արտաքին քաղաքականութեան գլխաւոր կէտն Հայոց աշխարհն ըլլալով, Վաղարշայ Ա եւ Տրդատայ ձեռնարկն սկսաւ շաջողութիւն ունենալ՝ յիշեալ հակարքայի եւ գահակալութեան համար ծագած ներքին խռո-

վութեանց պատճառաւ : Աաղարչ մինչեւ անգամ ի սկզբան (55ին) պատանդ իսկ խաւրեց Հռոմայեցւոց, որոնց զօրավարն էր Գոմփտիոս Կորբուզոն՝ խաւրուած Ներոնէ, եւ Ներոն ըստ հաճոյս կարգադրած էր՝ Փոքր Հայոց թագաւորութիւնը տալով Արիստարբուղեայ որդւոյ Հերովդի, իսկ Ծոփացը՝ Սոյեմայ : Աաղարչ օգնական էր միշտ Տրդատայ, բայց ի սկզբան տակաւին թոյլ կերպով, հազիւ իբր 58ին Պարթեւք աւելի ոյժ մը տուին գործին, բայց նաեւ ասի աւելի անուղղակի, գործը միշտ Տրդատայ վրան միայն ըլլալով, որով երկու կողմն բաւական ժամանակ զբաղեցան՝ առանց իրարու դէմ պաշտօնական պատերազմ մղելու, թէեւ գործնականին գործին խառն էին : Պարթեւաց ներքին վիճակը տակաւին գոհացուցիչ չէր, եւ նոյն 58 թուին Արկանք՝ Պարթեւաց համար կարեւորագոյն աշխարհը՝ ապստամբած էր, եւ յաջորդ տարին ալ Հռոմ պատգամաւորութիւն խաւրեցին՝ դաշնադիր ըլլալու : Տրդատայ դիրքը դժուար էր : Մէկ կողմանէ Արաց Փարսման՝ որ իւր Հռադամիզդ որդին (արքայն Հայոց) սպաննած էր, կ'աւերէր աշխարհին մէկ մասը : Ինչպէս նաեւ Ինսեքացիք (Փաթրճ. Բ, 112 թերեւս Խաղտիք) ուրիշ կողմ մը, միւս կողմանէ Կորբուզոնի եւ Տրդատայ ծրագրեալ տեսութիւնը՝ իրերը կարգադրելու՝ չյաջողեցաւ, դարան լարելու երկիւղիւ (57ին) : Կորբուզոն առաւ այլեւայլ ամուրներ, յատկապէս անառիկն Աողանդ (Փաթրճեան Բ, 113 թերեւս Աանանդ գաւառին.) Արտաշատ անձնատուր եղաւ՝ բայց նաեւ ասով հրձիգ եղաւ եւ հիմնայատակ, որպէս զի բանակ պահել հոն պէտք չըլլայ (58ին.) անձնատուր եղաւ յետոյ նաեւ Տիգրանակերտ, միայն միջնաբերդն առնուեցաւ յարձակմամբ : Տրդատ փորձեց Մարաց կողմերէն կրկին մտնել, բայց անյաջող : Եւ Հռոմայեցիք տէր երկրին՝ Հայոց արքայ դրին զՏիգրան (Ե) ոչ արշակունի՝ Փամբաց աշխարհէն (թոռն Արքեղեայ, Հերովդեանց կողմնակի ճիւղէն որ Փամիրք անցած էր.) հռովմայեցի գունդ մ'ալ օգնական ձգելով, իսկ այլեւայլ գաւառներ ի վարձատրութիւն տրուեցան սահմանակցաց՝ Փարսմանայ, Պողեմոնի, Արիստարբուղեայ եւն : Ներոնի կողմանէ թագ առաւ այս Տիգրան 60ին Յ. Բ. որ թէեւ վատ ու գեանաբարչ էր (Տակիրտ.)՝ ընդունուեցաւ ի Հայոց, թէեւ ոչ առանց հակառակութեան : Ասկէ ետքն է, եւ այն ճիշդ 61ին՝ որ Պարթեւք սկսան իրենց Տրդատայ իրաւունքն

պաշտպանել աւելի աշխուժի՝ Վրկանաց հետ հաշտութիւն գոյացընելէն ետքը: Բայց անշուշտ արդէն Վաղարշ Բ էր այնուհետեւ գործին գլուխը. եւ ոչ այս Վաղարշ Ա Տիգրանայ եղբայրը. (Տես Գուտաժ. 129—131):

(Արշակ ԻԳ.) ՎՆՂԱՐՇ Բ, իբր 61--77 Յ. Ք. 16 կտոր, որոնց եօթը՝ շորեքդրամեան, երկուքը՝ դրամ եւ մնացեալ եօթը՝ պղինձ: Չորեքդրամեաններու նկարագիրն է (Թ. 1)՝ Վաղարշայ Բ պատկերը, մօրուքը սրածայր, մազն երկայն եւ գանգուրներով, գլուխն՝ ապարօշ, վիզը մանեակ եւ կուրծքը լանջապանակ: Յետսակողմը՝ Վաղարշ Բ արքունի տարազով առանց թիկանց գահի վրայ, առջեւը կեցած է Բախտ պատմուճանաւոր եւ վերնագգեստով, գլուխը բրգաւոր թագով որ աջովս իրեն արմաւենի կու տայ, ձախով բռնած իշխանութեան երկայն ցուպ մը: Արձանագիրն՝ (β)ασιλ(εωσ) βασιλεων (Αρσαχου) ευεργ(ετου) (δικαιου) επιφαν(ουσ) (φι)λελλ(ηνος) («Արքայի արքայից Արշակայ Բ արեգործի Արդարոյ նշանաւորի Հելլենասիրի:») Տարեթիւր՝ ԲՕՏ = 373, ամսոյ անունն ինկած. կշիւր՝ 8.88 գր., շատ ցանցառ: Միւս շորեքդրամեանց թուականքն են՝ Թ. 2՝ ΔՕՏ = 374, ամիսն ինկած, կշիւր 11.92, շատ ցանցառ. — Թ. 3՝ ΕՕՏ = 375, ամիսն ինկած. կշիւր 14.16 շատ ցանցառ (Ալիշանի.) — Թ. 4՝ ΣՕՏ = 376, ամիսն ինկած, կշիւր 9.89, շատ ցանցառ. — Թ. 5՝ ΖՕՏ = 377, ամիսն անընթեանի, կշիւր՝ 10.91, շատ ցանցառ (Ալիշանի.) — Թ. 6՝ ΗՕՏ = 378, ամիսն ինկած, կշիւր 14.00, շատ ցանցառ, եւ Թ. 7՝ ΘՕՏ = 379, ամիսն ինկած կշիւր 10.80, շատ ցանցառ: — Պորկէշ-Ոստէն հրատարակած է ուրիշ շորեքդրամեան մ'ալ՝ ΒՕՏ = 372 թուականաւ, բայց Գարդնէր որ նոյնը քննած է՝ թուականս շատ երկբայական կը գտնէ (Գարդնէր՝ էջ 62): Հեղինակն ΘՕՏ = 379 Սելեւկ. թուականն ամէնէն անագանագոյնը կը համարի՝ զոր տե-

սած ըլլայ արքայիս՝ Վաղարշայ Բ՝ դրամոց վրայ, մինչդեռ John Lyndsay<sup>1</sup> կը յիշէ արքայիս չորեքդրամեաններ սա տարիներէն՝ ՈՒՒ = 380, ΔՈՒՒ = 384, ΕΠՒ = 385, ζΠՒ = 386 եւ ΗΠՒ = 388: Արդ, կ'ըսէ Հեղինակը՝ Պարթեւաց պատմութեան մէջ չենք գտներ որեւէ հաստատուն պարագայ մը որ այս թուերուն հակասէ կամ անհարելի ընէ. եւ որչափ գիտենք յաջորդ արքայից՝ Վաղարշայ Գ եւ Բակուրայ Բ՝ դրամները Սելեւկեան 389 թուականէն յառաջ չեն սկսիր: Սակայն, կը յաւելու Հեղինակը, յիշեալ գիտնոյն այս Վաղարշայ Բ ΕΠՒ = 385 թուականաւ յիշած դրամը՝ զոր Բրիտ. Թանգարանը տեսած կ'ըսէ, չեն յիշեր ո՛չ Գարդնէր եւ ո՛չ Բոթ, եւ 388 թուականաւ դրամին ալ միջին տառն ըստ նմանահանութեանն (Lyndsay, Տխտ, Զ, 23) այլաձեւ է՝ այսպէս ΗΠՒ, ի նկատի ունենալով այս միջին տառին որ իբր թէ Π ըլլալու է՝ անսովոր լայնութիւնը՝ հաւանականագոյն է որ ի բնէ ըլլար ΗΟՒ = 378<sup>8</sup>: — Երկու դրամներուն (Թ. 8—9.) առաջակողմն՝ Վաղարշայ Բ պատկէւ, ը, սրածայր մօրուք, մաղն թէեւ նոյնպէս երկայն՝ բայց թեթեւ գանգուրներով, եւ գլուխն՝ ապարօշ, ականջն օղ, վիզը մանեակ եւ կուրծքը լանջապանակ: Յետսակողմն՝ Արշակ ի գահի աղեղնաւոր. աղեղան տակ՝ մենագիր: Արձանագրութիւնը՝ նոյն, բայց այլաձեւ տառերով եւ սխալներով: Կշիռքն՝ 3.82 եւ 3.35: — Պղինձներուն (Թ. 10—16) պատկերը նոյն է դրամներու պատկերին հետ, բայց առանց լանջապանակի: Յետսակողմն՝ Պալլաս ձախն ասպարի վրայ յեցուցած, աջով տէգ բռնած (Թ. 10, կշիռ 1.40) կանգուն այր մը կարծ վերնս զգեստով, որ սիւնաձեւ բազնի մ'առջեւ կը զոհէ, լարը՝ մահիկ (Թ. 11—2:

<sup>1</sup> John Lindsay, A View of the History and Coinage of the Parthians. Տես էջ 70:

կշիռ 1.10 եւ 1.13.) նշանակ մը՝ նման Արեւու  
աստղաբաշխական նշանին (Թ. 13, կշիռ 0.99.)  
Թեւաւոր քարոզական (Թ. 14, կշիռ 1.05.) սիւ-  
նաձեւ շինուած բազին՝ եռոտանւոյ մը վրայ կեցած  
(Թ. 15—6, կշիռ 1.03 եւ 1.37:) Շատերը չորեք-  
կուսի շրջանակ մ'ունին: (Տես էջ 133—5:)

Դրամոց տարեթուերու այս բացատրութենէն կը  
տեսնուի որ Վաղարշայ Բ դրամները կը սկսին Սելեւկ.  
373 (= 62) — կամ եթէ հարազատ ըլլայ Բրոկէշ-Ոստէնի  
դրամին ընթերցուածը՝ 372 (= 61) — տարիէն, եւ կը  
հասնին մինչեւ Հեղինակիս տեսածները՝ 379 (= 68), բայց  
Վինդսէյի յիշածները՝ մինչեւ 388 (= 77 Յ. Ք:): Արքայիս  
պէտք է տալ ըստ այսմ 61—77 Յ. Ք. տարիները, եւ այս  
միջոցին պատմութեան կամ դասական մատենագրաց յի-  
շած Վաղարշն ինքն է, եւ ո՛չ նախընթացը՝ Վաղարշ Ա:  
Ի հարկէ զարմանալի է որ այս ժամանակի գլխաւոր աղ-  
բերք՝ Տակիտոս եւ Գիոն՝ չեն նշանակեր գահակալութեան  
փոփոխութիւն մը: Բայց սա եզական չէ. յաջորդ Վա-  
ղարշ Գ ալ (Գուտշմիդի Բ) որ 71 տարի իսկ իշխած է ըստ  
դրամոց, նոյն աղբերաց մէջ չի յիշուիր, այլ իւր ժա-  
մանակի Հակարքայքն: Անուան նոյնութիւնը Վաղարշայ Ա  
եւ Բ իրարու յաջորդած՝ ըլլայ պատճառաց մին: Բաց աստի  
թէ Տակիտոսայ եւ թէ Գիոնի այս ժամանակի գործոց  
միակ աղբիւրը միեւնոյնն է՝ նոյն իսկ իրեն Կորբուղոնի  
«Յիշատակարանքն», զոր Գուտշմ. «անչափ ստախոս գիրքն  
մը կը կոչէ: Գիոն ասկէ համառօտ քաղուածք մ'ըրած է  
հաւատարմութեամբ. իսկ Տակիտոս ընդարձակ է՝ բայց  
նաեւ քննադատական ոգւով ամէն բան չէ ընդունած այն-  
պէս. եւ միայն կ'երեւայ առ ի չգոյէ ուրիշ աղբիւրի ընդ-  
հանրապէս հետեւած է: Ասով նաեւ Տակիտոսայ քով.  
կ'ըսէ, քիչ շատ ընդհանուր գոյն մը մնացած է Կորբու-  
ղոնի ի նպաստ գունաւորեալ, մինչդեռ նոր քննութիւնը,  
կ'ըսէ, կը տեսնէ որ Կորբուղոնի այն ճոռոմարան դիւցազ-  
նութիւնքն ու հրաշագործութիւնք ոչնչի կը վերածուին.  
(Գուտշմ. 131, Ծան.:) Այս ժամանակի ալ Հռոմայեցւոց  
եւ Պարթեւաց գլխաւոր կռուոյ նիւթն էր Հայոց աշխարհը,  
Հռոմայեցիք իրենց պաշտպանած Կապպադովկեան Տիգրա-  
նով, Պարթեւք՝ իրենց տոհմակից Տրդատով: Պարթեւք  
61ին հաշտութիւն գոյացուցած Արկանաց հետ — որոնց

կ'երեւայ անկախութիւն արուեցաւ, — չէին կրնար անտես ընել իրենց ծրագիրը՝ Հայոց աշխարհին ալ վերջնականապէս արշակունի տոհմ մը տալը, եւ ոչ իրենց Տրդատն երեսէ ձգել: Տրդատ հրապարակաւ արքայ Հայոց պսակելով՝ ի Հայս խաւրուեցաւ բանակաւ, որուն առաջնորդն էր Մոնեսէս (Մանեճ), եւ օգնութեամբ Ադիաբենեայ արքային Մոնորազոսի (Մանաւազ) Բ, ընդդէմ Գամրացի Տիգրանայ՝ որ համարձակած էր նոյն իսկ Ադիաբենէ արշաւել: Գիւրաւ յետս մղուեցաւ Տիգրան եւ պաշարուեցաւ Տիգրանակերտի մէջ: Վաղարշ ալ եկած էր ետեւէն պատրաստութեամբ. բայց Մծբին հանդիպեցաւ Կորբուղոնի պատգամաւոր Կասբերիոս հարիւրապետը, որով զինագաղար որոշուեցաւ այն պայմանաւ որ Պարթեւք Տիգրանակերտի պաշարու մը թողուն եւ Ներոնի պատգամաւորութիւն խաւրեն՝ խաղաղութեան համար բանակցելու: Գուտշմիդ (անդ՝ 131 — որ գեղեցիկ կերպով կը գնահատէ այս դիպաց աղբիւրներուն՝ Տակ. ԺԵ, 16 եւ Գիոն. Կաս. ԿԲ, 12 համեմատական արժէքն, ինչպէս ըսինք —) նկատելով այն պարագան որ հռոմայեցի գունդն ալ Տիգրանակերտէ ելլել հրաման առաւ Կորբուղոնէ, որ նոյն ժամանակ իսկ մերձակայից իրր թէ անըմբռնելի կ'երեւար, կ'ըսէ թէ յայտնապէս այս դաշանց ծածուկ յօդուած մ'ալ կար՝ Տիգրանակերտի մէջ եղած հռոմէական գունդն ետ կանչելու Հայոց երկրէն, որով արդէն Գամրացի Տիգրանայ բախտն որոշուած կ'ըլլար: Ըստ Գուտշմիդի (անդ 131-2) ասոր ալ ծածուկ պատճառն ըլլալու էր այն որ հայ ժողովուրդը սովորութեամբք, կրօնիւք եւ ամէն կողմանէ մէտ ի Պարթեւս՝ օտար կամ հռոմայեցւոց դրած արքայ մը կ'ընդունէր ցորչափ որ Տիգրանայ մօտ գերիշխան զինուորական ոյժ մը կար: Իսկ այս Տիգրան՝ թէեւ իւր հաւէն շերովդէսէն ժառանգած էր ստրկական հնազանդութիւն մը հռոմայ հանդէպ, բայց նաեւ ոչ անոր ոյժն՝ ըմբոստ ժողովուրդ մը հնազանդեցընելու: Ներոն մերժեց խաղաղութեան առաջարկեալ պայմանները, եւ Կեսենիոս Պետոս զօրավարը խաւրուեցաւ՝ Կորբուղոնի գործակցութեան: Պարթեւք այն ատեն յայտնի սկսան պատերազմը: Պետոս որ հրամատար էր, զօրացն ի Հայս՝ արշաւանաց մը ձեռնարկեց 62ին՝ Տիգրանակերտն ազատելու: Բայց գործը ձախորդ գնաց եւ շուտով քաշուեցաւ: Վաղարշ անցնելով Տաւրոսի կրճերը՝ Արածանւոյ հարաւային ափն ի Հռանդէա Արշամաշատի մօտ



պաշարեց զՊետոս իւր բանակաւ, եւ — որովհետեւ Կորբու-  
ղոն կամաւ օգնութեան չհասաւ ժամանակին — անձնա-  
տուր ըլլալ ստիպեց (62ին)։ Հռոմայեցիք ելան Հայոց աշ-  
խարհէն, եւ նոյն իսկ Պարթեւաց համար կամուրջ ձգեցին  
Եփրատայ վրայ։ Կորբուղոն կրցաւ չառ ժամն զինադադար մը  
յաջողցընել, պայմանաւ որ Եփրատայ եզերքն իւր շինած  
ամրութիւնք քակուին, բայց Պարթեւք ալ Հայոց աշխար-  
հէն ելեն մինչեւ որ առ Ներոն խաւրուած պատուիրակու-  
թիւնը պատասխանով մը դառնայ։ Ներոն որոշեց շարունա-  
կել պատերազմն, եւ Կորբուղոն 63ին Մելիտենւոյ քով  
Եփրատն անցնելով Ծոփք մտած էր, երբ Վաղարշ եւ  
Տրդատ առաջարկեցին խաղաղութեան նոր պայմաններ։  
Ճիշդ յիշեալ Հռանդէա տեղը տեսակցութիւն ունեցան  
Տրդատ եւ Կորբուղոն, որով Տրդատ յանձն առաւ անձամբ  
Հռոմ երթալ եւ հոն պսակուիլ արքայ Հայոց (64ին)։ Այս-  
պէս ալ պատահեցաւ արդեամբք, թէեւ քիչ մ'ուշ։ Յ. Բ.  
66 կարեւոր թուական մըն է, երբ Ներոն մեծ շքեղութեամբ  
ի Հռոմ Հայոց արքայ պսակեց զարշակունին Տրդատ, որ ի  
դարձին արուեստաւորներ բերաւ Արտաշատը շինելու։ Գա-  
շինքս երկու կողման ալ հաճոյ էր, եւ որով գոնէ նոյն ժա-  
մանակին համար այն երկարատեւ վէճի նիւթը վախճան  
մ'առաւ։ Հռոմայեցւոց համար գոնէ իրաւանց ձեւը պա-  
հուած էր, Պարթեւաց՝ բուն ուզածնին կատարուած։ Այս  
կարեւոր կէտէն կը դնեն նոր քննիչք Հայ Արշակունիաց  
հարստութեան բուն սկզբնաւորութիւնը, խնդիր մ'որուն  
վրայ յետոյ դառնալ պէտք պիտի ըլլայ։ Չարմանք չէ որ ասկէ  
ետքը Վաղարշ բարեացակամ էր Հռոմայեցւոց, եւ Ներոնի  
մահուանէ ետքը ծագած ներքին խռովութեանց ատեն  
Վեսպասիանու հանդէպ բարեկամական դիրք մը բռնած էր,  
գոնէ մինչեւ 75 Յ. Բ. երբ կրկին ցրտութիւն մտաւ, եւ այն՝  
Ալանաց աշխարհակործան հինահարութեանց հետեւու-  
թեամբ։ Այս աւազակաբարոյ վաշկատունք՝ Վրկանաց ար-  
քայէն թոյլտուութիւն գտած (72ին) Գարբանդայ դուռն  
անցնելու, ապականեցին ամբողջ Մարաստանը, որուն  
արքայն էր այն ժամանակ Բակուր, Հայոց աշխարհը —  
այս առթիւ այս Տրդատայ մասին կը պատմէ Յովսէպոս  
ներդեայ պարանը կտրելն՝ զոր խորենացի յետոյ Մեծին  
Տրդատայ համար կը պատմէ (Գաթրճ. Բ. 124, Գարագ.  
Բ. 241 եւն) — եւ նաեւ բուն Պարթեւաստան (75ին)։ Վա-  
ղարշ այնպէս նեղն էր որ Վեսպասիանոսէ օգնութիւն

խնդրեց, եւ Գոմեօիանոս կողմն էր, բայց կայսրը մերժեց միջամտել: Հետեւութիւնն եղաւ ցրտութիւն, որով երկու կողմն ալ պատերազմական պատրաստութեանց սկսաւ, (Տրայիանոս այն ժամանակ կուսակալ էր Ասորոց.) բայց իրական պայքարի չհասաւ: Քիչ մ'ետքն ալ մեռաւ Վաղարշ, ըստ երեւութին 77ին: Գոնէ արդէն 78ին կը սկսին Վաղարշի Գ եւ նաեւ Բակուրի Բ դրամները: Գուտշմիդ, որ Վաղարշ Ա կ'ըսէ մինչեւ այս տեղ, անոր կ'ընծայէ նաեւ այն նշանաւոր գործն, որ Աւեստայի բոլոր բնօրինջութենէ ազատած մասերն ու աւանդութիւնք փնտռել հասարկել տուաւ: Արքայի անունն՝ ըստ այս աւանդութեան՝ է պարզ Վաղարշ Ի զաւակէ Արշակայ: (Տես Գուտշմ. 131—4, 137.)

(Արշակ Ի Գ.) Վաղարշ Գ. 77 — 147 Յ. Ք. (որուն շատ երկարատեւ բայց խռովայոյզ եւ ընտանի պատերազմներ լի իշխանութեան ատեն գահ ելած են նաեւ յաջորդ արքայք եւ հակարքայք.) 50 կտոր, որոնց 30 հատը չորեքդրամեան, երեք՝ դրամ եւ 17 պղինձ, եւ պղինձներն իսկ նշանաւոր են անով որ մեծաւ մասամբ թուականաւ են: Չորեքդրամեաններու նկարագիրն է (Թ. 1)՝ առաջակողմը՝ Վաղարշայ Գ պատկերը, լիամօրուս, սաղաւարտով եւ ապարոշով, օղով, մանեկով եւ լանջապանակով. գլխուն ետեւը A. Յետսակողմը՝ Վաղարշ Գ արքունի տարազով բարձր թիկնագահի վրայ, առջեւը կեցած է Բախտ՝ պատմութեանաւոր եւ վերնագգեստով, գլուխը բրգաւոր թագով որ ապարոշ կու տայ աջով, ձախով իշխանութեան ցուպը բռնած: Արձանագիրը βασιλεωσ βασιλε(ων) (Αρχαχου) Θ(λαγα)ου δ(ικαιου) επιφανο(υς) φι(λελληνοσ) (“Արքայի արքայից Արշակայ Վաղարշայ Արքարոյ նշանաւորի Հելլենասիրի:”) Թուականը՝ ΘΠΤ = 389 Սելեւկ., ամիսն ինկած: Կշիռն 9.21 գր.: Միւս չորեքդրամեաններու թուականքն են՝ Թ. 2—3 նոյն 389 տարին (որոնք արքային գլխուն ետեւ ունին B-), առաջնոյն ամիսն ինկած, երրորդին ամիսը՝ Գէսիոս. կշիռ՝ 12.35 եւ 11.60,

— թ. 4՝  $\Phi\Gamma = 390$ , ամիս Աւգիւստոս, կշիռ 13.79. — թ. 5 եւ 6, նոյն 390 Սել., ամիսն ինկած, իսկ գլխուն ետեւ կայ  $\Gamma$  եւ  $\Delta$ . կշիռ 14.20 եւ 9.85: — Շատ տարիներէ ետքը միայն կը սկսի չորեքդրամոց շարքը, եւ թ. 7—11 կը կրեն թուականս  $\Gamma\Lambda\Upsilon = 433$  Սելեւկ., արքային գլխուն ետեւն ալ կարգաւ A, B,  $\Delta$ ,  $\Gamma$ , E. ամիսներն ինկած են, միայն թ. 11 ունի՝ Պերիտիոս. (ասոնց կշիւր՝ թ. 7՝ 11.43. թ. 8՝ 10.57. թ. 9՝ 8.57. թ. 10՝ 9.72 եւ թ. 11՝ 10.15.) — թ. 12՝  $\Delta\Lambda\Upsilon = 434$  Սելեւկ., ամիս՝ Պանեմոս. (գլխուն ետեւ՝ B. կշիռ 9.26.) — թ. 13—18՝ ունին թուականս E $\Lambda\Upsilon = 435$  Սելեւկ., գլխուն ետեւը դարձեալ կարգաւ A—E., ամիսներն ինկած, միայն թ. 15՝ Դիոս. (կշիռն՝ թ. 13՝ 13.25. թ. 14՝ 9.18. թ. 15՝ 9.93. թ. 16՝ 11.20. թ. 17՝ 13.34 եւ թ. 18՝ 12.92.) — թ. 19—22 ունին թուականս  $\zeta\Lambda\Upsilon = 436$ , գլխուն ետեւ A— $\Gamma$  եւ E. ( $\Delta$  չկայ կամ չէ գտնուած.) ամիսներն ինկած (կշիռ կարգաւ՝ 12.61, եւ 12.20, եւ 9.72, եւ 10.06.) — թ. 23՝  $Z\Lambda\Upsilon = 437$  տարիէն, ամիսն ինկած, գլխուն ետեւ՝ A, շատ ցանցառ. (կշիռ՝ 12.58: ) — Կրկին միայն տասն տարի ետքը կը սկսի չորեքդրամներու շարքը, այսինքն՝ թ. 24՝  $ZM\Upsilon = 447$ , ամսոյ անուն չկայ. արձանագիրն ալ այն տարբերութիւնն ունի որ *Θλαγασου* (Վաղարշայ) յորջորջանքէն ետքը կ'աւելցուի *ΕΥΕΡΓΕΤΟΥ* «Բարեգործի», (այսպէս՝ «Արքայի Արքայից Արշակայ (?) Վ-շ-շ-Ր-բ-բ-բ-բ Արդարոյ նշանաւորի Հելլենասիրի.») գլխուն ետեւը՝ A. կշիռ 11.09, շատ ցանցառ: Շատ ցանցառ է նաեւ թ. 25՝  $HMY = 448$  տարիէն, ամիսն ինկած. կշիւր՝ 12.37. գլխուն ետեւ  $\Gamma$ . Մնացեալքն են՝ թ. 26  $ANY = 451$ , ամիս՝ Ապելլէոս, գլխուն ետեւ  $\Delta$  կշիռ՝ 9.62. — թ. 27՝  $BNY = 452$ , ամիսն ինկած, գլխուն ետեւ A, կշիռ 9.68. շատ ցանցառ. — թ. 28՝  $\Delta NY = 454$ , ամիս՝ Ապելլէոս, գլխուն

Ետեւ Δ. կշիռ՝ 8.75, ցանցառ. — Թ. 29՝ ZNY  
 = 457, ամիս՝ Դիոս, գլխուն ետեւ Γ. կշիռ՝ 8.94,  
 ցանցառ. — Թ. 30՝ HNY = 458, ամիս Դիոս,  
 գլխուն ետեւ Γ. կշիռ՝ 9.43, ցանցառ. — Բրիտ.  
 Թանգարան կայ շորեքդրամեան մ'ալ Վաղարշայ  
 Գ՝ ΘMY = 449 թուականաւ, Բերլինի թանգա-  
 րանը՝ Պրոկէշ-Ոստէնի հաւաքմանէն՝ ուրիշ մը NY  
 = 450 թուականաւ: Ինչպէս մտադիր կ'ընէ Հե-  
 ղինակը, շորեքդրամեաններու վրայ արքային  
 գլխուն ետեւ եղած A—E նշանագրերն՝ ըստ Long-  
 perierի որոշիչ նշաններ են հինգ զատ զատ փողե-  
 րանոցներու կամ դրամահատութեան տեղեաց: —  
 Երեք դրամներուն (Թ. 31—3) յառաջակողման  
 պատկերը (Վաղարշայ Գ) նոյն է՝ կարճ մօրուք, սա-  
 ղաւարտ, ապարօշ, օղ, մանեակ եւ լանջապանակ.  
 յետսակողմն՝ Արշակ Ի գահի աղեղնաւոր. աղեղան  
 տակ՝ մենագիր. արձանագրութիւնը (Βασιλεως)  
 βασιλεων Αρσαχου ευεργετου δικαιου επιφανους  
 φιλελληνου («Արքայի արքայից Արշակայ Բարե-  
 գործի Արդարոյ նշանաւորն Հելլենասիրի.») տա-  
 ուերը խառնակ եւ սխալածել: Բայ ի մենագրէն՝  
 Թ. 33 արդէն ունի պահլաւ-արամէական գրու-  
 թիւն՝ առաջակողման արքայի գլխուն ետեւն, որ  
 այսուհետեւ կը սկսի յաճախել վերջին արքայից  
 դրամներուն վրայ: Այստեղն գրուածն է VI (Vol-  
 gas) m(alka) «Վաղարշ արքայ:» Ասոնց կշիռը՝  
 3.76, եւ 3.26 եւ 3.62: — Պղինձներուն առաջին  
 մասը (Թ. 34—6) առաջակողմը նոյն է դրամներուն  
 հետ՝ առանց մանեկի եւ լանջապանակի, յետսա-  
 կողմն երեքին ալ՝ արծիւ թելատարած, կտցով  
 պսակ մը բռնած. (կշիռ՝ 1.23, եւ 1.44 եւ 1.18:)  
 Բայց նշանաւոր են մնացեալ պղինձներն (Թ. 37  
 — 49) անով որ թուականաւ են: Ասոնց առաջա-  
 կողմը՝ Վաղարշայ Գ պատկերը երկայն եւ սրածայր  
 մօրուք, գլուխը սաղաւարտ՝ ականջապահով,  
 քարձեալ ապարօշ, վիզը՝ մանեակ եւ կուրծքը՝ լան-

Ջապանակ. արքային գլխուն ետեւ A (այսպէս թ. 37—40a.) յետսակողմը՝ Բախտ ցած պատուանդանի մը վրայ նստած պատմութեանաւոր եւ վերնադրեւորով, գլխուն վրայ բրգաւոր թագ. Բախտին առջեւն են տարեթուերը՝ թ. 37՝ ΓΚΤ = 323, կշիռ 6.75. — թ. 38՝ ΓΚΥ = 423, կշիռ 6.45. — թ. 39—40՝ ΔΚΥ = 424. կշիռ 6.21 եւ 6.65. — թ. 40a՝ ζΚΥ = 426, կշիռ 6.6(): թ. 41էն սկսեալ այն տարբերութիւնը կայ որ առաջակողման պատկերին վրայ սաղաւարտն առանց ալանջապահի է. յետսակողմը՝ կիսանձնեայ պատկեր Բախտի բրգաւոր թագով. ասոր առջեւն են թուականները, միայն թ. 47—49 թուականներն ունին արքային գլխուն վերելը, եւ թ. 48—9 յետսակողմը վարը՝ A. թուականներն են՝ թ. 41—2՝ ΛΥ = 430, կշիռ 3.72 եւ 3.92. — թ. 43—5՝ ΑΛΥ = 431, կշիռ՝ 4.82, եւ 4.63, եւ 4.20. — թ. 46՝ ΜΥ = 440, կշիռ 8.75. — թ. 47—8՝ ΔΜΥ = 444, կշիռ՝ 4.24 եւ 4.98. — թ. 49՝ ΘΜΥ = 449, կշիռ 4.13 շատ ցանցառ: — Բրիտ. թանգարանը կայ՝ պղինձ մը թ. 37ի տպով, տարեթուովս ΘΛΥ = 439, ուրիշ մը թ. 47ի տպով՝ առանց տարեթուի: Բերլինի թանգարանը կան՝ Պրոկէշ-Ոստէնի ցուցակին համեմատ՝ երկու պղինձ թ. 41ի տպով սա տարեթուերով՝ ΕΛΥ = 435 եւ ΖΛΥ = 437: (Տես էջ 136—142:)

Ամենէն զարմանալի երեւոյթներէն մին է այս վաղաւոր Պատմական աղբիւրները զինքը հազիւ թէ կը յիշեն, մինչ դրամներն ամենէն աւելի պերճախօս են, վկայելով որ իբր 71 տարի իշխած ըլլալու է եւ դրամ հատանել տուած, ի հարկէ ո՛չ միշտ շարունակեալ եւ ո՛չ միշտ «արքայից արքայ»՝ ներքին խառնակութիւնք յայտնի են անկէ որ այս միջոցին գահ ելած եւ դրամ ալ հատանել տուած են Արտաւան Գ, Բակուր Բ, Խոսրով, Միհրդատ Զ, եւ դարձեալ՝ թէեւ դրամ չէ գտնուած՝ Սանատրուկ Բ եւ Պարթամասպատ. եւ այս ամենէն իսկ վերջը միայն մեռած է Վաղարշ Գ (147ին Յ. Ք.) այնպէս

որ իւր յաջորդն է՝ այսչափ արքայներէ ետքը՝ Վաղարշ Գ. Այս ներքին տխուր վիճակը կը մեկնէ ալ որ Տրսցիանոս այնպէս դիւրութեամբ կընար մինչեւ գրեթէ ի կոր խոնարհեցընել արեւելքը։ Վաղարշայ Բ մահուանէն ետքն (77ին) արդէն գահ ելած են թէ՛ այս Վաղարշ Գ եւ թէ՛ Բախար Բ։ Երկուքէն ալ դրամ կայ 389 Սելեւկ. թուականէն (= 78). առաջինն՝ ըստ դրամներուն պատկերաց՝ մօրուօք՝ բայց տակաւին երիտասարդ, վերջինն՝ անմօրուս եւ աւելի երիտասարդագոյն։ Ըստ Գուտշմիդի (անդ 137 եւն) Բախուր Բ հաւանօրէն Վաղարշայ Գ եղբայրն էր եւ գահակից։ Վաղարշայ Գ դրամները նախ շատ շուտ կը դադրին, այսինքն՝ յաջորդ 390 տարւոյն (79 աշուն) եւ անկէ ետքն երեսուն տարիէ աւելի կարծես աներեւոյթ կ'ըլլայ պատմութենէն, եւ միայն 423ին Սելեւկ. (= 112ին) կրկին երեւան կու գայ, եւ այն՝ այս անգամ փոքրիկ ընդհատութեամբ միայն՝ մինչեւ 458 Սելեւկ. (= 147) որ է մինչեւ իւր մահը։ Իսկ Բախուրայ Բ դրամները նոյն 389 Սել. (= 78) տարիէն սկսելով նախ կը շարունակուին մինչեւ 396 Սելեւկ. (= 85) եւ անկէ ետքը հոս ալ ընդհատութիւն մը կը տեսնուի, իբր ինն տարի, եւ վերստին կը սկսի 404 Սելեւկ. (= 93) թուէն մինչեւ 407 (= 96), թէեւ գիտենք որ տակաւին բաւական ատեն ալ իշխած է։ Ասկէ յառաջ արդէն երրորդ մ'ալ դրամ կոխել տուած էր Արտաւան Գ, որմէ դրամ կայ 392 Սելեւկ. տարիէն կամ 80 եւ 81 Յ. Ք. տարիներէ։ Ծանօթ չեն այս ժամանակի շատ կէտերը, այսպէս թէ ինչ պատճառաւ Վաղարշ Գ յանկարծ երկու տարի իշխելէն ետքն՝ ըստ դրամոց վկայութեան՝ աներեւոյթ կ'ըլլայ, եւ թէ ինչ պարագայի մէջ էր մինչեւ այն երեսներորդ երրորդ տարին, երբ կրկին երեւան կու գայ։ Յամենայն դէպս Վաղարշայ Գ աներեւոյթ ըլլալը կապ ունի Արտաւանայ Գ հետ, որ Վաղարշայ տեղը կ'անցնի եւ 80-81 տարիներէն դրամ ունի։ Պատմիչներէն ալ գիտենք (Յովհ. Զոնար, ԺԱ, 18. Սիրիզ. Պտղմ. Գ, 124, 137) թէ այս Արտաւան Գ էր որ՝ երբ Յառաջակողման Ասիոյ մէջ երեւան եկաւ Սուտ-Ներոնը (Տերենտիոս Մաքսիմոս, ճիշդ 80ին), անոր ձեռնտու եւ օգնական էր, եւ կարծես միտք ունէր զանիկայ հակակայսր հռչակելով Հռոմայեցւոց դործերը խառնակելու։ Այս Սուտ-Ներոնի խնդիրը շարունակուեցաւ մինչեւ 88, բայց Արտաւանայ սպառնալիքէն զատ գործ մը չեղաւ Պարթեւաց կողմանէ. (Գուտշմ. 138)։ Ասոնց ներքին

խոսովութիւնն արդէն զիրենք անկարող կ'ընէր որեւէ մեծ գործի ձեռնարկելէ: Թէ մինչեւ երբ իշխեց Արտաւան Գ յայտնի չէ: Յամենայն դէպս 93ի կը սկսին դարձեալ Բալկուրի Բ գրամները, եւ ասոր որոշ թուականաւ գրամներու դադրելէն ետքն ալ ատեն մ'ինքն էր «արքայից արքայ»: Բայց նաեւ ասոր իշխանութեան վերջերն ուրիշ հակարքայ մ'ելած էր՝ Խոսրով, թերեւս արդէն 106ին Յ. Բ., գոնէ 108-9ին, վասն զի արդէն հաստատուն թուականաւ գրամներ կը սկսին Խոսրովայ արքայի Սելեւկ. 420էն, թէեւ յայտնի չէ թէ մինչեւ որ տարին էր Բալկուր Բ: Գուտշմիդ հաստատուութեամբ կ'ըսէ թէ տակաւին Բալկուր էր Պարթեւաց զօրութեան ներկայացուցիչը 110ին, եւ ինքն էր որ նոյն տարին Առհայի գահը գնոց տուաւ Աբգարու է որդւոյ Ըզատայ, «եւ քիչ մ'եաքը մեռաւ.» (Գուտշ. 140:) Բալկուրայ Բ յաջորդն եղաւ ի հարկէ Խոսրով, որմէ գրամ կայ քիչ շատ անընդհատ գոնէ որոշ թուականաւ մինչեւ 439 Սելեւկ. (= 127/8 Յ. Բ.): Սակայն այս միջոցէն շատ յառաջ արդէն կրկին երեւան ելած էր Վաղարշ Գ, կ'ենթադրուի Խոսրովայ դէմ, եւ իւր գրամները՝ այնչափ ատեն դադրելէն ետքը կը սկսին՝ ինչպէս ըսինք՝ 111-2 Յ. Բ. տարիէն մինչեւ մահը (147 Յ. Բ.): Այս միջոցին արդէն մէջտեղ ելած էր ուրիշ հակարքայ մ'ալ՝ Միհրդատ (Մեհրդատ) Զ, որմէ Գուտշմիդ գրամ կ'ըսէ արդէն 113ին (Գուտշ. 141:) Այս գրամն Բրիտ. Թանգարանի այն պղինձն է, որուն վրայ Longpérier եւ Gardner կը կարծէին գտնել  $\Delta KY = 424$  (= 113 Յ. Բ.) թուականը, եւ որ սակայն Վ. Բոթի նոր քննութեամբը շատ խնդրական է. (տես վարը՝ Միհրդատայ գրամոց մէջ:) Միհրդատայ միւս գրամները թուական չունենալով՝ դժուար է որոշ թուական մը դնել: Ըստ Գուտշմիդի Միհրդատ ապահովապէս եղբայրն էր Խոսրովու, Վաղարշ ալ ի հարկէ թերեւս նոյնպէս. (Գուտշմ. 141:) Երեք արքայիցս եւ ոչ մին, կ'ըսէ, կրցաւ դիւրաւ մերժել միւսները եւ բոլորովին միահեծան ըլլալ քիչ ժամանակի մէջ. եւ այս միջոցին Խոսրով անխոհեմութիւն ընելով Հայոց գործերուն խառնուելու՝ առիթ տուաւ Տրաքիանու տակնուվրայ ընելու բոլոր արեւելքն: Այս միջոցին Հայոց արքայ էր Աշխադար (Exedares, որ կ'իշխէր հոն Գոմեաթիանու (81-96) օրերէն վեր (ըստ Գաթրճ. Բ. 172 աւելի որդի քան թոռն Տրդատայ Արշակունւոյ, ըստ Գարագաշ Բ. 253 յետ Տրդատայ՝ Արտաւազդ եւ ապա ասի-

կայ), զոր գահ հանած էր Բակուր, ըստ Գուտչմ. (անդ 141) կ'երեւայ առանց Հռոմայեցւոց կողմանէ մեծ հակառակութիւն գտնելու: Խոսրով զԱշխարհար մերժելով՝ Հայոց գահը դրաւ Բակուրի որդին՝ Պարթամասիր, ուստի իւր եղբորորդին: Տրայիանոս որ արդէն ծրագիրներ ունէր արեւելից այս ամէն թագաւորութիւնք վերցընելու, 113ին ճամբայ ելաւ՝ Պարթեւներէն վրէժ լուծելու, եւ արհամարհելով Խոսրովու խաւրած պատգամաւորութիւնը, 114ին մտաւ Հայոց սահմանքն եւ առաւ զԱրշամաշատ առանց կռուի (Գուտչմ. 141 այսպէս կ'ուղղէ Դիոնի ԿԸ, 19 խօսքին անունն, ո՛չ թէ Սամոսատ կամ Համշատ, որ հռոմէական էր): Պարթամասիր ստիպուած ընդ առաջ գնաց մինչեւ Եկեղեաց գաւառ, եւ Տրայիանու առջեւ դրաւ իւր թագն՝ յուսով անկէ կրկին պսակուելու, ինչպէս եղած էր Տրդատայ՝ Ներոնի կողմանէ: Բայց Տրայիանոս՝ որ ինք զինքն ինքնակալ հռչակել տուաւ հոն բանակէն (ըստ Գուտչմ. 142ին Օգոստ. 14էն յառաջ)՝ ուրիշ մտքեր ունէր: Պարթամասիր մերժուեցաւ. թէեւ հրաման ընդունեցաւ հսկողութեան տակ երկրէն ելլելու, բայց երբ ճամբան փորձեց դիմադրել ազատելու՝ բռնուեցաւ եւ գլխատուեցաւ. (այսպէս Գուտչմ. 142 ըստ Fronto, Principia historiae, ed. Naber, p. 209. ըստ այլոց՝ իւր քով եղած պարթեւ գնդով ճակատ տուաւ, բայց յազթուեցաւ եւ ինկաւ, Փաթրճ. Բ. 173:): Հայք հռոմէական նահանգ հռչակուեցան: Յաջորդ 115ին Միջագետք էր արշաւանաց ասպարէզն. Մծբին՝ որ Ադիարենեայ Մերարսապէս արքայի կը վերաբերէր՝ առնուեցաւ, նաեւ Կորդուիք եւ Մարաց սահմանը (— այս առթիւ յիշուած Marcocmedi անունը կը մեկնէ Գուտչմ. 143 «Մեդք որ Մարք կը կոչուէին», ուստի հայերէն բզմ. «Մարք» ձեւէն. —) եւ ուրիշ մանր իշխանութիւնքն ջնջելով՝ Միջագետք հռոմէական նահանգի վերածուած հրատարակուեցաւ: Մինչեւ այստեղ Խոսրովայ մէկ ընդդիմադրութիւնը չի յիշուիր, բայց միայն թէ նեղ ձգած էր զՄանիսար Կորդուաց իշխանն՝ որ Պարթամասիրի իյնալէն օգտուած՝ գրաւած էր Հայոց աշխարհի մէկ մասն եւ Միջագետաց ալ մէկ կողմը (ըստ Գուտչմ. 143 կ'երեւայ Հիսն-քէյֆա եւ Մարտինի կողմերը): Ասի նեղ մտած՝ Տրայիանու զանոնք տալ խոստացաւ, եւ յետոյ երբ կը դանդաղէր՝ ակամայ տալ ստիպուեցաւ: Տրայիանու դիմաց կար գլխաւորաբար միայն Մերար-



սասպէս՝ Ադիարենեայ արքայն. եւ արդէն նաեւ նախընթաց  
 դէպքերու մէջ Ադիարենացիք մէկէ աւելի անգամ Պար-  
 թեւաց նեղութեան ժամանակ օգնական եղած, եւ այժմ  
 ալ բոլոր բեռը բարձած էին: Բայց արդէն ինկած էր Մերար-  
 սասպէսի վերաբերող Մծբինը, եւ առնուած Սինգարա՝  
 որուն Մաննոս արքայն ապաստանած էր Ադիարենեայ ար-  
 քային քով. եւ 116ի Տիրերիոս Աորդուաց լերանց քով Տի-  
 գրիսն անցած նաւակամրջով՝ Մերարսաբեայ բոլոր արքայու-  
 թիւնը գրաւեց, եւ այս պարթեւական մասն ալ հռչակուե-  
 ցաւ հռոմէական նահանգ՝ Ասորեստան անուամբ: Տրայիանոս  
 մինչեւ Բարեւաստան մտաւ, առանց Պարթեւներէն կարեւոր  
 ընդդիմութիւն մը գտնելու. այնչափ մեծ էր ներքին խռո-  
 վութիւնը: Բանակին հետ նաւատորմիղ մ'ալ Եփրատն  
 ի վար գացած եւ նեղագոյն տեղը գլաններու վրայ տա-  
 րուած էր ի Տիգրիս, որով Տիգրիսն անցած Տիգրոն առ-  
 նուեցաւ, եւ Խոսրովի գահն ու մէկ դուստրը գերի ին-  
 կան: Հոն ԺՊԴ անգամ Ինքնակալ հռչակուեցաւ Տրայի-  
 անոս (Օգոստ. 116, Փուտշմ. 144): Խոսրով ստիպուեցաւ  
 ապաստանիլ ի Հայս, անշուշտ՝ կ'ըսէ Փուտշմ. (անգ 143)  
 հիւսիս-արեւելեան կողմերն, որոնք տակաւին Հռոմայե-  
 ցւոց ձեռք ինկած չէին: Տրայիանոս Տիգրիս ի վար իջաւ,  
 գրաւեց Մեսենէ (Մէշան) փաճառաշատ քաղաքն, եւ մինչեւ  
 Պարսից ծոցն արշաւանք մը ձեռնարկեց: Սակայն Հռոմայե-  
 ցիք շուտով հասկըցան թէ դիւրին էր այս երկիրները նուա-  
 ճելը, բայց նաեւ ոչ՝ պահելը: Քիչ մ'ետքը Միջագետք եւ  
 բոլոր այն աշխարհներն՝ զոր Տրայիանոս հռոմէական նա-  
 հանգ ըրած էր, իւր կռնակն՝ ոտք ելան: Ապստամբու-  
 թեան կենդրոնը Միջագետք էր, եւ Մեհրդատ (Մէհրդատ)  
 Չ՝ (մեր Յուցակին Արշակ ԻՉ, 2) որ արդէն Պարթեւաց  
 թագին թիկնածուաց մին էր, ընտրուեցաւ գլուխ, եւ  
 արշաւանքներ սկսաւ մինչեւ ի Արմապենէ, բայց այս ար-  
 շաւանաց ժամանակ ձիէն իյնալով մեռաւ. (ուստի իբր  
 116ին 1) իր տեղն անցաւ Սահարս-ի Բ՝ Միհրդատայ Չ  
 որդին. եւ այս անգամ՝ կ'երեւայ արտաքին մեծ վտանգին  
 դէմ՝ պահ մը խաղաղած էին ներքին վէճերը: Վասն զի  
 նաեւ Խոսրով Հայոց աշխարհէն օգնական ջօրք խաւրեց  
 Սանատրկոյ Բ՝ առաջնորդութեամբ իւր որդւոյն Պարթա-  
 մասպատի. (այսպէս Փուտշմ. 144, որ յաջորդքս կ'առնու  
 Յովհ. Մաղաղասէ, որ այս կտորները, կ'ըսէ, քաղած է  
 Առիանու «Պարթեւականք» գրութենէն, միայն սխալ

դասաւորած. նոյն Մաղաղասէն այլազգ կը հասկընայ  
 Քարթրճ. Բ. 174. այսինքն է՝ Պարթամասպատ Աշխարհ-  
 որդին էր. տես եւ Քարազաշ, Բ. 258: Երկուքը միասին  
 անշուշտ կը յաջողէին, ինչպէս յաջողեցան ի սկզբան, երբ  
 Տրայիանոս իրենց դէմ խաւրած Լուսիոս եւ Մաքսիմոս  
 զօրավարներէն վերջինը շարաշար յաղթուեցաւ եւ ճակատին  
 մէջ ինկաւ: Բայց Լուսիոս կրցաւ կրկին անմիարանութիւն  
 սերմանել. Պարթամասպատի խոստացաւ Պարթեւաց գահն  
 եւ Պարթամասպատ իւր բանակով գիշերայն քաշուեցաւ եւ  
 Հռոմայեցւոց հետ միացաւ: Ասով Սանատրուկ առանձին  
 մնացած՝ պարտուեցաւ բոլորովին եւ փախչելու ատեն սպան-  
 նուեցաւ. Մծրին կրկին առնուեցաւ, եւ Ուռայ կործա-  
 նուեցաւ (որուն Արգար է տիրեց մինչեւ 117 Յ. Ք.) եւ  
 նոյնպէս Սղուկ: Ապստամբութիւնն իրօք ընկճուած էր. բայց  
 գոնէ Տրայիանոս համոզուած՝ որ անկարելի է Պարթեւա-  
 ստան ուղղակի հռոմէական նահանգ ընել: Ուստի Տիգրանի  
 առջեւ՝ Հռոմայեցւոց եւ Պարթեւաց ներկայութեամբ՝ արքայ  
 Պարթեւաց հռչակուեցաւ Պարթեւաց. (այս ամէնն 116ի  
 աշնան եւ 117ի ձմեռը): Միջագետաց անապատի մէջ Ատրա-  
 սպստամբած քաղաքին պաշարումն անյաջող էր, եւ բանա-  
 կին ալ պակասութիւնն ու նեղութիւնք մեծ էին: Տրայիա-  
 նոս ստիպուած էր Ասորիք դառնալ: Եւ երբ կը պատրաս-  
 տուէր կրկին Միջագետք արշաւելու՝ հիւանդացած Հռոմ  
 դառնալ պէտք եղաւ, եւ չհասած՝ մեռաւ ճամբան 117ին  
 Օգոստ. 7ին: Ասով իրերը բոլորովին փոխուեցան: Պարթա-  
 մասպատ չկրցաւ իւր գահը պահել, եւ խոսրով կրկին գեր-  
 իշխանութիւնը ձեռք ձգեց: Յաջորդ կայսրն Ադրիանոս  
 տեսնելով որ իբրեւ հռոմէական նահանգ անհնար է՝ առանց  
 մեծամեծ բանակներու՝ պահել Ասորեստան, Միջագետք եւ  
 Հայոց աշխարհը, թող տուաւ իրերը, եւ նաեւ հռոմայեցի  
 զօրքը յետս կոչեց, որով Եփրատ կրկին սահման եղաւ  
 ինչպէս էր յառաջ: Նոյն միջոցին Պարթամասպատ ստի-  
 պուած էր ելլել Պարթեւաստանէն, եւ իբրեւ վարձք առաւ  
 Ադրիանոսէ զՈւռայ եւ Ուռայաստանի գահը. (այսպէս  
 Գուտշմ. 146, որ՝ կ'ըսէ թէ ս'յս է Սպարտիանու՝ Ադրիան. 5  
 յիշածը, եւ թէ նոյն է Պարթեւաց Ուռայի որ կը յի-  
 շուի 119--123 տարիները, որուն ցայս վայր միա շէր գրուած,  
 Դիոնեսիոս Տելմահրէի սխալ ժամանակագրութեան պատ-  
 ճառաւ: Ըրայիանոս ծրագիրն ուրեմն ի վերջոյ ջուրն ին-  
 կած էր, թէեւ Պարթեւաց ներքին վիճակը տակաւին

բարևորած չէր: Խոսքովի հետ կը տեսնենք այս ատեն Աաղարշ Գ. «ըլայ իրր գահակից, ըլայ իրրեւ հակարքայ պետութեան մէկ մասին վրայ», (Գուտշ. 146.) եւ երկուքն ալ միաժամանակ դրամ հատանել կու տան: Ադրիանոսի հետ խաղաղութեամբ էին Պարթեւք, եւ եթէ գժտութեան վտանգ մը կար՝ Պարթամասպատ էր, որ իրրեւ արքայ դրացի Առհայաստանի միշտ վտանգ մըն էր Պարթեւաց գահուն: Ադրիանոս զիջաւ այնչափ որ 123ին հանուեցաւ Առհայի գահէն, եւ տեղը վերստին հաստատուեցաւ հին արքունի տունը. (այսպէս Գուշմ. 146 ըստ J. Dürr, die Reisen des Kaisers Hadrian, p. 48). Պարթամասպատ՝ եթէ այսպէս է իրօք, ասկէ ետքն է թերեւս որ Հայոց գահն ընտրուած ըլլայ, եթէ ինքն է այն արքայն (տես քիչ մ'ետքը): Ադրիանոս 130ին ետ խաւրեց նաեւ Խոսքովի դուստրը, բայց Պարթեւաց ոսկի գահուն յետս խաւրուելու բանակցութիւնք արդիւնք չունեցան: Այս միջոցին մեռած կ'երեւայ Խոսքով, որով առանձին գահի վրայ մնաց ծեր Աաղարշ Գ: Իւր այս վերջին ժամանակն էր Ալանաց կրկին հինահարութիւնը, զորոնք կոչած էր դարձեալ Արաց արքայն՝ Փարսման Բ, եւ որոնք 135ին աւերակ դարձուցին զՄարաստան եւ Հայոց եւ Քամրաց աշխարհներուն մէկ մասն, մինչեւ որ Աաղարշի պարգեւներով եւ Քամրաց հռոմայեցի կուսակալին՝ Փղաւիոս Առիանոսի՝ պատրաստութեամբք դրդուած ետ դարձան: Աաղարշ, կ'ըսուի, բողոքեց Ադրիանոսի՝ Փարսմանայ այս ընթացքին դէմ: Բայց Փարսման անձամբ Հռոմ երթալով շահեցաւ կայսրն եւ փառաւորուեցաւ ալ (136ին): Նկատելով այս վերջին կէտերը, Գուտշմիդ կը կարծէ թէ Աաղարշ Գ Պարթեւաց արքայն չէր այս բողոքողն, ինչպէս սովորաբար կը կարծուի. այլ, կ'ըսէ, ըլլալու է Հայոց արքայ մը Աաղարշ, այն՝ զոր Ադրիանոս պսակած էր 117ին եւ որուն անունը չի յիշեր Սպարտիանոս (Ադր. 21.) եւ որուն յաջորդ մ'եղաւ 140—3 տարեաց մէջ (Գուտշ. 147:) Թերեւս այս՝ լաւագոյնն է: Աւրիշներն այլազգ կը կարծեն հասկընալ: Այսպէս կը կարծէ Քաթրճ. (Տիեզ. Պամ. Բ, 174—5 եւն.) թէ նոյն ինքն Պարթամասպատ էր (ըստ Մաղաղասայ նոյն իսկ որդի Աշխադարայ, ինչպէս ըսինք) որ Հռոմայեցւոց կողմանէ եւ նաեւ Պարթեւաց հաւանութեամբ եւ Հայոց խնդրելովն՝ եկաւ առաւ Հայոց գահը, Պարթեւաց գահէն հրաժարելու բռնադա-

տուեւէն ետեւ, եւ 139ին մեռնելով՝ Հռոմայեցիք տեղը  
 գրին իւր սերնդէն զ“Ա+Է+Է+Է” Անտոնինոս Պիոսի օրով եւ  
 անոր հրամանաւ (140ին. այսպէս “Յամբղիկոս Բարեղանացի  
 ի Բանագործականին իւրում, առ Փոտայ Մատենագար.  
 94.” առ այս առնելով Անտոնինեայ դրամն 140-143 տա-  
 րիէն, տես անդ, եւ ըստ սմին՝ Գարագաշ, Պոմ. Բ., 259:)  
 Այս ամենն ի հարկէ՝ առանց Պարթեւաց հաւանութեան  
 սպասելու: Աւերջնոյն յաջորդեց կ’ըսուի որդին Սոյեմոս, այն՝  
 որուն պատճառաւ կրկին յուզուեցաւ հինօրեայ վէճը՝  
 Աաղարշայ Գ եւ Ղուկիոս Աերոսի ժամանակ. (տես վարը:)  
 Հակասական այս կէտերը դոնէ մասամբ վերցընել կարելի  
 էր թերեւս, եթէ ընդունէինք որ Պարթամասպատ — զոր  
 ամենայն իրաւամբ Առահայի գահուն վրայ կ’ըսէ Գուաշմիդ  
 119—123 տարիները, այս տարիէն ետքն՝ Առահայէ ելլել  
 ստիպուած՝ Ագրիանոսէ առած ըլլայ Հայոց աշխարհը. եւ  
 թերեւս ինքր չէր ապրէր մինչեւ 139, այլ այն “Աաղարշն”  
 եթէ համամիտ ըլլանք Գուաշմիդի տուած մեկնութեան,  
 եւ այս Աաղարշէն ետքն ըլլայ “Աքեմենիդ” Սոյեմոս:  
 Աւերջին խնդրոցս մասին՝ ուրիշ տեղ մը: Ինչեւիցէ՝ այս  
 զարմանալի արքայս Աաղարշ Գ կ’ապրէր տակաւին մինչեւ  
 147 տարին, որ տարիէն ալ դրամ ունի: Բայց մեռած է  
 նոյն տարին, եւ իւր յաջորդը՝ Աաղարշ Գ՝ դրամ ունի  
 148 տարիէն, որով Աաղարշայ Գ անմիջական յաջորդն է  
 Աաղարշ Գ, առաջնոյն գահ ելլելէն 71 տարի ետքը, բազ-  
 մաթիւ գահակցաց եւ հակառքայից մեռնելէն ալ շատ  
 ետքը, դոնէ իբր 96 տարեկան եղած: (Տես Գուաշ.  
 137-147:)

(Արշ-ի ԻԳ, 2.) Արտաւան Գ. դրամները 80  
 եւ 81 տարիներէն Յ. Բ. երկու շորեքդրամեան,  
 առաջինն՝ Ալիշանի հաւաքմանէն, երկուքն ալ շատ  
 ցանցառ: Նկարագիրն է՝ յառաջակողմն Արտաւա-  
 նայ Գ պատկերը սրածայր մօրուօք, երկար եւ  
 գանգրահեր մազով, գլուխն՝ ապարօշ, ականջն՝  
 օղ, վիզը մանեակ եւ կուրծքը՝ լանջապանակ:  
 Յետսակողմը՝ Արտաւան Գ բարձր թիկնագահի  
 վրայ բազմած, առջեւը կեցած Բախտ՝ պատմուճա-  
 նաւոր եւ վերնագգեստով, գլուխը բրգաւոր թա-  
 գով որ աջովն ապարօշ կու տայ արքային, իսկ

ձախով իշխանութեան երկար ցուպ մը բռնած: Արձանագիրն է՝ (βασι)λε(ωσ) βασιλεω(ν) Αρσα(χου) Αρταβα(νου) (δικ)αιο(υ) επιφαν(ουσ) (φιλελληνοσ) (“Արքայի արքայից Արշակայ Արտաբանու Արդարոյ Նշանաւորի Հելլենասիրի:”) Տարեթիւն է՝ ΒΦΤ = 392 Սելեւկ. երկու կտորին ալ, որոնց առաջնոյն ամիսն ինկած է, երկրորդինը՝ Գէսիոս: Կշիռն՝ 13.63 եւ 12.77: (Տես էջ 143:)

(Արշ-ի ԻԵ.) Բ-ի-ը Բ, 77—110 (?) Յ. ք. 32 կտոր՝ երկու բաժնով, այն տարբերութեամբ որ առաջին բաժնին դրամոց մէջ Բակուր միայն ապարոջ կը կրէ, երկրորդ բաժնին մէջ՝ սաղաւարտ եւ ապարոջ: Ա բաժնին կը վերաբերին 10 չորեքդրամեան, 3 դրամ եւ 8 պղինձ: Չորեքդրամեանց նկարագիրն է (Թ. 1.) յառաջակողմը՝ Բակուրայ Բ պատկերն անձօրուս, երկար գանգրաճեր մազով. գլուխն՝ ապարոջ, վիզը՝ մանեակ եւ կուրծքը՝ լանջապանակ. գլխուն ետեւը Ա. Յետսակողմը՝ Բակուր Բ արքունի տարազով բարձր թիկնագաճի վրայ նստած, առջեւը կեցած է Բախտն պատմուճանաւոր եւ վերնազգեստով, գլուխը բրդաւոր թագով, որ իրեն ապարոջ կու տայ, ձախով ալ իշխանութեան ցուպը բռնած: Արձանագիրն է՝ (βασιλεωσ) (βασιλεων) (Αρ)σα(χου) Παχορο(υ) δικαιου επιφανουσ (φιλ)ελληνοσ (“Արքայի արքայից Արշակայ Բ-ի-ը Արդարոյ Նշանաւորի Հելլենասիրի:”) Տարեթիւն է ՊΠΤ = 389 Սելեւկ., ամսոյ անունը մաշած. կշիռը՝ 12.95. ցանցառ: Բրիտ. թանգարան ճիշդ այս տպով չորեքդրամեան մը կայ՝ ամիսը Գիստրոս: Միւս չորեքդրամեանց թուականքն են՝ Թ. 2—3 նոյն 389 տարին, ամիսներն ինկած, արքային գլխուն ետեւը Β եւ Γ, կշիռ 13.32 եւ 13.74. — Թ. 4—5՝ ΦΤ = 390, ամիսներն ինկած կամ անընթեանի. գլխուն ետեւը Γ եւ Δ, կշիռ 13.21 եւ 13.46. — Թ. 6՝ ΑΦΤ = 391, ամիսն ինկած. գլխուն ետեւ

E. կշիռ 11.66, շատ ցանցառ. — Թ. 7 յառաջա-  
 կողմը՝ Բաղուրայ Բ պատկերը, մօրուաց տէգք նոր  
 արձակուած, երկար գանգուրներով, գլուխն ապա-  
 րօշ, վիզը՝ մանեակ եւ կուրծքը՝ լանջապանակ.  
 գլխուն ետեւ Ա. յետսակողմը՝ Բաղուր Բ արքունի  
 տարազով ձիու վրայ նստած, ձախը ձիուն գաւակին  
 յեցուցած, իսկ աջն դէպ ի առջեւ կարկառած.  
 Բախտը՝ առջեւ կեցած՝ պատմութեան աւեր եւ վերնա-  
 զգեստով, գլուխը բրգաւոր թագով, արքային ապա-  
 րօշ կու տայ. Բախտին ետեւը՝ Բաղուրայ դարձած՝  
 գլխաբաց այր մը պարթեւական տարազով որ աջով  
 բան մը կու տայ արքային (կ'երեւայ ապարօշ.) տա-  
 րեթիւն է  $\Gamma(\Phi T) = 393$ . ամիսն՝ անընթեռնլի.  
 կշիռն՝ 12.46. շատ ցանցառ: Ասոր պէս են՝ Թ. 8,  
 արքային գլխուն ետեւ B. տարին՝  $\Delta\Phi T = 394$ ,  
 ամիսն ինկած. կշիռն 15.50, շատ ցանցառ. —  
 Թ. 9, գլխուն ետեւ  $\Delta$ . տարին  $\Delta III$  (անշուշտ վրի-  
 պակ փխ.  $\Delta\Phi T = 394$ .) ամիսն ինկած. կշիռը՝  
 9.22. շատ ցանցառ. — Թ. 10՝ գլխուն ետեւ  
 A, տարին  $\Delta Y = 404$ . ամիսը ջնջուած, կշիռը  
 11.91. շատ ցանցառ: Բրիտ. թանգարան կայ շո-  
 րեքդրամեան մ'ալ այս տպով եւ  $\zeta\Phi T = 396$   
 թուականաւ: — Երեք դրամներուն (Թ. 11—3)  
 յառաջակողմը նոյն, միայն Բաղուր դարձեալ ան-  
 մօրուս է, մազը թեթեւ գանգուրներով եւ ականջ-  
 ալ օղ կայ. յետսակողմը՝ Արշակ ի գահի աղեղ-  
 նաւոր. աղեղան տակ՝ մենագիր. արձանագիրն՝  
 βασιλεως βασιλεων Αρσαχου ευεργετου δικαιου  
 επιφανους (φιλελ)ιγνος (“Արքայի արքայից Ար-  
 շակայ Բարեգործի Արդարոյ Նշանաւորի Հելլենա-  
 սիրի.”) տառերը խառնակ եւ սխալածեւ. կշիռը  
 3.54. (միւսներունը՝ 3.66. եւ 3.32:) Պետերբուրգի  
 թանգարանը ձիշղ այս տպով դրամ մը կայ՝ այն  
 տարբերութեամբ որ առաջակողմը արքային գլխուն  
 ետեւ պահլաւ-արամէական տառերով գրուած է  
 PK (անշուշտ՝ Բաղուր:) — Պղինձներուն (Թ.

14—21) յառաջակողմը չորեքդրամեանց համեմատ է, մօրուաց տէգք նոր արձակուած. յետսակողմը Բախտ՝ գլուխը բրգաւոր թագով, գլխուն առջեւ Ա (թ. 14. կշիռը 3.40:) Միւսները նոյն՝ բայց սա կարեւոր տարբերութեամբ որ առաջակողմն արքային գլխուն առջեւ տարեթիւ կայ, այսինքն՝ թ. 15՝ AΦT = 391, կշիռ 3.62. — թ. 16—17՝ ΔΦT = 394, կշիռ 2.52 եւ 3.02. — թ. 18՝ ΣΦT = 396, կշիռ 3.23, շատ ցանցառ. — Իսկ թ. 19—21 յառաջակողմը արքային պատկերը թ. 11—13 դրամոց համեմատ, անմօրուս, թեթեւ գանգուրներով, գլուխն ապարօշ, ականջն օղ, վիզը մանեակ եւ կուրծքը լանջապանակ. յետսակողմը՝ գեղեցիկ կուժ մ'երկու ունկերով. (կշիռ՝ 1.13 եւ 1.42 եւ 1.14.) Թուական շունին: — Բ. բաժնին կը վերաբերին չորս չորեքդրամեան, երկու դրամ, մէկ երեքլումայ, եւ չորս պղինձ: Այս չորեքդրամեանց առաջակողման պատկերն արդէն տարբերութիւն ունի (թ. 22—25). Բախուր կարճ մօրուք ունի, գլուխը՝ սաղաւարտ, եւ ապարօշ, ականջն օղ, վիզը մանեակ եւ կուրծքը լանջապանակ. գլխուն ետեւը (թ. 1)՝ B. յետսակողմը Բախուր արքունի տարազով թարձր թիկնագահի վրայ, առջեւը կեցած է Բախտ պատմուճանաւոր եւ վերնագգեստով, գլուխը բրգաւոր թագով որ իրեն ապարօշ կու տայ, ձախով իշխանութեան ցուպ բռնած: Արձանագիրը՝ (βασιλεως) βασιλεων Αρσαχου Παχορου (δικαιου) επιφανο(υς) (φιλελληνος.) (“Արքայի արքայից Արշակայ Բ-ի-ւ-ր-ու- Արարոյ նշանաւորի Հելլենասիրի:”) Տարեթիւր (թ. 22) ΔΥ = 404. ամիսն ինկած. կշիռ՝ 9.40, շատ ցանցառ: Միւսներն են՝ թ. 23 նոյն 404 թուականաւ, ամիսն ինկած. կշիռ՝ 8.68. շատ ցանցառ. — թ. 24, արքային գլխուն ետեւ Ա, տարեթիւ EY = 405, ամիս Աւգիւնէոս. կշիռ 7.87. շատ ցանցառ. — թ. 25, արքային գլխուն

ետեւ  $\Delta$ . տարեթիւր  $\zeta\Upsilon = 406$ . ամիսն ինկած. կշիռ՝ 10.35. շատ ցանցառ: — Բերլինի թանգարանը կայ Պրոկէշ-Ոստէնի հաւաքմանէն չորեքդրամեան մը թ. 22ի տպով, եւ թուականաւ  $\Sigma\Upsilon = 407$  (?): Մտադիր կ'ընէ Հեղինակն որ Բակուրի Բ  $\Delta\Upsilon - \text{ZY}$  ( $= 404 - 7$ ) տարիներէն եղած չորեքդրամներուն յառաջակողմը շատ նման է Վաղարշ Գ արքայի չորեքդրամեաններուն յառաջակողման: Երկու արքայից պատկերները կը զանազանուին անով որ Բակուրի պարանոցի մանեակը չորեքկին է, Վաղարշինը՝ երեքկին: Այս՝ թէեւ դուրսաքայ՝ տարբերութեան մտադիր ըլլալու է, այնու առաւել որ արքայից անունը շատ անգամ չի կրնար գտնուիլ յետսակողմը՝ կաղապարին կոխելու կերպին պատճառաւ դուրս ինկած կամ ընդհանրապէս մաշած ըլլալով: Առանց այս մտադրութեան՝ շատ դիւրին է օրինակի համար որ Բակուրի Բ մէկ չորեքդրամեանն՝ որուն տարեթիւր  $\Delta\Upsilon$  ( $= 404$ ) է՝ ըստ պատահման կամ նոյն իսկ դիտմամբ փոփոխուած ըլլայ  $\Lambda\Upsilon = 430$  ձեւին, եւ անուշադիր հաւաքող մը խաբուելով իբրեւ Վաղարշայ Գ մէկ անձանօթ դրամը համարի: — Երկու դրամոց (թ. 26—7) յառաջակողմը՝ Բակուր Բ շատ կարճ մօրուօք է. նոյն է մնացեալը՝ սաղաւարտ, ապարօշ, օղ, մանեակ եւ լանջապանակ. յետսակողմը՝ Արշակ Ի գահի աղեղնաւոր. աղեղանտակ՝ մենագիր. արձանագիրը՝ βασιλεωσ βασιλεων Αρσαχου ευεργετου δικαιου επιφανουσ φιλελληνοσ (“Արքայի արքայից Արշակայ Բարեգործի Արդարոյ Նշանաւորի Հելլենասիրի.”) բայց շատ խառնակ եւ սխալածեւ գրուած. կշիռ՝ 3.72 եւ 3.75. ցանցառ: Եռալուծայն (թ. 28) եւ պղինձներն ալ (թ. 29—32) նոյն պատկերն ունին՝ Բակուր Բ շատ կարճ մօրուօք եւն, բայց թ. 28—30 առանց լանջապանակի. յետսակողմը՝ Բախտ գլուխը բրգաւոր թագով (թ. 28—30.) Յաղթութիւն պատմու-



ճանաւոր՝ ձեռքը պսակ եւ ձախ ուտը՝ արմաւենի (Թ. 31 - 2:) կշիռը (Թ. 28) 1.53, մնացեալները կարգաւ՝ 1.36, եւ 0.96, եւ 1.46, եւ 1.33: (Տես էջ 144 - 9:)

(Արշակ ԻԶ.) ԽՈՍՐՈՎ, 106(°) կամ 108 - 130(°).  
 րնդ ամենայն 28 կտոր, մեծաւ մասամբ պղինձ (Թ. 1 - 24, 28) եւ միայն 3 դրամ (Թ. 25 - 7):  
 Պղինձագրամոցս նկարագիրն է (Թ. 1) յառաջակողմը Խոսրովայ պատկերը սրածայր լիամօրուօք. գլխուն երկայն մազն արուեստական կերպով ամփոփուած է դնդաձեւերու, գլուխն՝ ապարօշականջն՝ օղ, վիզը մանեակ եւ կուրծքը լանջապանակ: Յետսակողմը՝ Արտեմիս կարճ պատմուճանաւ, գլուխը թագ, աջով պատկանդարանէ նետ մը կը հանէ, ձախով աղեղ բռնած: Արձանագիրը միայն՝ ΒΑΙΛΕΥ(Σ) ΧΟΣΡΟΙ ("Արշակ Խոսրով.") յունական "արքայ" բառին Α տառին տակ կրկնուած տառ մը Σ, եւ "Խոսրով" անուան տակ Ο մը. կշիռ 3.57 գր. շատ ցանցառ՝ Ալիշանի հաւաքմանէն: Նոյնպէս շատ ցանցառ եւ նոյն հաւաքմանէն է՝ Թ. 2, որուն արձանագիրը թերակատար է, կշիռ 3.72: Սիւս պղինձներուն յառաջակողմը նոյն, իսկ յետսակողմը՝ Բախտ բրգաւոր թագով, եւ ասոր գլխուն քով տարեթիւ. (Թ. 3 գլխուն ետեւն ալ Λ.) իսկ մէկ մասին վրայ առաջակողմը արքային գլխուն ետեւ՝ Α, Β (Թ. 5 - 6): Տարեթուերն են՝ Թ. 3. ΚΥ = 420, շատ ցանցառ, կշիռ՝ 8.72. — Թ. 4. ΑΚΥ = 421, ցանցառ, կշիռ՝ 4.57. — Թ. 5. ΓΚΥ = 423 ցանցառ, կշիռ՝ 15.84. — Թ. 6 - 7 տարեթիւ չունին՝ կաղապարէն դուրս ինկած ըլլալով, կշիռ՝ 11.80 եւ 18.43. — Թ. 8՝ ΔΚΥ = 424, կշիռ՝ 10.69. — Թ. 9 - 11՝ ΗΚΥ = 428, կշիռ 9.57 եւ 4.52 եւ 4.13. — Թ. 12 - 14՝ ΘΚΥ = 429, կշիռ՝ 8.15, եւ 4.10, եւ 3.63. — Թ. 15՝ ΒΛΥ = 432, կշիռ՝ 1.18, շատ ցանցառ. — Թ. 16՝ ΓΛΥ = 433, կշիռ՝ 13.45,

չատ ցանցառ. — Թ. 17՝  $\Delta\Lambda Y = 434$ , կշիռ՝ 4.35, շատ ցանցառ. — Թ. 18՝  $Z\Lambda Y = 437$ , կշիռ՝ 1.17 շատ ցանցառ. — Թ. 19—21 անթուական՝ կաղապարէն դուրս ինկած ըլլալով, կշիռ՝ 2.39, եւ 3.74, եւ 1.41: — Թ. 22էն սկսեալ արքային մազերը ծոծրակին վրայ մէկ մեծ գնդի ամփոփուած են, գլուխը՝ սաղաւարտ եւ ապարոշ, նոյն՝ մանեակ եւ լանջապանակ. յետսակողմը Թ. 22—3 կիսանձնեայ պատկեր Բախտի, ետեւը թուական. Թ. 24՝ Բախտը կանգուն կեցած պատմուճանաւ եւ վերնազգեստով, գլուխը բրգաւոր թագով, աջով՝ արմաւենի եւ ձախով իշխանութեան ցուպ բռնած, ետեւը թուական: Թուականն է երեքին ալ՝ Թ. 22—4՝  $\Theta\Lambda Y = 439$ , կշիռն՝ 3.40, եւ 3.88 եւ 5.83: — Բրիտ. թանգարանը կայ շատ մանր պղնձադրամ մ'ալ իբր 11 հազարերորդամետր տրամագծով. արքային պատկերը՝ ոչ եթէ կիսադէմ կամ կողմնակի՝ միւսներուն պէս, այլ ամբողջ երեսով առջեւէն նայելով. յետսակողմը Բախտին կիսանձնեայ պատկերը, բրգաւոր թագով, ետեւը՝ Ա, վարը թուականը՝  $\Theta KY = 429$ : — Գրամներուն (Թ. 25—7) առաջակողման պատկերին մէջ Խոսրով սրածայր մօրուօք է, երկայն մազերը նոյնպէս գնդաձեւ ամփոփուած, գլուխն՝ ապարոշ, ականջն՝ օղ, վիզը՝ մանեակ եւ կուրծքը՝ լանջապանակ: Յետսակողմը՝ Արշակի ի գահի աղեղնաւոր. աղեղան տակ՝ մենագիր. արձանագիրը՝  $\beta\alpha\sigma\iota\lambda\epsilon\omega\varsigma \beta\alpha\sigma\iota\lambda\epsilon\omega\nu \text{ } \Lambda\rho\epsilon\alpha\chi\omicron\upsilon \text{ } \epsilon\upsilon\epsilon\rho\gamma\epsilon\tau\omicron\upsilon \text{ } \delta\iota\chi\alpha\iota\omicron\upsilon \text{ } \epsilon\pi\iota\phi\alpha\nu\omicron\upsilon\varsigma \text{ } (\phi\iota\lambda\epsilon)\lambda\lambda\eta(\nu\omicron\omicron\varsigma)$  («Արքայի արքայից Արշակայ Բարեգործի Արդարոյ Նշանաւորի Հելլենասիրի.») տառերը խառնակ եւ սխալաձեւ: Ասոնց կշիռը՝ 3.67, եւ 3.78, եւ 3.63. Երեքն ալ ցանցառ: — Թ. 28 պղինձն այլազգ ունի արքային պատկերը՝ սրածայր մօրուօք, բայց երկայն գանգրահներ մազ. գլուխն՝ ապարոշ եւ վիզը մանեակ: Յետսակողմը՝ Բախտ գլուխը բրգաւոր թա-

գով. տարեթիւը կը պակսի՝ կադապարէն գուրս ինկած. կշիռը 1.03, շատ ցանցառ:

Հեղինակը մտադիր կ'ընէ որ Թ. 1—27 դրամոց արքայն ամենայն ապահովութեամբ խոսրով է: Միայն Թ. 28 պղնձին համար կարելի չէ վճռակի ըսել նոյնը. եւ շատ կարելի է որ խոսրովի մէկ ուրիշ ժամանակակիցն ըլլայ դրամն հատանել տուողը, ինչպէս արդէն Գարդնէր (էջ 204) մատնանիշ ըրած էր: (Տես էջ 150—153:)

(Արշակ ԻԶ, 2.) ՄԻՀՐԴԱՏ (ՄԵՀՐԴԱՏ) Զ, իբր 116(?) Յ. Ք. Ընդ ամէնը 28 կտոր՝ երկու խմբով: Ա խմբի կը վերաբերին 5 դրամ, 5 պղինձ: Գրամներուն (Թ. 1—5) յառաջակողմը՝ Միհրդատայ Զ պատկերը, երկայն սրածայր մօրուօք, թեթեւ գանգրահներ մազով. գլուխն՝ ապարօշ, ականջն՝ օղ, վիզը մանեակ եւ կուրծքը լանջապանակ: Յետասակողմը՝ Արշակ ի գահի աղեղնաւոր. աղեղան տակ՝ մենագիր. արձանագիրը՝ βασιλεω(c) βασιλεων Αρσαχου ευεργετου δικαιου επιφαν(ουc) (φιλε)λληνος (“Արքայի արքայից Արշակայ Բարեգործի Արդարոյ Նշանաւորի Հելլենասիրի:”) Ասոնց կշիռը կարգաւ՝ 3.49, եւ 3.81, եւ 3.32, իսկ Թ. 4—5՝ 3.49, եւ շատ ցանցառ: — Պղինձներուն (Թ. 6—10) յառաջակողման պատկերը՝ նոյն. յետասակողմը՝ կ'երեւայ կին մը՝ զգեստով որ մէջքէն վեր զուպուած է, մէջքը գօտի, իսկ գօտիէն վար լայնատարած եւ բազմախորշ, աջով արմաւենի բռնած (Թ. 6, կշիռ 1.53.) ձիու գլուխ (Թ. 7 եւ 10, կշիռ 1.50 եւ 1.01.) արծիւ՝ կտցով ապարօշ մը բռնած (Թ. 8—9, կշիռ 1.55 եւ 1.10: ) — Բ. բաժնին կը վերաբերին՝ երեք դրամ եւ 13 պղինձ: Գրամներուն (Թ. 11—13) առաջակողման պատկերը նոյն է, միայն լանջապանակ կը պակսի: Նոյնպէս յետասակողմը՝ Արշակ ի գահի աղեղնաւոր, աղեղան տակ մենագրեր: Արձանագրութիւնը կրկին լեզուաւ, (նախ պահլաւ-արամէական) Mitradata

malka “Միհրդատ արքայ” (եւ երկրորդ՝ սովորական յունական) βασιλεων Αρσαχου ευεργετου δειχαιου επιφανουσι φιλελληγος “արքայից Արշակայ Բարեգործի Արդարոյ Նշանաւորի Հելլենասիրի. . . տառերը խառնակ եւ սխալածեւ: Ասոնց կշիռը Թ. 11՝ 3.19, ցանցառ: Ցանցառ են միւս երկուքն ալ, 3.70 եւ 3.73: — Պղինձներուն նախ մէկ մասին (Թ. 14 – 21) յառաջակողման պատկերը նոյն է, նոյնպէս առանց լանջապանակի. յետասակողմը՝ պէսպէս անասնոց դրոշմներ, այսպէս՝ սապատաւոր եղն (Թ. 14 – 6. կշիռ 1.39 եւ 1.08, եւ 1.12.) եղջիւրաւոր ոչխար (Թ. 17 – 8, կշիռ 0.75 եւ 1.08.) եզան գլուխ (Թ. 19, կշիռ 1.04.) ձիու գլուխ վզով (Թ. 20, կշիռ 1.22 շատ ցանցառ): Նշանաւոր է Թ. 21 շատ ցանցառ պղինձն, որուն յետասակողմն է՝ արքայի մը պատկերը երկար լիամօրուօք, երկայն թեթեւ գանգրահներ մազով եւ ապարօշով, կշիռը 0.77: — Մտադիր կ'ընէ Հեղինակն որ Թ. 11 – 21 առանց որեւէ երկբայութեան Միհրդատայ Չ կը վերաբերին. եւ որովհետեւ Թ. 1 – 10 ալ վերջնոցս հետ շատ մեծ նմանութիւն ունին, ասոնք ալ նոյն արքայէն բխալու են: Թ. երեւս նոյնպէս նոյն արքային դրամներն են Թ. 21 – 25 պղինձներ, որոնց առաջակողմը կ'երեւայ՝ ըստ երեւութին՝ նոյն Միհրդատայ Չ պատկերը, երկայն մօրուօք եւ երկայն մազով, ապարօշով եւ մանեկով. յետասակողմը (Թ. 22) մօրուօքաւոր մարդու մը պատկերը, գլխու մազը՝ կարծ. գլխուն առջեւ թերակատար եւ անրնթեռնի արձանագրութիւն մը. (շատ ցանցառ, կշիռ՝ 1.97): Ճիշդ այս տպով պղինձ մ'ալկայ Բրիտ. թանգարանը, որուն արձանագրութիւնը նոյնպէս լաւ ընթեռնի չէ: Longpérier եւ Gardner կը կարծեն արձանագրութեան մէջ գտնել ΔΚΥ = 424 Սելեւկ. թուականը, բայց Wroth կը գտնէ ΔΡCΔ տառերը, եւ կը կասկածի

Թէ Միհրդատայ Ջըլայ, այլ անորոշ դրամներու կարգը կը դնէ: (Այս հետաքրքրական դրամը տես Վ. Բոթ, էջ 222 եւ 253, Տխտ. ԼԷ, 5. Longpérier, էջ 140, Տխտ. ԺԶ, 192. Գարդնէր, էջ 55, Տխտ. Զ, 23:) — Թ. 23—5 պղինձներուն առաջնակողմը նոյն է Թ. 22ի հետ, յետսակողմը պէսպէս նշաններ եւ մենագրեր, իսկ Թ. 24՝ արծիւ կտցով պսակ բռնած, ետեւը՝ մահիկ: Կշիռը՝ Թ. 23՝ 0.97, շատ ցանցառ. Թ. 24՝ 1.55, եւ Թ. 25՝ 1.14, շատ ցանցառ: — Յուցակիս տպագրութեան ժամանակը ստացած է Հեղինակն երեք պղինձ ալ՝ Թ. 26—8, որոնց առաջակողմը առանց երկբայութեան Միհրդատայ Ջ պատկերն է նոյնպէս. յետսակողմը՝ կ'երեւայ Պալլաս (Թ. 26—7) եւ փղի գլուխ, բայց ոչ շատ որոշ (Թ. 28). երեքն ալ շատ ցանցառ: Ասոնց կշիռն՝ 0.92, եւ 1.64 եւ 1.15: (Տես էջ 154—157:)

(Արշակ ԻԶ, 3.) Պարթևաստուտ, 117 Յ. Բ. Դրամ չէ գտնուած:

(Արշակ ԻԷ.) Վաղարշ Դ, 147—191 Յ. Բ. 66 կտոր, որոնց 44 չորեքդրամեան, 3 դրամ, 1 արծաթախառն պղինձ եւ 18 պղինձ: Բազմաթիւ չորեքդրամեաններուն՝ որոնք տարեթուով են՝ նկարագիրն է (Թ. 1.) յառաջակողմը՝ Վաղարշայ Դ պատկերը՝ երկայն լիամօրուօք, գլուխն՝ սաղաւարտ եւ ապարօշ, ականջն՝ օղ, վիզը՝ մանեակ եւ կուրծքը՝ լանջապանակ. գլխուն ետեւ Ա (միայն Թ. 1, միւս ամէնուն վրայ՝ B.) յետսակողմը՝ Վաղարշ Դ արքունի տարազով բարձր թիկնազահի վրայ. առջեւը կեցած է Բախտ՝ պատմութեանաւոր եւ վերնազգեստով, գլուխը բրգաւոր թագ, որ իրեն ապարօշ կու տայ աջով, ձախով բռնած իշխանութեան ցուպը: Արձանագիրն է՝ βασιλ(εωσ) βασιλεω(ν) (Αρσαχου) (Θλ)αγα(ου) (δικαιου) επιφανο(υσ) φιλελληνη(οσ) (“Արքայի արքայից Արշակայ Վաղարշայ Արդարոյ նշանաւորի Հելլենասիրի.”)

Տարեթիւր՝  $\Theta NY = 459$ , ամիսն՝ անընթեռնիկ կշիռն՝ 8.84 գր., շատ ցանցառ: Միւսներուն տարեթուերն են՝ թ. 2՝  $\Xi Y = 460$ , ամիս՝ Գիոս. կշիռ՝ 9.93. ցանցառ: — թ. 3՝  $A \Xi Y = 461$ , (ամիս) Պանեմոս. (կշիռ) 13.35. թ. 4՝  $B \Xi Y = 462$ , Ապեղղէոս, 13.55: — թ. 5՝  $\Gamma \Xi Y = 463$ , Ապեղղէոս. 12.65. — թ. 6՝  $\Delta \Xi Y = 464$ , Ապեղղէոս (խնդրական.) 10.55. — թ. 7՝  $E \Xi Y = 465$ , Գիոս. 10.84. — թ. 8՝  $\zeta \Xi Y = 466$ , ամիսն ինկած. 13.60. — թ. 9՝  $Z \Xi Y = 467$ , ամիսն ինկած. 10.69. թ. 10՝  $H \Xi Y = 468$ , ամիսն ինկած, 12.94. — թ. 11՝  $\Theta \Xi Y = 469$ , ամիսն ինկած, 10.58. — թ. 12՝  $OY = 470$ , ամիս  $Y \Lambda \Delta N$  (= կ'երեւայ  $A Y \Delta Y N \Lambda I \square Y$ , Աւդիւնէոս.) 11.36, ցանցառ. — թ. 13՝  $\Lambda OY = 471$ , ամիսն ինկած. 12.13, ցանցառ. — թ. 14՝  $BOY = 472$ , Գիոս. 13.64, ցանցառ. — թ. 15՝  $\Gamma OY = 473$ , Գիոս, 13.09, ցանցառ. — թ. 16՝  $\Delta OY = 474$ , ամիսն ինկած. 13.50, ցանցառ. — թ. 17՝  $EOY = 475$ , Ապեղղէոս. 13.21, ցանցառ: — թ. 18՝ նոյն  $EOY = 475$ , ամիսն ինկած. 10.90, ցանցառ. — թ. 19՝  $\zeta OY = 476$ , Ապեղղէոս, 13.09, շատ ցանցառ. — թ. 20՝  $Z OY = 477$ , Գիոս, 9.08, շատ ցանցառ. — թ. 21՝  $\Theta OY = 479$ , ամիսն ինկած. 13.42, շատ ցանցառ. — թ. 22՝  $\Pi Y = 480$ , Պանեմոս, 12.95. — թ. 23՝  $A \Pi Y = 481$ , ամիսն ինկած, 13.38. — թ. 24՝  $B \Pi Y = 482$ , Պանեմոս, 12.91. — թ. 25՝  $\Gamma \Pi Y = 483$ , ամիսն ինկած, 13.90. — թ. 26՝  $\Delta \Pi Y = 484$ , Գիոս, 15.60. (արձանագրութեան մէջ  $\text{Κυεργετης}$  «Բարեգործ», փոխանակ «Նշանաւոր», բառին. այսպէս նաեւ թ. 27—8.) — թ. 27՝  $E \Pi Y = 485$ , ամիսն ինկած. 13.82. — թ. 28՝  $\zeta \Pi Y = 486$ , Գիոս, 10.29. — թ. 29՝  $Z \Pi Y = 487$ , Գիոս. 13.47. (արձանագրութեան մէջ արքային անունը  $\Theta \lambda \sigma \gamma [a - \sigma \upsilon]$  ուղղագրութեամբ.) — թ. 30՝  $H \Pi Y = 488$ ,

Քսանթիկոս, 14.58. — թ. 31՝ ΘΠΥ = 489, ամիսն ինկած. 13.52. — թ. 32՝ ϘΥ = 490, ամիսն ինկած. 11.37. — թ. 33՝ ΑϘΥ = 491, Լովոս, 13.27. — թ. 34՝ ΒϘΥ = 492, ամիսն ինկած. 13.04. — թ. 35՝ ΓϘΥ = 493, ամիսն ինկած. 12.29. — թ. 36՝ ΔϘΥ = 494. ամիսն ինկած. 11.72. — թ. 37՝ ΕϘΥ = 495, ամիսն անընթեռնի. 11.69. — թ. 38՝ ϘϘΥ = 496, Հիւպերբերեատոս. 9.82. — թ. 39՝ ΖϘΥ = 497, ամիսն ինկած. 12.30. — թ. 40՝ ΗϘΥ = 498, ամիսն ինկած. 13.20. — թ. 41՝ ΘϘΥ = 499, ամիսն ինկած. 11.56. — թ. 42՝ ϕ = 500, ամիսն ինկած, 12.74. (արքային անունն *Ολογαου* ուղղագրութեամբ.) — թ. 43՝ Αϕ = 501, ամիսն ինկած. 12.79, ցանցառ. (անունն *Ολογαου* ուղղագրութեամբ.) — թ. 44՝ Βϕ = 502, ամիսն ինկած, 12.97. (անունն *Ολογαου* գրուած):

Այսպէս Վաղարշայ Դ թագաւորութեան ամէն տարիներէ չորեքդրամեան կայ ծանօթ տարեթուով: Ըստ Հեղինակին թ. 1՝ Սելեւկեան 459 տարիէն՝ Վաղարշայ Դ ամենաՏինն ըլլալու է եւ ցայժմ անծանօթ էր: Յանցառագոյն են Սելեւկ. 475—80 տարիներէն դրամներ, որուն մեկնութիւնը, կ'ըսէ, ըլլալու է նոյն տարիներուն խեղճ հանգամանքները՝ պատերազմներ Հռոմայեցւոց դէմ եւ անոնց յաջորդող ժանտախտի արհաւիրքն: Հեղինակին Հաւաքման մէջ կը պահուի Սելեւկ. 478 տարիէն չորեքդրամեան, որմէ հատ մը կայ Բերլինի Թանգարանը՝ Պրոկէշ-Ոստէնէ նկարագրուած: Սելեւկեան 502 թուականը կրող չորեքդրամեանն արքայիս ամենավերջինն է. եւ արդէն նոյն տարիէն դրամ կայ իրեն յաջորդին՝ Վաղարշայ Ե:

Վաղարշայ Դ օրերէն սկսեալ եւ իւր յաջորդաց ժամանակ՝ չորեքդրամեաններուն մետաղն երթալով անարժէք կ'ըլլայ եւ դրամահատութեան անյարմար, որով դրամահատութիւնը կը սկսի թե-

րակատար եւ թերադրոշմ ըլլալ: Բաց աստի կը կորսուի դրամները կաղապարելու յունական գեղեցիկ արուեստը՝ զոր ուրախութեամբ կը տեսնէինք Արշակունեաց չորեքդրամներուն վրայ մինչեւ 27 թուականը Ն. Ք., եւ որուն բարերար յետեւորդ-ազդեցութիւնը կ'երեւար տակաւին պարթեւական այս դրամներուն վրայ մինչեւ մեր թուականութեան Ա դարուն վերջերը: Յունական այն արուեստին՝ (որով չորեքդրամեանց յառաջակողման՝ արքայից-պատկերներն այնպէս նկարագրական եւ պայծառ էին,) տեղը կ'անցնի Վաղարշայ Գ օրէն սկսեալ կենդանագրի այն արեւելեան անփոփոխ մեռեալ ոճը՝ զոր դրամներու եւ պղինձներու վրայ կը գտնենք արդէն մեր թուականութեան Ա դարուն սկզբէն, եւ որ մեծապէս կը յիշեցընէ Բաբելացւոց եւ Ասորեստանեայց նուազ արժէք ունեցող բարձաբանդակներուն վրայ գտնուած արքայից կենդանագրերը:

Վաղարշայ Գ երեք դրամներուն (Թ. 45 — 7) առաջակողմը նոյնպէս է Վաղարշայ Գ պատկերը, երկայն լիամօրուօք, գլուխն սաղաւարտ եւ ապարօշ, վիզը՝ մանեակ եւ կուրծքը՝ լանջապանակ. յետ-սակողմն՝ Արշակի գահի աղեղնաւոր. աղեղան ներքեւ՝ մենագիր: Արձանագիրը՝ (պահլաւ-արամ.) Volgasi malka «Վաղարշ արքայ» (եւ յունարէն) βασιλε(ων) Αρσαχ(ου) ευεργετου δικαιου επιφανου φιλελληνου «արքայից Արշակայ Բարեգործի Արդարոյ Նշանաւորի Հելլենասիրի.» սակայն տառերը շատ խառնակ եւ շատ սխալագիր: Ասոնց կշիռն՝ 3.29, եւ 3.69: — Արծաթախառն պղինձը (Թ. 48)՝ առաջակողմը նոյն է, բայց առանց լանջապանակի. յետսակողմը՝ Բախտ ցած բոլորչի պատուանդանի վրայ, պատմութեանաւոր, գլուխը բերդաւոր թագ, առջեւը՝ արմաւենւոյ ճիւղ, աջը բարձրացուցած եւ ձախը յեցուցած խարսխածեւին վրայ. կշիռը՝ 2.45, շատ ցանցառ: — Պղինձներուն մէկ մասին վրայ (Թ. 49 — 54) յառաջակողման՝ Վա-



ղարշայ Դ արքային պատկերը չէ կիսադէմ կամ կողմնակի, այլ լիադէմ (en face), երկայն մօրուօք. գլուխը՝ սաղաւարտ եւ ապարօշ, վիզը՝ մանեակ եւ կուրծքը՝ լանջապանակ. յետսակողմը՝ Բախտայնպէս ինչպէս էր Թ. 48: Առաջակողմն՝ արքային գլխուն աջ կողմը տարեթիւ կայ՝ որ է  $\Theta NY = 459$  (Թ. 49, կշիռ՝ 3.72, եւ նոյն՝ Թիւ 50 կշիռ՝ 3.81.) —  $\Xi Y = 460$  (Թ. 51, կշիռ՝ 3.65.) —  $A \Xi Y = 461$  (Թ. 52, կշիռ՝ 3.60.) —  $\Delta \Xi Y = 464$  (Թ. 53, կշիռ՝ 3.52.) —  $E \Xi Y = 465$  (Թ. 54, կշիռ՝ 3.70): Միւս մէկ կէսը (Թ. 55 — 59a) արքային պատկերը դարձեալ կիսադէմ է՝ երկայն մօրուօք, նոյնպէս՝ սաղաւարտ, ապարօշ եւ մանեակ. յետսակողմը՝ (Թ. 55 — 57) Բախտ բրգաւոր թագաւ գլուխը, իսկ Թ. 58 — 59a Բախտն այնպէս՝ ինչպէս էր Թ. 48ի յետսակողմը: Ասոնց վրայ ալ արքային գլխուն քով թուականը գրուած է, այսինքն Թ. 55՝  $\Pi Y = 480$ , կշիռը՝ 3.53. — Թ. 56՝  $A \Pi Y = 481$ , կշիռը՝ 2.77. (Բախտի գլխուն քով A.) — Թ. 57՝  $\Gamma \Pi Y = 483$ , կշիռը՝ 2.76. — Թ. 58՝  $\Delta \Pi Y = 484$ , կշիռը՝ 2.81. — Թ. 59՝  $Z \Pi Y = 487$ , կշիռը՝ 2.40. = Թ. 59a՝  $H \Pi Y = 488$ , կշիռը՝ 3.42: — Մնացեալներուն վրայ (Թ. 60 — 65) առաջակողմը չորեքդրամեանց ոճով է՝ Վաղարշայ Դ պատկերն եւն, նոյնպէս երկար մօրուօք, սաղաւարտ, ապարօշ եւ մանեակ: Յետսակողմը՝ Բախտ նստած պատմութեանաւոր, գլուխը բրգաւոր թագ, աջով ամաղթեղջիւր բռնած եւ ձախով՝ արմաւենի (Թ. 60, կշիռ 1.02.) Յաղթութիւն պատմութեանաւոր՝ ապարօշ մը բռնած (Թ. 61 — 2, կշիռ՝ 1.50 եւ 0.80, շատ ցանցառ.) անուածեւ կազմած մը չորս շառաւիղով առանց հեւանի (Թ. 63 — 4, կշիռ 1.17 եւ 0.76, շառաւիղներու մէջ նշանակ մը.) իսկ Թ. 65 յառաջակողմը Վաղարշայ Դ պատկերը չորեքդրամեանց ոճով, նոյնպէս երկայն լիամօրուօք, սաղաւարտ, ապարօշ, մանեակ եւ նաեւ լանջա-

պանակ. յետսակողմը՝ նշանակա Չ եւ պահպանութեան արձանագրութեան մը հատակոտորը. (Թ. 65, կշի ու 8.05:) Այս վերջինքս թուական չունին. Թ. 60 — 2 շատ ցանցառ, միւսները՝ ցանցառ: (Տես էջ 158 — 167:)

Նախընթաց Աղաբաշայ Գ վերջին օրերը Պարթեւաց իրերը գէթ այնչափ բարւոքած էին որ գոնէ ներքին խոփութիւնք չառած էին: Այս անվերջ ներքին երկպառակութիւնքը նկատելով՝ զարմանալի երեւոյթ մըն է ճիշդ այս Աղաբաշ Գ, որուն քառասնէ աւելի իշխանութեան տարիները ներքին խաղաղութեամբ անցան՝ առանց հակաբքայի մը կամ գահի թիկնածուի: Պարթեւք ուրեմն կրնային մտածել ձեռք բերելու զայն՝ զոր Տրայիանու օրերէն վեր կորսնցուցած էին: Խնդիրը կրկին պիտի դառնար Հայոց աշխարհի վրայ, որուն իրաց վիճակը Պարթեւաց հաճոյ չէր: Հռոմայեցիք էին հոն գերիշխանն, եւ արքայք անոնց հաւանութեամբ գահ կ'ելէին: Այսպէս ի վերջոյ «Արեմենիդ» եղած էր (140-3ի միջոցէն սկսեալ.) եւ այսպէս եղաւ յաջորդ ժամանակը Սոյեմոս (կ'երեւայ 159էն սկսեալ:): Աղաբաշ Գ արդէն 155ի կը պատրաստուէր արշաւել ի Հայս. բայց այն ժամուն Անտոնինոս Պիոս Ասորիք ըլլալով՝ բանակցութիւնք խաղաղութեամբ լինցան: Սակայն Պիոսի մահուանէ ետքը Աղաբաշ դործագրեւ ուզեց ծրագիրը, եւ 162ին Պարթեւք ի Հայս արշաւեցին: (Փուտլմ. 147 կը նշանակէ որ այս յաջորդ պատերազմն օրչափ նշանաւոր էր՝ նոյնչափ անբաւական են պատմական աւանդութիւնքն. բայց այս մասին կայ գեղեցիկ մենագրութիւն մը՝ E. Napp, De rebus imperatore M. Aurelio Antonino in Oriente gestis. Bonn 1879. որուն քննութեան արդեանց ալ հետեւած է:): Սոյեմոս դուրս մղուած՝ ստիպուած էր Հռոմայեցւոց ասպատանիլ, եւ թէեւ օգնութեան հասաւ Քամրաց հռոմէացի կուսակալն Եղիոս Սեւերիանոս, բայց Եկեղեաց գաւառին մէջ Աղաբաշայ Խոսրով զօրավարէն շարաշար պարտուեցաւ, հռոմէակտն լեզէոնը ջնջուեցաւ, եւ Սեւերիանոս ալ անձնամահ եղաւ: Հայոց արքայ դրուեցաւ Բախուր, եւ արշաւանքը շարունակուեցաւ ոչ միայն ի Քամիրս, այլ նաեւ ուրիշ կողմանէ յԱսորիս, որուն Ատախիոս Առանելիանոս հռոմէացի զօրավարը պարտուեցաւ եւ փախչիլ բռնագատուեցաւ: Հռոմայե-

ցւոց գործերուն այս ձախողանքը շտկելու համար նոյն Մարկոս Աւրելիոս իւր գահակից եղբայրն Ղուկիոս Աբրոս կայսրը խաւրեց արեւելք, որ եկաւ եւ Անտիոք նստած, նախ սկսաւ՝ բանակը վերակազմել. իրեն դիտաւ որ գործիչն էր Աւիգիոս Կասսիոս զօրավարը: Աբրոսի առաջարկած խաղաղութեան պայմանք ընդունելի չեղան Վաղարշի: Հայոց աշխարհն խաւրուեցաւ Ստատիոս Պրիսկոս զօրավարն, որ զՀայս կրկին շահեցաւ, Բախուր գահէ մերժուեցաւ, եւ Արտաշատ առնուեցաւ (163:) եւ կրկին Սոյեմոս դրուեցաւ արքայ Հայոց, զոր ի Հայս առաջնորդեց Մարտիոս Աբրոս՝ Պրիսկոսի յաջորդող զօրավարը. (164) որ անկէ մտաւ Ատրպատական-Մարաստան եւ ոչ նուազ յաջողութիւն ունեցաւ (165:) Բուն պատերազմն Ասորոց կողմն էր. Աւիգիոս Կասսիոս արիւնահեղ ճակատի մը մէջ (Էւրոպոսի քով) Պարթեւաց յաղթելով՝ Ասորիքէն մերժեց, եւ մտաւ ալ Միջագետք (163:) Եփրատն անցնելով հաւանօրէն Սուրայի եւ Նիկեփորիոնի քովերը, վասն զի այս ատեղերը կռիւնք եղան եւ վերջինն առնուեցաւ, անկէ հիւսիս դարձած՝ առնուեցաւ Գաւսարա Ուռհայի մօտերը: Բայց հոս նախ Ուռհա պէտք էր պաշարուիլ եւ առնուիլ, որուն Մանու Ը արքայն 164ի ստիպուած էր Հռոմայեցւոց երթալ, եւ հսկողութեան տակ դրուեցաւ, եւ իրեն յաջորդ դրուեցաւ Վայիլ Բար-Սահրու (ըստ Գիոնեսեսոյ Տելմահրէ:): (Բայց 166ի դաշանց ատեն Մանու կրկին ստացաւ զՈւռհայ, եւ իւր դրամոց վրայ դնել սկսաւ կայսեր պատկերը եւ «Փիլոհոմէոս» յորջորջանքը:): Նաեւ Մծրին պէտք էր պաշարուիլ եւ առնուիլ, եւ քաջութեամբ դիմադրեց: Ուստի պատերազմի գործն սկսած էր դանդաղնալ եւ դժուարանալ: Հռոմայեցւոց գործը դիրացաւ, երբ Վաղարշ՝ տեսնելով իւր հպատակ արքայից հեռանալով իւր տկարանալը՝ Խոսրով զօրավարն ետ կանչեց Միջագետքէն՝ Տիգրիսէն ալ անդին: Կասսիոս անմիջապէս ետեւէն հասաւ, մտաւ Բաբելոն, Սելեւկիա առնուեցաւ (— որուն բնակիչք՝ որ Յոյն կ'ըսուին՝ սիրով ընդունեցան Հռոմայեցիները, բայց կեղծ պատրուակաւ աւարտրուեցաւ քաղաքն եւ հրձիգ եղաւ. եւ այս ամէնն՝ ինչպէս Գուտշ. կ'ըսէ էջ 149՝ արեւմտեան կրթութեան եւ հելլենականութեան համար յարեւելս մահացու հարուած մ'եղաւ ճիշդ այն իբր թէ հելլենականութեան պաշտպաններուն կողմէն.) եւ առնուեցաւ նաեւ Տիգրոնն, եւ արքունի

դուռը կամ պալատը գետնայատակ եղաւ: Սակայն Հռոմայեցիք ալ չկրցան աւելի յառաջանալ եւ կասիոս դարձաւ Ասորիք (165ին): Իրենց ալ կորուստը մեծ էր ի դարձին, պաշարն սպառած ըլլալով, եւ որ մեծագոյնն էր՝ Սելեւկիոյ իյնալէն ետքը՝ Պարթեւաստան ինկաւ մահաբեր հարուած մը՝ ժանտախան, որ աւերեց երկիրը եւ անկէ տարածուեցաւ բոլոր աշխարհքն: Երկու կայսերք բաց ի իրենց առած Հայական եւ Պարթեւական տիտղոսներէն (Armeniacus եւ Parthicus Maximus) առած են՝ Մարտիոսի արշաւանօքն ի Մարս՝ նաեւ Medicus (Մարական) յորջորջանքը: Ասկէ կը հետեւցընէ Գուտշմ. (անդ 149) թէ Մարաստան այն ատեն տակաւին ինքնուրոյն տէրութիւն մըն էր, եւ թէ որովհետեւ այս տիտղոսը կը գտնուի արդէն 165 տարւոյ 28 Օգ. թուականէն յառաջ եղած յիշատակարանաց մէջ, նոյն տարին ըլլալու է արշաւանքն ի Մարս: Խաղաղութեան դաշինքն այս չորեքամեայ պատերազմէն ետքն եղած ըլլալու է, կ'ըսէ 166ին: Վասն զի յիշեալ հանգամանաց շնորհիւ Հռոմայեցիք չզեղծան իրենց յաղթութեամբն, եւ խաղաղութեան դաշինքը չափաւոր պայմաններով էր, ի հարկէ այն գլխաւոր կէտով որ Միջագետք անցաւ Հռոմայեցւոց ձեռքը: Կարգադրուեցան նաեւ միւս փոքր արքայութեանց խնդիրքն, եւ արքայքն դրուեցան իրենց տեղը. յատկապէս Ուռհայինն՝ ինչպէս յիշեցինք: Անկէ ետքը Պարթեւաստան գոնէ այն բարիքն ունեցաւ որ երկար ժամանակ՝ բաց ի արտաքնէն՝ նաեւ ներքին խաղաղութիւն վայելելով կրնար իւր ոյժերը նորոգել. բայց արդէն Արշակունեաց զօրութեան վերջերը մօտեցած էին: Վաղարշ Գ մեռաւ 191ի Սեպտեմբերէն յառաջ, վասն զի արդէն այս թուականաւ (502 Սելեւկ.) որ աշնան կը սկսի, դրամ կայ իւր յաջորդէն՝ Վաղարշ Ե (Գուտշմ. անդ՝ 147-151):

(Արշակ ԻԸ.) Վաղարշ Ե, 191—208 Յ. Գ. 25 կտոր, որոնցմէ 16՝ չորեքդրամեան: 4՝ դրամ եւ 5՝ պղինձ: Չորեքդրամեանց նկարագիրն է (Թ. 1)՝ յառաջակողմը Վաղարշայ Ե պատկերը սրածայր լիամօրուօք, երկայն մազերն արուեստական գնդաձեւերու ամփոմփուած, գլուխը՝ ապարօշ, ականջն՝ օղ, վիզը մանեակ եւ կուրծքը լանջապանակ: Յետ-

սակողմը՝ Վաղարշ Ե արքունի տարազով բարձր թիկնագահի վրայ նստած, առջեւը կեցած է Բախտ պատմաճանաւոր եւ վերնադպետով, գլուխը բրդաւոր թագով որ իրեն սպարոզ մը կու տայ առջով, ձախով իշխանութեան երկայն ցուպը բռնած. արձանագրութիւնն է՝ βασιλεωσ βασιλεων Αρσαχου Ολογαου οικαιου επιφανουσ φιλελληνουσ ('Արքայի տրքայից Արշակայ Վաղարշայ Արդարոյ Նշանաւորի Հելլենասիրի:») Տարեթիւը (Թ. 1) կ'երեւայ՝ ΓΦ (?) = 503 (?): Թէեւ այս տեղ խնդրական է, բայց Վաղարշայ Ե թագաւորութեան առաջին տարիէն իսկ՝ այսինքն Սելեւկ. 502՝ չորեքդրամեան կայ Բրիտ. Թանգարանը, Պարիսի Ազգային Թանգարանն եւ Պաւլոս Զուբովի Հաւաքման մէջ ի Մոսկուա. եւ այս չորեքդրամեանք այն գլխաւոր յատկութիւնն ունին որ ասոնց վրայ ալ՝ ինչպէս արքայիս դրամներուն վրայ՝ թագաւորին պատկերը կ'իսադէմ ու կողմնակի չէ, այլ լիադէմ նայողին դարձած (en face): Կշիռն է (Թ. 1) 8.83, ցանցառ: Մնացեալներէն՝ Թ. 2՝ ΔΦ = 504, (ամիս) Գէսիոս, (կշիռն՝) 11.05, ցանցառ: Արքայիս բոլոր միւս չորեքդրամեանց վրայ ամիսը չի գտնուիր՝ յոսի դրամահատութեան պատճառաւ կաղապարէն դուրս մնացած ըլլալով եւ առհասարակ ցանցառ են: Ասոնց տարեթուերն ու կշիռներն են՝ Թ. 3՝ ΕΦ = 505, կշիռն՝ 9.16. — Թ. 4՝ ΖΦ = 506, կշիռն՝ 13.27. — Թ. 5՝ ΖΦ = 507, կշիռն՝ 12.99. — Թ. 6՝ նոյն 507, կշիռն՝ 12.71. — Թ. 7՝ ΗΦ = 508, կշիռն՝ 12.01. — Թ. 8՝ ΙΦ = 510, կշիռն՝ 10.89. — Թ. 9՝ ΑΙΦ = 511, կշիռն՝ 12.40. — Թ. 10՝ ΒΙΦ = 512, կշիռն՝ 12.42. — Թ. 11՝ ΓΙΦ = 513, կշիռն՝ 12.65. — Թ. 12՝ ΔΙΦ = 514, հատակոտոր, — Թ. 13՝ ΕΙΦ = 515, կշիռն՝ 11.47. — Թ. 14՝ ΖΙΦ = 517, կշիռն՝ 13.95. — Թ. 15՝ ΗΙΦ = 518, կշիռն՝ 13.39. — Թ. 16 երկբայական՝ ΘΙΦ (?) = 519 (?), կշիռն՝ 11.15.

— Չորս դրամներու (թ. 17—20) յառաջակողմը՝ Վաղարշայ Ե պատկերը լիադէմ նայողին դարձած, սրածայր մօրուօք, երկայ մազը բոլորակ գնդաձեւներու ամփոփուած, գլուխն ապարօշ, վիզը՝ մանեակ եւ կուրծքը լանջապանակ: Յետակողմն՝ Արշակի գահ աղեղնաւոր, աղեղան տակ մենագիր: Արձանագիրը՝ թերի՝ պՏԼ.-արամ. Volgasi malka (արքայ Վաղարշ) խօսքերուն, իսկ յունարէնը նոյն՝ չորեքդրամեանց արձանագրին հետ, բայց շատ սխալագիր, եւ նաեւ թերակատար: Կշիռնին է կարգաւ՝ 3.62, եւ 3.59, եւ 3.70, եւ 3.79. Ընդհանրապէս ցանցառ, թ. 17 շատ ցանցառ: —

— Պղինձներուն (թ. 21—4) յառաջակողման պատկերը նոյնպէս լիադէմ, սրածայր մօրուօք, գրնդաձեւներու ամփոփուած մազով, գլուխն՝ ապարօշ թ. 25 նաեւ՝ մանեակ: Յետակողմն՝ Արծիւ թեւատարած (թ. 21—24.) Կշիռնին կարգաւ՝ 1.41, եւ 1.27, եւ 1.20, եւ 1.84, ամէնքը ցանցառ: Տարբեր է թ. 25 պղինձը. յառաջակողմը՝ Վաղարշայ Ե պատկերը կիսադէմ սրածայր մօրուօք, մազերը բոլորակ գնդաձեւերու ամփոփուած, գլուխն ապարօշ, եւ կուրծքը լանջապանակ. յետակողմը նոյն՝ Արծիւ թեւատարած. կշիռը՝ 1.73. շատ ցանցառ: (Տես էջ 168—171:)

Վաղարշ Ե վերջին Արշակունին էր որ առանց մեծ ներքին խռովութեանց կրցաւ կառավարել: Ի սկզբան բախանալ փոխուած կ'երեւար. այս անգամ Պարթեւաց հակառակորդ Հռոմէական պետութիւնն էր որ գահակալութեան կռիւներով յուզուած էր: Վաղարշ այս միջոցին թիկնածուաց միոյն՝ Պեսկենիոս Նիգերի կողմն էր, ինքն ուղղակի չմիջամտեց զինուր, բայց թոյլատրեց որ իւր հպատակ փոքր արքաներէն ոմանք մասնակցին: Նիգեր օգնութիւն ուզած էր թէ՛ Հայոց արքայէն եւ թէ՛ Ատրայէն: Ատրայի Բարսենիոս (Գարագաշ, Բ, 264 կը թարգմանէ՝ Բարշամ) արքայն արարացի աղեղնաւորաց գունդ մը խաւրեց, որ Նիկիոյ ճակատամարտին (194 Յ. Ք.) մասնակից էր՝ ընդդէմ Սեպտիմիոս Սեւերոսի: Վաղարշ նաեւ աչք գոցեց՝ որ երբ

Նիգերի գործերն արդէն շաջողել սկսան, Ադիաբենացիք օգնական եղան Միջագետաց' (Ուսայեցւոց') ապստամբութեան ընդդէմ Հռոմայեցւոց. եւ որով ամուրներն առնուեցան եւ Հռոմէացի զօրքը սրէ անցուեցաւ, եւ Մծբին պաշարուեցաւ: Որոշ կ'ըսուի որ միայն արքայն Սանատրուկ (կ'երեւայ որդի Սոյեմայ' Գաթրճ., Բ, 176) չէզոք մնաց եւ շօգնեց Նիգերի (ըստ Հերոդիանու Գ, 1:) Արքայիս անունը կու տայ Գիոն (ՀԵ, 9.) որուն Համեմատ Սանատրուկ էր արքայն, եւ կ'երեւայ քիչ մ'ետքը մեռած: Վասն զի կը յաջորդէ ասոր որդին Վաղարշ, որ ըստ Գիոնի նոյնպէս չէզոք չմնաց բոլորովին, այլ «կանխաւ մատուցեալ էր ի պատերազմ ընդդէմ Սեւերոսի», ուստի կ'երեւայ գործակից էր Ադիաբենացի Պարթեւաց, երբ ասոնք Միջագետք մտան եւ Մծբին պաշարեցին: (Վկայութիւնքը՝ տես Գարագաշ, Բ, 262—4:) Սեւերոս՝ Նիգերի վրայ զօրանալէն ետքն ալ՝ չկրցաւ անմիջապէս միջամտել արեւելից այս գործերուն, բայց արդէն 195ի ամառն Միջագետք մտաւ. Ուսայի Արգար ի շուտով Հնազանդեցաւ, եւ օգնական Ադիաբենացիք եւ Արաբացիք դուրս քշուեցան: Յաջորդ 196 տարին մտաւ Սեւերոս բուն Ադիաբենէ երեք բանակով եւ երեք կողմանէ: Արաբիա (այսինքն ըստ Գուտշմ. 152 բուն Սինգարայի կողմերը) գրաւուեցաւ, եւ Հռոմէական Միջագետաց մաս եղաւ. իսկ Ադիաբենէ՝ թէեւ նոյնպէս գրաւուեցաւ, բայց ոչ տեւական պահելու ջանալով: Կայսրն Մծբին էր՝ եւ տեսնելով անհաջող կարեւորութիւնը, որոշեց Հռոմէական գաղթականութիւն մ'ընել եւ գլխաւոր զինանոց մը: Բուն Պարթեւք ցայն վայր չէին շարժած: Միայն յետոյ՝ երբ Սեւերոսի եւ Աղբինոսի մէջ գահակալութեան կռիւ ծագեցաւ, շարժեցան, Միջագետք մտան եւ պաշարեցին Մծբին, որուն պաշտպանն էր Լետոս: Սեւերոս Աղբինոսի յաղթելէն ետքը միայն կրցաւ կրկին Ասորիք դառնալու փութալ (արդէն 197ին իսկ.) եւ յաջորդ 198 տարին պատերազմի դաշտն էր: Բայց Պարթեւք որոշիչ ճակատի շսպասելով՝ թողուցած էին Մծբնայ պաշարումը եւ դարձած, որով կրցաւ Սեւերոս խաղաղութեամբ պատրաստուիլ ապագայ պատերազմին: Իրեն հետն էր Տրգատ՝ Վաղարշայ Ե եղբայրը: Միւս 199 տարւոյ ամառւան վերջերն բանակն ու նաւատորմիղն Եփրատն ի վար գնաց, Նահար-մալկա ջրանոցքին տիղմն եւ աւազը մաքրելով՝ նաւարկելի ըրաւ եւ տորմիղն ասկէ մտաւ Տիգրիսն: Պարթեւք ասով յանկարծակի եկան. առ-

նուեցան Սելեւկիա ու Կոխէ (ասոր տեղ Գիօն ՀԵ, 9 կ'ըսէ Բաբելոն, որ սխալմունք մ'ըլլալու է, վասն զի Բաբելոն արդէն դարուն սկիզբը պարզ աւերակոյտ մըն էր՝ Գուտշմ. 152, Ծան. 2) Ասոնց բնակիչք փախած էին: Սելեբրոս 199ի ձմեռը մտաւ Տիգրոն, ուր ամենէն անգուծ կերպով կոտորուեցան բնակիչք եւ հարիւր հազարէ աւելի ալ գերի առնուեցան, եւ քաղաքն զօրաց աւար տրուեցաւ: Վաղարշ երկրին ներքին կողմերը փախչիլ ստիպուած էր՝ գիմադրել չկարենալով: Բայց նաեւ Հռոմայեցիք չէին կրնար հաշտեւլ. զօրականին պաշարը սպառած եւ սովալուկ էր, որով հիւանդուծիւնք շատցած բանակին մէջ: Սելեբրոս ստիպուեցաւ ասով դառնալ՝ տորմիղը Տիգրիսն ի վեր եւ բանակը փեռն: Միջագետաց մէջ փորձ մ'ըրաւ Ատրա ամրոցն առնելու, բայց հոս մեծ կոտորածով ետ մղուեցաւ: Արդէն 200ին հռոմէական բանակն ետ դարձած էր արշաւանքէն: Այս միջոցին ալ Հայոց գործերով զբաղած էր Սելեբրոս, եւ միայն 201ին կրցաւ երկրորդ արշաւանք մ'ընել Ատրայի դէմ, որպէս զի կրած պարտուծեան վրէժն առնու: Քաղաքը պաշարուեցաւ իբր 20 օր. բայց չկրցաւ Սելեբրոս առնուլ, մանաւանդ թէ Հռոմայեցւոց մանր ու մեծ կորուստները նշանաւոր էին, պաշարման մեքենայք նաւթով այրուած, եւ երկու օրւան կրկին ընդհանուր յարձակմունքն ամրոցն առնելու՝ ապարդիւն եղան ամենամեծ կորուստներով Հռոմայեցւոց: Սելեբրոսի ուրիշ ճար չմնաց՝ բայց թողուլ պաշարումն եւ Ասորիք դառնալ: Հռոմէական ճոխուծիւնն ասով ամենամեծ հարուած մ'առած էր արեւելից մէջ. բայց Պարթեւք չկրցան օգտուիլ ասկէ. ս'յսպէս կը զգացուէր նաեւ իրենց ոյժին վախճանը: Մինչեւ Վաղարշայ Ե մահը (208)՝ ուրիշ կարեւոր դէպք մը չ'աւանդուիր: (Գուտշմ. 151—154) — Սելեբրոս ըսինք 200ին արշաւանքէն դառնալէն ետքը Հայոց գործերով զբաղիլ ստիպուած էր: Հերովդիան ու Գիօն համանման կը պատմեն իրն, ինչպէս վերը տեսանք, որով հաստատուն ըլլալու է այն: Միայն Հերովդիանու վկայութեան ընդհանրապէս դանդ մ'արժէք չի տար Գուտշմիդ՝ ամենախեղճ պատմագրող եւ խաբերայ մ'իսկ ըլլալով. (հմմտ. Գուտշմ. 152, 155, եւն: ) Հերովդիան արքային անունը չի տար. իսկ Գիօն կ'ըսէ Վաղարշ որդի Սանատրկոյ: Եւ երբ Սանատրուկ Նիգերի եւ Սելեբրոսի խնդրոց մէջ չէզոք էր, Վաղարշ ըստ երեւուծին գործակից Ադիարենացւոց, եթէ ուրիշ մտօք



չէ այն «կանխա՝ մատուցեալ էր ի պատերազմ ընդդէմ Սեւերոսի», (Գիտն, անդ, տես վերը.) ըսել է 195էն յառաջ: Ասկէ մինչեւ 200 չենք գիտեր ինչ վիճակի մէջ էին իրերը: Վասն զի Գիտն Սեւերեայ արշաւանքն, Տիգրոնի առնուիլն (199), եւ Սեւերեայ բանակին դառնալը (200) պատմէն ետքը միայն, կ'աւելցընէ թէ Հայոց Վաղարշ արքայն, որ յառաջ Սեւերոսի դէմ պատերազմած էր, նախ քան Ատրայի դէմ կրկին արշաւանքն սկսիլը, («յառաջ քան զմտանելն ի կռիւ» անշուշտ այս մտօք է, ոչ թէ բուն 199ի արշաւանքն, գոնէ ըստ վկայութեան Հերովդիանու՝ անդ.) ընծայներ խաւրեց եւ հաշտու թիւն խնդրեց, եւ ընդունեցաւ ալ, եւ Հայոց մէկ մասն իրեն շնորհուեցաւ: Վերջին խօսքիս իմաստը կը մեկնուի անով որ Ծովք ուրիշ արքայ մ'ընդունեցան՝ Սրտաւան անուն, որ Վաղարշու որդին կամ եղբայրն էր եւ արդէն հաշտ չէր Վաղարշի հետ. (այս վերջին կէտս՝ տես Գաթրճ. Բ, 177:)

(Արշակ ԻԹ.) Վաղարշ Զ, 208—222 Յ. Ք: 20 կտոր, որոնցմէ 14՝ չորեքդրամեան, 3՝ դրամ եւ 3՝ պղինձ: Չորեքդրամեանց նկարագիրն է (Թ. 1) յառաջակողմը Վաղարշայ Զ պատկերը, երկայն եւ սրածայր մօրուօք, գլուխը՝ սաղաւարտ եւ ապարօշ, ականջն՝ օղ, վիզը՝ մանեակ եւ կուրծքը լանջապանակ: Յետսակողմը՝ Վաղարշ Զ արքունի տարազով բարձր թիկնագահի վրայ, առջեւը կեցած է Բախտ՝ պատմուճանաւ եւ վերնաղգեստով, գլուխը բրդաւոր թագով, եւ իրեն ապարօշ մը կու տայ աջով, ձախով իշխանութեան երկայն ցուպը բռնած. արձանագիրը ըլլալու էր ի հարկէ βασιλεωσ βασιλεων Αρσαχου Ολογαρου δικαιου επιφανουσ φιλελληνοσ («Արքայի արքայից Արշակայ Վաղարշայ Արդարոյ Նշանաւորի Հելլենասիրի») բայց յոռի դրամահատութեան պատճառաւ միայն «Նշանաւոր» բառը հանդիպած է եւ մնացած միւսները դուրս ինկած: Տարեթիւր (Թ. 1) ΚΦ = 520, կշիռը 11.58: Ամէնուն վրայ ամսոյ անունները դուրս ինկած են: Միւսներուն տարեթուերն ու կշիռներն են՝ Թ. 2՝ ΑΚΦ = 521, կշիռ՝ 13.56. — Թ. 3՝

BKΦ = 522, կշիռ՝ 13.56. — Թ. 4՝ ΓΚΦ = 523, կշիռ՝ 12.13. — Թ. 5՝ ΔΚΦ = 524, կշիռ՝ 13.75. — Թ. 6՝ ΕΚΦ = 525, կշիռ՝ 13.17. — Թ. 7՝ ΖΚΦ = 526, կշիռ՝ 12.48. — Թ. 8՝ ΖΚΦ = 527, կշիռ՝ 13.46. — Թ. 9՝ ΗΚΦ = 528, կշիռ՝ 13.33. — Թ. 10՝ ΘΚΦ = 529, կշիռ՝ 13.62. — Թ. 11՝ ΛΦ = 530, կշիռ՝ 13.72, ցանցառ. — Թ. 12՝ ΑΛΦ = 531, կշիռ՝ 12.28, ցանցառ. — Թ. 13՝ ΒΛΦ = 532, կշիռ՝ 12.82, ցանցառ. — Թ. 14՝ ΓΛΦ = 533, կշիռ՝ 12.80, շատ ցանցառ.: Բրիտ. Թանգարան կայ՝ չորեքդրամեան մ'ալ ΘΙΦ = 519 Թուականաւ (Վ. Բոթ, էջ 241, Տխտ. ԱԵ, 14:) — Երեք (Թ. 15 — 17) դրամներուն յառաջակողման Վաղարշայ Ջ պատկերը նոյն, երկայն սրածայր մօրուօք, սաղաւարտով, ապարօշով եւ մանեկով. գլխուն ետեւ պճլ. Vol. յետսակողմն՝ Արշակ ի դահի աղեղնաւոր, աղեղին տակ՝ մենագիր: Արձանագիրը Թերակատար, այսինքն՝ պճլ.-արմ. Volgasi malka (Վաղարշ արքայ) եւ յունականն՝ բարբարոս եւ անընթեռնի նմանողութիւն սովորական խօսքերու βασιλεων Αρσαχου ευεργετου δικαιου επιφανους φιλελληνης («արքայից Արշակայ Բարեգործի Արդարոյ նշանաւորի Հելլենասիրի:») կշիռն է՝ 3.38, եւ 3.58: — Երեք պղինձներուն երկուքին (Թ. 18 — 19) առաջակողմը Վաղարշ Ջ սաղաւարտով եւ ապարօշով. յետսակողմն՝ Արծիւ Թեւատարած. կշիռ՝ 0.47 եւ 1.10. Իսկ Թ. 20 յառաջակողման պատկերի վրայ Վաղարշ կը կրէնաւե մանեակ եւ լանջապանակ. յետսակողմն՝ Արծիւ Թեւատարած կտցով պսակ բռնած. կշիռը 1.46: (Տես էջ 172 — 4:)

Վաղարշ Ջ՝ Վաղարշայ Ե որդին՝ որմէ դրամ կայ 208 Թուէն (Սեւեկ. 519) շիրցաւ ներքին խաղաղութիւն վայելել: Իւր ժամանակ եւ այն՝ 212ին սկսան բնիկ Պարսկաստանի՝ կամ Պարսիսի՝ խռովութիւնքն, որ աղիաաբեր պիտի ըլլային քիչ մ'ետքն Արշակունեաց: Յաջորդ 213 տա-

րին ասոր աւելցաւ նոր մ'ալ: Վաղարշայ եղբայրը՝ Արտաւան  
 (- զոր սովորութիւն է վերջին Արշակունին ըսել -) հա-  
 կարքայ ելաւ. եւ տարիներ տեւեց այս դժբախտ ներքին  
 երկպառակութիւնը: Իրաց վիճակն օգուտ գործածել ու-  
 զելով ուրիշ Արշակունի մ'ալ Տրդատ՝ գաղտնի փախաւ  
 Անտոնինոս կայսեր արքունիքէն՝ ուր էր, եւ Վաղարշայ եկաւ:  
 Անտոնինոս ետ պահանջեց, եւ երբ Վաղարշակ զլացաւ՝ ա-  
 ռիթ փնտռեց պատերազմ հրատարակելու (215): Վաղարշ  
 այս ելքէն վախցած՝ փախստականը յանձնեց: Այս միջոցին,  
 կը կարծէ Գուշում. (անդ 154.) Արտաւան զօրացած ըլլա-  
 լու է իւր եղբոր վրայ. վասն զի գրաւոր յիշատակարանաց  
 մէջ այսուհետեւ միայն Արտաւան է կը յիշուի. եւ 216ին,  
 կ'ըսէ, իր ձեռքն ըլլալու էին նաեւ պետութեան մայրաքա-  
 ղաքն ու շրջակայքն: Միւս կողմանէ յայտնի է որ Վաղարշ  
 Զ տակաւին կ'իշխէր, ինչպէս կը վկայեն իւր դրամները, որոնք  
 որոշ թուականաւ սկսելով Սելեւկ. 519 տարիէն (= 208  
 Յ. Ք.) կը հասնին շարունակաբար որոշ թուականաւ մինչեւ  
 Սելեւկ. 533 (= 222 Յ. Ք.): Արտաւանայ ցայժմ գտնուած  
 դրամները՝ որ շատ ալ սակաւաթիւ են, որեւէ թուական  
 չունին որ այս մասին կ'ուզան մ'ըլլան: Գուշումիդ կը մեկնէ  
 իրերու վիճակն այսպէս: Արտաւան է թէեւ զօրացած էր  
 արդէն 216ին, եւ այս տարիէն կը սկսին իւր իշխանութեան  
 տարիները հաշուել (վկայութեան կը կոչէ՝ Մանի առ Աւ-  
 րերունեայ, էջ 190.) եւ այս ժամանակէն իբրեւ արքայ կը  
 յիշեն զինքը մատենագիրք, բայց նաեւ Վաղարշ կ'իշխէր  
 իբրեւ արքայ Քաբեղաստանի յունական քաղաքաց վրայ:  
 Արտաւան, կ'ըսէ, իւր գլխաւոր զօրութիւնն ունէր պետու-  
 թեան հիւսիսակողմն: Արարական ճշգրտագոյն տեղեկու-  
 թիւնքն որ Սասանեանց զօրանալը կը պատմեն, կ'ըսեն թէ  
 Արտաւան Մարաստանի եւ մերձակայ աշխարհաց արքայ էր.  
 եւ ասոր հետ, կ'ըսէ, շատ լաւ կը համաձայնի այն կէտը՝ որ  
 Արտաւանէն միայն դրամներ ու պղինձներ ծանօթ են,  
 (այսինքն՝ չկայ շորեքդրամեան՝ որ բուն ընդհանուր պետա-  
 կանն էր): Արդ այս Արտաւանայ դուստրն էր՝ զոր կնու-  
 թեան ուզեց Անտոնինոս վարակալա կայսրն, ի հարկէ կ'ը-  
 սուի՝ որպէս զի յետոյ պատրուակ մը գտնէ պարթեական  
 դահին վրայ իրաւունք ձեռք ձգելու: (Գիտն, ՀԸ, 1-3):  
 Արտաւան մերժած ըլլալով իւր դուստրն Անտոնինեայ տա-  
 լու՝ վերջինս խաղաղութեան ժամանակն յանկարծ Արտաւա-  
 նայ իշխանութեան երկիրն արշաւեց, հետեւելով, կ'ըսէ

Պուտլիգ (անդ 155), իւր հօր Սեւերոսի խորհրդին թէ կայսեր մ'առաջին խնամքն ըլլալու է զինուորները հարստացընել աւարաւ. եւ հոս անջան աւարի յոյս կար: Արշաւանացս զլիսաւոր կէտերն այսպէս կ'ամփոփէ Պուտլիգ. (անդ:) Ա.յս 216ի արշաւանաց մասին, կ'ըսէ, կրկին տեղեկութիւն կայ. Դիոն կը պատմէ թէ Անտոնինոս մտաւ ու աւերեց Մարաստանն, կործանեց շատ մը բերդեր եւ առաւ զԱրբելա. իսկ Սպարտիանոս կ'ըսէ թէ մտաւ Կատուսիացւոց եւ Բաբելացւոց կողմերը: Պուտլիգ կը մեկնէ այսպէս: Աւերջին տեղեկութիւնքս պատերազմական տեղեկատուութեան չափազանցեալ յորջորջանքներ ըլլալու են՝ որոնց բուն իմաստն էր Ատրպատական եւ Ասորեստան. ըստ այսմ հաւանական պիտի երեւար, կ'ըսէ, որ ինչպէս երբեմն եռապետն Անտոնինոս՝ այս անգամ ալ Հռոմայեցիք հիւսիսէն մտած ըլլան Մարաստան եւ արեւելքէն հասած Արբելա: Բայց ասոր դէմ են, կ'ըսէ, բաց ի Հերոդիանու ըսածէն թէ կայսրն Եփրատ եւ Տիգրիս գետերն անցաւ (— վասն զի, կը յաւելու, այս խարբայ պատմչին վկայութիւնը դանգի մ'արժէք չունի յինքեան —) զլիսաւորաբար սա կէտերը. նախ՝ Անտոնինոս յիշեալ ծամբան ընելու համար Հայոց աշխարհն իւր ձեռքն ունենալու էր, որ չէր այն ատեն. իսկ երկրորդ՝ Փազակայի վրայէն Արբելա հասնիլ Ջազրոսի կրճերէն անցնելով՝ այնպիսի զինուորական մեծագործութիւն մըն է, որ եթէ բացայայտաւ աւանդուէր՝ դժուարին էր հաւատալը: Աւստի, կ'ըսէ, ուրիշ ելք չի մնար՝ բայց ընդունիլ թէ այն ժամանակ Մարաստան աւելի արեւմուտք ալ կը տարածուէր եւ իւր մաս կը կազմէին Առապարիտիս եւ Կալաքենէ աշխարհքն. (որոնք, կ'ըսէ, ըլլալու են Տրայիանու արշաւանաց ատեն յիշուած «Մարկոմեդայիք», տես վերը՝ էջ 122.) ուստի Սպարտիանու քով անուանքն սխալագիր են: Անտոնինոս Կարգուաց եւ Կալաքաց աշխարհներէն անցնելով Արբելա հասած ըլլալու է: Հոն Ադիարենեայ արքայից գերեզմանները պղծեց՝ ոսկրները ցրուելով, վասն զի սխալմամբ կը կարծէր թէ բուն Արշակունեաց շիրիմքն են. եւ յետոյ դարձաւ Միջագետք: Պարթեւք նշանաւոր ընդդիմութիւն մը չկրցան ընել կամ չըրին: Եւ Անտոնինոս կը պատրաստուէր կրկին աւարաշատ արշաւանք մ'ընելու, երբ 217ին (ապր. 8) սպաննուեցաւ: Իւր յաջորդը Մակրինոս կայսրը գրեթէ անմիջապէս յարձակում կրեց Արաւանէ, որ այս միջոցին պատրաստուած էր, եւ մեծ զօրութեամբ Միջագետք մտաւ: Մակրինոս փորձեց

գերեգարձութեամբ խաղաղութիւն կնքել, բայց Պարթեւք մերժեցին, եւ Մծբնայ քով մղուած ճակատին մէջ Հռոմայեցիք յաղթուեցան: Երկրորդ ճակատի մը մէջ ալ յաղթուեցաւ Մակրինոս. եւ որովհետեւ Պարթեւք սկսան արշաւախումբեր խաւրել մինչեւ Ասորիք, հարկ եղաւ որ Մակրինոս թողու Միջագետքն եւ Ասորիք քաշուի: Նոր բանակցութիւնք սկսան եւ 217—8ի ձմեռը խաղաղութեան դաշինքը կառուեցաւ, ստիպուած ըլլալով Մակրինոս մեծ գումար մը տուգանք վճարել. (Գուտշմ, անդ 156, կը հաշուէ արդի Գերմանացւոց դրամով իբր 40 միլիոն մարք: ) Ներքին ալ այն յաջողութիւնն ունեցած կ'երեւայ Արտաւան (կ'ըսէ Գուտշմ, անդ), որ 222էն ետքն Արտաւան միայն էր արքայից արքայն. եղբայրը Վաղարշ բոլորովին մերժուած կ'երեւայ, — կամ հաւանորէն մեռած: (Գուտշմիդի՝ Գարդնէրի հետեւելով զՎաղարշ կրկին իշխան դնելը 227էն ետքը՝ դրամի մը պատճառաւ, այժմ անգոր է. դրամն է Արտաւազդայ: ) Տես Գուտշմ, 154—6: — Յիշեալ խաղաղութեան դաշինքն ըստ երեւութին Հայոց համար ալ աննշան չէր: Անտոնինոս կարակալա Պարթեւաց վրայ չքալած՝ նենգութեամբ ուզած էր ձեռք բերել զՀայս եւ զՈւռհայեցիս: Ուռհայեցւոց վերջին Աբգարը կանչուեցաւ իբրեւ բարեկամ. եւ երբ եկաւ՝ շղթայի զարնուեցաւ, եւ երկիրն իբրեւ անտէր հռոմէական հող հռչակուեցաւ: Նոյն կ'ուզէր ընել կարակալա՝ ըստ Գիոնի (տես Հէ, 12, 21, 26, 27) նաեւ Հայոց հետ: Վաղարշ Հայոց արքայն ալ կանչուեցաւ. եւ նոյնպէս նենգութեամբ բռնուելով բանտ դրուեցաւ. եւ ասով կ'ուզէր Հայոց աշխարհն ալ հռոմէական նահանգ ընել: Բայց այս տեղ չյաջողեցաւ: Հայք ընդդիմացան, եւ թէեւ թէոկրիտոս անձնապահապետը բանակաւ խաւրուեցաւ Հայոց վրայ՝ շարաշար յաղթուեցաւ: Նոյն Գիոնի վկայութեան համեմատ այս պարտութենէն ետքն էր Անտոնինոսի արշաւելն ի Պարթեւս 216ին: Մակրինոս յիշեալ դաշանց հետեւութեամբ գրեթէ ստիպուած էր հաշտութիւն գոյացընել նաեւ Հայոց հետ: Վաղարշի տեղն՝ որ բանտարկելութեան մէջ մեռած էր, այս միջոցին (217—8) անցած էր անոր որդին Տրդատ. եւ ասոր թագաւորութեան թագ խաւրեց Մակրինոս նոյն տարին (218ին,) միանգամայն ազատ թողլով եւ ետ խաւրելով Տրդատայ մայրն՝ որ 11 ամիս բանտարկել եղած էր Անտոնինոս կարակալայէ, եւ յետս դարձընելով Հայոցմէ առած աւարն եւ Տրդա-

տայ հայրենի կալուածքներն ի Գամիրս. (Դիոն, ՀԸ, 26-7. տես եւ Գաթրճ., Բ, 177. Գարագաշ, Պամ. Հայոց, Բ, 264-6:) Այս վիճակին մէջ էին Հայոց իրերն Արշակունեաց վերջին օրերուն:

(Արշակ.) Արշակ Ե, իբր 213 — 227 Յ. Բ. միայն 6 կտոր, երեք դրամ եւ երեք պղինձ: Դրամներուն (Թ. 1—3) յառաջակողմն՝ Արտաւան Ե, երկայն եւ սրածայր մօրուօք, գլուխը սաղաւարտ եւ ապարօշ, վիզը՝ մանեակ: Յետսակողմն՝ Արշակ ի գահի աղեղնաւոր, աղեղան տակ՝ մենագիր: Արձանագիրը՝ պՏԼ. — արամ. Hartabi malka «Արտաւան արքայ» իսկ յունական սովորականն այնպէս բարբարոս նմանողութեամբ է որ բոլորովին անընթեռնի է. օրինակի համար գրուած է ΠΛΙΛΙΛΛΑΝ փոխանակ βασιλεων. Ասոնց կշիռը՝ 3.51, եւ 3.67 եւ 3.73: Պղինձներուն (Թ. 4--6) յառաջակողման պատկերը նոյն՝ Արտաւան Զ երկար սրածայր մօրուօք, սաղաւարտով, ապարօշով եւ մանեկով, յետսակողմը՝ երեքին ալ եղջիւրաւոր ոչխար: Ասոնց կշիռը՝ 2.64, եւ 1,07, եւ 4.58: (Տես էջ 175:)

Արտաւանայ յաջողագոյն օրերը, զոր պատմեցինք, անցած էին. եւ իրեն հետ նաեւ Արշակունեաց վախճանը մօտալուտ էր: Ատանպը ներքին էր, եւ այն՝ աշխարհէ մ'որ ամբողջ Արշակունեաց իշխանութեան ատեն արդէն ինքնուրոյն դիրք մ'ունէր, բուն Պարկաստանէ կամ Պարսիսէ: Ա երջին ժամանակս գտնուած բազմաթիւ դրամներ այս նախասասանական ժամանակներէն քիչ շատ լուսաւորեցին այն կողմերուն վիճակը: Գուաշմիդ տժգոհ է դրամոցս այն դասաւորութենէն՝ զոր առած է Մորգաման (A. D. Mordtmann, Persepolitansische Münzen: „Zeitschrift für Numismatik“ V, 152 ff; Weitere Beiträge zur Kenntnis der persepolitansischen Münzen: ib. VII, 40 ff.) գլխաւորաբար նաեւ այն կէտէն որ Մորգաման դրամոց մէկ մասին վրայ գտնելով ծանօթ արշակունի անունները Հուրոգէս (Որոգէս) եւ Հրահատ՝ Արշակունեաց ծանօթ «արքայից արքայ» իշխողները կը համարէր, որոնք տեղական այն հարստութեան մէկ շրջանը բռնած ըլլան: Գուաշմիդ

ընդհակառակն արշակունի կողմնակի ճիւղ մը կը համարի: Այս ամէնն այժմ մեր նպատակէն դուրս է. (տես Գուռլմ. 156-161:): Մէկ երկու կէտ ալ առիթ կ'ըլլայ ուրիշ տեղ յիշելու: Շատանանք այն կէտով որ այս դրամոց վրայ որոշ կը տեսնուի զրադաշտական կրօնից գերիշխող ազդեցութիւնը. դարձեալ դրամոց արձանագիրը պահլաւ է, առաջակողմն՝ ատրուշան կամ բագին հրատի, եւն. անուանց մաս մ'աքամենեան է (Արտախշաթր = Արտաշիր, Գարեաւ = Գարեհ), մաս մը Սասանեանց սովորականքն՝ Ներսէհ, Յազկերտ, կամ դիւցաբանական՝ Մանաճիհր: Գուռլմիդ նաեւ այն կէտը կը կարծէ ապացուցանել թէ նոյն հարստութիւնն էր Bâzrangî տունը, որ Ստահրայ արքայքն էին Սասանեաններէ յառաջ: Մեզի համար կարեւոր կէտերը Գուռլմիդ կ'ամփոփէ այսպէս: Այն կողմանց Ստահր (Istachr) գլխաւոր քաղաքին մէջ՝ հին Պերսեպոլսէ քիչ մը հեռու, կար հռչակաւոր ատրուշան մը Անահատայ: Ատրուշանին վերակացուն էր Սասան, որ կնութեան առած էր զՀռամբեհիշտ՝ վերոյիշեալ Բազրանգի արքունի տան մէկ դուստրն. եւ ասով հիմ դրած իւր տան մեծութեան, անշուշտ մեծապէս օգտուելով մոգերու ազդեցութենէն. (անդ՝ 160 ff.): Այս ամուսնութենէն ծնաւ Պապակ (առ խոր. գրուած՝ Փափագ) որ իւր որդւոյն Արտաշրի (Արտաքսերքսէս) յաջողեցաւ ընդունիլ Գարապկերտի հրամստարութիւնը: Արդ այս գործունեայ եւ եռանդուն երիտասարդն 212ին սկսաւ շրջակայ մանր արքայից հետ կռիւներ մղել եւ սպաննել. եւ իւր յորդորելովն էր որ իւր հայրը Պապակ ապստամբեցաւ Ստահրայ Գողիհր արքայի դէմ՝ որ Շիրագէ իբր 40 հազարամետր հեռու հիւսիսակողմն Ապիտակ-բերդին մէջ կը բնակէր, եւ սպաննեց զանիկայ. եւ խոնարհական թուղթ մը գրեց Արտաւանայ Ե արքայից արքայի՝ իւր Արտաշիր որդւոյն տալու Գողիհրի թագը: Արտաւան մերժեց. Պապակ շատ ալ հոգ չըրաւ, սակայն քիչ մ'ետքը մեռաւ: Պապակայ յաջորդեց՝ իբրեւ Ստահրայ արքայ՝ Շապուհ, Արտաշրի եղբայրը, բայց շուտով մեռաւ արկածով: Արտաշիր՝ հարթելով խոչընդոտները՝ նախ տէր եղաւ իւր տան. յետոյ յաջողեցաւ գահազուրկ ընել կրմանի Աաղարշ արքայն, սպաննել ծովեզերեայ կողմանց արքայքն, եւ այսպէս բուն Պարսկաստան կամ Պարսիս աշխարհն իւր ձեռքն առնուլ, եւ 224ին սկսաւ Գոր (այժմ Ֆիրուզապատ) քաղաքը շինել

լմնցընել, պալատ մը կանգնել եւ ատրուշան մը: Արքայից արքայն Արտաւան Ե չէր կրնար այս վտանգն անտեսել, եւ զՆիրոփար՝ ԱՏվազայ արքայն (ըստ Գուռշմ. 160 հին Եղիմայիսի արքայից մէկ յաջորդը) խաւրեց՝ զԱրտաշիր բռնելու: Բայց հոս երեւցաւ բուն վտանգը: Ըստ Գիոնի Արտաշիր երեք ճակատներու մէջ յաղթեց Պարթեւաց եւ զԱրտաւան սպաննեց: Գուռշմիդ (անդ 160—1) կը գտնէ թէ այս լակոնական պատմութեան ընդարձակօրէն կը պարզէ աւանդութիւնը, զոր կը պատմէ Տաբարի (թրգմ. Նեոլդէքէ): Ըստ այսմ Ապրսամ Արտաշիր վզուրկ-հրամատարը յաղթեց Նիրոփարայ, եւ ասկէ քաջալերեալ Արտաշիր Պարսիսի սահմաններէն ալ դուրս գիմեց Ասպահանի Շապուհ արքայի դէմ եւ սպաննեց զանիկայ, յաղթեց Նիրոփարայ եւ առաւ անոր ԱՏվազ մայրաքաղաքն որ Փոքր Տիգրիսի վրայ էր. (— այս է ըստ Գուռշմիդի՝ էջ 161՝ Արտաշիր երկրորդ յաղթութիւնն առ Գիոնի: ) Ասկէ ետքն արշաւեց Մայշանի (հնոց Մեսենէ) Բանդու արքայի դէմ, սպաննեց զանի եւ անոր տէրութիւնը գրաւեց: Դառնալով Պարսիս՝ Արտաշիր գրեց Արտաւանայ որ որոչէ տեղն ու ժամանակը վճռական ճակատին, եւ Արտաւան անխոհեմութեամբ ընդունեցաւ: Որոշուած էր Որմիգդանի դաշտավայրն, ուր Արտաշիր կանուխ հասնելով շատ լաւ դիրքերը բռնեց եւ իւր բանակը փոսերով պատեց: Երբ Արտաւան ալ հասաւ, Արտաշիր որդին Շապուհ ճակատը սկսաւ, յարձակեցաւ Արտաւանայ վրայ, սպաննեց զանիկայ, եւ Պարթեւաց բանակը խորտակեց: Արտաշիր ձիէն իջած՝ կոխոտեց Արտաւանայ գլուխը, եւ հռչակուեցաւ «արքայից արքայ»՝ 227ին Ապրիլ 28ին: Սասանեանց տիրապետութեան հիմը դրուած էր, եւ Արշակունեացն յեականս արդէն խորտակուած լմնցած: (Այսպէս ըստ Գուռշմիդի՝ անդ 156—162. սակայն վերջին մէկ երկու կէտերուն մասին հմմտ. յաջորդը:)

(Արշ-ի ԼԱ.) Արտաշատ, իբր 227 Յ. Բ: Ընդ ամենայն ճ կտոր, երեք դրամ եւ երեք պղինձ: Դրամներուն երկուքին (Թ. 1—2) առաջակողմը՝ Արտաւազդայ պատկերը, յատուկ նշանաւ մը՝ այսինքն մօրուքն երկճղի բաժնուած, որ ուրիշներուն քով չի տեսնուիր. գլուխը՝ սաղաւարտ եւ ապարօշ, եւ վիզը՝ մանեակ. գլխուն ետեւը՝ պճլ-



արամ. Ar. (Արտաւազդ): Յետսակողմը՝ Արշակ ի գահա-  
 Տի աղեղնաւոր, աղեղան ներքեւ՝ մենագիր: Արձանա-  
 գիրը՝ պՏԼ. արամ. թերակատար, կ'երեւայ Artabazu malka (?), «Արտաւազդ արքայ», իսկ յու-  
 նական սովորականը բոլորովին բարբարոսական  
 նմանողութիւն մ'որ անրնթեռնի է, այսպէս՝  
 βασιλεων բառի տեղ եղած ΙΑΙΙΑΝΥΛ. կշիռն՝ 3.65  
 (թ. 1.) եւ 3.70 (թ. 2.) ցանցառ: Ցանցառագոյն  
 է թ. 4 դրամը՝ յառաջակողմը Արտաւազդայ նոյն  
 պատկերն երկճղի մօրուօք, գլուխը սաղաւարտ եւ  
 ապարօշ. սաղաւարտին վրայ աստղաձեւ զարդով  
 մը եւ վիզը մանեակ. յետսակողմը միւս դրամնե-  
 րուն (թ. 1—2) պէս, մենագիրը միայն տարբեր.  
 կշիռն՝ 3.56. — Պղինձներէն ալ թ. 3 առաջակողմը՝  
 Արտաւազդայ պատկերը երկճղի մօրուօք, գլուխը  
 սաղաւարտ եւ ապարօշ, վիզը մանեակ: Յետսա-  
 կողմը՝ սապատողն եզն, եւ նշանակ մը. կշիռը՝  
 1.50, շատ ցանցառ: Իսկ թ. 5—6 յառաջակողմը՝  
 Արտաւազդայ պատկերը, մօրուօքը նոյնպէս երկճղի,  
 գլուխը՝ սաղաւարտ եւ ապարօշ, եւ սաղաւարտն  
 աստղաձեւ զարդով: Յետսակողմը՝ սապատողն  
 եզն. կշիռն՝ 0.77 եւ 1.05: — Ինչպէս մտադիր  
 կ'ընէ Հեղինակն՝ ըստ Longpérierի Պարիսի Ազ-  
 գային թանգարանը կայ այս արքայիս մէկ շրէ-  
 դրա՞նն, զոր նոյն գիտնականը նկարագրած եւ  
 հրատարակած է: Այս շորեքդրամեանին վրայ ալ  
 արքային մօրուօքն յատուկ երկճղի ձեւովն է. եւ  
 ասով կը զանազանի Վաղարշայ Զ շորեքդրամեան-  
 ներէն: Ապա թէ ոչ նաեւ յետսակողմը նոյն է Վա-  
 ղարշայ Զ շորեքդրամեաններուն հետ: Այս ամե-  
 նավերջին պարթեւական շորեքդրամեանիս թուա-  
 կանն է՝ ինչպէս գոնէ Longpérier կը կարծէր կար-  
 դալ, սելեւկեան 539 տարին (= 227—8 Յ. Ք:)

Այս թուականաւ Արտաւազդայ շորեքդրամեանս  
 շատ կարեւորութիւն ունի՝ ցուցնելու որ իրերն այնպէս  
 ալ վայրկեանական արագութեամբ շմեցան, ինչպէս կը

պատմէ յիշեալ աւանդութիւնը. (տես նախընթացը:) Կարեւոր է այն պարագան որ շորեքդրամեանս ընդհանուր տպով շատ նման է Վաղարշայ Ջ դրամներուն: Այս պատճառաւ Քարդնէր (էջ 59) իրօք Վաղարշայ Ջ կ'ընծայէր, եւ կ'ընդունէր որ Արտաւանայ մահուանէն ետքը Վաղարշ Ջ կրկին ձեռք ձգած էր իշխանութիւնն ի Տիգրան: Նոյնն այնպէս կ'ընդունէր նաեւ Քուտշմիդ (անդ 163,) որուն բաց աստի ծանօթ էր դարձեալ միակ դրամ մ'Արտաւազդայ արքայի, որ յայտնապէս, կ'ըսէ, «Արտաւանայ մէկ որդիէն ի Մարս դրոշմուած է»: Սակայն քանի որ այժմ գիտենք թէ ո՛չ թէ Վաղարշ Ջ, այլ նոյն ինքն այն Արտաւազդ է 539 (= 228ի) շորեքդրամեանն հատանել տուողը, պէտք է ընդունիլ որ Արտաւազդ էր Արտաւանէ ետքը բուն արշակունի «արքայից արքայն» գոնէ ըստ իրաւանց, որուն մասին ի հարկէ ոչինչ գիտենք: Յամենայն դէպս չկրցաւ իւր հայրենի գահն առաջին դրից բարձրացընել: Իւր իշխանութիւնը՝ Տիգրանի եւ բուն Պարթեւական մասանց քիչ ժամանակի մէջ Սասանեանց ձեռքով առնուելովն, աւելի անուանական նշանակութիւն մ'ունեցած ըլլալու է՝ գոնէ իբրեւ «արքայից արքայ»: Անշուշտ Սասանեանց ալ յաջողութիւնն ի սկզբան այն ծաւալով շէր՝ ինչպէս յետոյ եղաւ կամաց կամաց. բայց «Արշակունեաց» գահի առաջին նշանակութիւնը կորսուած էր յիրականին: Բաց ի մանր արքայութիւններէ՝ կը տեւէին տակաւին մեծեր ալ. իբրեւ Արշակունի այնուհետեւ կարեւորագոյնը կը մնար Հայոց Արշակունեաց տունը, որ՝ ինչպէս ծանօթ է՝ փորձեց իսկ Արտաւանայ վրէժն առնուլ — Արտաւազդայ եւ սյւրոց ալ օգնութեամբ, — այսինքն կենդրոնական տան նախկին իշխանութիւնը վերահաստատել: Փորձն անյաջող էր նաեւ այնու որ՝ ինչպէս բացայայտ կ'ըսուի՝ նոյն իսկ պահլացեղեր եւ արշակունի ճիւղեր կողմն էին նոր կարգաց. եւ այնուհետեւ կը մնար հոգալ նոյն իսկ իւր գոյութիւնը հզօրագոյն նոր իշխանութեան դէմ, որուն ներքին կազմակերպութիւնն եւ կենդրոնական ոյժն աւելի էր քան Պարթեւականին: Ի վերջոյ խոնարհեցաւ այս ալ, եւ Սասանեանց իրական նպատակը՝ Արշակունի ամէն տուն վերջնականապէս անզօր ընել, յաջողեցաւ, երբ հայ Արշակունիք ալ ինկան Ե դարուն առաջին քառորդին, բնիկ տան իյնալէն ճիշդ երկու դար վերջը: — Այս անապանագոյն ժամանակներ մեր ծրագրէն դուրս են: Հոս կը մնայ շօշա-

փեւ խնդիր մ'որ կապ մ'ունի այս Արտաւազգայ կամ այս  
 վերջին պատահարաց հետ: Նոր գիտնականք ի հարկէ մէս  
 չեն իրերն այնպէս վայրկենական եղած լինցած տեսնելու,  
 ինչպէս սովորաբար կ'աւանդուի: Այսպէս Նեոլիթէքէ (Պամ.  
 Սասանեանց՝ Տաբարի, էջ 409 եւն) այն երկու Արշ-  
 կունի եւ Սասանեան պետութեանց համար որոշիչ թուա-  
 կաններէն՝ 224 եւ 227՝ առաջինը կը համարի յիշեալ  
 վճռական վերջին ճակատամարտինը, իսկ երկրորդը՝ Տիգրանի  
 առնուելուն, որով իրօք կը պսակուէր Արտաշի ձեռ-  
 նարկը: Գուտշմիդ (անդ 162 եւն) համամիտ չէ ասոր. եւ  
 ըստ աւանդութեան, կ'ըսէ, լուադոյն է 227 թուականը  
 զնեւ Արտաւանայ մահուան, իսկ 224ը համարիլ Գորի  
 առումն՝ որով բնիկ Պարսկաստանի տիրապետութիւնը  
 կ'աւարտէր, եւ որով Արտաշի վէճի բռնուեցաւ «արքայի  
 արքայից» հետ: Իւր պատճառքն են՝ նախ որ Տաբարի ալ  
 Արտաշի 14 տարի եւ 10 ամիս տեւող իշխանութիւնը  
 բացայայտ Արտաւանայ մահուանէ կը հաշուէ. երկրորդ՝  
 ամէն աղբիւրները՝ նաեւ ժամանակակիցքն Գիոն եւ Հե-  
 րովդիանոս՝ զԱրտաւան վերջին արքայ կ'ըսեն Պարթեւաց,  
 որ. կ'ըսէ, անըմբռնելի կ'ըլլար՝ եթէ Արտաւանայ մա-  
 հուանէ ետքն ալ Արշակունի պետութիւնը տակաւին երեք  
 տարի տեւած ըլլար. եւ երրորդ՝ անըմբռնելի կ'ըլլայ որ  
 Արտաշի՝ Արտաւանայ մեռնելէն ետքն՝ այս երեք տարի-  
 ներն անգործ մնացած ըլլայ: Ի հարկէ, կ'ըսէ Գուտշմիդ,  
 նաեւ այն տեղական աւանդութիւնը կ'ըսէ թէ որոշիչ  
 ճակատամարտէն ետքը պէտք էր մի առ մի նուաճել Եկ-  
 րատան, Մարաստան, Ատրպատական, Հայոց աշխարհն,  
 Ասորեստան եւ Բաբելաստան: Բայց, կ'ըսէ, դիպաց այս  
 կարգն ընդունելի չէ՝ Գիոնի աւանդածին հետ կշռելով. եւ  
 թերեւս հնարուած է, կ'ըսէ, ի Հայս Արտաշի կրած ձա-  
 խողանքը պատրուակելու համար: Գիոն Արտաւանայ մա-  
 հուանէ ետքն մինչեւ 228 կամ նաեւ նոյն տարին պատա-  
 հածներն այս կարգաւ կը յիշէ՝ Ատրայի անօգուտ պաշա-  
 րումն, որ կ'ենթադրէ թէ Ասորեստան արդէն գրաւուած  
 էր. արշաւանքն ի Մարս եւ նուաճումն մեծ մասին Մա-  
 րաց եւ Պարթեւաստանի, յարձակումն Հայոց աշխարհի  
 վրայ եւ մերժուիլ անկէ՝ պարտուելով Հայոցմէ, Մարաց  
 մէկ մասէն (որ անշուշտ, կ'ըսէ, Ատրպատականցիք էին.) եւ  
 Արտաւանայ որդիներէ. յետո գարձ Արտաշի: Ըստ այսմ,  
 կ'ըսէ, տարակոյս չի մնար որ Տիգրանի առումն եւ Բաբել-

լաստանի գրաւումն առաջին գործն եղած ըլլալու է Արտաշրի՝ այն ճակատամարտը վաստկելէն ետքն, եւ Տիգրանի գրաւումն իբրեւ բնական հետեւութիւն Արտաւանայ մահուան՝ չէ յիշած Գիոն առանձինն կերպով: Իսկ Գիոնի այն խօսքը թէ Պարթեւաստանի մասերն այն ատեն նուաճեց Արտաշիր, կը հասկընայ այն մտօք թէ այս անգամ արշաւանքն եղած ըլլալու է միայն մինչեւ Աոմշ աշխարհն: Անկէ աւելի արեւելակողմն Սասանեանց հիմնարկուն արշաւած ըլլալու է միայն յետոյ, երբ՝ ըստ Տապարեայ՝ հպատակեցուց նաեւ Սագաստան, Արկանք, Նիւշապուրհ եւ Մերվ: (Տես Գուաշմ. 162-3:) — Եթէ ընդունելի համարինք Նեոլոգեքեայ կարծիքը, եւ Արտաւանի մահը դրուի 224ին, այն ատեն յիշեալ երեք տարին կը մնայ Արտաւազդայ՝ վերջնագոյն Արշակունւոյս, որուն վերջին տարին յայտնի չէ. բայց գոնէ իբրեւ «արքայ արքայից» Արշակունեաց այնուհետեւ նշանակութիւն չունէր, եթէ կ'ապրէր ալ երկար, այսպէս կամ այնպէս, մանաւանդ Տիգրանի եւ գլխաւոր աշխարհաց առնուելէն ետքը:

\* \* \*

Պէտք է այժմ անցնիլ այն դրամներուն, զոր Հեղինակը կցած է իւր Յուլիանի, փոքր մէկ մաս մ'իրաւամբ տակաւին բնիկ Արշակունեաց շարքին մէջ դասաւորելով, միւսը՝ երկրորդական ճիւղին վերագրելով: Այսինքն՝ մեզի կը մնայ տեսնել «Քաղաքաց» դրամները բնիկ Արշակունեաց օրերէն. Աամնասկիրէսի Բ դրամները՝ որ Եղիմայիսի իշխանութեան կը վերաբերի, եւ դարձեալ Հայ Արշակունեաց վերագրուած դրամները: Հոս բնիկ Արշակունեաց բաժնին կը վերաբերին նախ իրաւամբ միայն «Քաղաքաց» դրամները:

Քաղաքաց Դրամներ: Այս «Քաղաքաց» դրամները շատ չեն Հեղինակիս հաւաքման մէջ, ընդամէնն 9 կտոր պղինձ: Իրենց առանձին նկարագիրն է որ ոչ արքայից արքայի մը պատկերը կը կրեն եւ ոչ անոր մէկ արձանագրութիւնը: Գոնէ մաս մը թուական ունենալով՝ ժամանակը յայտնի է: Ասոնց նկարագիրն է՝ Թ. 1 յառաջակողմը

Բախտ, գլուխը բրգաւոր թագով. յետսակողմը գրուած  $\Delta K \Sigma$ .  $\Delta I O Y$ , այսինքն հաւանօրէն  $\Delta K \Sigma = 224$  Սելեւկ. եւ  $\Delta I O Y$  Դիոս ամիս. (Նոյեմբեր, վերջինս երկբայութեամբ կը դնէ Հեղինակը.) եւ բաց աստի գրուած  $A$ , դրամահատութեան տեղը. կշիռը՝ 1.47: — Թ. 2 բոլորովին նոյն է ասոր հետ. կշիռը՝ 1.80: — Թ. 3 յառաջակողմը նոյնպէս՝ Բախտ բրգաւոր թագով, յետսակողմը՝ Յաղթութիւն պատմութեանաւոր, ձեռքն արմաւենի բռնած, առջեւը թուականս  $ANT = 351$  Սելեւկ., կշիռը՝ 3.62: — Բոլորովին նոյն ասոր հետ՝ Թ. 4, կշիռը՝ 2.67: — Նոյն են նաեւ Թ. 5—6 ալ, բայց Յաղթութեան առջեւն ունին թուականս՝  $BNT = 352$  Սելեւկ., կշիռն՝ 3.24 եւ 3.32: — Թ. 7—8 յառաջակողմը նոյնպէս Բախտ բրգաւոր թագով. յետսակողմը գրուած է լոկ  $\Pi O \Lambda \Sigma$  («քաղաք») պատկերն է՝ Բախտ պատմութեանաւ եւ բրգաւոր թագով նստած ժայռի մը վրայ, ձախ ձեռքը ժայռին վրայ դրած, աջը կարկառած՝ եւ ափին վրայ կեցած է Յաղթութիւնն որ դժբախտ կը պսակէ: Բախտին ոտից առջեւ մօրուքաւոր եւ եղջիւրաւոր գլուխ մը (գետոյ դիք.) բախտին գլխուն ետեւ՝  $A$ . կշիռքն (Թ. 7) 2.08: Նոյն տպով է նաեւ Թ. 8, կշիռը 1.78: — Թ. 9՝ առաջակողմը Բախտ բրգաւոր թագով. յետսակողմը՝ կնոջ մը պատկերը (Արտեմիս) կարծ պատմութեանաւ՝ դէպ ի ձախ շարժելու վրայ. ձախը բարձրացուցած կը բռնէ բան մը (աղեղ): Իրեն ետեւը՝ արձանագիր մը կար, որ այժմ մաշած է. իրեն ձախակողմը կը կարդացուին տակաւին տառերս  $AP \Sigma A \dots$ , կշիռը՝ 1.85, շատ ցանցաւ: (Տես էջ 178—9:)



## Գ.

Բնիկ Պարթեւաց կամ արքայից-արքայներու դրամները տեսնելէն ետքը՝ կարգ կու գայ հոս տեսնելու այն դրամները, որոնք մեզի եւ մեր պատմութեան համար ամէնէն աւելի հետաքրքրական են, հնագոյն հայ Արշակունեաց դրամները: Այս կէտն այնչափ կարեւոր է մեր պատմութեան տակաւին շատ միջին յետադեքսանդրեան շրջանին համար, որ հարկ է նախ՝ մանրամասնօրէն տեղեկագրել Հեղինակիս Հաւաքման այս մասն, եւ երկրորդ՝ առանձին մասով մ'ընդարձակ քննութեան նիւթ ընել նախարշակունի եւ հնագոյն-արշակունի արքայից շրջանը, պատմական հանգամանքներն ու ցայժմ բախտիւ կորստէ ազատած եւ մեզի հասած դրամները: Աերջին կէտս թողլով յաջորդ մեր ուսումնասիրութեան՝ հոս տեսնենք նախ հայ Արշակունեաց դրամները՝ Հեղինակիս Յուցակին համեմատ: Աանխենք միայն ըսելու թէ ի հարկէ՝ երբ յաջորդ դրամներու շարքը կը ներկայացուի Աաղարշակայ, Արշակայ, Արտաշիսի եւ (Յուստինոսի յիշած) Արտաւազդայ անուամբք, ոչ հեղինակին եւ ոչ մեզ անձանօթ է այն՝ ըստ երեւութին՝ մեծ դժուարութիւնը որ կայ ազգային այն աւանդութեան եւ արտաքին պատմչաց կամ — աւելի ճիշդ — նորագոյն բանասիրութեան արդեանց մէջ: Ազգային աւանդութիւնն այնպէս՝ ինչպէս կը ներկայացրնէ Խորենացի՝ այնչափ թերի, խառնակ, պատմական եւ ժամանակագրական անտեղութեամբ լի է, որ նորագոյն քննադատութեան համար դժուարին շէր ամբողջ շինուածքն ի հիմանց տա-

պալել: Արդի քննութեանց համեմատ բոլորովին անտեղի պիտի ըլլար յիշեալ արքայից իբրեւ «հնագոյն Արշակունեաց» մասին խօսիլն անգամ: Պատմաբանօրէն երաշխաւորեալ է միայն — վաղանցուկ գահակալութիւնք չհաշուելով — հայ Արշակունեաց գահին հաստատութիւնն Արշակունի Տրդատայ օրերէն, ըլլայ 53 թուականին, ըլլայ մանաւանդ 66ին՝ երբ ի ներոնէ ալ ի հռոմ պսակուեցաւ իբրեւ արքայ: Այս ժամանակակէտն է այժմ առ հասարակ ընդունուած՝ իբրեւ հայ Արշակունեաց բուն հիմնադրութիւնը: Յիշեալ հնագոյն արքայից իբրեւ «Արշակունեաց» մասին եղած աւանդութիւնը թէեւ չենք կրնար այժմ իբրեւ միայն խորենացւոյ սեպհական ըսել, — ինչպէս կ'ընէր օրինակի համար Քարազաշեան, — բայց յիշեալ պատմական պարագայից առջեւ կը համարուի այժմ միայն «ժողովրդական» աւանդութիւն մը՝ զուրկ բուն պատմական հիմանէ. (այսպէս՝ ինչպէս յետոյ պիտի բացատրենք՝ Marquart, Erānšahr, 174:)

Սակայն հոս ալ իրը վերջնական ըլլալէն տակաւին շատ հեռի է: Արտաքին բովանդակ պատմական գրականութիւնը — կամ աւելի ճիշդ կցկտուր յիշատակութիւնքը — քննելով՝ չենք գտներ այնպէս հակասական յիշեալ աւանդութեան, բայց միայն Ստրաբոնի միակ նախադասութիւն մը: Ստրաբոն պատմելով Անտիոքոսի Գ Մեծի օրով Արտաշիսի եւ Չարեհի անկախ ըլլալը, թէեւ բան մը չ'աւելցրներ Արտաշիսի անմիջական յաջորդաց մասին, բայց անցնելով խօսիլ Տիգրանայ Մեծի վրայ՝ կ'ըսէ թէ ասի «ի զաւակէ» կամ «ի սերնդենէ» Արտաշիսի էր: Այս է միակ կարեւոր հակասական կէտը. եւ այն՝ եթէ բառացի առնունք, եւ ոչ ընդհանուր մտօք իբրեւ «ի յաջորդաց» Արտաշիսի: Եւ եթէ ուզենք՝ այն խիստ իմաստով առնուած վկայութեան գէմ ալ կրնանք

գտնել ոչ նուազ մատենագրի մը վկայութիւնը՝ Յովսէպոսի, որ զԱրտաւազդ՝ Տիգրանայ Մեծի որդին՝ ազգաւ պարթեւ կ'ըսէ բացորոշ: Յուստինոս՝ կ'երեւոյ անգամ յանուանէ յիշել զԱղարշակ՝ Bagasis ուղղագրութեամբ, զոր դժուար չէ Bala-sis ուղղել (Տմտ. յն. Դ եւ Ա.) Ապպիանոս ուրիշ հետաքրքրական պարագայ մը կը պատմէ, այս որոշ ձեւի տակ՝ անձանօթ միւս պատմչաց, Տիգրանայ Մեծի հայրը Տիգրան անուանելով. թողլով հոս յիշել ուրիշ կէտեր: Ընդհանրապէս — եթէ ի բաց առնունք Ստրաբոնի յիշեալ խնդրոյ տակ խօսքը, — աւանդութեան եւ արտաքին պատմական վկայութեանց մէջ հակասութիւն չի կրնար բլաւ նոյն իսկ անով որ այն առաջին Արտաշիսէն ետքը (արքայ 189ին Ն. Ք.) մինչեւ Տիգրան Մեծ գոնէ դարու մ'անջրպետ կայ տակաւին բոլորովին մութ, քանի մը հարեւանցի տեղեկութիւնք ի բաց առնլով: Եւ ճիշդ այս միջոցին՝ Ք դարու (Ն. Ք.) իբր կիսուն կամ քիչ մ'ետքը կ'աւանդուի Աղարշակայ ձեռնարկը:

Հոս այս ամէնը մանրամասն բացատրել մեր նպատակը չէ. արդէն յաջորդ մասին մէջ առիթ կ'ունենանք այս խնդրոց դառնալու: Համառօտիւ նշանակել միայն ուղեցինք թէ խնդիրը տակաւին շատ երկբայական է. եւ անոր համար իրաց որեւէ ուրիշ մեկնութիւն մը չենք կրնար ի յառաջագունէ իբրեւ անհնար եւ անկարելի մերժել, առանց գոնէ փաստերն անաչառութեամբ քննելու ի կողմն եւ ընդհակառակն: Եւ զարմանալին այն է որ կարծես դրամագիտութիւնը կոչուած կ'երեւայ խնդրոյն վերջնական լուծման մէջ որոշիչ բաժին մ'առնուլ: Արշափ ալ անբաւական համարուի ցայժմ գտնուած դրամներուն մթերքը, գոնէ բաւական է համոզուելու որ պատմական այս նշանաւոր յիշատակարանքն ոչ միայն որեւէ կերպով չեն հակառակիր յիշեալ ազգային աւանդութեան, այլ



ընդհակառակը կը հաստատեն՝ ամենայն հաւանա-  
կանութեամբ: Արնանք այսպէս յիշել Բաբրլոնի  
նշանաւոր ձեռնարկն՝ Սելեւկեանց, Հայոց եւ Առմա-  
գենացւոց դրամներու մասին, որ բաց ի դրամոց  
ցուցակէն՝ կը պարունակէ նշանաւոր քննութիւն  
մ'էական պատմական հանգամանաց՝ իւր ժամանակ  
ծանօթ ամէն հին ու նոր պատմական, արձանա-  
գրական եւ դրամագիտական յիշատակարանաց  
համեմատ, գործ մ'որուն նշանաւորութեան մասին  
խօսք մ'աւելցրնելն ինքնին աւելորդ է: Յիշեալ  
գիտնականն ոչ միայն հակասական չի գտներ  
Վաղարշակայ եւն մասին եղած աւանդութիւնն,  
այլ նոյն իսկ բարեբախտ նպաստ մը՝ ժամանակին  
մթութիւնը գտնէ մասամբ փարատելու. (E. Babe-  
lon, les Rois de Syrie եւն, p. CXCIX.) մանաւ-  
անդ թէ աւելի յառաջ ալ կ'երթայ եւ անհաւ-  
անական չի գտներ՝ Օ. Բլաւի հետեւելով՝ ճիշդ  
այն իբր գրուցախառն հռչակուած «Մորփիւլիկեայ»  
— թողլով այժմ այս անուան ձեւին մասին խնդիր-  
ները, — անունը գտնել Ծովոց դրամներուն մէջ  
(անդ՝ p. CC:) Թէ այս վերջին կէտս որչափ հաւ-  
անականութիւն ունի՝ խնդիր մըն է, զոր յետոյ  
պիտի տեսնենք: Դրամագիտական մասն այժմ նոր  
րնթացք մը կ'առնու հեղինակիս հաւաքմամբ: Ար-  
յուսանք թէ յաջորդ փաստերն եւ դրամոց ցուցա-  
կագրութիւնը կը համոզեն թէ հոս կայ յիշա-  
տակարանաց մթերք մը, զոր այսուհետեւ կարելի  
չէ անտես ընել՝ հնագոյն հայ Արշակունեաց խրն-  
դրոց ուսումնասիրութեան ատեն: Գժբախտաբար  
որոշ թուականաւ են միայն Վաղարշակայ եւ Ար-  
շակայ մէկ քանի դրամները, միւսները փոքր ան-  
թուական կտորներ են: Բայց քանի որ Բրիտ. եւ  
Բերլ. Թանգարան կան մնացելոց ալ շորեքդրա-  
մեանք (— գժբախտաբար նոյնպէս անթուական,  
Բերլինի Թանգարանին՝ Արտաշիսի կտորը՝ թուա-  
կանը մաշած եւ երկբայական. —) անյուսալի չէ

որ բախտ ունենանք՝ Պարթեւականաց պէս՝ հայ Արշակունեաց ալ դրամներն դասաւորել կարենալ օր մը հետեւելով անոնց տարեթուերուն քայլ առ քայլ եւ տարիէ տարի: Ար ցաւինք որ չենք կրնար ճիշդ այն Բրիտ. (նաեւ Բերլ. եւ Պետերսբ.) Թանգ. գտնուած կարեւոր դրամներուն պատկերները ներկայացընել. (— այս տողերս գրողն այն ամէնուն նմանահանութիւնը դասաւորուած տեսած է Հեղինակին հաւաքման մէջ: —) Ասան զի երբ այս ամէնն՝ այսպէս ըսենք՝ աչքի առջեւ շարուած ըլլայ, շատ սուր աչք մը պէտք չէ անմիջապէս գտնելու թէ այս ամէնքն՝ որ հոս կը ներկայանան Աղարշակայ, Արշակայ, Արտաշիսի եւ Արտաւազդայ անուամբ, մէկ կողմանէ անքակ կերպով եւ շղթայաբար կապուած են իրարու, իբրեւ միեւնոյն հարստութեան իրարու յաջորդող անդամներ, եւ միւս կողմանէ՝ շատ մասամբ կապուած են նաեւ Տիգրանայ Մեծի դրամներուն հետ: Նշանաւոր է մանաւանդ դրամոց յետասակողման տիպը: Մինչդեռ բնիկ Պարթեւականաց համար բնորոշ էր՝ կամ իրենց հարստութեան հիմնադրին Արշակայ պատկերն ի գահի եւ աղեղնաւոր, կամ յետոյ չորեքդրամեանց վրայ՝ իւրաքանչիւր արքայից արքայ ի գահի. նոյնպէս հոս բնորոշ իրականութիւն մըն է յատուկ հայական Ահագն, որ նոյնպէս կ'երեւայ ինչպէս Աղարշակայ՝ նոյնպէս Տիգրանայ Մեծի դրամոց վրայ: Յաջորդ ցուցակագրութեան մէջ կը պակսի Տիգրանայ Մեծի ճիշդ այս կարեւոր տպով դրամը, զոր Հեղինակը ձեռք ձգած է ցուցակին հրատարակուելէն ետքը՝ Թէսզոր Պրովէի նշանաւոր հաւաքման աճրդէն. (Collection Theodor Prowe ի Մոսկուա, Wien 1904, Թիւ 1520. նմանահանութիւնը տես անդ՝ Տխտ. Ժ. նոյն թիւ: ) Նոյնը կը պակսի դժբախտաբար նաեւ մեր թանգարանին հաւաքման մէջ՝ որ այլուստ աղքատ չէ Տիգրանայ Մեծի դրամներով: Այս եւ

ուրիշ թանկագին կտորներ — օրինակի համար յիշեալ Պրովէի հաւաքմանէն Հեղինակին ձեռք ձգած “Նոր” (Νεός) Տիգրանայ դրամը (անդ՝ թիւ 1522) եւ նմաններ, — կը յիշենք յետոյ պատմական տեսութեան մէջ իրենց կարգին:

Յիշենք անցողակի նախարանական կէտ մ'ալ: Յաջորդ՝ Վաղարշակ, Արշակ եւ Արտաշէս անուանքն յիշած ատեն ըստ ազգային աւանդութեան՝ պէտք է մատնանիշ ընել որ էական պարագայ մը չէ պնդել կամ ընդունիլ թէ ծիշդ այս անուանքն ըլլան այն հնագոյն հայ Արշակունեաց անունները: “Վաղարշակ” — եթէ ընդունինք Յուստիի մեկնութիւնը (Justi, Iran. Namenbuch, 485, 488) — է պարզապէս “Հոր- (Ոյժ-) Արշակ” ուստի յորջորջանք մը եւ Պարթեւաց արքայից սովորական “Արշակ” անունը, զոր կը կրէ պարզապէս նաեւ Վաղարշակայ յաջորդը: Թէ այս կրկին Արշակներու բուն անունն ինչ էր՝ չէ աւանդուած: Ար մնայ “Արտաշէս”՝ որ կրնար բուն անունն ըլլալ. բայց շատ կարելի է որ այս ալ ըլլայ այն անուանց կարգէն՝ զոր Արշակունեաց ցանկին մէջ (Անանուն, Խոր.) կը գտնենք պէսպէս եղանակաւորմամբ գրուած “Արշակայ” հետ՝ Արշանակ, Արշէս, Արշաւիր, Արտաշէս” եւն (տես Խոր. Բ, կը—կթ.) եւ որոնք արքայից բնիկ անունները չեն: Եւ քանի որ Ապպիան “Տիգրան” կը կոչէ Տիգրանայ Մեծի հայրը, բնական կ'ըլլար ըսել թէ այս “Արտաշէս”-Տիգրանը՝ Արշակ-Տիգրան իմաստով է: Յուստիսի յիշած Արտաւազդն՝ զոր Խոր. շի գիտեր, բնիկ անունն է անշուշտ:

Այստեղ նախ կը գնենք Հեղինակին բերած համառօտ պատմական ակնարկը (Յաջր. Գ—Գ) եւ անոր կից գլխաւորաբար դրամագիտական փաստերն՝ որոնք դրդած են զինքը դրամոց այս շարքն հայ Արշակունեաց ընծայելու (Յուցակիս էջ 13—16)՝ ընդհանրապէս գրեթէ բառ առ բառ, կամ գոնէ

Հեղինակին գաղափարն ըստ կարելւոյն ճշգրտութեամբ ներկայացընելով: Ասկէ ետքը կու գայ գրամներուն նկարագրութիւնը, որ Հեղինակիս գործոյն երկրորդ մասն է կամ «Հայոց աշխարհ» բաժինը (Յուցակիս էջ 181--191.) ծայրը կցելով նաեւ Եղիւմայիսի բաժինը կամ Աամնասկիրեայ Բ գրամները (էջ 193—196.) որ ինքնին գեղեցիկ փաստ մ'ալ է Արշակունեաց կողմնակի տներէն կամ ճիւղերէ գրամ գտնուելուն: Ասով լիովին համառօտած ալ կ'ըլլանք Հեղինակին գործը ծայրէ ծայր:

\* \* \*

«Արշակունի գրամոց սակաւաթիւ մէկ մասը, կ'ըսէ (Յռջբ. Գ եւն), որոնք ակներեւ համազգի կապակցութեան աղերս մը կը ցուցընեն, բայց իրենց գրամական տպովն ու գրամահատութեան ամբողջ ոճովն պարթեւական գրամներու տպէն ակնյայտնի կը տարբերին, եւ որոնք՝ ինչպէս կը կարծեմ՝ չեն կրնար յարմար կերպով դասաւորուիլ պարթեւականաց մէջ, բաժնեցի պարթեւական գրամոց շարքէն եւ ընծայեցի այն արշակունի արքայիցն ի Հայս՝ զորոնք Մովս. Խորենացի կը յիշէ, Աղարշակայ, Արշակայ եւ Արտաշիսի: Այս համոզման եկած եմ, նախ՝ որովհետեւ չեմ կրնար իբրեւ ըստ ինքեան իսկ անհաւանական գտնել Արշակունեաց ի Հայս մտնելու ժամանակին նկատմամբ Մ. Խորենացւոյ տուած տեղեկութիւնքն. եւ երկրորդ՝ որովհետեւ անշուշտ դիւրին չէ ընդունիլ թէ Մ. Խորենացի՝ որ իւր աշխարհին պատմութիւնը կը գրէր, առաջին հարստութեան հայ արքայքն կամաւ լուծ ըլլայ՝ անոնց տեղն ի Հայս արշակունի իշխողներ հնարելու համար. եւ վերջապէս երրորդ՝ որովհետեւ եթէ յիշեալ արշակունի գրամներն, որոնք պարթեւական գրամներու տպին այնպէս աննման են, դասաւորել փոր-

ձեռք պարթեւական դրամոց շարքին մէջ, որչափ ալ շրջահայեաց զգուշութեամբ ըլլայ դասաւորութիւնը, շատ կողմանէ անհամաձայնութիւն կը տեսնուի վերջնոցս հետ. եւ ըստ այսմ անոնք բուն Պարթեւ արքայից դրամներն ըլլալու չեն, այլ մանաւանդ կը հաստատեն ըստ երեւութին Մ. Խորենացւոյ յիշած առաջին արշակունի արքայից գոյութիւնն ի Հայս: Եթէ կ'ընդունի որ Խորենացւոյ յիշած արշակունի արքայքն ի Հայս՝ Ազարշակ, Արշակ եւ Արտաշէս, դրամ հատանել տուած են իրենց անուամբն, այն ատեն ասկէ կը հետեւի որ արքայից արքայ Միհրդատայ Ձ զինուց յաջողութիւնքն ի Հայս կարճատեւ եղած ըլլալու են Պարթեւաց համար: Իսկ թէ Ստրաբոն, երբ կը հաստատէ թէ Պարթեւք որչափ անգամ ալ փորձեցին՝ երբեք չկրցան բռնութեամբ զՀայս իրենց իշխանութեան ներքեւ առնուլ,<sup>1</sup> իրեն իսկ ուրիշ խօսքերուն հետ հակասութեան մէջ է կամ չափէն աւելի բան մը պնդած է, զոր կը հերքեն նաեւ ուրիշ մատենագիրք, — այս կէտը մատնանիշ ըրած է արդէն պատմագէտ քննիչ մը՝ Յ. Շնայդերվիրթ իւր «Պարթեւք» գործոյն մէջ:<sup>2</sup> Մ. Խորենացւոյ տուած տեղեկութեանց համեմատ

<sup>1</sup> Ստրաբոնի (ԺՁ. 1. 19) այս նշանաւոր խօսքէն թէ «Հայն խոնարհեալ, այլ ոչ նուաճեալ», կ'ուզեն հետեւցընել նաեւ ուրիշները թէ «Պարթեւք ոչ նուաճեցին երբեք զՀայս... (այսպէս Քարապաշ, Բ. 131՝ Թ. Ռայնախի գրքէն քաղուածք ընելու ատեն:) Ռայնախի խօսքին՝ այս կոչման ատեն՝ իմաստն է, ինչպէս քիչ մ'առաջ կը գնէր, թէ ասով լիովին ժխտուած կ'ըլլայ Հայոց «կարճեցեալ աւանդութիւնը», (Խոր. Բ. 4. Յովհ. Կթղ. Ը) թէ Պարթեւք ի Հայս արքայ դրած էին զԱզարշակ իրենց ասհմին կրօսեր մէկ շառաւիղը, մանաւանդ որ Ստրաբոն այլուր (ԺԱ. 14. 15) զՏիգրան Արտաշիսի (Արտաքսիասայ) զաւակէն կը գնէ. (տես անդ:)

<sup>2</sup> Dr. J. Hermann Schneiderwirth, die Parther (Heiligenstadt, 1874), p. 39.

Տիգրան Մեծ (94—56 Ն. Ք.) որդի եւ գահաժառանգ է յիշեալ արշակունի արքային Արտաշիսի (Արտաքսիասայ.<sup>1</sup>) մինչդեռ ընդհակառակն Ստրաբոն զՏիգրան մեծ կ'ըսէ ի սերնդենէ այն Արտաշիսի (Արտաքսիասայ) որ առաջին հայ հարստութեան հիմնադիրն եղաւ: Ի հարկէ այս երկու տեղեկութեանց իրարու ունեցած հակասութիւնը վերցրնելն անկարելի է: Սակայն գիտենք որ Ստրաբոն նոյնպէս անմիաբանելի հակասութեան մէջ է Ասիանու հետ առ Փոտայ եւ Սինկեդոսի նաեւ առաջին պարթեւ Արշակունեաց ծագման մասին<sup>2</sup>, եւ Ստրաբոնի այս տեղ սխալիլը բացատրած է Հնայդէրվիրթ յիշեալ իւր «Պարթեւք», երկասիրութեան մէջ:<sup>3</sup> Անշուշտ կը կարծեմ որ Խորենացւոյ յիշած ի Հայս տիրող այս «առաջին արշակունի արքայից ատենն ալ հոն կրնան իշխած ըլլալ Արտաշիսեան» (Արտաքսիասեանք) մասնական մէկ թագաւորութեան մէջ իբրեւ բնիկ արքայներ. բայց կը տարակուսիմ թէ Տիգրան Մեծ այս հայ իշխանաց մէկուն հետ նոյն անձն եղած ըլլայ. եւ նկատելով Ստրաբոնի տուած այն տեղեկութիւնն՝ առեղծուած մը կը մնայ այն կէտը թէ ուրեմն երբ եղած է Արշակունեաց հարստութեան հիմնարկութիւնն ի Հայս: Արեւմտեան աղբիւրներէն գիտենք որ Արշակունին Ռնոն, նոյն իսկ Ստրաբոնի ապրած օրերուն, Հայոց գահուն վրայ կը նստէր: Արդ այն պարագան որ այս Արշակունին, Պարթեւաստանէ փախած եկած, Հայոցմէ այնպէս կ'ընդունուի եւ իրենց արքայ կ'ընտրուի, գուշակել կու տայ որ Արշակունեաց արքունիտոհմն ի Հայս շատ յառաջ

1 Արտաշիս = Արտաքսիաս (օտարաց գրութեան համեմատ) տես Ferd. Justi, Iranisches Namenbuch (Marrburg 1895,) p. 36.

2 J. H. Schneiderwirth, die Parther, p. 12. (տես նաեւ վերը՝ էջ 15-16.)

3 Անդ՝ 11-16.

ալ արդէն կար եւ մեծ կողմնակցութիւն մ'ունէր,»  
(Յռջբ. Գ—Ե):

Յիշուեցան վերն Երրորդ Արշակայ կամ Փրիապատեայ արքայից արքայի դրամները. (— իբրեւ օրինակ յառաջ կը բերենք Պրիապատեայ թիւ 9 դրամը, Տխտ. Ա, 15. տես Հոս 2 եւ 1 —) եւ որոնց



Չեւ 1:

մին ալ՝ այս առաջին անգամ որոշ թուականաւ՝ տարեթիւ կը կրէր EKP = 125 Սելեւկ. (Պրիապատեայ թիւ 10, Տխտ. Ա, 16, Հոս 2 եւ 2:) «Արդ



Չեւ 2:


կայ ցանցառ արշակունի չորեքդրամեան մը — կ'ըսէ Հեղինակը (էջ 13 ff.) — որ դրամին նմանապատճենը կրնայ տեսնուիլ Յուլիանոս Տխտ. ԻԵ, 1 (տես Հոս 2 եւ 3). — առաջակողմը կը ներկայացընէ արքայի մը կիսադէմ մէկ պատկերն, որուն ընդհանուր դիմագծութիւնը բաւական նմանութիւն ունի Փրիապատեայ արքայից արքային կերպարանաց հետ: Սակայն այս արքային գլուխն ոչ թէ դէպ ի ձախ կը նայի, ինչպէս միշտ կը գտնենք պարթեւ արքայից-արքայի դրամոց վրայ, այլ դէպ ի — ջ դարձած է: Դրամին շրջափակ զարդն ալ երիզակերպ (գերմ. tänienartig, լատ. taenia) շրջա-

նակ մըն է, որ չի տեսնուիր պարթեւականաց վրայ  
(— որոնց սովորականն է՝ շար մարգարտի. —) բայց  
նոյնպէս կը գտնուի Սելեւկեանց դրամներուն վրայ:  
Չորեքդրամեանին յետասկողմն՝ նստած Գեմետր  
աստուածուրհին ալ ճշգրիտ ընդօրինակութիւն



Ձեւ 3:

մըն է Ասորոց Գեմետրիոս Ա. արքայի չորեքդրա-  
մեաններուն վրայ գտնուած նոյն պատկերին: Ար-  
ձանագրին մէջ դրամը հատանել տուող արքայն  
ինք զինքը պարզ «արայ Արշակ», կը կոչէ, եւ ոչ  
«արայ Թ», զոր այն ժամանակի պարթեւ արքայից-  
արքայք իբրեւ իրենց յատուկ տիտղոս ամենափոքր  
պղնձի դրամոց վրան ալ չեն մոռնար նշանակելու:  
Ուստի դրամս հատանել տուող արքայն դժուա-  
րաւ կրնայ պարթեւ արքայից-արքայ մ'ըլլալ: —  
Յետասկողմը դաշտակին մէջ կը տեսնենք ΘΕ  
տառերը, որ նշանները յաճախ կրնանք տեսնել  
Տիգրանայ Մեծի (218—256 Սելեւկ.) դրամ-  
ներուն վրան, զորոնք սակայն չեմ կրցած տա-  
կաւին երբեք տեսնել պարթեւական դրամներուն  
շարքին մէջ: — Աերոյիշեալ արձանագրէն դուրս՝

դէպի ձախ՝ կը գտնուի մենագիրս , որ նոյնպէս  
տակաւին երբեք տեսնուած չէ Պարթեւաց դրոշ-  
մած դրամներուն վրայ: — Աերջապէս դրամին  
յետասկողմը գտնուող որոշ տարեթիւը ΗΠΡ =  
188 Սելեւկ. (= 124/3 Ն. Ք.) կը ցուցընէ որ այս



դրամն հատանել տուող տակաւին երիտասարդ արշակունի արքայն ժամանակակից մ'եղած է Պարթեւաց ծեր արքայից - արքային՝ Արտաւանայ Ա. : (Համեմատութեան համար կը գնենք հոս Արտաւանայ Ա. թիւ 5 դրամը, Տխտ. Զ, 2. տես հոս շեւ 4) : Այս ամէն պարագայքը նկատելով՝ ամէ-



Չիւ 4 :

նէն պատշաճագոյնն է կարծել որ յիշեալ չորեքդրամեանը հատանել տուողն ըլլայ Մ. Խորենացւոյ յիշած արշակունի իշխանն՝ Արշակ Ա. : »

« Բրիտանական թանգարանը կան երկու շատ ցանցառ արշակունի չորեքդրամեաններ, որոնք մէկ կողմանէ վերոյիշեալ 188 Սելեւկ. թուականաւ չորեքդրամեանին հետ բոլորովին նոյն են ոճի, կազմութեան եւ յետսակողման պատկերացման տեսակիտով, բայց միւս կողմանէ առաջակողմն երկու ուրիշ եւ իրարմէ բացորոշ տարբեր դրամահատարացից պարկերը կը ներկայացընեն : Ա. Բոթ այս վերջին երկու չորեքդրամեաններէն մին՝ ըստ իւր կարծեաց՝ կը համարի Միհրդատայ Ա. արքայից-արքայի իշխանութեան ժամանակէն կամ այն արքային մերձաւոր ժամանակներէն. իսկ միւսը գուշակութեամբ կ'ընծայէ Աւհեմերոսի՝ Հրահատայ Բ արքայից-արքայի սիրականին : Արդ Միհրդատայ Ա արքայի օրերէն կամ անոր մերձաւոր ժամանակէ մը համարուած այն չորեքդրամեանին առաջակողմը կը ներկայանայ արքայի մը կիսանձնեայ պատկերը՝ դէպ ի չը դարձած եւ երկայն մօրուօք, եւ արձանագրին մէջ ինք գինքը կը կոչէ պարզ «Արտայ Արշակ» : Երկրորդ չորեքդրամեանին վրայ՝ զոր Բոթ

գուշակաբար Եւհեմերեայ՝ Սելեւկիացւոց անգութ  
բռնաւորին կ'ընծայէ՝ դրամահատ արքայն կը կոչէ  
ինք զինքը՝ «արտայ Արշակ Նշանաոր Հելլենասէր:»  
Ուստի կը կարծեմ որ այս երկու շորեքդրամեանքն  
ալ նոյնպէս Հայ-Արշակունի դրամոց շարքին կը  
վերաբերին. եւ կը մտածեմ որ արքայից մին ըլլայ  
Խորենացւոյ յիշած Հայոց արքայն Արտաշէս (Ար-  
տաքսիաս)՝ Արշակայ Ա յաջորդը, որուն համար կը  
պատմէ Խորենացի թէ իւր պատկերով դրամ հա-  
տանել տուած է. եւ դարձեալ՝ թէ երկրորդն  
ըլլայ Հայոց արքայն Արտաշէս՝ որուն դէմ պա-  
տերազմ մղեց Պարթեւաց արքայից-արքայն Միհր-  
դատ Բ, որպէս զի զՏիգրան Ա (Մեծ) անոր հարց  
գահը նստեցընէ. (Գուտշմ., Պտմ. Երան. էջ 80:)  
Յայտնապէս Արտաշիսի մահուանէ ետքը գահա-  
կալութեան կռիւներ ծագած են ի Հայս: Եւ կ'եր-  
եւայ թէ այս Արտաւազդ շատ երկար ժամանակ ալ  
չէ կրցած իւր գահը պաշտպանել Տիգրանայ (Մեծի)  
դէմ: Անճշգրիտն Խորենացի զինքն եւ ոչ կը յիշէ:»

Վ'երեւայ թէ արդէն Վաղարշակ. զոր Խորե-  
նացի կը ներկայացընէ մեզի իբրեւ առաջին արշա-  
կունի արքայն ի Հայս, իւր եղբոր Միհրդատայ Ա  
(դրամոց առաջին անգամ արտայից-արտայի) մա-  
հուանէն անմիջապէս ետքը զլացած ըլլայ հպա-  
տակիլ Պարթեւաց: Վասն զի աչքի զարնող պա-  
րագայ մըն է որ ճիշդ այս արտայից-արտայ տիտղոսը՝  
զոր Միհրդատ Ա իւր դրամներուն վրայ կը կրէ,  
այնուհետեւ պարթեւ միապետաց դրամներուն  
վրայ կը տակն մինչեւ այն ժամանակն երբ Հայոց  
պետութիւնը խախտեցաւ Հռոմայեցւոց ձեռք,  
ուստի մինչեւ Տիգրանայ (Մեծի) անկումը: Աւելի իսկ  
զարմանալի է սակայն այս պարագայս. ճիշդ այն ժա-  
մանակն որ կը հանդիպի ըստ մեր հաշուին Միհր-  
դատայ Ա մահը, կը գտնենք որոշ թուականաւ  
դրամներ արշակունի դրամահատ-իշխողի մը՝ պար-  
թեւական դրամոց նկարագրէն այնպէս բացորոշ

Տիմնական տարրերու թեամբ տիպարի, որ դրամագիտական տեսակիտով դժուարին է դաստնիք պարթեւական դրամոց շարքին մէջ դասաւորել, եւ որոնց դրամահատ արքայն արդէն շատոնց հմուտ դրամագիտէ մը — Պրոկէշ-Ոստէն<sup>1</sup> — ճանչցուած էր նոյն ինքն Ազղարշակ: Ազղարշակի դրամները (ներկայ Ցուցակիս Տխտ. ԻԴ, 5—13) այնպէս ալ ցանցառ չեն՝ ինչպէս են իւր յաջորդաց վերոյիշեալ դրամները: Նսեւ այս արքայիս դրամոց առաջակողմն արքային կիսանձնեայ պատկերն՝ որ շատ գեղեցիկ սճով դրոշմուած է, չի նայիր դէպ ի յս<sup>1</sup> ինչպէս են պարթեւական դրամներուն արքայից պատկերներն. այլ դէպ ի Վ դարձած է: Ազղարշակայ դիմագծու թիւնն ազդակցական հմանութիւն կը ցուցընէ իւր եղբոր՝ Միհրդատայ Ա դիմագծու թեան հետ, բայց այնպէս որ երկու իշխանայ կենդանագիր պատկերներն իրարու հետ համեմատելով՝ չենք կրնար միեւնոյն անձն համար



Չեւ 5:

րիւ երկուքն ալ: (Համեմատութեան համար հասկը դնենք Միհրդատայ Ա. Թ. 7 շորեքդրամեանը՝ Տխտ. Բ, 11, տես հաս Չեւ 5. եւ Ազղարշակայ

<sup>1</sup> Հմտ. ի միջի այլոց՝ Les monnaies des rois Parthes par M. le comte Prokesch-Osten (Mémoires de la Société française de Numismatique etc.) Paris 1874—5, p. 13 ff. — v. Prokesch-Osten, Beiträge zu den Münzen der Arsaciden. I. Münzen des Valarsaces: „Num. Zeitschrift“ Wien 1869, p. 247 ff., եւ այլուր:

Թ. 4 շորեքդրամեանը՝ Տխտ. ԻԳ, 7, տես հոս 2-եւ 6:) Ազղարչակայ ճակատն աւելի լեցուն է, աչքն աւելի մեծ, եւ քիթն այնչափ խիստ կոր ու այնչափ դէպ ի վար խորացած չէ՝ ինչպէս է իւր եղբոր՝ Միհրդատայ Ա: Աերջապէս Ազղարչակ չի




Չիւ 6:

կրեր ահանջի որեւէ դարդ մը, ինչպէս կը տեսնենք նոյնը Միհրդատայ Ա պատկերին վրայ: Ազղարչակայ դրամոց առաջակողման շրջափակ զարդն ալ, ինչպէս նաեւ իւր հարստութեան վերը յիշուած դրամներունը, երիզակերպ շրջանակ մըն է, բոլորովին տարբեր պարթեւ արքայից դրամներուն մարգարտի շարքէն:

«Ազղարչայ դրամոց յետսակողման պատկերները պէսպէս են եւ ընդհանրապէս շատ տարբեր պարթեւական դրամոց տիպերէն: Ներկայ Ցուցակիս մէջ այս պատկերաց մեծագոյն մասը նկարագրուած է: Յիշենք հոս միայն Ազղարչայ շատ գեղեցիկ շորեքդրամեանց վրայ տեսնուած Հերակղի Գինեսիրի (Bibax) պատկերը, որուն ներքեւ թերեւս Հայք իրենց շատ սիրելի Ասազն կը տեսնէին. (հմտ. Ազղարչակայ Թ. 1 — 4, տես հոս 2-եւ 6 եւ վարը՝ իրենց տեղը:) Ինչպէս իւր յաջորդին Արչակայ՝ շորեքդրամեանց, նոյնպէս Ազղարչակայ թէ շորեքդրամեանց եւ թէ դրամներուն վրայ հատածին մէջ կը գտնուի կամ մենագիր մը կամ մեզի համար այնպէս կարեւոր տարեթիւ

մ'ըստ Սելեւկեան թուականութեան: Սակայն ցայսօր գտած ենք միայն տարեթուերս 173 եւ 174 Սելեւկ. (= 139/8 եւ 138/7 Ն. Ք.):) Կարծենք թէ այս ժամանակ ալ եղած ըլլալու է Արշակունեաց պետութեան այն բաժանումն եւ Աղարշակայ արքայութեան մէջ սկսած ըլլալու է դրամահատութիւնը: — Ահա՞ զանի տիպը համեմատելու համար կը գնենք հոս ալ Տիգրանայ Մեծի նոյն տպով դրամը, որ այժմ նոյնպէս Հելլենակին Հաւաքման մէջ է. (տես վերը՝ էջ 98. եւ հոս Չեւ 7:)



Չեւ 7:

“Այն վայրկենէն որ Պարթեւաց գերիշխանութենէն կը բաժնուէր եւ չէր մնար այլ եւս իբրեւ հարկատու իշխան մը, որ անշուշտ Հայոց ժողովրդեան բողձանաց համեմատ ի գլուխ հանուած է, կ'առնու Աղարշակ՝ ճիշդ բուն պարթեւ արքայից պէս՝ “ար+այ Տեժ” տիտղոսը, եւ իւր դրամոց արձանագրին մէջ կը կոչէ ինք զինքը՝ “ար+այ Տեժ Արշակ Հելլենաւեր:” Եւ որովհետեւ ընդունելու է որ Արշակունի պետական այս բաժանումն պատահած ըլլալու է աւելի Միհրդատայ Ամասուանէ ետքը քան թէ անոր մահուանէն յառաջ, կը կարծենք թէ Միհրդատայ մահը գնելու չէ՝ ինչպէս ցայսօր կը գուշակուէր թէ ըլլայ՝ 174 կամ 175 Սելեւկ. տարիները, այլ աւելի կանուխ՝ ամէնէն ուշ 173 Սելեւկ. տարին: Միհրդատայ Ամասուանէ ետքն Պարթեւաց իրերն այն վիճակի մէջ չէին որ յաջողութեամբ կարելի ըլլար արգիլել Արշակունի կողմնական ճիւղին ի Հայս ինքնա-


կաց զիբք մ'առնուլը: Հրահատ Բ ստիպուած էր նախ Սկիւթացւոց դէմ կռուիլ, յետոյ պաշտպանել իւր պետութիւնը Սելեւկեան Անտիոքոս Է արքայէն եւ յետոյ շատ աւելի վտանգաւոր Սկիւթական հինահար-արշաւանքէն: Հրահատայ Բ մահուանէ ետքն՝ իւր յաջորդքն շատ աւելի նեղն ինկած էին Սկիւթացիներէն եւ ներքին խռովութիւններէն: Եւ այսպէս «միայն Միհրդատ Բ կրցաւ համարձակիլ՝ իւր իշխանութեան վերջերը՝ խառնուելու Հայոց Մեծաց գործերուն» (Գուտշմ., անդ 80:): Ըստ այսմ շատ արժանահաւատ է այն կարծիքը թէ պարթեւ Արշակունեաց համար այս տխուր ժամանակամիջոցին՝ Արշակունի կողմնական տունն ի Հայս կրնար իւր անկախութիւնը վայելել, եւ ասով նաեւ դրամ հատանել տուած ըլլայ. եւ ասի հաստատուած կ'երեւայ այն դրամներովն՝ զորոնք մատնանիշ ըրինք մինչեւ այս տեղ մեր նկատողութեանց մէջ:

«Ազղարշակայ, Արշակայ, Արտաշիսի եւ Արտաւազդայ այս դրամներն իրենց համահաւասար տպովն, ոճովն ու արձանագրութեամբը ստուգիլ կը ցուցնեն ազգակցութեան սերտ աղերս մը, ինչպէս որ իբրեւ ի հարկէ անհրաժեշտ կ'ենթադրենք միեւնոյն աշխարհին եւ նոյն հարստութեան դրամոց նկարագրին համար: Բայց դրամոց այս շարքն ակնյայտնի կերպով կը զանազանի ժամանակակից բուն պարթեւական դրամոց նկարագրէն» (Ցուցակիս էջ 13 – 16:)

Հեղինակը նոյն տեղը (էջ 16) կը խօսի տակաւին ուրիշ դրամոց վրայ ալ, որ նոյն կարգի են՝ այսինքն թէեւ ընդհանուր Արշակունի, բայց նաեւ ոչ բուն պարթեւական, այլ ուրիշ ճիւղի մը՝ Եղիւմայիսի Աամնասկիրեայ, եւ որ միանգամայն գեղեցիկ հաստատութիւն մըն է իւր կարծեաց՝ Հայ

Արշակունեաց ճիւղին դրամներուն նկատմամբ: Սակայն նախ քան այս մասը յառաջ բերելը՝ լաւագոյն է տեսնել Հայ Արշակունեաց դրամները, եւ յետոյ միւսն՝ իբրեւ յաւելուածոյ մասն: Յաջորդներուս մէջ դրամոց ցուցակագրութիւնն աւելի ընդարձակ բռնեցինք մենք ալ, որով Հեղինակին «Հայաստան» բաժինը (էջ 181—191) լիակատար փոխադրուած կ'ըլլայ:

Վաղարշապէս. դրամները 139 եւ 138 տարիներէն Ն. Ք. ընդ ամէնը 26 կտոր, որոնց չորսը՝ չորեքդրամեան, երեքը՝ դրամ, վեցը՝ լումայ եւ տասնուերեք կտորը՝ պղինձ: Չորեքդրամեաններէն՝ թ. 1 առաջակողմը Վաղարշակայ գլուխը դէպ ի աջ, մօրուքաւոր, գլուխն՝ ապարօշով. յետսակողմը՝ արձանագիրը ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ ΑΡΣΑΚΟΥ ΦΙΛΕΛΛΗΝΟΣ («արքայի մեծի Արշակայ Հելլենասիրի.») պատկերը՝ Հերակղէս (Վահագն) անմօրուս դէպ ի ձախ դարձած, ձախ թեւին վրայ առիւծենի մը ձգուած, ձախով կը բռնէ լախտ մը, աջով՝ գինւոյ տաշտ մը: Վարը հատածին մէջ տարեթիւս ΓΟΡ = 173 Յելեւկ., ձախակողմը դաշտակի բաժ-

նին մէջ մենագիրս  կշիռ՝ 14.07 գր., բաւական լաւ պահուած, ցանցառ. (Տխտ. ԻԳ, 5 եւ



Չեւ 8:

հաս Չեւ 8:) — թ. 2՝ չորեքդրամեան, առաջակողմը թ. 1ի պէս եւ շրջափակի զարդով որ երիզակերպ շրջանակ մըն է. յետսակողմը՝ թ. 1ի պէս,

տարեթիւը՝ ΓΟΡ = 173 Սեւեւկ., նոյնպէս մենա-

գիրս  $\text{A}^{\text{P}}$ , կշիռ՝ 15.18 գր., բաւական լաւ պահուած, ցանցառ: — Պետերսբուրգի Վայսերական թանգարանին (Eremitage) մէջ կը գտնուի չորեք-

դրամեան մը թ. 1ի պէս, բայց այս մենագրովս  $\text{Y}$  (տես Ա. Մարկովի «Չհրատարակուած Արշակունի դրամներ», ի թերթին Արեւելեան Բաժնի Վայսերական Ռուսական Հնախօսական Ընկերութեան ի Պետերբ. 1892, Հար. 2, Տխտ. Գ, 13:1) — թ. 3՝ չորեքդրամեան, առաջակողմն ու յետակողմը թ. 1ի պէս. հատածին մէջ տարեթիւս ΔΟΡ = 174 Սեւեւկ., դաշտակի բաժնին մէջ մենագիր չկայ. կշիռ՝ 13.62 գր., ոչ շատ լաւ պահուած, շատ ցանցառ. Մորդամանի հաւաքմանէն ի Վ. Պոլխ (Տխտ. ԻԳ, 6. հոս 2եւ 9:) — թ. 4՝ չորեքդրամ-



Ձեւ 9:

մեան՝ առաջակողմը թ. 1ի պէս, բայց արքային մօրուքն աւելի երկայն է. շրջափակ զարդով որ երիզակերպ շրջանակ մըն է. յետակողմը՝ թ. 1ի պէս, բայց առանց տարեթուի. հատածին մէջ

մենագիրս՝  $\text{XP}$ . կշիռը՝ 14.99, բաւական լաւ պահուած, ցանցառ. (Տխտ. ԻԳ, 7 եւ վերը 2եւ 6): (— Վաղարշակայ այս չորեքդրամեանին նմանահանութիւնը կամ զնկատիպ պատճենը դրինք ար-

1 Մարկովի գործին ուս. խորագիրը՝ տես վերն էջ 10:



դէն վերը՝ էջ 174, երբ պէտք եղաւ յառաջ բերել զայն համեմատելու համար Վաղարշակայ եղբօր՝ Միհրդատայ Ա Պարթեւաց արքայից-արքայի՝ չորեքդրամեանին հետ: Բնականապէս նոյն պատճենը հոս կրկին դնելն աւելորդ է. ուստի տեսնելու է վերը՝ նոյն տեղը: Նոյնը հասկընալու է Արշակայ այն չորեքդրամեանին համար, զոր նոյնպէս յիշեցինք վերը՝ էջ 170՝ համեմատութեան բերելով Պրիապատեայ արքայից-արքայի դրամին հետ: —

— Թ. 5՝ Գրամ. առաջակողմը՝ Վաղարշակայ արքային գլուխը դէպի աջ, մօրուքաւոր, գլուխն ապարօշ. շրջափակ զարդն երիզակերպ շրջանակ մըն է. յետսակողմը՝ արձանագիրը (ΒΑΣΙΛΕΩΣ) ΜΕΓΑΛΟΥ ΑΡΣΑΚΟΥ («արքային մեծի Արշակայ.») պատկերը՝ Ջեւս (= Արամազդ) ի գահի բազմած դէպ ի ձախ, երկար իշխանութեան ցուպ մը բռնած է ձախովն եւ աջ ձեռքը կարկառած՝ ամբին վրայ արծիւ մը. հատածին մէջ կայ մենագիրս

ⲬⲠ . կշիռ՝ 3.51 գր., շատ լաւ պահուած. ցանցառ. (Տխտ. ԻԴ, 8 եւ հոս Չեւ 10): — Թ. 6՝ գրամ.



Չեւ 10:

առաջակողմը նոյն Թ. 5ի հետ, բայց արքային մօրուքն աւելի երկայն. յետսակողմը Թ. 5ի պէս,

հատածին մէջ մենագիրս ⲬⲠ . կշիռ՝ 3.68 գր., շատ լաւ պահուած. ցանցառ. (Տխտ. ԻԴ, 9 եւ հոս Չեւ 11: ) — Բրիտանական թանգարանը կան դրամներ Թ. 5ի պէս, բայց դրամոց հատածին մէջ սա թուականներով ΓΟΡ = 173 եւ ΔΟΡ = 174 Սելեւկ. (տես Վ. Բոթ, Տխտ. Գ, 11 եւ 13: ) —

Թ. 7՝ դրամ. Վաղարշակայ գլուխը դէպ ի աջ, մօրուքաւոր, գլուխն՝ ապարօշ, շրջափակ զարդը՝ երիզակերպ շրջանակ. յետսակողմը՝ ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ (Α)ΡΣΑΚΟΥ (“արքային մեծ ի Արշա-



Ձեւ 11:

կայ.) պատկերը՝ Արշակ Ա դէպ ի աջ, գլուխը սաղաւարտ, հեծելոյ սպառազինութեամբ, ոտքերը՝ տրեխ, պորտաքարին վրայ նստած, աջը կարկառած՝ աղեղ մը կը բռնէ. կշիռ՝ 3.66 գր., ոչ շատ լաւ պահուած. շատ ցանցառ. Մօրդտմանի հաւաքմանէն ի Կ. Պոլիս (Տխտ. ԻԳ, 10 եւ հոս Ձեւ 12:) —



Ձեւ 12:

Թ. 8՝ Լոււմայ. առաջակողմը՝ Վաղարշակայ արքայի գլուխը դէպ ի աջ, մօրուքաւոր եւ գլուխն ապարօշ. շրջափակ զարդը՝ երիզակերպ շրջանակէ մը կազմուած. յետսակողմն՝ արձանագիրը ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ ΑΡΣΑΚΟΥ (“արքային մեծ ի Արշակայ.) պատկերը՝ սաղաւարտաւոր եւ մօրուքաւոր արքայի մը գլուխը դէպ ի աջ. կշիռը՝ 0.75 գր., բաւական լաւ պահուած. (Տխտ. ԻԳ, 11 եւ հոս Ձեւ 13:) — Թ. 9 Լոււմայ, նոյն նախընթացին հետ, կշիռ 0.60 գր. — Թ. 10՝ Լոււմայ, նոյն, կշիռ՝ 0.58 գր. — Թ. 11՝ Լոււմայ, նոյն, կշիռ. 0.55 գր. — Թ. 12՝ Լոււմայ, նոյն, կշիռ՝ 0.54 գր.

— Թ. 13՝ Լուժայ, նոյն, կշիռ՝ 0.51 գր.: Ամէն  
լուժայքս ալ բաւական լաւ պահուած են: —  
Թ. 14՝ պղինձ. առաջակողմը՝ Վաղարշակայ արքայի  
գլուխը դէպ ի աջ, մօրուքաւոր եւ գլուխն ապա-



Ձեւ 13:

րօշ. յետսակողմը՝ արձանագիրը (ΒΑΣΙΛΕΩΣ)  
(ΜΕΓΑΛΟΥ) (Α)ΡΣΑΚΟΥ («արքային մեծի Արշա-  
կայ.») պատկերը՝ փիղ դէպ ի աջ. կշիռ՝ 12.55. ոչ  
շատ լաւ պահուած: — Թ. 15՝ պղինձ, առաջա-  
կողմը Թ. 14ի պէս, շրջափակ զարդով՝ որ երիզա-  
կերպ շրջանակ մըն է. յետսակողմն արձանագիրը  
լիակատար՝ ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ ΑΡΣΑΚΟΥ  
(«արքային մեծի Արշակայ.») պատկերը՝ փիղ դէպ  
ի աջ. կշիռ՝ 3.10 գր., ոչ շատ լաւ պահուած,  
ցանցառ: — Թ. 16 պղինձ, յառաջակողմը Թ. 14ի  
պէս, բայց շրջափակ զարդը՝ շար մարգարտի. յետ-  
սակողմը՝ արձանագիրը Թ. 14ի պէս, պատկեր՝  
Դիոսկուրք ձի հեծած՝ դէպ ի աջ արշաւելու վրայ.  
կշիռ՝ 8.90 գր., ցանցառ: — Թ. 17՝ պղինձ.  
առաջակողմը եւ յետսակողման արձանագիրը  
Թ. 14ի պէս. պատկերը՝ ձիու գլուխ դէպ ի աջ.  
կշիռ՝ 7.13 գր. — Թ. 18՝ պղինձ. առաջակողմը  
Թ. 14ի պէս, շրջափակ զարդով՝ որ երիզակերպ  
շրջանակ է. յետսակողման արձանագիրը Թ. 14ի  
պէս. պատկերը՝ փղի ժանիք. կշիռ՝ 6.60 գր., շատ  
ցանցառ: — Թ. 19 պղինձ, Թ. 14ի պէս, երիզա-  
կերպ շրջանակով. յետսակողման արձանագիրը  
Թ. 14ի պէս, պատկերը՝ մօրուք արքայի մը գլուխը  
դէպ ի աջ, գլուխը՝ սաղաւարտ կշիռ՝ 3.95 գր.: —  
Թ. 20 պղինձ, Թ. 14ի պէս, բայց արքային գլխուն

ետեւը մենագիրս կ'երեւայ՝ ✠ (?) յետսակողմը

Թ. 19ի պէս. կշիռ՝ 3.23 գր.: — Թ. 21՝ պղինձ, Թ. 14ի եւ յետսակողմը Թ. 19ի պէս. կշիռ՝ 2.30 գր.: — Թ. 22՝ պղինձ. Թ. 14ի պէս. յետսակողման արձանագիրը բոլորովին մաշած. պատկերը՝ Գիսակուրեան գլխարկներ. կշիռ՝ 3.18 գր., շատ ցանցառ: — Թ. 23՝ պղինձ, Թ. 14ի պէս, երիզակերպ շրջանակով. յետսակողման արձանագիրը Թ. 14ի համեմատ. պատկերը՝ մեղու. կշիռ՝ 2.73, ցանցառ. (Տխտ. ԻԳ, 12 եւ հոս 2 եւ 14:)



Ձեւ 14:



— Թ. 24՝ պղինձ. Թ. 14ի պէս, երիզակերպ շրջանակով. յետսակողմը Թ. 23ի համաձայն. կշիռ՝ 3.23 գր., ցանցառ: — Թ. 25՝ պղինձ. Թ. 14ի պէս, նոյնպէս յետսակողման արձանագիրը Թ. 14ի համեմատ. պատկերը՝ փղի գլուխ դէպ ի աջ. կշիռ՝ 2.43 գր., շատ ցանցառ. (Տխտ. ԻԳ, 13 եւ հոս 2 եւ 15: ) — Թ. 26՝ պղինձ. Թ. 14ի պէս. ար-



Ձեւ 15:

ձանագիրը բոլորովին մաշած. պատկերը՝ ողկոյզ, կշիռ՝ 1.15 գր., շատ ցանցառ: Բոլոր պղինձները (Թ. 14—26) ընդհանրապէս ոչ շատ լաւ պահուած: — Բրիտ. թանգարան կայ Վաղարշակայ մէկ պղինձը պատկերովս՝ Բախտ երկձի կառքի վրայ դէպ ի աջ արշաւելով. (տես Վ. Րոթ, Տխտ. Բ, 8: ) Տես Ցուցակիս էջ 183—6:

Արշակ Ա. դրամները 124 Ն. Ք. տարիէն. 2 կտոր՝ մին չորեքդրամեան, միւսը՝ պղինձ: Թ. 1՝ չորեքդրամեան. առաջակողմը՝ Արշակայ Ա կիսանձնեայ պատկերը դէպ ի աջ, մօրուքը սրածայր, մազը գանգրահեր. գլուխն՝ ապարօշ, ականջն՝ օղ, վիզը՝ մանեակ եւ կուրծքը՝ լանջապանակ: Շրջափակ զարդը՝ երիզակերպ շրջանակ մըն է: Յետսակողմը՝ արձանագիրը ΒΑΣΙΛΕΩΣ ΑΡΣΑΚΟΥ (“արքային Արշակայ.”) պատկերը՝ Գեմետր աստուածուրհին անթիկունք գահի վրայ նստած, պատմուճան եւ վերնահանդերձ հագած, ձախով կը բռնէ ամաղթեղջիւր, եւ աջը կարկառած՝ ամին վրայ կը կենայ Յաղթութիւնը դէպ ի աջ, որ երկու ձեռքով պսակ մը բռնած է: Գահին ոտքերու զարդերը թեւաւոր Ովկիանեանց կերպարանաց նման են: Նստած Գեմետրի առջեւ դաշտակին մէջ գրուած ΘΕ. արձանագրէն դուրս ձախակողմը՝ մենագիր մը, զոր վերը յիշեցենք (տես էջ 170.) հատածին մէջ տարեթիւս՝ ΗΠΡ = 188 Սելեւկ., կշիռ՝ 15.80. բաւական լաւ պահուած. շատ ցանցառ. Ս. Ալիշանի հաւաքմանէն ի Կ. Պոլիս. (Տխտ. ԻԵ, 1 եւ վերը 2 եւ 3:) — Բերլինի Թանգարանը կայ Արշակայ Ա արքային մէկ չորեքդրամեանն ալ առանց տարեթուի, բայց հա-

տածին մէջ մենագրովս  . (տես „Zeit-

schrift für Numismatik,“ հրտ. v. Sallet, Հտր. Ա, էջ 307:) — Թ. 2՝ պղինձ. առաջակողմը՝ Արշակայ Ա արքայի կիսանձնեայ պատկերը դէպ ի աջ, մօրուքը սրածայր, մազը գանգրահեր, գլուխն՝ ապարօշ, ականջն՝ օղ, վիզը՝ մանեակ եւ կուրծքը՝ լանջապանակ: Յետսակողմն արձանագիրը՝ (Β)ΑΣΙΛΕΩΣ(Σ) (Μ)ΕΓΓΑΛΟΥ (ΑΡΣΑΚΟΥ) պատկերը՝ Յաղթանակ, այսինքն՝ սաղաւարտ, լախտ եւ վահան (°), կշիռը՝ 3.15 գր., շատ ցանցառ. (Տխտ.

ԻԵ, 2 ԵԼ ՀՈՍ ԶԵԼ 16:) — ՏԵՍ ՅՈՒԿԱԿԻՍ  
ԷՋ 187:


Արքային Ա. Ժամանակակից Պարթեւաց արքային Միհրդատայ Բ. — 2 կտոր՝ մին դրամ, միւսը պղինձ: Թ. 1՝ դրամ. արքային պատկերը ուսով



ՉԵԼ 16:

չափ, դէպ ի աջ. մօրուքը կարճ. մազը թեթեւ գանգրահեր. գլուխն՝ ապարօշ: Շրջափակ զարդը մաշած է: Յետասակողմը՝ մաշած եւ հազիւ ընթեռնլի է արձանագիրս „ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ ΑΡΣΑΚΟΥ ΝΙΚΗΦΟΡΟΥ“ (արքային մեծի Արշակայ Յաղթահրի.) պատկերը՝ Յաղթութիւն դէպ ի ձախ, պատմութեան հազած, ձախով արմաւենւոյ ճիւղ բռնած, աջով՝ պսակ մը. հատածին մէջ

մենագիր մը (✠?) . կշիռ՝ 3.00 գր., շատ ցանցառ. (Տխտ. ԻԵ, 3 ԵԼ ՀՈՍ ԶԵԼ 17:) — ԲԵՐԼԻՆԻ



ՉԵԼ 17:

Թանգարանը կայ արքայիս նման մէկ դրամը, որուն հատածին մէջ Պրոկէշ-Ոստէն կ'ընթեռնուր տարեթիւս ΘΠΡ = 189 ՍԵԼԵԼԿ. (= 123/2 Ն. Ք:) Գժբախտաբար այս դրամը լաւ չէ պահուած. որով յիշեալ տարեթիւ կարծուածին ընթերցումն ինձի ապահով չ'երեւար: Տես դրամիս պատկերը Լոն-

տանի «Գրամագիտական ժամանակագրութեան»,  
 ձեջ (Num. Chron., London 1900, Ser. III,  
 Vol. XX, Տխտ. Ը, 7.) ուր նոյն Տախտակին վրայ  
 գրուած է նաեւ Բրիտ. Թանգարանի մէկ նման եւ  
 լաւ պահուած դրամին պատկերը: — Բրիտ. Թան-  
 գարան կայ շատ ցանցառ Չորեքդրամեան մ'ալ որ  
 նոյնպէս Արտաշեսի Ա արքայի վերաբերելու է: Տես  
 Վ. Բոթ, «Յուցակ Պարթեւաց դրամոց», Տխտ.  
 Ե, 9: — Թ. 2՝ պղինձ. արքային գլուխը դէպ ի  
 աջ, ապարոշով. մօրուքը կարճ. յետսակողմը՝ փիղ  
 դէպ ի ձախ. կշիւրը՝ 2.31 գր., շատ ցանցառ.



Չկւ 18:

(Տխտ. ԻԵ, 4 եւ Հոս 2 եւ 18:) — Տես Յուցակիս  
 էջ 188:

Արտաշէս Ա. յառաջ քան 94 Ն. Ք. տա-  
 րին: Յուստինոսի ԽԲ, 2 յիշած այս արքային  
 անունը՝ որ գրուած է Artoadistus (ըստ այլոց  
 պատճենից Ortoadistus, Ortodistus) կ'ուղղէ հրա-  
 տարակիչը Ռիւլ (Rühl, ed. Lips. 1866) եւ կը  
 կարդայ Artoasdu, եւ արդէն Bongars կը գու-  
 շակէր թէ ըլլայ Արտաշէս. (տես Ferd. Justi,  
 Iranisches Namenbuch, Marburg 1895, p. 39.)  
 Այս Արտաւագդ արքային դէմ պատերազմ կը  
 մղէր Պարթեւաց արքայն Միհրդատ Բ, որպէս զի  
 զՏիգրան Ա (Մեծ) ի Հայս իւր հարց գահը նստե-  
 ցրնէ. (Գուտշմ., Պտմ. Երան. 80:) Յայտնապէս  
 Արտաշէսի Ա մահուանէ ետքը գահակալութեան  
 կռիւներ ծագած էին ի Հայս: Անձանօթ է թէ Ար-  
 տաւագդ արդեօք Տիգրանայ եղբայրն էր թէ Արշա-  
 կունի կողմնակի ուրիշ մէկ ճիւղէ մըն էր: Իւր իշխա-  
 նութիւնը կարճատեւ եւ անգործ եղած ըլլալու է

որ Մ. Խորենացի զինքն եւ ոչ կը յիշէ: Սակայն ի նկատի ունենալով այն ցայսօր մի միակ գտնուած արշակունի շորեքդրամեանն որ Բրիտ. Թանգարանը կը գտնուի (առ Ա. Բոթ, Տխտ. Գ. 1.) կ'երեւայ թէ նաեւ այս արքայն՝ զոր Յուստին միայն կը յիշէ՝ անմահացուցած է իւր յիշատակը դրամահատութեամբ: — Տես Ցուցակիս էջ 189:

Տէֆրան Ա (Մէծ.) 94 - 56 Ն. Ք. 3 կտոր, մին շորեքդրամեան, միւսը՝ դրամ եւ մէկալը պղինձ: Թ. 1՝ շորեքդրամեան. առաջակողմը Տիգրանայ Ա արքայի պատկերն ուսով չափ՝ դէպ ի աջ, գլուխը՝ հայական խոյր (Tiara) եւ ապարօշ. խոյրին վերին մասը ժանեւոր թագով զարդարուած. խոյրին կողմնակի զարդերն են՝ աստղ մ'երկու ստքի վրայ կեցած արծիւներու մէջտեղ: Շրջափակ զարդն՝ երիզակերպ շրջանակ մըն է: Յետասակողման արձանագիրը՝ ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ («արքային Տէֆրանայ.») պատկերը՝ Անտիօքիա (դիցուհի քաղաքին)՝ դէպ ի աջ, ժայռի մը վրայ նստած, լայն ու բազմախորշան հանդերձ մը հագած, գլուխը՝ բրգաւոր թագ դրած, եւ աջով՝ զոր կարկառած է՝ կը բռնէ արմաւենւոյ ճիւղ մը: Դիցուհւոյն ստից տակ՝ Որոնտէս գետոյ-դից վերնամասը դէպ ի աջ, թեւերը բացած՝ լողալու. Ժայռին տակ վարը կայ նշանս †. նստած դիցուհւոյն

առջեւ դաշտակին մէջ ✠. այս կողման շրջափակ զարդը՝ դափնեայ պսակ մը կը կազմէ. կշիւր՝ 15.85 գր., բաւական լաւ պահուած. (Տխտ. Իե, 5 եւ հոս 2 եւ 19:) — Թ. 2՝ դրամ. Տիգրանայ Ա արքային պատկերն ուսով չափ՝ դէպ ի աջ, Թ. 1ի պէս, բայց շրջափակ զարդը՝ շար մարգարտի: Յետասակողման արձանագիրը ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΤΙΓΡΑΝΟΥ («արքայի արքայից Տէֆրանայ.») պատկերը՝ Թ. 1ի պէս. նստող դիցուհւոյն առջեւ դաշ-



տակին մէջ EA եւ B. կշիռ՝ 3.84, բաւական լաւ պահուած. շատ ցանցառ. (Տխտ. ԻԵ, 6 եւ Հոս 2 եւ 20:) — Թ. 3՝ պղինձ. Տիգրանայ Ա արքայի



Չեւ 19:

պատկերն ուսով շափ՝ դէպ ի աջ, Թ. 1ի պէս. շրջափակ զարդը՝ երիզակերպ շրջանակ: Յետաւորդման արձանագիրը՝ ΒΑΣΙΛΕ(ΩΣ) ΤΙΓΡΑΝΟ(Υ) («արքային Տիգրանայ») պատկերը՝ Յաղթութիւն դէպ ի աջ քալելու վրայ, աջը կարկառած՝ բան մը (պսակ) կը բռնէ. կշիռ՝ 7, 42. բաւական լաւ պա-



Չեւ 20:

հուած. շատ ցանցառ: — Գաղղիական Ազգային Թանգարանի դրամական բաժնին մէջ կայ Տիգրանայ արքային մէկ չորեքդրամեանն, Թ. 1ի տպով, սա արձանագրութեամբս՝ ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΤΙΓΡΑΝΟΥ («արային արայից Տիգրանայ») նոյն տեղ կան արքայիս պղինձներ սա պատկերացմամբ՝ «1. Գիցուհին Անտիոքիա քաղաքի, անոր ոտից առջեւ գետոյ-դէքն Որոնտէս. — 2. Բախտ կանգուն կեցած, աջովը ղեկ մը եւ ձախովն ամաղթեղջիւր մը բռնած. — 3. Արմաւենւոյ ոտ՝ ժապաւենազարդ.» (տես Ernest Babelon, Les Rois

de Syrie, d'Arménie et de la Commagène, Տխտ. ԻԹ. 15, 12, 14, 13:) Բրիտանական Թանգարանը կայ Տիգրանայ Ա մէկ պղինձը սա պատկերացմամբ՝ Հերակղէս (Ասհագն) դէպ ի ձախ, աջովը լախտ բռնած, ձախ թելին վրայ առիւծենի. (տես The Seleucid Kings of Syria, by Percy Gardner, Տխտ. ԻԷ, 11.) պատկեր մը՝ որ կը յիշեցընէ մեզի հարստութեան հիմնադրին Աւարշակայ Չորեքդրամեանց վրայ եղած պատկերն Հերակղէ Գինէնի, եւ որով անշուշտ կը փառաւորուէր հոս ալ Հայոց ազգային դիւցազն՝ Ասհագն. (տես վերը՝ պատճեն այն դրամին՝ զոր այժմ ունի Հայագէտը Չել 7, հմմտ. Չել 6:)' Տիգրանայ դրամները շատ քիչ անգամ թուական կը կրեն: Բրիտ. Թանգարանը կայ չորեքդրամեան մը 242 տարեթուով, եւ Գաղղիական Ազգային Թանգարանը՝ երկու չորեքդրամեաններ 241 եւ 243 Սելեւկ. թուականութեան տարիներէն. (= 71/70 մինչեւ 69/68 Ն. Ք:) — Բացի արձանագրութենէն եւ շատ քիչ անգամ գտնուած տարեթուերէն՝ կը գտնենք արքայիս դրամներուն դաշտակին մէջ մենագրեր եւ տառեր, որոնք անշուշտ դրամահատութեան տեղեաց արտայայտիչք նկատուելու են: Սակայն Տիգրանայ դրամներուն դաշտակին մէջ յաճախ գտնուող տառախմբերս  $\begin{matrix} \Theta\Xi \\ \text{O}\Phi \end{matrix}$  կը կարծէ է. Բարըն թէ ըլլան պարզ համառօտութիւն յորջորջանացս  $\Theta\Xi\text{O}\Phi\text{I}\Lambda\text{O}\Sigma$  («Թէոփիլոս» = Աստուա-

1 Պրովէի Հաւաքման աճրդի ցուցակին մէջ կը նկարագրուի (Collection Theodor Prowe, Moskau ed. Brüder Egger, Wien 1904, S. 86, Nr. 1520.) «Պղինձ. Յառաջակողմը՝ Տիգրան թագով դէպ՝ ի աջ: Յետասակողմը՝ ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΤΙΓΡΑΝΟΥ. Հերակղէս կանգուն՝ լախտով եւ առիւծենով, 16mm) Բրիտ. Թնդ. XXVII, 11. Babelon, CCIII. շատ ցանցառ. շատ լաւ պահուած է»

ծասէր. տես Ernest Babelon, Les Rois de Syrie, d'Arménie et de Commagène. Paris 1890.)  
 — Տես Յուլյակիս էջ 190 — 1:

Իբրև յաւելուածոյ մասն կը մնայ միայն Եղիւմայիսի բաժնին կամ Աամնասկիրեայ Բ դրամները: Այս մասին կը գրէ Հեղինակը (էջ 16.) “Հոս մտանանիշ ընել կ'ուզեմ միայն ուրիշ շորեքդրամեան մ'ալ՝ որ ըստ իս շ'երեւար թէ բուն Պարթեւական դրամոց շարքին վերաբերի, եւ այս շարքին մէջ չի կրնար անխռով տեղ մը ցուցուիլ անոր: Այս շորեքդրամեանն՝ որ Պարթեւական դրամոց նկարագրին հիմնովին աննման է, կը գտնուի Բերլինի Թանգարանը: Գրամին առաջակողմը կը տեսնենք դրամահատ արքային պատկերը՝ ոչ թէ դէպ ի ձախ դարձած, ինչպէս իրաւունք էր արքայից-արքայի մը, այլ դէպ ի ոչ: Արձանագրին մէջ ալ դրամատէր-արքայն ինք զինքը համեօտութեամբ միայն “*ար+այ Արշակ*” կը կոչէ: Կ'երեւայ թէ Սելեւկեան արքունի տոհմին ազգակից է եւ այս ազգակցութեան վրայ շատ հպարտ. վասն զի գրամին յետսակողմը կը գտնենք պորտաքարի վրայ նստող Ապողոնի պատկերը, զոր Սելեւկեանք իբրև իրենց տոհմին նահապետը կ'ուզէին հաշակել: Սալէտ (Sallet) եւ Յուստի գիտնականք, որ այս շորեքդրամեանին տիպը համեմատած են կամնասկիրեայ Ա այն գեղեցիկ շորեքդրամեանին տպոյն հետ՝ որ Պարիս կը գտնուի, եւ որուն նմանապատճենը կրնայ տեսնուիլ Գարդնէրի քով՝ Տխտ. է, 25, եկած են այն եզրակացութեան թէ երկու շորեքդրամեանքս միեւնոյն հարստութեան կը վերաբերին: Յուստի կը կարծէ թէ այստեղ խնդրոյ ներքեւ եղող դրամահատ Արշակ արքայն ըլլայ Աամնասկիրեայ հայրը. (տես Allote de la Fuye, La dynastie des Kamnaskires, ի թեր-

թիւ Revue Numismatique 1902, p. 110.) Այս կարծիքը յէականս շատ արժանահաւատ կ'երեւայ: Գիտենք որ Միհրդատ Ա նուաճած է նաեւ հոօր Եղիւմացիքն: Արդ շատ հաւանական է որ այս գրաւեալ շատ կարեւոր նահանգին վրայ դրած ըլլայ Արշակունի մ'իբրեւ հպատակ արքայ: Շատ բնական էր այնուհետեւ որ այս հպատակ արքայն կամ իւր յաջորդը, Միհրդատայ Ա մահուանէն ետքը, հետեւած ըլլայ Հայոց Ապարշակայ օրինակին, կամ բռնադատուած իւր հպարտ Եղիւմացիներէն՝ անկախ եղած ըլլայ իւր պարթեւ աւատատու արքայատեառնէն. եւ ասով դրամ հատանել սկսած: Եթէ այս այսպէս է, զարմանք չէ որ նաեւ նշանաւորագոյն դրամագէտք չէին կրնար այս չորեքդրամեանին համար գոհացուցիչ տեղ մը դնել պարթեւական դրամներուն շարքին մէջ: Այսպէս Պրոկէշ-Ոստէն չորեքդրամեանս կ'ընծայէր Գեմետրիոսի Բ որ Պարթեւաց ձեռքը գերի ինկած էր, Գարդնէր՝ կ'ընծայէր Պարթեւաց արքայիցարքային Հրահատ Ա, Ա. Բոթ՝ Պարթեւ արքայիցարքային Հրահատ Բ: Որչափ ալ սքանչանանք գիտնոցս այն հմտական մեկնաբանութեանց վրայ՝ որով կ'ուզեն յիշեալ դասաւորութիւնքն հաւանական ընել, գոնէ ես չեմ կրնար սակայն հաւատալ թէ Պարթեւական դրամահատութիւնն այսպիսի քմահաճոյքով լի ստոստումներ ըրած ըլլայ:» (Տես էջ 16:)

«Ամնասկիւրէս» Բ, դրամներ 82/81 Ն. Բ. 4 կտոր, երկու չորեքդրամեան, մէկ դրամ եւ մէկ երեքլումայ: Թ. 1 չորեքդրամեան. առաջակողմը կիսանձնեայ պատկեր արքային Ամնասկիւրէս Բ եւ դշխոյին Անգագէս՝ քովէ քով, դէպ ի ձախ: Արքային մօրուքը սրածայր է, գլուխն ապարօշ, ականջն՝ օղ, վիզը՝ մանեակ եւ կուրծքը լանջապանակ: Դշխոյին հերը բարձր եւ արուեստական կերպով ամփոփուած է գլխուն վրայ, գլուխն ապար-

րօշ, վիզը մարդարտեայ մանեակ, զգեստին վերին մասը միայն կ'երեւայ: Պատկերներուն ետեւը՝ ուր սովորաբար այս դրամներու վրայ կ'ըլլայ Սելեւկեանց խարիսխը յիշեցրնող նշանակը, հոս մնասուած է, դրամն այն տեղ ունի մ'ունեցած ըլլալով: Յետասակողման արձանագիրը (B)ACIΛEΩC (K)AMNACKIPOY (K)AI BACIΛICCHC ANZAZHI («արքային կ-ճ-ս-կիրէ-յ եւ դշխոյին Անշ-շէ-յ») պատկերը՝ Ջեւս գահի վրայ՝ գէպ ի ձախ. ձախով բռնած իշխանութեան երկայն ցուպ մը, եւ աջը կարկառած՝ ափին վրայ Յաղթութիւն որ երկու ձեռքով պսակ կը բռնէ: Ջեւսի առջեւ գաշտակին մէջ փոքրիկ եւ անորոշ տառերով գրուած ΕΛΚΕΔΩΝ. հատածին մէջ հազիւ տեսանելի հետք մնացած է տարեթուին ΑΛΣ = 231 Սելեւկ., կշիռը՝ 15.43 գր., ոչ շատ լաւ պահուած. շատ ցանցառ. (Տխտ. Իե, 7:) — Թ. 2՝ չորեքդրամեան, Թ. 1ի պէս, բայց ոճը նոյնչափ աղելի չէ. յետասակողման արձանագիրը Թ. 1ի պէս՝ բայց թերակատար, նաեւ պատկերը՝ Թ. 1ի պէս, իսկ նստող Ջեւսի առջեւ հոս կը պակսի ΕΛΚΕΔΩΝ բառը. կշիռ՝ 15.16 գր., ոչ շատ լաւ պահուած, շատ ցանցառ. (Տխտ. Իե, 9:) Ասոր արծաթի խառնուրդը նուազագին բաղադրութեամբ է: — Թ. 3՝ դրամ. Թ. 1ի պէս, բայց արքային եւ դշխոյին պատկերաց ետեւը՝ նշանակը խարիսխ. յետասակողման արձանագիրն ու պատկերը Թ. 1ի պէս, բայց Ջեւսի առջեւ կը պակսի

ΕΛΚΕΔΩΝ բառն, այլ անոր տեղ մենագիրս **Α**. կշիռ՝ 3.85 գր., լաւ պահուած. շատ ցանցառ. (Տխտ. Իե, 8:) — Թ. 4 երեքլումայ. Թ. 1ի պէս, բայց արքային եւ դշխոյին պատկերաց ետեւը մե-

նագիրս **Α**. յետասակողման արձանագիրը թե-

րակատար. պատկերը՝ Թ. 1ի պէս. կշիռ՝ 1.70, ոչ  
 շատ լուս պահուած. շատ ցանցառ. (Տխտ. ԻԵ, 10 :)  
 Այս կտորը ծակուած է: (Տես էջ 195—6 :)

Ծանօթ է որ Հայոց եւ Եղիւմայիսի տնե-  
 րով չէր լմննար արշակունի կողմնական ճիւղերուն  
 թիւր: Սակայն մնացելոյ վրայ մեր գիտցածը շատ  
 թերակատար է: Պարթեւաց գերիշխանութեան  
 ներքեւ կը ծաղկէին յատկապէս արեւելք կրկին  
 իշխանութիւնք՝ յԱրեւելեան-Երան եւ Ինդոսի  
 վրայ: Հետաքրքրական է ի մասնաւորի Տոխարաս-  
 տանի թագաւորութիւնը, որուն իշխողք իրենց  
 դրամներուն վրայ կը կրեն անգամ ճիշդ ժամա-  
 նակին Պարթեւաց տիտղոսն «արքայից-արքայ»: Նեղինակն այս մասերէն ալ բաւական գեղեցիկ  
 ժողովածոյք մ'ունի իւր Հաւաքման մէջ. բայց  
 այլեւայլ պատճառներով չէ համարձակած կամ  
 ուզած գանձեր ալ իւր Ցուցակին մէջ առնուլ առան-  
 ձին բաժնով: Մեր ալ նպատակն ըլլալով ներկայ  
 Ցանկին եւ բնիկ պարթեւականաց էական կէտերը  
 ծանօթացընել, զոր կատարեցինք ցայս վայր,  
 յիշեալ աշխարհաց մասին աւելորդ է այստեղ եր-  
 կարել, որչափ ալ այլեւայլ տեսակիտով կրնար  
 թերեւս հետաքրքրաշարժ երեւալ: Ասով կը  
 կնքենք մեր ձեռնարկին առաջին տեղեկատու մասը:





